Հավելված
Հաստատվել է ՀՀ ՀՊ
2019թ. սեպտեմբերի 19-ի թիվ 20/1 որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԻՄՆԱԴՐՎԱԾ □ՀԱՅԱՍՏԱՆ□ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՈՒՄ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2019

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2018 թվականի օգոստոսի 20-ի թիվ 7/1, թիվ 7/2 և թիվ 7/3 որոշումներ:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ վարչապետի աշխատակազմ, ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ արտաքին գործերի նախարարություն, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության քաղաքացիական ավիացիայի կոմիտե:
Հաշվեքննության առարկան	Հայաստանի Հանրապետության կողմից հիմնադրված «Հայաստան» համահայկական հիմնադրամում (այսուհետև՝ Հիմնադրամ) գնումների գործընթացը:
Հաշվեքննության տեսակներ	Իրականացվել է կատարողականի և համապատասխանության հաշվեքննություն:
Հաշվեքննության ընթացակարգը	Հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ և վերակատարում:
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2015 թվականի հունվարի 1-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ: Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի վերակառուցման ծրագրի մասով՝ 2013 թվականի հունվարի 1-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:
Հաշվեքննության կատարման ժամկետը	2018 թվականի օգոստոսի 29-ից մինչև 2019 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ:
Համագործակցություն ՀՀ գլխավոր դատախազության հետ	Հաշվեքննության ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ կազմված առերևույթ հանցագործության հատկանիշներ պարունակող թվով 2 արձանագրություններ ՀՀ հաշվեքննիչ պալատի որոշմամբ ուղարկվել են գլխավոր դատախազություն:
Հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումը	Հաշվեքննությունը իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի հինգերորդ վարչություն կողմից, որի աշխատանքները համակարգում է Հաշվեքննիչ պալատի անդամ Արմեն Գևորգյանը :
Ստուգման օբյեկտը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ:
Ստուգման առարկան	Հայաստանի Հանրապետության կողմից հիմնադրված «Հայաստան» համահայկական հիմնադրամում գնումների գործընթացը:

Ստուգման ընթացակարգը	Հարցում, արտաքին հաստատում, վերահաշվարկ և վերակատարում, զննում:
Ստուգումն ընդգրկող ժամանակաշրջանը	2015 թվականի հունվարի 1-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ: Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի վերակառուցման ծրագրի մասով՝ 2013 թվականի հունվարի 1-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:
Ստուգման կատարման ժամկետը	2018 թվականի օգոստոսի 29-ից մինչև 2019 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ:

Ի. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

1. «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՁԵՌՔԲԵՐՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐ, ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված բոլոր ծրագրերն իրականացվել են Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումների տնօրինության կողմից, որն իր գործունեությունն իրականացրել է մինչև 15.02.2016 թվականը:

Միջոցառումների համար նվիրատվությունները կազմել են 5,221,929.0 հազ. դրամ, ծախսերը՝ 4,759,717.0 հազ. դրամ: Մեր կողմից ընտրանքային կարգով ուսումնասիրվել են 3,904,304.1 հազ. դրամ արժեքով 145 պայմանագրեր: Կատարված ծախսերը հաշվեքննվել են բացառապես հիմնադրամի կողմից տրամադրված փաստաթղթերի հիման վրա: Պայմանագրի կողմ հանդիսացող կազմակերպությունների մոտ 3,218,000.0 հազ. դրամ արժեքով կնքված պայմանագրերի դիմաց փաստացի կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների և մատակարարված ապրանքների, դրանց որակի և գնի մասով ստուգում իրականացնել հնարավոր չէր՝ կապված «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքով նախատեսված սահմանափակումներով: ՀՀ հաշվեքննիչ պալատի լիազորությունների շրջանակում համապատասխան ստուգում հնարավոր էր իրականացնել միայն 686,000.0 հազ. դրամ ծախսի շրջանակում կնքված պայմանագրերի մասով թվով 9 կազմակերպությունների մոտ:

1.1 Անհամապատասխանություն

25,000 հազ. դրամը գերազանցող գնումներն իրականացվել են Հիմնադրամի գործադիր վարչության թիվ 174 հրամանով հաստատված կարգի պահանջներին ոչ համապատասխան

Հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրերի մրցույթների անցկացման կարգի հաստատման վերաբերյալ Հիմնադրամի գործադիր վարչության թիվ 174 հրամանի համաձայն, 25,000. հազ. դրամը չգերազանցող գնումները պետք է կատարվեին ուղղակի կամ տարբեր մատակարարների հետ բանակցությունների միջոցով: Նախնական բանակցությունների ժամանակ առնվազն երեք կազմակերպությունների պետք է ուղարկվեին ձեռքբերվող ապրանքի ծավալաթերթերը, գծագրերը և առաջարկվեր ներկայացնելու գնային առաջարկ, այնուհետև՝ պայմանագիր կնքվեր ամենացածր գին առաջարկած մասնակցի հետ:

25 միլիոն ՀՀ դրամը գերազանցող գնումները պետք է կատարվեին երկու ձևով՝ բաց մրցակցային բանակցությունների մրցույթի ձևով (կարճ ընթացակարգով) կամ բաց մրցույթի ձևով (երկար ընթացակարգով):

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումների տնօրինության կողմից բոլոր պայմանագրերը, բացառությամբ ավիատոմսերի և տրանսպորտային ծառայությունների, անկախ գումարի մեծությունից, կնքվել են ուղղակի ձևով:

Պայմանագրերը կնքվել են առանց գնման հայտի և գնման առարկայի բնութագրի հաստատման: Կնքված բոլոր պայմանագրերում բացակայում են գնման առարկայի տեխնիկական բնութագրերը, որտեղ պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրվեին ձեռքբերվող ապրանքների հատկանիշները (չափեր, ձև, օգտագործվող նյութեր և այլն), ինչպես նաև դրանց վերաբերվող պայմանների հստակ նկարագրությունը, դրանց առնչություն ունեցող և պահանջվող փաստաթղթերն ու տեղեկությունները:

Հիմնադրամի առարկությունը՝

Հարկ ենք համարում ընդգծել, որ իրավահարաբերության ծագման պահին գործող «Գնումների մասին» ՀՀ օրենքը նախատեսել է միայն պետական միջոցների ֆինանսավորմամբ ստացված գումարների շրջանակում կատարել մրցութային հիմունքներով գնումներ, իսկ, քանի որ Հիմնադրամի ստացած միջոցները հանգանակության արդյունքում ստացված միջոցներ են, հետևաբար, Հիմնադրամը պարտավոր չէր կատարելու մրցութային հիմունքներով գնումներ այն գումարներով, որոնք պետական բյուջեից չեն տրամադրված այլ եղել են հանգանակության արդյունքում հավաքված գումարներ: Գնումների գործընթացի կարգավորումները պահպանված են:

Հաշվեքննիչ պալատի արձագանքը՝

Արձանագրության մեջ ընդհանրապես հղում չի արվել «Գնումների մասին» ՀՀ օրենքին կամ այդ օրենքի դրույթներին: ՀՀ հաշվեքննիչ պալատը հղում է կատարել Հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրերի մրցույթների անցկացման կարգին, որը հաստատվել է «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր վարչության թիվ 174 հրամանով:

1.2 Անհամապատասխանություն

Ծառայությունների մատուցման ավարտից հետո պայմանագրով նախատեսված հետ վերադարձման ենթակա գույքից 57370.7 հազ. դրամի գույք հետ չի վերադրաձվել հիմնադրամին:

✓ Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում 2015 թվականի ապրիլի 22-ին և 23-ին «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» Գլոբալ ֆորումի կազմակերպման ծառայությունների մատուցման համար Հիմնադրամը 108,883.9 հազ. դրամ արժեքով պայմանագիր է կնքել «Էքսպոմեդիա» ՍՊԸ- ի հետ:

Կնքված պայմանագրի 3.3-րդ կետի համաձայն, ծառայությունների մատուցման ավարտից հետո կողմերի միջև պետք է կազմվեր հանձնման-ընդունման ակտ, որով հավաստվեր ծառայությունների պատշաճ մատուցված լինելու փաստը, ինչպես նաև փոխադարձ ակտ, որով հաստատվեր գույքի ցանկը, ինչը ենթակա էր վերադարձման պատվիրատուին: Սակայն կողմերի միջև փոխադարձ ակտ չի կազմվել, պայմանագրի շրջանակում ձեռք բերված գույքն ու ապրանքանյութական արժեքներից 55,789.6 հազ. դրամի ապրանքներ, չեն վերադարձվել, չեն մուտքագրվել պահեստ և չեն հաշվառվել

որպես նյութական արժեք, այդ թվում՝ 7,000.0 հազ. դրամի լամինացված մանրահատակը, 6,393.0 հազ դրամի շրիշակ և այլն (մանրամասն տես հավելված 1-ը):

Բացի այդ իրականացվել է նաև 2800 ք/մ գորգածածկի փռման և 1000 մետր վարագույրների տեղադրման աշխատանքներ, որոնց դիմաց վճարվել է համապատասխանաբար 2,415.0 հազ. դրամ և 1,200.0 հազ. դրամ, սակայն գորգածածկի և վարագույրների ձեռքբերումը Հիմնադրամի կողմից չի հիմնավորվում, ձեռքբերման փաստաթղթեր չկան: Միջոցառումից հետո հիմնադրամի կողմից գորգածածկը և վարագույրները չեն արժևորվել և որպես ապրանքանյութական արժեք չեն հաշվառվել և մուտքագրվել պահեստ:

✓ ՀՀ կառավարության Ընդունելությունների տանը 2015 թվականի մարտի 18-ին անցկացվող ''Արարատի ստորոտին'' Միջազգային մեդիա ֆորումի'' կազմակերպման ծառայությունների համար ''Էքսպոմեդիա'' ՍՊԸ-ի հետ կնքվել է 12,881.4 հազ. դրամ արժեքով պայմանագիր:

Պայմանագրի կատարման արդյունքում ստեղծված ապրանքանյութական արժեքները գումարով 1,581.1 հազ, դրամ, չեն վերադարձվել, չեն մուտքագրվել պահեստ և չեն հաշվառվել որպես նյութական արժեք /հավելված 2/:

Հավելվածներում նշված ապրանքների և նյութական արժեքների գների ձևավորման համար հիմք են ընդունվել կնքված պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելվածներում նշված ֆինանսական հաշվարկի գները և կիրառված եկամտի տոկոսները:

Հիմնադրամի առարկությունը՝

30.03.2015 թ. Գևորգ Արամ ՍՊԸ-ի հետ կնքվել է առուվաճառքի պայմանագիր, որի շրջանակներում ձեռք բերված գույքի վերաբերյալ կողմերի /Հիմնադրամ և Գևորգ Արամ ՍՊԸ/ միջև կնքված պայմանագրի համաձայն՝ Հիմնադրամը վաճառողին կատարել է 7,000.0 հազ, դրամի չափով վճարում և ձեռք է բերել պայմանագրով որոշված ապրանքները՝ 2800 մետր քառակուսի լամինացված մանրահատակը, պայմանագրի գինը՝ 7,000,000 ՀՀ դրամ:

Պալատը նշել է, որ Գևորգ Արամ ՍՊԸ-ից ձեռքբերված ՄԴՖ-ը՝ լամինացված մանրահատակը, ենթակա էր վերադարձման Հիմնադրամին և հաշվառման՝ Հիմնադրամի պահեստում: Այս պնդումն անհիմն է և առարկայազուրկ, քանի որ, թեև մանրահատակը ձեռք էր բերվել սեփականության իրավունքով, սակայն խոսքը լամինացված մանրահատակի մասին է, որը մեկանգամյա տեղադրման և օգտագործման գույք է, օգտագործումից հետո ենթակա չէ վերականգնման կամ այլ կերպ օգտագործման, տեղադրվել է Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում և միջոցառումներից հետո հնարավոր չի եղել այն ապամոնտաժել, չի ապամոնտաժվել: Հետևաբար, վերադարձման ենթակա որևէ գույք չի եղել: Գևորգ Արամ ՍՊԸ-ի և Հիմնադրամի միջև առկա է հաշիվ-ապրանքագիր, որը ստորագրելով և գումարը փոխանցելով՝ պատվիրատուն հաստատել է, որ պայմանագրով վաճառողի կողմից գնորդին հանձնվել է պայմանագրով նշված ապրանքը պատշաճ, պայմանագրի պայմաններին համապատասխան, ամբողջ ծավալով և պայմանագրով սահմանված կարգով, իսկ գնորդն էլ՝ ընդունելով ապրանքը, կատարել է վճարում, առկա է հաշիվ-ապրանքագիր:

Պալատը նշել է, որ Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում 2015 թ. ապրիլի 22 և 23-ին Ընդդեմ ցեղասպանության հանցագործության Գլոբալ Ֆորումի կազմակերպման ծառայությունների մատուցման շրջանակներում Հիմնադրամը պայմանագիր է կնքել Էքսպոմեդիա ՍՊԸ-ի հետ, ծառայության ավարտից հետո կողմերի միջև պետք է կնքվեր հանձնման ընդունման ակտ, սակայն չի կնքվել, պետք է կնքվեր փոխադարձ ակտ, որը կրկին չի կնքվել:

Հարկ ենք համարում ընդգծել, որ սա չի համապատասխանում իրականությանը, քանի որ 01.04.2015 թվականին Էքսպոմեդիա ՍՊԸ-ի հետ կնքվել է ծառայությունների մատուցման պայմանագիր, որի հանձնման ընդունման ակտը կնքվել է 23.04.2015թ.: Պայմանագրի 1.5 կետի համաձայն՝ ծառայությունները մատուցված են համարվում պատվիրատուի կողմից հանձնման ընդունման ակտը ստորագրելու պահից:

Փոխադարձ ակտ կնքվում է, եթե առկա է լինում վերադարձման ենթակա որևէ գույք, իսկ փոխադարձ ակտը չի կնքվել, քանի որ պատվիրատուին վերադարձման ենթակա գույք և/կամ ապրանքանյութական արժեքներ չեն եղել: Սա ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր է, այլ ոչ թե սեփականության իրավունքով գույք ձեռք բերելու պայմանագիր: Պատվիրատուն վճարել է գումարը, ստացել է ծառայությունը և կատարողից ապրանքանյութական արժեքներ հետ պահանջելու պայման չկա: Պայմանագրի 1.5 կետի համաձայն՝ ծառայությունները մատուցված են համարվում պատվիրատուի կողմից հանձնման ընդունման ակտը ստորագրելու պահից: Իսկ հանձնման ընդունման ակտը կնքված և ստորագրված է:

Հանձնման ընդունման ակտը կնքելով՝ պայմանագրի կողմերը հավաստել են, որ պայմանագրով նախատեսված ծառայությունները մատուցվել են պատշաճ և այն ընդունվել է պատվիրատուի կողմից:

Առկա է պայմանագիրը, փաստաթղթավորված ֆինանսական հաշվարկը, հանձնման ընդունման ակտը, ծառայությունների ցանկը: Այս ամբողջը վկայում է, որ պայմանագիրը կնքված և ծառայությունները մատուցված են օրենքով սահմանված կարգով և պայմանագրի պայմաններին համապատասխան:

Ինչ վերաբերում է 1,000 մետր վարագույրների տեղադրմանը և գորգածածկին, ապա հայտնում ենք հետևյալը. Պալատը նշել է, որ Էքսպոմեդիան կատարել է նաև գորգածածկի փռման աշխատանքներ և վարագույրների տեղադրման, կարելու և ձևելու աշխատանքներ, որոնց ձեռքբերումը Հիմնադրամի կողմից չի հիմնավորվում: Հիմնադրամի հիմնավորումն այն է, որ ՀՀ նախագահի ինքնաթիռով 100-ամյակի հետ կապված բազմաթիվ ապրանքանյութական արժեքներ են ժամանել ՀՀ տարածք, այդ թվում և վերոնշյալ երկու ապրանքները՝ գորգածածկը և վարագույրների կտորները, որոնց ծագման աղբյուրների մասին Հիմնադրամը տեղեկատվություն չունի:

15.03.2015 թվականին Հիմնադրամը պայմանագիր է կնքել Էքսպոմեդիա ՍՊԸ-ի հետ՝ Արարատի ստորոտին միջազգային մեդիա ֆորումի կազմակերպման ծառայությունների համար: Պայմանագրի գինը՝ 12,881,4 հազար ՀՀ դրամ: Կնքվել է հանձնման ընդունման ակտ: Հանձնման ընդունման ակտը կնքելով՝ պայմանագրի կողմերը հավաստել են, որ պայմանագրով նախատեսված ծառայությունները մատուցվել են պատշաճ և այն ընդունվել է պատվիրատուի կողմից:

Պալատը նշել է, որ պայմանագրի կատարման արդյունքում ստեղծված ապրանքանյութական արժեքները՝ 1,581.1 հազար ՀՀ դրամ, չի վերադարձվել, չի մուտքագրվել պահեստ և չի հաշվառվել որպես նյութական արժեք: Այս պնդումը անհիմն

է և առարկայազուրկ, քանի որ կատարողի կողմից մատուցվել են ծառայություններ՝ պատշաճ, պայմանագրի պայմաններին համապատասխան և պատվիրատուն ընդունել է ծառայությունը, կատարել վճարում, կնքվել է հանձնման ընդունման ակտ: Պատվիրատուն ձեռք չի բերել որևէ գույք սեփականության իրավունքով, պատվիրատուն ստացել է ծառայություն: Հետևաբար, վերադարձման ենթակա որևէ գումար կամ գույք չի եղել (պայմանագիրը, ապրանքների գնման հայտը, հանձնման ընդունման ակտը, հաշիվ ապրանքագիրը:

Հաշվեքննիչ պալատի արձագանքը՝

Կնքված պայմանագրով ձեռք են բերվել, ոչ միայն ծառայություններ, այլ նաև այդ ծառայությունը մատուցելու համար անհրաժեշտ ապրանքներ և ապրանքանյութական արժեքներ և վճարվել է դրանց դիմաց: Հետևաբար, այդ արժեքները պետք է սահմանված կարգով մուտքագրվեին և հաշվառվեին, ինչպես կատարվել է այդ պայմանագրի շրջանակում ձեռքբերված որոշ ապրանքների դեպքում /ամբիոն, լեդ լույսեր, գրապահարան/: Գույքի հետվերադարձը, հանձման-ընդունման ակտի և փոխադարձ ակտի կազմման պահանջը սահմանված է նաև պայմանագրի 1.4 և 3.3 կետերով

Վարագույրների և գորգածածկի ձեռքբերման փաստաթղթերի բացակայության վերաբերյալ, ըստ էության, առարկություն չի ներկայացվել:

1.3 Անհամապատասխանություն

Հիմնադրամի կողմից ձեռքբերված ապրանքները միջոցառումներումները իրականացնողի կողմից օգտագործվելուց հետո չեն վերադարձվել հիմնադրամին չեն մուտքագրվել պահեստ և չեն

2015 թվականի հունվարի 27-ին Հիմնադրամը, առանց պայմանագիր կնքելու, Նաիրա Սարգսյան Ա/Ձ-ից ձեռք է բերել 840.0 հազ. դրամ արժեքով 350 ք/մ հատակի փռվածք, 1 ք/մ-ի գինը 2400 դրամ /առանց ԱԱՀ/: Փռվածքը, առանց պայմանագրի կնքման, համաձայն 04.02.2015 թվականին դուրս գրված թիվ 1 հաշիվ ապրանքագրի, տեղադրվել է Արթուր Հարությունյան Ա/Ձ-ի կողմից մեկ ք/մ-ը 1000 դրամ արժեքով /առանց ԱԱՀ/

Ըստ հիմնադրամի մեկնաբանության փռվածքը տեղադրվել է ՀՀ կառավարության Ընդունելությունների տանը, որտեղ 2015 թվականի մարտի 18-ին պետք է անցկացվեր Արարատի ստորոտին Միջազգային մեդիա ֆորումը:

Հատակի փռվածքը՝ գումարով 840.0 հազ. դրամ, միջոցառումից հետո չի վերադարձվել, չի մուտքագրվել պահեստ և չի հաշվառվել որպես նյութական արժեք /հավելված 3/:

Հիմնադրամի առարկությունը՝

2015 թ. հունվարի 27-ին Հիմնադրամը Նաիրա Սարգսյան ԱՁ-ից ձեռք է բերել 350 մետր քառակուսի հատակի փռվածք, արժեքը՝ 2400 ՀՀ դրամ 1 մետր քառակուսու համար, ընդհանուր արժեքը՝ 840,000 ՀՀ դրամ: 2015 թ. հունվարի 27-ին Կատարողը դուրս է գրել հաշիվ ապրանքագիր, իսկ պատվիրատուն էլ կատարել է վճարումը, ինչը, ինքնին, վկայում է ծառայության պատշաճ կատարման և պատվիրատուի կողմից դրա ընդունման մասին: Քանի որ հաշիվ ապրանքագիրը պարունակում է անհրաժեշտ ամբողջ

տեղեկատվությունը, պայմանագրի առկայությունը պարտադիր չէ: Պատվիրատուի կողմից կատարված վճարումը, ինքնին, վկայում է ծառայության պատշաճ կատարման և պատվիրատուի կողմից դրա ընդունման մասին (հաշիվ ապրանքագիրը: Հատակի փռվածքը՝ 840,000 ՀՀ դրամի մասով, պահեստ վերադարձնելու հնարավորությունը բացակայել է, քանի որ ամբողջ ձեռքբերվածը՝ օգտագործվել է, փռվել է հատակին և հետո հնարավոր չի եղել այն ապամոնտաժել: 2015 թ. փետրվարի 04-ին Հիմնադրամը Արթուր Հարությունյան ԱՁ-ից ձեռք է բերել 350 մետր քառակուսի հատակի փռվածքի տեղադրման աշխատանքներ, 1 մետր քառակուսին՝ 1,000 ՀՀ դրամ: 2015 թ. փետրվարի 04-ին Կատարողը դուրս է գրել հաշիվ ապրանքագիր, իսկ պատվիրատուն էլ կատարել է վճարումը, ինչը, ինքնին, վկայում է ծառայության պատշաճ կատարման և պատվիրատուի կողմից դրա ընդունման մասին: Քանի որ հաշիվ ապրանքագիրը պարունակում է անհրաժեշտ ամբողջ տեղեկատվությունը, պայմանագրի առկայությունը պարտադիր չէ: Պատվիրատուի կողմից կատարված վճարումը, ինքնին, վկայում է ծառայության պատշաճ կատարման և պատվիրատուի կողմից դրա ընդունման մասին (հաշիվ ապրանքագիրը:

Հաշվեքննիչ պալատի արձագանքը՝

Հատակի փռվածքը, որպես ապրանքանյութական արժեք պետք է վերադարձվեր, պահեստավորվեր, գնահատվեր և հաշվառվեր:

1.4 Անհամապատասխանություն

Ծառայությունների մատուցման պայմանագրերի շրջանակներում նախատեսվել և վճարվել են նաև այդ ծառայությունները մատուցելու համար անհրաժեշտ ապրանքների արժեքները սակայն դրանցից 55,163.6 հազ. դրամի արժեքով ապրանքներ հետ չեն վերադարձվել հիմնադրամի պահեստ և չեն հաշվառվել:

✓ 2015 թվականի ապրիլի 23-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կայանալիք հայոց ցեղասպանության զոհերի սրբադասման և ապրիլի 24-ին Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում կայանալիք միջոցառումների տեխնիկական սպասարկման /կավրալիտապատում և կոնստրուկցիաների պատրաստում/ աշխատանքների համար Հիմնադրամը 9,100.0 հազ. դրամ արժեքով պայմանագիր է կնքել □Արթուր Հարությունյան□ ԱՁ-ի հետ:

Չնայած նրան, որ միջոցառումից հետո 2650քմ հատակի փռվածքը գումարով 4,849.6 հազ. դրամ և պատրաստված կոնստրուկցիաները՝ գումարով 1,600.0 հազ. դրամ, ապամոնտաժվել են և ապամոնտաժման դիմաց վճարվել է, դրանք չեն վերադարձվել, չեն մուտքագրվել պահեստ և չեն հաշվառվել որպես նյութական արժեք: /հավելված 4/:

✓ 2015 թվականի ապրիլի 23-ին Մայր աթոռ Սուրբ Էջմիածնում կայանալիք հայոց ցեղասպանության զոհերի սրբադասման արարողության համար արգելափակոցների /մետաղական 2.5մ x 1մ/ և ''Լեդ'' էկրանների համար նախատեսված կոնստրուկցիաների /9.5մ x 5.5մ/ պատրաստման և տեղադրման համար ''Վարդգես Ճուղարյան'' Ա/Ձ-ի հետ 01.04.2015 թվականին պայմանագիր է կնքվել 32,200.0 հազ. դրամ արժեքով:

Օգտագործված 300 հատ արգելափակոցներից՝ 35-ը գումարով 840.0 հազ. դրամ և 5 հատ կոնստրուկցիաները գումարով 25,000.0 հազ. դրամ, միջոցառումից հետո չեն վերադարձվել, չեն մուտքագրվել պահեստ և չեն հաշվառվել որպես նյութական արժեք /հավելված 5/:

✓ Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի տարածքում մալուխների և խողովակների ձեռքբերման և մոնտաժման, տարածքի բարեկարգման և ձևավորման աշխատանքների համար 02.04.2015 թվականին ''Սթեյջ Դիզայն'' ՍՊԸ-ի հետ կնքվել է 16,097.9 հազ. դրամ արժեքով պայմանագիր:

Իրականացված միջոցառումից հետո հիմնադրամ չեն վերադարձվել, չեն մուտքագրվել պահեստ և չեն հաշվառվել որպես նյութական արժեք, նախահաշվով նախատեսված մեկ հատ համակարգիչը /նոութբուկ/ 250.0 հազ. դրամ, ձեռք բերված և տարածքի բարեկարգման համար տեղադրված տոմետները 250.0 հազ. դրամ, տարբեր տեսակի մալուխները /կաբել/ 2700 մետր երկարությամբ 6,515.0 հազ. դրամի և տարբեր տեսակի խողովակները՝ 2700 մետր երկարությամբ 2,170.0 հազ. դրամի /հավելված 6/:

✓ Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում հեռուստատեսային տաղավարի կառուցման, բեմահարթակի մոնտաժման և ապամոնտաժման համար ''Ֆիլիշին'' ՍՊԸ-ի հետ կնքվել են 30,200.5 հազ. դրամ արժեքով երեք պայմանագրեր:

Միջոցառումից հետո ապամոնտաժված հեռուստատաղավարը և պոլիկարբոնատից անմոռուկը, առանց արժևորման, հանձնվել է պահեստ, որից հետո կոնցեսիոն կառավարման, իսկ պայմանագրի շրջանակում ձեռք բերված 1 հատ օդորակիչը և հեռուստատեսային լույսերի համար մետաղական խողովակներով պատրաստված կոնստրուկցիաները՝ գումարով 692.4 հազ. դրամ, որպես նյութական արժեք չեն վերադարձվել և չեն հաշվառվել /հավելված 7/:

✓ 2015 թվականի հոկտեմբերի 25-ից-26-ը ''Կառավարության ընդունելությունների տանը'' կայանալիք միջոցառման շրջանակներում դեկորացիաների պատրաստման և սրահների ձևավորման համար Հիմնադրամը պայմանագիր է կնքել ''Ստեյջ Ստայլ'' ՍՊԸ-ի հետ 5,834.4 հազ. դրամ արժեքով:

Կնքված պայմանագրի անբաժան մասը կազմող Հավելվածով նախատեսված ցանկում նշված 300.0 հազ. դրամ արժեքով կավրալինի տեղադրման աշխատանքների իրականացման համար գորգածածկի ձեռքբերումը հիմնադրամի կողմից չի հիմնավորվում: Հիմնադրամի կողմից այդ աշխատանքների համար գորգածածկ ձեռք չի բերվել, սակայն կապալառուին վճարվել է գորգածածկի տեղադրման գումար 300.0 հազ. դրամ:

Իրականացված միջոցառումից հետո Հիմնադրամ չի վերադարձվել, չի մուտքագրվել պահեստ և չի հաշվառվել որպես նյութական արժեք պայմանագրով նախատեսված գույքը և ապրանքանյութական արժեքները՝ գումարով 3,787.0 հազ. դրամ /հավելված 8/, ինչպես նաև 400 քմ գորգածածկը, որի ձեռքբերումը չի հիմնավորվում:

✓ 2015 թվականի հունվարի 29-ին ''Հեփի Իվենթ'' ՍՊԸ-ի հետ կնքվել է Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում կայանալիք միջոցառման տեխնիկական միջոցների ապահովման համար պայմանագիր 4,769.4 հազ. դրամ արժեքով:

Իրականացված միջոցառումից հետո հիմնադրամ չի վերադարձվել, չի մուտքագրվել պահեստ և չի հաշվառվել որպես նյութական արժեք Ծիծեռնակաբերդի համալիրում տեղադրված՝ 54ք/մ հատակի փռվածքը՝գումարով 129.6 հազ. դրամ /հավելված 9/:

✓ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Հայոց ցեղասպանության զոհերի սրբադասման արարողության համար լուսային, ձայնային համակարգերի և լուսադիոդային էկրանների,

Հանրապետության հրապարակում 23.04.2015 թվականին System of a down խմբի և 24.04.2015 թվականի Orchestra համերգների համար շարժական հեռուստակայանի էլեկտրականության ապահովման, լրագրողների համար հարթակի և Ծիծեռնակաբերդում մեդիա կենտրոնի պատրաստման համար 26,550.0 հազ. դրամ արժեքով պայմանագիր է կնքվել ''ՄԵԳԱՊՐՈՖ'' ՍՊԸ-ի հետ: Իրականացված միջոցառումից հետո հիմնադրամ չի վերադարձվել, չի մուտքագրվել պահեստ և չի հաշվառվել որպես նյութական արժեք, պայմանագրով նախատեսված մետաղական կոնստրուկցիաներով պատրաստված մեդիակենտրոնը՝ գումարով 8,100.0 հազ. դրամ և մեդիակենտրոնում տեղադրված մալուխները՝ 980.0 հազ. դրամ արժեքով: /հավելված 10/:

Հիմնադրամի առարկությունը՝

Առարկություններում հիմնականում նշվում է քանի որ պայմանագրերը հանդիսացել են ծառայությունների մատուցման պայմանագրեր և վճարումները կատարվել են մատուցված ծառայությունների դիմաց, հետևաբար, որևէ ապրանք չպետք է հետ վերադարձվեր: Բացի այդ նշվել է, որ 35 հատ արգելափակոցներ գողացվել են, հաղորդում չենք ներկայացրել: 5 հատ կոնստրուկցիաների մասով հայտնում ենք, որ առկա են կտրտված, մասնատված վիճակով, քանի որ չափսերով շատ մեծ են եղել և որպես մեկ ամբողջություն հնարավոր չէր պահպանել: Բերվել են պահեստ, մուտքագրվել, սակայն, չենք հաշվառել:

Հաշվեքննիչ պալատի արձագանքը՝

Պայմանագրերով նախատեսվել և արձանագրություններով ընդունվել և վճարվել են ոչ միայն զուտ ծառայությունների մատուցումները, այլ նաև այդ ծառայությունները մատուցելու համար անհրաժեշտ ապրանքներն և ապրանքանյութական արժեքները, հետևաբար այդ արժեքները պետք է հետ վերադարձվեին, սահմանված կարգով մուտքագրվեին և հաշվառվեին:

1.5 Անհամապատասխանություն

Որոշ դեպքերում ապրանքները ձեռք են բերվել շուկայական գներից 3 անգամ բարձր գներով:

2015 թվականի ապրիլի 23-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կայանալիք հայոց ցեղասպանության զոհերի սրբադասման և 2015 թվականի ապրիլի 24-ին Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում կայանալիք միջոցառումների տեխնիկական սպասարկման /կավրալիտապատում և կոնստրուկցիաների պատրաստում/ աշխատանքների համար Հիմնադրամի և Արթուր Հարությունյան ԱՁ-ի միջև կնքված 9,100.0 հազ. դրամ արժեքով պայմանագրի շրջանակում Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում իրականացվել է 1000 ք/մ կավրալիտի ապահովում և տեղադրում 2,880.0 հազ. դրամով, մեկ ք/մ-ի արժեքը՝ 2880 դրամ /առանց ԱԱՀ/: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կայանալիք հայոց ցեղասպանության զոհերի սրբադասման միջոցառման համար իրականացվել է 1650 ք/մ կավրալիտի տրամադրում և տեղադրում 4,620.0 հազ. դրամով, մեկ ք/մ-ի արժեքը 2800 դրամ /առանց ԱԱՀ/:

Շուկայական գների ուսումնասիրությունից պարզվել է, որ մեկ ք/մ հատակի փռվածքի գինը շուկայում այդ ժամանակահատվածում կազմել է 1300-ից 1500 դրամ, այդ թվում՝ հարկերը, իսկ տեղադրման արժեքը մեկ ք/մ-ի համար կազմել է 500 դրամ, այդ թվում հարկերը, կամ տնօրինությունը հատակի փռվածքը ձեռք է բերել և տեղադրել շուկայական արժեքից շուրջ 2,200.0 հազ. դրամով ավելի թանկ:

✓ 2015 թվականի հունվարի 27-ին Հիմնադրամը, առանց պայմանագիր կնքելու, □Նաիրա Սարգսյան□ Ա/Ձ-ից ձեռք է բերել 840.0 հազ. դրամ արժեքով 350 ք/մ հատակի փռվածք, 1 ք/մ-ի գինը 2400 դրամ /առանց ԱԱՀ/: Այն տեղադրելու աշխատանքն, առանց պայմանագիր կնքելու, մեկ ք/մ-ը 1000 դրամ արժեքով /առանց ԱԱՀ/ կատարել է □Արթուր Հարությունյան□ Ա/Ձ-ն,

Շուկայի ուսումնասիրությունից պարվել է, որ մեկ քմ հատակի փռվածքի գինը և տեղադրման արժեքը այդ ժամանաահատվածում կազմել են համապատասխանաբար 1300-1500 դրամ և 500 դրամ (այդ թվում հարկերը) կամ Հիմնադրամը հատակի փռվածքը ձեռք է բերել և տեղեդրել շուկայական գներից 728.0 հազ դրամով թանկ:

✓ Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի տարածքում մալուխների և խողովակների ձեռքբերման և մոնտաժման, տարածքի բարեկարգման և ձևավորման աշխատանքների համար 02.04.2015 թվականին ''Սթեյջ Դիզայն'' ՍՊԸ-ի հետ կնքված 16,097.9 հազ. դրամ արժեքով պայմանագրի շրջանակում մալուխները և խողովակները ձեռք են բերվել ՀՀ ֆինանսների նախարարության ''Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն'' ՊՈԱԿ-ի կողմից թողարկվող ամենամսա ինֆորմացիոն տեղեկագրում սահմանված գներից էականորեն բարձր գներով: Մասնավորապես՝ երեք տեսակի մալուխները և հինգ տեսակի խողովակները, որոնց շուկայական արժեքը ըստ տեղեկագրերի կազմել են 1,550.0 հազ. դրամ, ձեռք են բերվել 4,920.0 հազ. դրամով կամ 3,370.0 հազ. դրամ ավելի թանկ:

Հիմնադրամի առարկությունը՝

Հիմնականում նշվել է որ Գնագոյացման վերլուծական կենտրոնի կողմից ներկայացված կողմնորոշիչ գները վերաբերելի են եղել միայն և բացառապես ՀՀ պետական կարիքների համար ձեռքբերվող նյութերին: Հիմնադրամը նյութեր, ապրանքանյութական արժեքներ ձեռք չի բերել ՀՀ պետական կարիքների համար: Չկա որևէ իրավական ակտ, որը կստիպեր Հիմնադրամին կամ Տնօրինությանը առաջնորդվել բացառապես գնագոյացման կենտրոն ՊՈԱԿ-ի հրապարակած գներով:

Հաշվեքննիչ պալատի արձագանքը՝

''Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն'' ՊՈԱԿ-ի կողմից թողարկված ՀՀ պետական կարիքների համար շինարարական նյութերի կողմնորոշիչ գները համարվում են տվյալ ժամանակահատվածում շուկայում գործող գները և մեր կողմից կատարվել է համեմատական վերլուծություն ձեռք բերման և շուկայական գների միջև:

1.6 Անհամապատասխանություն

Ավելի վճարված ԱԱՀ 300 հազ. դրամ

Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում հեռուստատեսային տաղավարի

ապամոնտաժումը առանց պայմանագիր կնքելու իրականացվել է ''Ֆիլիշին'' ՍՊԸ-ի կողմից 1,800.0 հազ. դրամ արժեքով: Գնի մեջ ներառվել է ԱԱՀ և վճարվել դրա դիմաց՝ հաշվի չառնելով այն փաստը, որ Հիմնադրամի կողմից իրականացվող ''Հիշում եմ և պահանջում'' ծրագրի միջոցառումների շրջանակում ներգրավված բոլոր աշխատանքները և ծառայությունները ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 22.06.2015թ.-ի թիվ 330-Ա որոշմամբ ազատվել են ԱԱՀ-ից, կամ Հիմնադրամի կողմից ընկերությանը ավելի է վճարվել 300.0 հազ. դրամ:

Հիմնադրամի առարկությունը՝

Ապամոնտաժման համար Պատվիրատուն դիմել է կատարողին, վճարել 1,800,000 ՀՀ դրամ՝ ԱԱՀ ներառյալ: Ճիշտ է, Հիմնադրամը կառավարության որոշմամբ ազատված էր ԱԱՀ-ից, սակայն, յուրաքանչյուր պայմանագրի դեպքում ՀՀ կառավարությունը ցուցաբերում էր ինդիվիդուալ մոտեցում և յուրաքանչյուր պայմանագիր ներկայացվում էր կառավարությանը՝ ԱԱՀ-ից ազատման հաստատման նպատակով: Ելնելով հրատապությունից, որ անհրաժեշտ է շտապ ապամոնտաժել, Հիմնադրամը չի դիմել կառավարություն, քանի որ, եթե դիմեր, սպասեր կառավարության կողմից հաստատմանը՝ դա տևելու էր շուրջ մեկ ամիս, իսկ Հիմնադրամը չէր կարող սպասել, ապամոնտաժումը հրատապ էր:

Հաշվեքննիչ պալատի արձագանքը՝

Ըստ էության առարկություն չի ներկայացվել: Տրվել է պարզաբանում:

1.7 Անհամապատասխանություն

System of a down խմբի համերգը տևել է ընդամենը 2,5 ժամ այնինչ այդ համերգը լուսաբանող շարժական հեռուստակայինին էլեկտրաէներգիայով ապահովելու համար աշխատեցրած գեներատորի դիզ վառելիքի ծախսը հաշվարկվել է 88,7 ժամ աշխատելու համար:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Հայոց ցեղասպանության զոհերի սրբադասման արարողության համար լուսային, ձայնային համակարգերի և լուսադիոդային էկրանների, Հանրապետության հրապարակում 23.04.2015 թվականին System of a down խմբի և 24.04.2015 թվականի Orchestra համերգների համար շարժական հեռուստակայանի էլեկտրականության ապահովման, լրագրողների համար հարթակի և Ծիծեռնակաբերդում մեդիա կենտրոնի պատրաստման համար 26,550.0 հազ. դրամ արժեքով պայմանագիր է կնքվել ''ՄԵԳԱՊՐՈՖ'' ՍՊԸ-ի հետ:

Հանրապետության հրապարակում 23.04.2015 թվականին System of a down խմբի համերգի ժամանակ շարժական հեռուստակայանին գեներատորով էլեկտրականության ապահովման համար, ընկերությանը վճարվել է 1,200.0 հազ. դրամ՝ երեք օրվա վճար, յուրաքանչյուր օրվա համար 400.0 հազ. դրամ, իսկ պահանջվող դիզելային վառելիքի համար 1,800.0 հազ. դրամ /4500լ*400դրամ/ յուրաքանչյուր օրվա համար 1500 լիտր՝ հաշվի չառնելով, որ համերգը կայանալու է մեկ օր:

Ընկերության կողմից շահագործված գեներատորի /250կվտ/ տեխնիկական անձնագրի ցուցանիշների համաձայն մեկ ժամվա դիզվառելիքի ծախսը սահմանված է 50.7 լիտր, կամ ընկերության կողմից շահագործված գեներատորը ըստ ծախսած վառելիքի քանակի, օրվա ընթացքում աշխատել և ամբողջ հզորությամբ էլ. էներգիա է ապահովել 29.58 ժամ անդադար /1500:50.7/: System of a down խմբի համերգը տեղի է ունեցել 23.04.2015 թվականին և տևողությունը կազմել է 2 ժամ 24 րոպե 16 վայրկյան, իսկ հիմնադրամի կողմից ընկերությանը էլ. Էներգիայի ապահովման նպատակով վճարվել է երեք օրվա համար, օրական 29,58 ժամ անդադար աշխատանքի համար:

2015 թվականի ապրիլի 21-ին գեներատորի վարձակալման և էլ. Էներգիայի արտադրության կարիք չի եղել, քանի որ շարժական հեռուստակայանի վարձակալման պայմանագիրը ընդգրկել է 2015 թվականի ապրիլի 22-ը և ապրիլի 23-ը: Հիմնադրամը ընկերությանը առանց հիմնավորման երկու օրվա համար ավելի է վճարել շուրջ 2,000.0 հազ դրամ /600+600+400+400/:

2015 թվականի ապրիլի 22-ին և 23-ին շարժական հեռուստակայանով ծառայությունների մատուցման համար հիմնադրամը 31.03.2015 թվականին 48.000 եվրո արժեքով պայմանագիր է կնքել ուկրաինական ''Инженер-Сервис'' ООО-ի հետ, որով որպես տեխնիկական պահանջ նախատեսվել է, որ հիմնադրամը շարժական հեռուստակայանի աշխատանքի համար պետք է ապահովեր 63amp. 5pCEE - 3*380V+N+G սպառման համար անհրաժեշտ 25KW էլեկտրոէներգիա: Սակայն, ըստ վճարված վառելիքի ծախսի, գեներատորն աշխատել է ամբողջ ծանրաբեռնվածությամբ և արտադրել 10 անգամ ավելի շատ էլ. Էներգիա:

Կնքված պայմանագրով նախատեսվել է Հանրապետության հրապարակում 24.04.2015 թվականի Orchestra համերգների համար շարժական հեռուստակայանին գեներատորով էլեկտրականության ապահովման ծառայություն, որի համար վճարվել է 870.0 հազ. դրամ, ներառյալ՝ վառելիքի արժեքը/: Հարկ է նշել, որ 24.04.2015 թվականին հանրապետության հրապարակում շարժական հեռուստակայան չի աշխատել, ''Инженер-Сервис'' ООО-ի հետ պայմանագրի ժամկետն ընդգրկել է 2015 թվականին ապրիլի 22-ից 23-ը ներառյալ, իսկ այլ ընկերությունների հետ նման ծառայությունների համար պայմանագիր չի կնքվել, հետևաբար ընկերությանը վճարվել է 870.0 հազ. դրամ ավելի գումար:

Մայր Աթոռ սուրբ Էջմիածնում հայոց ցեղասպանության զոհերի սրբադասման արարողության ժամանակ 250 կվտ հզորությամբ գեներատորով լուսային, ձայնային համակարգերի և լուսադիոդային էկրանների էլեկտրականության ապահովման համար ընկերությանը վճարվել է երկու օրվա համար 600.0 հազ. դրամ, իսկ վառելիքի ծախսի դիմաց 240.0 հազ. դրամ /600լ*400դ/, մեկ օրվա համար 300 լիտր:

Մայր Աթոռ սուրբ Էջմիածնում հայոց ցեղասպանության զոհերի սրբադասման արարողությունը տեղի է ունեցել 23.04.2015 թվականին, տևողությունը կազմել է 2 ժամ 19 րոպե 11 վայրկյան և 22.04.2015 թվականին գեներատորը 6 ժամ անդադար աշխատեցնելու և էլեկտրականությամբ ապահովելու անհրաժեշտություն չի եղել, սակայն վճարվել է երկու օրվա համար, կամ ավելի ծախս է կատարվել՝ 420.0 հազ. դրամ /300.0+120.0/:

Անհրաժեշտ է նշել, որ Հիմնադրամը Հանրապետության հրապարակում 23.04.2015 թվականին System of a down խմբի և 24.04.2015 թվականի Orchestra համերգները էլեկտրականությամբ ապահովելու համար 38,303.4 հազ. դրամ արժեքով պայմանագիր է կնքել ՌԴ Մոսկվա քաղաքում գրանցված ''Мобильные ЭнергоСистемы''

ՕՕՕ-ի հետ, որն էլեկտրաէներգիան մատակարարել է իր կողմից ՀՀ ժամանակավոր ներկրած՝ երեք 200 կվտ և մեկ 320 կվտ հզորության գեներատորներով միաժամանակյա:

Հիմնադրամի առարկությունը՝

Մեգապրոֆ ՍՊԸ-ի և Հիմնադրամի միջև 14.04.2015 թ. կնքվել է ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր: Պայմանագրի 1.4 կետի համաձայն՝ ծառայությունները համարվում են մատուցված՝ հանձնման-ընդունման ակտի ստորագրման պահից: Առկա է կատարողական ակտ, դուրս գրված և վճարված հաշիվ ապրանքագրեր:

Պալատը ներկայացրել է, սակայն Պալատը ուսումնասիրության առարկա չի դարձրել System of a Down խմբի կողմից ներկայացված անգլերեն լեզվով տեխնիկական առաջադրանքը, որով վերջինս հստակ նշել է գեներատորների քանակը, հզորությունը, աշխատանքի օրերի քանակը, ծախսվող դիզվառելիքի քանակը, որը եղել է պարտադիր կատարման, առանց դրա համերգ չէր լինի: Բացի այդ հարկ է Պալատի ուշադրությունը հրավիրել միջազգային պրակտիկային, առ այն, որ միջազգային մակարդակի նմանատիպ խոշոր համերգներին պարտադիր պայման է գեներատորներով աշխատելը:

Դիզելային վառելիքի և գեներատորի մասով. Հարկ ենք համարում նշել, որ մինչև միջոցառումների սկսվելը կազմակերպվել, տեղի են ունեցել փորձեր, նախապատրաստական աշխատանքներ՝ 10 օր շարունակ, այդ իսկ պատճառով էլ նշված օրերի համար օգտագործվել է և դիզելային վառելիքը և գեներատորները, որը հիմնավորված է, եղել է անհրաժեշտ և պարտադիր՝ միջոցառումը հավուր պատշաճի կազմակերպելու համար:

Հիմնադրամի հիմնավորումը Ինժեներ սերվիսի մասով. Ծրագրի ծանրաբեռնվածությունից ելնելով՝ անհրաժեշտություն է առաջացել, որ շարժական հեռուստատեսության կայանը աշխատի և՛ Ֆիլհարմոնիայի դահլիճում, և՛ Խոր Վիրապում: Ուստի, փաստացի ավելացվել է երկու աշխատանքային վայր՝ Ֆիլհարմոնիայի դահլիճը և Խոր վիրապը, որպեսզի այս երկու վայրերում ևս անցկացվեն նկարահանումները: 24.04.2015թ. շարժական հեռուստատեսության կայանը աշխատել է Ֆիլհարմոնիայի դահլիճում, քանի որ եղանակային անբարենպաստ պայմանների պատճառով հնարավոր չի եղել աշխատել Հանրապետության հրապարակում:

Բացի այդ, դիզելային վառելիքի ծախսը եղել է, քանի որ կատարվել են նախապատրաստական աշխատանքներ, փորձեր՝ միջոցառումները հավուր պատշաճի կազմակերպելու համար:

Մոբիլ էներգոսիստեմ ընկերության և Հիմնադրամի միջև 30.03.2015թ. կնքվել է սարքավորումների վարձակալության պայմանագիր, որով վարձատուն ժամանակավորապես Հիմնադրամին է տրամադրել սարքավորումներ: Սարքավորումները պատկանել են վարձատուին: Վարձակալին տրամադրվել է օգտագործման իրավունքով այլ ոչ թե սեփականության: Հետևաբար, այն պնդումը, որ մետաղական կոնստրուկցիաներով պատրաստված մեդիակենտրոնը և մալուխները չեն հաշվառվել և վերադարձվել պահեստ, չունի իրավական հիմնավորվածություն և առարկայազուրկ է: Չի կարող հաշվառվել և պահեստ վերադարձվել մի ապրանք, որը օգտագործվել է վարձակալական հիմունքներով այլ ոչ թե սեփականատիրական հիմունքներով և պայմանագրի ավարտին էլ վերադարձվել է վարձատուին:

19.09.2019թ.-ին թիվ 2-405 նամակով Հիմնադրամը ներկայացրել է լրացում նախկինում ներկայացրած առարկություններին, որով նշել է, որ Պալատի կողմից արձանագրված չմուտքագրված մեդիակենտրոնը և մեդիակենտրոնում տեղադրված մալուխները առկա են, դրանք բերվել են պահեստ, մուտքագրվել են, սակայն չեն հաշվառվել:

Հաշվեքննիչ պալատի արձագանքը՝

Արձանագրության մեջ անդրադարձ չի եղել Մոբիլ էներգոսիստեմ ընկերությունից սարքավորումների վարձակալությանը, և System of a Down խմբի համերգի կազմակերպման ժամանակ շահագործված գեներատորների քանակին, հզորությունը, ինչպես նաև աշխատանքի օրերի և ծախսվող դիզվառելիքի քանակին, իսկ ''Ինժեներ սերվիս'' ընկերության մասով անհամապատասխանություն չի արձանագրվել: Արձանագրությունում վերլուծվել է շարժական հեռուստատեսության կայանի աշխատանքը: Պայմանագրի շրջանակում ձեռքբերված մետաղական կոնստրուկցիաներով պատրաստված մեդիակենտրոնը և մալուխները, որպես ապրանքանյութական արժեք պետք է վերադարձվեին, պահեստավորվեին, գնահատվեին և հաշվառվեին:

1.8 Անհամապատասխանություն

Չհաշվառված 6940.5 հազար դրամի ապրանքանյութական արժեքներ

✓ Հիմնադրամն առանց պայմանագրի ,,ԷՅՎԻԷՆ Նահապետյաններ'' ՍՊԸ-ից՝ համաձայն դուրս գրված հաշիվ ապրանքագրի, ձեռք է բերել 750 հատ ցուցանակներ՝ 6,750.0 հազ. դրամ /առանց ԱԱՀ/ արժեքով:

Ձեռքբերված ցուցանակները Հիմնադրամի կողմից չեն մուտքագրվել պահեստ և որպես արժեք չեն հաշվառվել /հավելված 11/: Ցուցանակների օգտագործման վերաբերյալ Հիմնադրամը չունի ոչ մի հիմնավորում:

✓ Կախիչ և աթոռ ձեռքբերելու համար Հիմնադրամը 214.0 հազ. դրամ արժեքով պայմանագիր է կնքել ,,Կարեն Սահակյան'' Ա/Ձ-ի հետ: Ձեռքբերված 1 հատ կախիչը՝ գումարով 18,0 հազ. դրամ չի մուտքագրվել և չի հաշվառվել /հավելված 12/:

✓ Համակարգչային տեխնիկայի՝ էլ. կրիչների, ցանցային լարերի, պատճենահանման սարքերի, տպիչների, ռեեստրների, սվիչների ձեռքբերման համար Հիմնադրամը 6,971.0 հազ. դրամ արժեքով պայմանագիր է կնքել ''Բլիցքոմփ'' ՍՊԸ-ի հետ: Ձեռքբերված ապրանքներից, 15 հատ 16 GB /FLACH SANDISK/ էլ. կրիչները՝ գումարով 172.5 հազ. դրամ հիմնադրամի կողմից չեն մուտքագրվել և չեն հաշվառվել /հավելված 13/:

Հիմնադրամի առարկությունը՝

Հիմնադրամը Էյվիեն Նահապետյան ՍՊԸ-ից պատվիրել և ստացել է ցուցանակներ, արժեքը՝ 6,750,000 ՀՀ դրամ: Կողմերը ստորագրել են հանձնման

ընդունման ակտ, որով ամրագրված է, թե ինչ և ինչ քանակով է հանձնվել պատվիրատուին:

Առկա է կատարողի կողմից դուրս գրված հաշիվ ապրանքագիր, որը ստորագրված է պատվիրատու-Հիմնադրամի կողմից: Հաշիվ ապրանքագրի դուրս գրումը և պատվիրատուի կողմից այն հաստատելը և վճարելը, ինքնին, վկայում է պայմանագրային պարտավորության գոյության, պայմանագրային պարտավորության պատշաճ կատարման մասին: Հիմնավորումն առկա է՝ հաշիվ ապրանքագրի և հանձնման ընդունման ակտի տեսքով:

Ձեռքբերված ցուցանակները օգտագործվել են կոնկրետ ծրագրի իրականացման համար՝ Ռուբեն Գալիչյանի «A Glance into the History of Armenia through Cartographic Documents»/ «Հայաստանի պատմությունը քարտեզներով» գրքի տարբեր երկրներում Հայաստանի դեսպանատների կողմից ցուցահանդեսների կազմակերպման համար: Հետևաբար, Հիմնադրամի կողմից պահեստ ետ վերադարձման ենթակա ապրանքանյութական արժեքներ չեն եղել:

2015 թ. հոկտեմբերի 25-ին Հիմնադրամի և Լոմա Սիսթեմս ՍՊԸ-ի միջև կնքվել է գույքի կոնցեսիոն կառավարման պայմանագիր: Նշված պայմանագրի հավելված 1-ի համաձայն, կետ 18՝ Հիմնադրամը երկու հատ կախիչ հանձնել է Լոմա Սիսթեմս ՍՊԸ-ին: Իսկ կախիչներից երրորդը տեղափոխության ընթացքում վնասվել է և հաշվառման ենթակա չի եղել: Այդ իսկ պատճառով էլ չի հաշվառվել:

Բլիցքոմփ ՍՊԸ-ից Հիմնադրամը ձեռք է բերել 15 հատ 16GB ծավալով հիշողության սարքեր՝ /Flash Sandisk/:

Հարկ է ընդգծել, որ Ձեռք բերված 15 հատ էլեկտրոնային կրիչները տրվել են «Արարատի ստորոտին» 4-րդ միջազգային մեդիաֆորումի մասնակից լրագրողներին և Հիմնադրամ վերադարձման ենթակա չեն եղել, այդ իսկ պատճառով չեն հաշվառվել:

Հաշվեքննիչ պալատի արձագանքը՝

Ձեռքբերված ցուցանակների բաշխումը չի հիմնավորվել: Կախիչների մասով Հիմնադրամի ներկայացրած առարկությունը, ըստ էության, պարզաբանում է: Էլեկտրոնային կրիչների բաշխումը չի հիմնավորվում:

1.9 Անհամապատասխանություն

Ֆիլմի ցուցադրումից ակնկալվող սակայն չստացված եկամուտ

Հիմնադրամը ԱՊՀ տարածքում ''ՍՊԻ'' Ֆիլմի ցուցադրման 50 տոկոսի իրավունքը ձեռքբերելու համար 30.12.2014 թվականին պայմանագիր է կնքել ''Մարս մեդիա Էնթերթեյմենթ'' ՍՊԸ-ի հետ՝ 106,000.0 հազ. դրամ արժեքով /200,000.0 եվրո/: Պայմանագիրն ուժի մեջ է մտել ստորագրման պահից և գործում է մինչև պայմանագրային պարտավորությունների կատարումը:

Պայմանագրի համաձայն ''Մարս մեդիա Էնթերթեյմենթ'' ՍՊԸ-ն ''ՍՊԻ'' ֆիլմի ցուցադրումից ստացված եկամտի 50%-ը պետք է փոխանցեր Հիմնադրամին, իսկ ստացված եկամտի և ցուցադրման համար կատարված գովազդային ծախսերի

վերաբերյալ պետք է Հիմնադրամին 2015թ.-ին ներկայացներ եռամսյակային, 2016թ.-ին կիսամյակային, իսկ սկսած 2017թ.-ից տարեկան հաշվետվություններ:

''Մարս Մեդիա Էնթերթեյմենթ'' ՍՊԸ-ի կողմից Հիմնադրամին տրամադրված 2015-2017 թվականների հաշվետվությունների համաձայն, ''Սպի'' ֆիլմի ցուցադրումից ստացված եկամուտները և ֆիլմի վարձույթի հետ կապված ծախսերը 31.12.2017թ. դրությամբ կազմել են համապատասխանաբար՝ 7,863 եվրո, ծախսերը՝ 49,972 եվրո:

''Մարս մեդիա'' ՍՊԸ-ն 01.07.2019 թվականի դրությամբ Հիմնադրամին ''ՍՊԻ'' ֆիլմի ցուցադրումից որևէ գումար չի փոխանցել, ըստ համացանցում զետեղված կայքերի տեղեկատվության ԱՊՀ տարածքում ֆիլմի ցուցադրումից միայն 2015 թվականին ստացվել է 140.2 հազ. ԱՄՆ դոլար եկամուտ: Անհրաժեշտ է նշել, որ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջազգայնացմանը և զոհերի հիշատակի ոգեկոչմանը նվիրված ծրագրերում որևէ գործունեության իրավունքի ձեռքբերման գումարների ծախս չի նախատեսվել:

Հիմնադրամի առարկությունը՝

Լիցենզիա ձեռք բերելու ծախսերի մասով.

Առկա է 100 ամյակի միջոցառումների համակարգող Վ. Սարգսյանի կողմից հաստատված նախահաշիվը: Տնօրինության գխավոր տնօրենը՝ հանձին Արման Ծատուրյանի, հիմք ընդունելով Վ. Սարգսյանի կողմից ստացած թույլտվությունը, <<Մարս Մեդիա Էնթերթեյմենթ>> ՍՊԸ-ին կատարել է վճարում՝ լիցենզիա ձեռք բերելու համար: Հետևաբար, լիցենզիա ձեռք բերելու ծախսը նախահաշվով եղել է նախատեսված:

Հաշվեքննիչ պալատի արձագանքը՝

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջազգայնացմանը և զոհերի հիշատակի ոգեկոչմանը նվիրված ծրագրերում որևէ գործունեության իրավունքի ձեռքբերման գումարների ծախս չի նախատեսվել:

1.10 Անհամապատասխանություն

Կազմակերպված համերգների տոմսերի վաճառքից ստացված եկամուտը՝ գումարով 46,734.9 հազ. դրամ, ըստ կնքված պայմանագրերի պետք է փոխանցվեր ՀՀ պետական բյուջե, սակայն հիմնադրամը ստացված գումարները պետական բյուջե չի փոխանցել, օգտագործել է սեփական կարիքների համար, իսկ չստացած գումարների համար քայլեր չի ձեռնարկել, ինչպես նաև չհիմնավորված ծախսերի դիմաց վճարել է 887.9 հազ. դրամ:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումների շրջանակում տարբեր քաղաքներում երաժշտական փառատոնի միջոցառումների կազմակերպման և անցկացման համար Հիմնադրամը 626,756.9 հազ. դրամ արժեքով, թվով 10 մասնակի ֆինանսավորման պայմանագրեր է կնքել ''Երևանյան հեռանկարներ միջազգային երաժշտական փառատոն'' ՀԿ-ի հետ: Ըստ ներկայացված հաշվետվությունների փաստացի ծախսը կազմել է 609,917.9 հազ. դրամ, ֆինանսավորումը՝604,139.5 հազ. դրամ: Ըստ կնքված պայմանագրի,

ֆինանսավորվողը պարտավոր էր կազմակերպված համերգից ստացված ողջ եկամուտը փոխանցեր ՀՀ պետական բյուջե:

Երևանում կազմակերպված Իսրայելի ֆիլհարմոնիկ նվագախմբի մասնակցությամբ կայացած համերգից (պայմանագիր թիվ 78/0308 կնքված 03.08.2015թ.) Հիմնադրամի հաշվին փոխանցվել է 3,472.9 հազ. դրամ, Բրյուսելում կայացած Բրյուսելի ազգային նվագախմբի համերգից (պայմանագիր թիվ 51/0405 կնքված 22.04.2015թ.) 8,721.2 հազ. դրամ, իսկ Նյու-Յորքում կայացած ''Հովեր'' երգչախմբի մասնակցությամբ համերգից (պայմանագիր թիվ 53/1905 կնքված 19.05.2015թ.)՝ 34,540.9 հազ. դրամ: Ընդհանուր առմամբ Հիմնադրամի հաշվին փոխանցվել է 46,734.9 հազ. դրամ, սակայն ՀՀ պետական բյուջե ոչ մի գումար Հիմնադրամի կողմից չի փոխանցվել: Ամբողջ գումարը հիմնադրամի կողմից օգտագործվել է սեփական կարիքների համար:

Հիմնադրամի առարկությունը՝

Հիմնադրամին տոմսերի վաճառքից վճարումներ եղել են միայն Երևանյան հեռանկարներ միջազգային երաժշտական փառատոն ՀԿ-ի կողմից՝ 3 պայմանագրերի շրջանակներում՝ ԹԻՎ 51/0405 պայմանագիրը՝ 22.04.2015 թվականին կնքված, թիվ 53/1905 պայմանագիրը՝ 19.05.2015 թվականին կնքված, թիվ 78/0308 պայմանագիրը: Վճարումները եղել են Իսրայելի Ֆիլհարմոնիկ նվագախմբի մասնակցությամբ Երևանում կազմակերպված համերգի տոմսերի վաճառքից ստացված գումարները, Բրյուսելում կայացած համերգի տոմսերի վաճառքից ստացված գումարները և Նյու Յորքում կայացած համերգի տոմսերի վաճառքից ստացված գումարները: Ընդհանուր առմամբ՝ 46,734.9 հազար ՀՀ դրամ, փոխանցվել են Հիմնադրամին:

Նշված պնդումը, որ պետք է վճարումներ կատարվեին պետական բյուջե, սակայն չեն կատարվել, իսկ Հիմնադրամն էլ հետևողական չի գտնվել, որ վճարումները կատարվեն պետական բյուջե, չի համապատասխանում իրականությանը, քանի որ պայմանագրի կողմ են հանդիսացել Հիմնադրամ հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումների տնօրինություն-ը և «Երևանյան հեռանկարներ միջազգային երաժշտական փառատոն» ՀԿ-ն: Այստեղ գործ ունենք երկկողմանի պայմանագրի հետ, այլ ոչ թե եռակողմ պայմանագրի հետ, և ՀՀ-ն չի հանդիսանում պայմանագրի կողմ, հետևաբար, ՀՀ պետական բյուջե վճարում կատարելու անհրաժեշտություն և համապատասխան պարտականություն ոչ Հիմնադրամը և ոչ էլ պայմանագրի մյուս կողմը չեն ունեցել:

Իսկ այն, որ Պայմանագրերի 1.3-րդ կետում նշված է, որ Ֆինանսավորվողը պարտավորվում է Համերգի կազմակերպումից ստացված ողջ եկամուտը փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ այն տրամաբանությամբ է շարադրված, որ քանի որ Տնօրինությունը ձևավորվել, ստեղծվել էր կոնկրետ նպատակով, կոնկրետ ժամկետով, այդ ժամկետի ավարտից հետո պետք է լուծարվեր, իսկ ֆինանսական միջոցները, որոնք Տնօրինության լուծարման պահին լինելու էին Տնօրինության հաշիվներում, Տնօրինության տիրապետության ներքո, ենթադրվում էր, որ պետք է փոխանցվեին ՀՀ պետական բյուջե: Տնօրինությունը լուծարվել է, իսկ Հիմնադրամի գլխավոր տնօրենը՝ Ա. Վարդանյանը, կարող էր Տնօրինության՝ ՀՀ կենտրոնական բանկում բացված հաշիվներում առկա դրամական միջոցները փոխանցել ՀՀ պետական բյուջե, սակայն չի փոխանցել, Տնօրինությունը այս մասով պատասխանատվություն չի կրում:

Հաշվեքննիչ պալատի արձագանքը՝

ՀՀ հաշվեքննիչ պալատի համար հիմք է հանդիսացել պայմանագրերով սահմանված համապատասխան կետի պահանջը:

1.11 Անհամապատասխանություն

Հիմնադրամի տնօրինության և Երևանյան հեռանկարներ միջազգային երաժշտական փառատոն ՀԿ-ի միջև 22.04.2015 թվականին կնքվել է պայմանագիր 26.04.2015 թվականին Բրյուսելում կազմակերպելու Բրյուսելի ազգային նվագախմբի համերգը: Բրյուսելում կայացած համերգի վերաբերյալ ՀԿ-ի կողմից ներկայացված հաշվետվության համաձայն վաճառվել է համերգի 544 տոմս (դահլիճի տարողությունը կազմում է 2052 տեղ):

Բրյուսելի ազգային նվագախմբի համերգի հաշվետվություններում բացակայում են Բրյուսել քաղաքում ավտոտրանսպորտի միջոցների վարձակալության (561 հազ. դրամ) և սրահի ձևավորման համար ծաղիկների (216.4 հազ. դրամ) ձեռքբերման հիմքերը: Ներկայացվել են միայն գնման ակտեր:

Հիմնադրամի առարկությունը՝

Երևանյան հեռանկարներ միջազգային երաժշտական փառատոն» ՀԿ-ի կողմից Հիմնադրամին ներկայացված են գնման ակտեր, քանի որ ավտոտրանսպորտային միջոցների /561.000 դրամ համարժեք եվրո/ վարձակալությունը և սրահի ձևավորման համար ծաղիկների ձեռքբերումը կատարվել են ֆիզիկական անձանցից, շուկայից: ՀԿ-ն ձեռք է բերել շուկայից, քանի որ դա ավելի մատչելի է եղել: Հաշվի առնելով, որ հարկային օրենսդրության տեսանկյունից ևս սա օրենքի խախտում չէ, վճարումներն իրականացվել են գնման ակտերի հիման վրա /Գնման ակտերը ներկայացված են Պալատին/:

Հաշվեքննիչ պալատի արձագանքը՝

Բրյուսելում նշված ծառայությունների դիմաց տրամադրվում են համապատասխան կտրոններ /չեկեր/:

1.12 Անհամապատասխանություն

Լոնդոնում և Հռոմում համերգների կազմակերպման համար, Անգլիայի և Իտալիայի քաղաքացիներ ''Ջ.Ի.''-ի ու ''Մ.Մ-ի հետ 29.05.2015թ. և 29.07.2015թ. համապատասխանաբար կնքվել են պայմանագրեր լրատվամիջոցների համար նյութերի պատրաստման, մամլո ասուլիսի և գովազդի կազմակերպման համար, որտեղ չի նշվել մատուցվելիք ծառայությունների ժամկետները, տևողությունը, ծավալները, իսկ գումարը վճարվել է կանխիկ, համապատասխանաբար 7,476.7 հազ. դրամ և 7,425.0 հազ. դրամ: Երկու դեպքում էլ մատուցված ծառայությունների վերաբերյալ կազմված հաշվետվությունները բացակայում են:

''Երևանյան հեռանկարներ միջազգային երաժշտական փառատոն'' ՀԿ-ն տարբեր տեսակի ծառայությունների մատուցման համար ''Էմիլիա Ռոմագնա Էվենթի'' ընկերության հետ 27.06.2015թ. կնքել է պայմանագիր՝ գումարով 149,878 եվրո, որում

ներառվել են նաև Հռոմում Լա Սկալա ֆիլհարմոնիկ նվագախմբի համերգը գովազդելու նմանատիպ ծառայություններ՝ 6300 եվրո արժեքով :

Հիմնադրամի առարկությունը՝

Անգլիայի և Իտալիայի քաղաքացիներ ‘‘Ջ.Ի.’’-ի ու ‘‘Մ.Մ-ի հետ Երևանյան հեռանկարներ ՀԿ-ն կնքել է պայմանագրեր լրատվամիջոցների համար նյութերի պատրաստման և մամլո ասուլիսների, գովազդի կազմակերպման համար: Գումարները նրանց վճարվել են կանխիկ եղանակով՝ դրամարկղի ելքի օրդերների միջոցով, որն ամբողջությամբ իրենից ներկայացնում է հիմնավորված ծախս /Փաստաթղթերը ներկայացված են Պալատին/:

Վերոնշյալ անձինք հանդիսանում են Իտալական Էմիլիո Ռոմանիա ընկերության և Ինվեն Պրայս կոնսալթինգ ընկերության ղեկավարներ, որոնք պատասխանատու էին անհավանական բնույթի և ծավալի PR 7 գովազդային փաթեթների իրականացման համար: Իրենց աշխատանքի դիմաց վճարված գումարը շատ խորհրդանշական է՝ համեմատ նրանց կատարած հայանպաստ աշխատանքի և այն ռիսկերի, որոնցով անցել են:

Բացի պայմանագրերից և ելքի օրդերներից՝ ներկայացված է բովանդակային հաշվետվություն, որտեղ կետ առ կետ առկա են երկու ընկերությունների և նրանց ղեկավարների կատարած աշխատանքը: Այդ հաշվետվությունները հիշեցնում են հաստափոր հատորներ, դրանք ընդգրկում եմ Նյու Յորք Թայմզից մինչև Լոնդոնի “Ինդեփենդենտ”-ում անվճար (Նյու Յորք Թայմզի նույն հոդվածի վճարը կազմում է մի քանի տասնյակ ԱՄՆ դոլարներ) հիմունքներով տպագրված հոդվածներ, հեռուստա-, ռադիոգովազդ, համացանց, մամուլի ասուլիսներ, ցեղասպանության լոգոյի տեղադրում փողոցներում, սրահների վրա, և շատ ավելին /Հատորները ֆիզիկապես գտնվում են Հիմնադրամում/:

Հաշվեքննիչ պալատի արձագանքը՝

Վերոնշյալ անձանց կողմից ներկայացված հաշվետվությունները ՀՀ հաշվեքննիչ պալատին չեն տրամադրվել:

1.13 Անհամապատասխանություն

Լա Սկալայի ֆիլհարմոնիկ նվագախմբի համերգի համար 22.07.2015 թվականին Էմիլիո Ռոմանիա ընկերության և Երևանյան հեռանկարներ միջազգային երաժշտական փառատոն ՀԿ-ի միջև կնքված պայմանագրով նախատեսվել է տոմսերի վաճառքից ստացված եկամտից Հիմնադրամին վճարել եկամտի 80 տոկոսը, սակայն որևէ գումար Հիմնադրամ չի փոխանցվել:

Հիմնադրամի առարկությունը՝

ՀՀ դեսպանատունն իտալացի գործընկերոջ հետ համատեղ իրականացրել է ահռելի աշխատանք՝ դահլիճը հրավիրյալներով “լցնելու” և կարևոր պաշտոնյաներ և լրատվամիջոցներ ներգրավելու համար, ինչն իրականում փայլուն կերպով հաջողվել է:

Հայտնում ենք, որ տոմսեր չեն վաճառվել, իսկ եթե տոմսեր չեն վաճառվել, հետևաբար, նաև բյուջե գումար վերադարձնելու հարց չի կարող առաջանալ:

Հաշվեքննիչ պալատի արձագանքը՝

Մեր կողմից արձանագրվել է պայմանագրային պարտավորությունների կատարման ընթացքը:

1.14 Անհամապատասխանություն

Հիմնադրամի տնօրինության և Երևանյան հեռանկարներ միջազգային երաժշտական փառատոն ՀԿ-ի միջև 19.05.2015 թվականին կնքվել է պայմանագիր Նյու Յորքում ''Հովեր'' երգչախմբի համերգի կազմակերպման համար: Ծրագրի շրջանակներում նախատեսվել է հյուրասիրության կազմակերպում 15-20 հոգու համար, որի համար նախատեսվել է 970.0 հազ. դրամ, փաստացի ծախսը կազմել է 1,216.8 հազ. դրամ: Որպես ծախս հիմնավորում ներկայացվել է 4 ծախսը հիմնավորող փաստաթուղթ, որից միայն մեկն է համապատասխանում ծրագրով նախատեսված համերգից հետո նախատեսված հյուրասիրությանը՝ գումարով 2 316.8 ԱՄՆ դոլար, կամ 1,106.3 հազ. դրամ:

Հիմնադրամի առարկությունը՝

Պալատը նշել է, որ Հովեր երգչախմբի համերգի համար նախատեսվել է հյուրասիրություն, որպես ծախսի հիմնավորում ներկայացվել է 4 փաստաթուղթ, սակայն դրանցից միայն մեկն է համապատասխանում ծրագրով նախատեսված համերգից հետո հյուրասիրությանը: Այս պնդումը սխալ է, քանի որ Նյու Յորքի Քարնեգի Հոլի համերգից հետո կազմակերպվել է հյուրասիրություն, որին ներկա են եղել մասնակից երաժիշտները՝ աշխարհահռչակ դաշնակահար Ե.Կ. իր հյուրերի հետ, դեսպան Տ.Ս՝ կնոջ հետ, ՄԱԿ-ում ՀՀ դեսպան Զ.Մ., Նյու Յորքի հայ համայնքի կարևոր ներկայացուցիչները և կազմակերպիչները: Վճարումն իրականացվել է ՀԿ-ի բանկային քարտի միջոցով:

Պալատը, հավանաբար, նկատի է ունեցել պայմանագրի հավելվածի 15-րդ կետը, որն իրենից ներկայացնում է Հայաստանի հեռուստատեսության լուրերի նկարահանող խմբի ճանապարհածախսը, սակայն, վրիպակ է տեղի ունեցել և սխալմամբ հավելվածի 15-րդ կետում նշվել է հյուրասիրություն համերգից հետո: Դա երևում է նաև տվյալ կետի մեկնաբանությունից, որտեղ նշված է նկարահանող խմբի մեկնման և ժամանման ամսաթվերը:

Հաշվեքննիչ պալատի արձագանքը՝

Քանի որ պայմանագրով նման ծախս նախատեսված չի եղել:

1.15 Անհամապատասխանություն

Հիմնադրամը վեց քաղաքներում՝ Վարշավայում, Նյու-Յորքում, Լոնդոնում, Գյոթեբորգում, Փարիզում և Մոսկվայում գրքի միջազգային ցուցահանդես-տոնավաճառ կազմակերպելու ու նպատակային թարգմանությունների աջակցման համար

26.06.2015թ. ֆինանսական միջոցների տրամադրման թիվ 65/2606 պայմանագիր է կնքել ՀՀ մշակույթի նախարարության ''Գրքի և հրատարակչական գործի կենտրոն'' ՊՈԱԿ-ի հետ 77,088.0 հազ. դրամ արժեքով: Պայմանագրերով նախատեսված 77,088.0 հազ. դրամ գումարից ՊՈԱԿ-ին վճարվել է 61,804.1 հազ. դրամ անմիջականորեն, որից 6.600.0 հազ. դրամ դրամը հետ է վերադարձվել Հիմնադրամ, իսկ 15,283.9 հազ. դրամը Հիմնադրամի կողմից վճարվել է կազմակերպիչների համար ավիատոմսերի ձեռքբերման /''Պեգաս Թրավել Քլաբ ՍՊԸ՝ 4,119.0 հազ. դրամ/, Փարիզում տաղավարի և կոնֆերանս դահլիճի վարձակալության /Reed Exposition 15,286 եվրո/ և 4 անձի հյուրանոցի ծախսի համար /Hotel Alise3,032.0 հազ. դրամ/:

Ըստ ֆինանսական միջոցների տրամադրման պայմանագրերի, ֆինանսավորվողը պարտավոր էր կազմակերպված գրքի միջազգային ցուցահանդես-տոնավաճառների արդյունքում ստացված ողջ եկամուտը փոխանցեր ՀՀ պետական բյուջե:

Ֆինանսավորվողը Հիմնադրամին ցուցահանդես-տոնավաճառի վերաբերյալ ֆինանսական հաշվետվություն չի ներկայացրել և գումարներ պետական բյուջե չի վճարվել, չնայած կատարված ծախսերի:

Հիմնադրամի առարկությունը՝

Նշված է, որ ֆինանսավորվող ՊՈԱԿ-ը Հիմնադրամին ցուցահանդես-տոնավաճառից ստացված եկամուտների վերաբերյալ հաշվետվություններ չի ներկայացրել և գումարներ պետական բյուջե չի վճարել:

Հարկ է ընդգծել, որ ՊՈԱԿ-ը Տնօրինությանը բանավոր տեղեկացրել է, որ ցուցահանդես-տոնավաճառներից եկամուտ չի ստացել:

Հաշվեքննիչ պալատի արձագանքը՝

Հիմնադրամի ներկայացրած առարկությունը, ըստ էության, պարզաբանում է:

1.16 Անհամապատասխանություն

Կնքված պայմանագրերով նախատեսվել էր, որ նկարահանված կինոնկարների ցուցադրումներից ստացված եկամտից պետք է մեկ տարի շարունակ Հիմնադրամին փոխանցվեր գումարներ, սակայն Հիմնադրամին ոչ մի դրամ չի փոխանցվել:

''Ցեղասպանության հավերժական վիշտը'' վավերագրական (Պայմանագիր թիվ 03/2812, կնքված 20.02.2015թ., ակնկալվող ավարտը՝ 20.06.2015թ.), ''Մշո ճառընտիր'' անիմացիոն (Պայմանագիր թիվ 15/0203, կնքված 02.03.2015թ., ակնկալվող ավարտը՝ 15.11.2015թ.), ''Մի խելագարի պատմություն'' (Պայմանագիր թիվ 21/0303, կնքված 02.02.2015թ., ակնկալվող ավարտը՝ 20.04.2015թ.) լիամետրաժ գեղարվեստական, ''Հիշատակի պատը'' (Փրկության քարտեզ) (Պայմանագիր թիվ 12/2002, կնքված 28.12.2014թ., ակնկալվող ավարտը՝ 10.04.2015թ.) լիամետրաժ վավերագրական, ''Բանտարկված հոգիներ'' (Պայմանագիր թիվ 20/1303, կնքված 13.03.2015թ., ակնկալվող ավարտը՝ 31.10.2015թ.) խաղարկային և անիմացիոն տեսարաններով վավերագրական կինոնկարների նկարահանման համար Հիմնադրամը

''Հայաստանի ազգային կինոկենտրոն,, ՊՈԱԿ-ի հետ կնքել է ֆինանսական միջոցների տրամադրման թվով հինգ պայմանագրեր՝ ընդհանուր 130,000.0 հազ. դրամ արժեքով: Կնքված պայմանագրերով նախատեսվել է, որ նկարահանված կինոնկարների ցուցադրումից ստացված եկամտից պետք է մեկ տարի շարունակ, 10 տոկոսի չափով Հիմնադրամին փոխանցվեր գումարներ, սակայն Հիմնադրամ ոչ մի գումար չի փոխանցվել:

''Իմ նախնիները արմատներով….'' 100 հատ սոցիալական հեռուստաբլոկների շարքի ստեղծման, ''100'' պայմանական վերնագրով վավերագրական կինոնկարի նկարահանման, ''Ի.Ա. և Ա.Ա.''-ի կատարմամբ երգի և երկու տեսահոլովակների պատրաստման, Հեդվիգ Բյուլի ''Իմ սիրտը հայկական է'' պայմանական անվամբ վավերագրական տեսանյութի նկարահանման, ինչպես նաև վերոնշյալ նախագծերը համակարգելու համար ''Լուսաբաց'' մշակութային հիմնադրամի հետ 06.03.2015թ. կնքվել է ֆինանսական միջոցների տրամադրման թիվ 18/0603 պայմանագիր՝ գումարով 117,000.0 հազ. դրամ:

Կնքված պայմանագրերի համաձայն, Լուսաբաց Մշակութային Հիմնադրամի կողմից ստեղծված ստեղծագործությունների օգտագործումից ստացված եկամտից պետք է 15 տոկոսի չափով մեկ տարվա ընթացքում Հիմնադրամին վճարվեր գումարներ, սակայն Հիմնադրամը նման գումարներ չի ստացել:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ 2015 թվականի փետրվարի 9-ից մինչև հոկտեմբերի 9-ը ընկած ժամանակահատվածում Երևան, Գյումրի, Վանաձոր և Ստեփանակերտ քաղաքներում ''Ձույգ արեգակներ'' բալետային ներկայացումը կազմակերպելու և ցուցադրելու համար Հիմնադրամը 26.02.2015թ. թիվ 12/2602 պայմանագիր է կնքել ''Բալետ 2021'' զարգացման հիմնադրամի հետ 65,841.2 հազ. դրամ արժեքով: Պայմանագրի ավարտը սահմանվել է 09.10.2015թ.:

Ըստ կնքված պայմանագրի ''Բալետ 2021'' զարգացման հիմնադրամը պարտավորվել է ծրագրի իրականացման ընթացքում ''Ձույգ արեգակներ'' բալետային առաջին ինը ներկայացումներից ստացված եկամտի 10 տոկոսը փոխանցել Հիմնադրամի բանկային հաշվին, սակայն ծրագրի իրականացման արդյունքում ֆինանսավորվողը ոչ մի դրամ չի փոխանցել:

''Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումների'' շրջանակում Չինաստանում ընթացող Պեկինի արվեստի միջազգային բիենալեին մասնակցելու համար Հիմնադրամի և ''Ցուցահանդեսային կենտրոն'' ՊՈԱԿ-ի միջև կնքվել է պայմանագիր 22,000.2 հազ. դրամ արժեքով: Ծրագրով նախատեսվել է իրականացնել ցուցադրության կազմակերպում, տաղավարի կառուցում, ցուցանմուշների տեղափոխում, տարածքների վարձակալություն և տրանսպորտի ապահովում: Փաստացի կատարված ծախսը, ըստ ամփոփ հաշվետվության, կազմել է 18,062.7 հազ. դրամ, որը հիմնադրամի կողմից վճարվել է ամբողջությամբ:

Կնքված պայմանագրերի 1.9 կետի համաձայն ՊՈԱԿ-ը ստեղծված ստեղծագործությունների օգտագործումից ստացված եկամտից մեկ տարվա ընթացքում պետք է 15 տոկոսի չափով Հիմնադրամին վճարեր գումարներ, բայց ոչ ավելի, քան Հիմնադրամի կողմից փաստացի տրամադրված չափը, սակայն Հիմնադրամը նման գումարներ չի ստացել:

1.17 Անհամապատասխանություն

Չհիմնավորված ծախսերի դիմաց կատարվել է 22,988.2 հազար դրամի վճարում

1) ‘‘Արարատի ստորոտին’’ մեդիա ֆորումի կազմակերպման և անցկացման համար Հիմնադրամը ‘‘Եվրոպայի և Ասիայի լրագրողների մեդիակոնգրես’’ ՍՊԸ-ի հետ 01.02.2015 թվականին կնքել է պայմանագիր 23,543 եվրո արժեքով /12,477.8 հազ. դրամ/: Պայմանագիրն ուժի մեջ է մտել ստորագրման պահից և գործում էր մինչև պայմանագրային պարտավորությունների կատարումը:

Ըստ կնքված պայմանագրի 7.4 կետի, պայմանագրով նախատեսված պարտականությունների կատարումը պետք է տարածվեր 01.02.2015թ.-ից առաջացած հարաբերությունների վրա: Սակայն ‘‘Եվրոպայի և Ասիայի լրագրողների մեդիակոնգրես’’ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հաշվետվություններում ներառվել են ծախսեր, որոնք կատարվել էին մինչև 01.02.2015 թվականը, այդ թվում՝ վճարման հանձնարարագրերով 2014 թվականին ընկերության աշխատակիցներին վճարված աշխատավարձերը: Հիմնադրամը հաշվի չառնելով փաստը, ընկերությանը վճարել է հաշվետվությամբ ներկայացրած գումարն ամբողջությամբ՝ ավելի է վճարել 649.4 հազ. ռուսական ռուբլի /5,026.4 հազ. դրամ/, ինչը վճարման ենթակա չէր, իսկ տարադրամի սխալ վերահաշվարկի արդյունքում ավել է վճարել ևս 239.2 հազ. ռուբլի /1,829.9 հազ. դրամ/: Արդյունքում ավելի է վճարվել 6,856.3 հազ. դրամ:

2) Հիմնադրամի տնօրինության և Երևանյան հեռանկարներ միջազգային երաժշտական փառատոն ՀԿ-ի միջև 19.01.2015 թվականին կնքվել է պայմանագիր Լոնդոնում Բրիտանիայի Թագավորական ֆիլհարմոնիկ նվագախմբի համերգի կազմակերպման համար: Պայմանագրով նախատեսվել է տրամադրել առավելագույնը 66,672.2 հազ. դրամ: Փաստացի ծախսը, ըստ ներկայացված հաշվետվության, կազմել է 72,002.0 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 67,877.3 հազ. դրամ, կամ պայմանագրային գնից ավելի է վճարվել 1,205.1 հազ. դրամ:

Հիմնադրամի տնօրինության և Երևանյան հեռանկարներ միջազգային երաժշտական փառատոն ՀԿ-ի միջև 19.01.2015 թվականին կնքվել է պայմանագիր Երուսաղեմի սիմֆոնիկ նվագախմբի (Երուսաղեմ) համերգի կազմակերպման համար: Պայմանագրով նախատեսված առավելագույն տրամադրվելիք գումարը նախատեսվել է 28,067.9 հազ. դրամ, փաստացի ծախսը ըստ ներկայացված հաշվետվության կազմել է 28,674.6 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 28,781.7 հազ. դրամ, կամ հիմնադրամի կողմից պայմանագրային գնից ավելի է վճարվել 713.8 հազ. դրամ:

3) Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ 2015 թվականի ապրիլի 24-ին Երևանում ‘‘Օրկեստրա’’ 24/04 ֆիլարմոնիկ նվագախմբի համերգը կազմակերպելու և անցկացնելու համար Հիմնադրամը 157,076.3 հազ. դրամ առավելագույն արժեքով պայմանագրեր է կնքել ‘‘Դասական երաժշտության աջակցություն’’ ՀԿ-ի հետ, որի մի մասը՝ 103,725.6 հազ. դրամ նախատեսել է տրամադրել ֆինանսավորվողին անմիջականորեն, իսկ մյուս մասը՝ 53,350.8 հազ. դրամը օգտագործել

Հիմնադրամի կողմից ‘‘Օրկեստրա’’ 24/04 ֆիլարմոնիկ նվագախմբի և սպասարկվող անձնակազմի համար անհրաժեշտ փոխադրման տոմսերի ձեռքբերման նպատակով:

Ըստ ֆինանսական միջոցների տրամադրման պայմանագրի 1/3 կետի, ֆինանսավորվողը պարտավորվել է համերգի կազմակերպումից ստացված ողջ եկամուտը փոխանցել ՀՀ պետական բյուջե:

Ըստ ՀԿ-ի կողմից ներկայացված ֆինանսական հաշվետվությունների փաստացի ծախսը կազմել է 158,718.6 հազ. դրամ, որն ամբողջությամբ վճարվել է, կամ հիմնադրամը ՀԿ-ին վճարել է պայմանագրային արժեքից 1,642.3 հազ. դրամով ավելի գումար, ինչը վճարման ենթակա չէր:

Հիմնադրամի կողմից ՀԿ-ին վճարել է այնպիսի ծախսերի համար, որոնք կապ չեն ունեցել ծրագրի հետ: Մասնավորապես.

Նվագախմբի հյուրանոցային ծախսերի համար պայմանագրով նախատեսվել է 16,111.0 հազ. դրամ, փաստացի ծախսը ըստ ներկայացրած հաշվետվությունների կազմել է 16,111.0 հազ. դրամ: ‘‘Անի Պլազա Հոթել’’ ՓԲԸ-ի կողմից հյուրանոցային ծառայության համար տրված հաշիվ ապրանքագրի համաձայն հյուրանոցայինից ծառայությունից օգտված /գիշերակաց/ 96 մարդկանց ցուցակում ընդգրկվել է 8 մարդու անուն, ովքեր հրավիրված երաժիշտների ցուցակում չեն եղել և դրանց հյուրանոցի գումարը կազմել է 1,308.0 հազ.դրամ:

Կոնցերտմայստերներին պայմանագրով նախատեսվել է վճարել 7 օրվա օրավճար, յուրաքանչյուր օրվա համար 111.0 հազ. դրամ, ընդամենը՝ 3,108.0 հազ. դրամ: Սակայն նրանցից մեկը ՀՀ-ում մնացել է 5 օր, մյուսը՝ 6 օր, սակայն նրանց վճարվել է 7 օրվա համար, կամ ավելի է վճարվել 333.0 հազ. դրամ:

Կնքված պայմանագրի հավելվածով նվագախմբի երաժիշտների օրավճարի համար նախատեսվել է 17,000.0 հազ. դրամ, փաստացի ծախսը կազմել է 18,494.0 հազ. դրամ:

Հրավիրված երաժիշտների ցուցակում ընդգրկված երաժիշտներից 7 անձ, ովքեր Հայաստանի Հանրապետություն չեն ժամանել, ում համար տոմս ձեռք չի բերվել, հյուրանոցում չեն գիշերել, ստացել են օրավճարներ, գումարով 1,225.0 հազ. դրամ /7*175,000/, ինչը Հիմնադրամի կողմից վճարման ենթակա չէր:

13 երաժիշտների՝ պայմանագրով նախատեսված 175.0 հազ. դրամից /7օր*25,000 դրամ/ բացի յուրաքանչյուրին լրացուցիչ վճարվել է ևս 96.0 հազ. դրամ, ընդամենը 1,248.0 հազ. դրամ, ինչը պայմանագրով նախատեսված չէր և հիմնադրամի կողմից վճարման ենթակա չէր:

Հիմնադրամի կողմից փոխհատուցվել է հրավիրված երաժիշտների ցուցակում չընդգրկված՝ ՀԿ-ի կողմից ‘‘Է. Ս.’’-ին վճարված 96 հազ. դրամը, որը վճարման ենթակա չէր:

Հրավիրված երաժիշտներին պայմանագրով նախատեսվել էր կատարել վճարումներ 7 օրվա համար, յուրաքանչյուր օրվա համար 25.0 հազ. դրամ, սակայն 27 երաժիշտներ ՀՀ-ում մնացել են 7 օրից պակաս և ստացել են 7 օրվա համար նախատեսված ամբողջ գումարը, կամ ՀԿ-ի կողմից ավելի է վճարվել երաժիշտներին 1,158. 0 հազ. դրամ, որը Հիմնադրամի կողմից վճարման ենթակա չէր:

Չորս կոնցերտմայստերների՝ պայմանագրի հավելվածով նախատեսված 111.0 հազ. դրամ օրավարձից բացի, յուրաքանչյուրին վճարվել է ևս 175.0 հազ. դրամ, ընդամենը 700.0 հազ. դրամ, ինչը պայմանագրով նախատեսված չէր և հիմնադրամի կողմից վճարման ենթակա չէր:

Հիմնադրամը ՀԿ-ին փոխհատուցել է ‘‘Է. Յու.’’-ի համար ձեռք բերված ավիատոմսի արժեքը՝ գումարով 993.9 հազ. դրամ, ով նվագախմբի հետ ոչ մի կապ չի ունեցել և Հիմնադրամի կողմից վճարման ենթակա չէր:

‘‘Դասական երաժշտության աջակցություն’’ ՀԿ-ի կողմից կնքված Քաղաքացիա-իրավական պայմանագրի համաձայն դիրիժոր ‘‘Ջ.Մ.’’-ին 13.11.2015 թվականին կանխիկ վճարվել է 24.04.2015 թվականին տեղի ունեցած համերգի համար հասանելիք հոնորարը՝ գումարով 11,018.7 հազ. դրամ, որի պայմանագրային արժեքը կազմել է 16,901,3 հազ. դրամ, իսկ գանձված եկամտահարկը, որը փոխանցվել է պետական բյուջե 5,882. 6 հազ. դրամ:

Դիրիժոր ‘‘Մ.Յու’’-ի հոնորարը Քաղաքացիա-իրավական պայմանագրով սահմանվել է 14.400 եվրո, առանց հարկերի, որը կազմում է 1,853,576 դրամ շահութահարկ /ընդամենը հոնորարը 9,384,776 դրամ/: Պայմանագրի համաձայն հոնորարի գումարը 07.04.2015թ. փոխանցվել է դիրիժորի պրոդյուսերի՝ Kupfer Kultur @ Media EAI Gmbh-ի հաշվին, իսկ ոչ ռեզիդենտի շահութահարկը՝ պետական բյուջե:

Ստեղծագործական աշխատանքների իրականացման համար ՀԿ-ի կողմից ինը քաղաքացիների հետ 27.07.2015 թվականին կնքվել է քաղաքացիա-իրավական պայմանագրեր՝ գումարով 2,756.7 հազ. դրամ, ‘‘24.04’’ նվագախմբի համերգի ծրագրում ընդգրկված ստեղծագործությունների՝ նվագախմբի, երգչախմբի ձայնաբաժինների համակարգչային շարվածքի համար: Փաստացի վճարումը կազմել է 2,700.0 հազ. դրամ: Անհրաժեշտ է նշել, որ նշված համերգը տեղի է ունեցել 24.04.2015 թվականին, իսկ նշված աշխատանքների կատարել են 27.07.2015 թվականին, ինչի անհրաժեշտությունը չի եղել և Հիմնադրամի կողմից այդ աշխատանքների արժեքը չպետք է վճարվեր:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ ‘‘Օրկեստրա’’ 24/04 ֆիլհարմոնիկ նվագախմբի համերգը կազմակերպելու և անցկացնելու համար պայմանագրով գրասենյակի ծախսերի համար նախատեսվել և վճարվել է 13,315.0 հազ. դրամ: ՀԿ-ի կողմից որոշ ծախսերի գծով կազմվել և ներկայացվել է սխալ նախահաշիվ: Այսպես.

Հաստատված նախահաշվով նվագախմբի երաժիշտների մենեջեր նախատեսվել է երկու հոգի 325.0 հազ. դրամ ամսեկան աշխատավարձով՝ չորս ամիս, սակայն նախատեսված մենեջերների փոխարեն աշխատել է մեկը, իսկ նախատեսված գումարը վճարվել է մեկին, կամ նախահաշվից ավելի է վճարել 1,300.0 հազ. դրամ:

Գրասենյակի մենեջեր նախատեսվել է երկու հոգի 255.0 հազ. դրամ ամսեկան աշխատավարձով, երկու ամիս սակայն նախատեսված մենեջերների փոխարեն աշխատել է մեկը, իսկ նախատեսված գումարը վճարվել է մեկին, կամ նախահաշվից ավել է վճարվել 510.0 հազ. դրամ:

Համերգի համար գույքի և ռոյալի տեղափոխության նպատակով կնքվել է 2 քաղ.-իրավական պայմանագիր 733.0 հազ. դրամ արժեքով, պայմանագրով նախատեսված 563.0 հազ. դրամի փոխարեն: Նախատեսվածից ավելի է վճարել 174.0 հազ.դրամ, որը հիմնադրամի կողմից վճարման ենթակա չէր:

Ավիատոմսերի ձեռքբերման համար պայմանագրով նախատեսվել է 53,350.9 հազ. դրամ, փաստացի ծախսը ըստ ներկայացված հաշվետվության կազմել է 53,350.9 հազ. դրամ, որն ամբողջությամբ վճարվել է: ‘‘Պեգաս Թրավել Քլաբ’’ ՍՊԸ-ի կողմից տրված հաշիվ ապրանքագրի համաձայն, 97 մարդկանց ցուցակում ընդգրկվել է 3 մարդու անուն /ավիատոմսերի գումարը կազմել է 829.9 հազ. դրամ/, ովքեր հրավիրված երաժիշտների ցուցակում չեն եղել:

‘‘Դասական երաժշտության աջակցության’’ ՀԿ-ին Հիմնադրամի կողմից փոխհատուցվել է կոնցերտմայստերներին, երաժիշտներին ավելի վճարված օրավարձերի գումարները, հրավիրված երաժիշտների ցուցակում չընդգրկված անձանց համար ձեռքբերված ավիատոմսի և հյուրանոցի համար կատարված ծախսերը, ծախսերը գերազանցող գումարները՝ ընդամենը 14,218.1 հազ. դրամ, որը վճարման ենթակա չէր:

4) Հայաստանում, Թուրքիայում և Վրաստանում հիշատակային համերգներ կազմակերպելու և անցկացնելու համար Հիմնադրամը 89,942.7 հազ. դրամ արժեքով 02.06.2015թ. պայմանագիր է կնքել ‘‘Լոյս ի Լուսոյ’’ ՍՊԸ-ի հետ: Համերգային միջոցառումների կազմակերպման համար ընկերությունը իր հերթին պայմանագրեր է կնքել տարբեր տեղական և արտասահմանյան ընկերությունների հետ ‘‘Տ.Հ.’’-ի և Երևանի Պետական Կամերային Երգչախմբի (23 անձ) համերգները կազմակերպելու համար:

Համերգային միջոցառումները 2015թ.-ի հունիսի 11-ից մինչև հունիսի 30-ը, ներառյալ՝ նկարահանելու, նկարահանված նյութերը մոնտաժելու, գրաֆիկական աշխատանքները կատարելու և ֆիլմը պատրաստելու համար ընկերությունը պայմանագիր է կնքել ‘‘Մքքանն Էրիքսոն’’ ՍՊԸ-ի հետ:

Նկարահանված տեսանյութը դիտելիս չի հասկացվում, թե համերգները որտեղ են իրականացվել, որի համար փաստացի վճարվել է 13,500.0 հազ. դրամ:

Համերգային միջոցառումների կազմակերպման հետ կապված աշխատանքները իրականացնելու համար Ընկերությունը պայմանագիր է կնքել անհատի հետ հուլիսի 1-ին, հատկանշական է, որ պայմանագիրը կնքվել է համերգները ավարտվելու հաջորդ օրը, որի համար վճարվել է 1,200.0 հազ.դրամ :

Հիմնադրամի առարկությունները՝

1) Կնքվել է պայմանագիր՝ 23,543 եվրո արժեքով: Պալատը պնդում է, որ Հիմնադրամը հիմք է ընդունել ծախսեր, որոնք արվել են Եվրոպայի և Ասիայի լրագրողների մեդիակոնգրես ՍՊԸ-ի կողմից մինչ պայմանագրի կնքելը:

Հիմնավորումն այն է, որ այդ ծախսերն անմիջականորեն կապված են եղել Արարատի ստորոտին մեդիա ֆորումի կազմակերպման հետ, իսկ պայմանագիրն ավելի ուշ է կնքվել, քանի որ Տնօրինությունն իր գործունեությունը սկսել է ավելի ուշ:

Այդ իսկ պատճառով՝ Տնօրինությունը հարկ է գտել ընդունել այդ ծախսերը՝ որպես հիմնավորված ծախսեր և փոխհատուցել: Առկա է նախահաշիվը և վերջնահաշիվը՝ հաստատված Վ. Սարգսյանի կողմից:

Տարադրամի սխալ վերահաշվարկի մասով.

Բացակայում է հիմնավորումը, թե Պալատը ինչն է հիմք ընդունել և եկել եզրահանգման, առ այն, որ եվրո-ռուբլի փոխարժեքի սխալ հաշվարկման արդյունքում Հիմնադրամը կատարել է ավելի վճարում 239.2 հազ. ռուբլու չափով:

2) Բրիտանիայի Թագավորական ֆիլհարմոնիկ նվագախմբի համերգի կազմակերպման համար ՀԿ-ն և Հիմնադրամը կնքել են ֆինանսական միջոցների տրամադրման պայմանագիր: Նախատեսվել է Հիմնադրամի կողմից ՀԿ-ին տրամադրել առավելագույնը 66,672.2 հազար ՀՀ դրամ: Փաստացի ծախսը, ըստ ներկայացված հաշվետվության կազմել է 72,002 հազար ՀՀ դրամ, ֆինանսավորումը՝ 67,877.3 հազար ՀՀ դրամ: Նշված է, որ պայմանագրային գնից ավելի է վճարվել 1,205.1 հազար ՀՀ դրամ: Պալատը նշել է, որ Երուսաղեմի սիմֆոնիկ նվագախմբի կողմից համերգի

կազմակերպման համար առավելագույն գումարը տրամադրման ենթակա եղել է 28.067.9 հազար ՀՀ դրամ, փաստացի ծախսը՝ ըստ հաշվետվության, 28,674.6 հազար ՀՀ դրամ, ֆինանսավորումը՝ 28,781.7 հազար ՀՀ դրամ: Նշված է, որ Հիմնադրամի կողմից ՀԿ-ին ավել է վճարվել պայմանագրի գնից 713.8 հազար ՀՀ դրամի չափով: Վերը նշված ենթադրյալ հավելյալ վճարում-խախտումները չեն որակվում որպես խախտումներ, քանի որ 30.11.2015 թվականին ՀԿ-ի կողմից Հիմնադրամին ներկայացվել է գրություն՝ կնքված և ստորագրված, որով ՀԿ-ն Հիմնադրամին հայտնել է, որ Հիմնադրամի հետ կնքված այլ պայմանագրերի մասով առկա են խնայողություններ, տրամադրված գումարներն ամբողջովին չեն ծախսվել և խնդրել է Հիմնադրամին թույլ տալ նշված խնայողություն հանդիսացող գումարներն օգտագործել վերոնշյալ երկու համերգների կազմակերպման և անցկացման ընթացքում առաջացող հավելյալ ծախսերի համար: Հիմնադրամն էլ նշված գրությանը տվել է ընթացք և Հիմնադրամի վարքագծում բացակայել է խախտումը, քանի որ արդեն իսկ այլ համերգների շրջանակներում կնքված պայմանագրերով այդ գումարները տրամադրված են եղել ՀԿ-ին: Հիմնադրամի և ՀԿ-ի միջև առկա պայմանագրային հարաբերությունները, որի շրջանակներում տրվել է ֆինանսավորումը, բոլոր պայմանագրերը դիտարկվել են մեկ ամբողջականության մեջ և այդ պատճառով Հիմնադրամը թույլ է տվել ծախսերի տեղաբաշխում պայմանագրերի միջև:

3) Դասական երաժշտության աջակցություն ՀԿ-ի և Հիմնադրամի միջև կնքված ֆինանսական միջոցների տրամադրման պայմանագրի մասով.

Պալատը արձանագրել է Հիմնադրամի կողմից 1,652,3 հազար ՀՀ դրամի չափով ավել կատարված վճարում: Այդ թիվը այդքան էլ ճշգրիտ չէ, քանի որ Հիմնադրամի կողմից ավել վճարված գումարը կազմում է 1,637.5 հազար ՀՀ դրամ: Այս գումարը վճարվել է ՀԿ-ի կողմից համերգի կազմակերպման չնախատեսված հավելյալ ծախսերի փոխհատուցման նպատակով, որի համար հիմք են հանդիսացել այդ ծախսերը հիմնավորող փաստաթղթերը և համապատասխան գրությունը, որի պատճենը ներկայացվում է**:**

Հիմնադրամի կողմից ՀԿ-ին ծրագրի հետ կապ չունեցող ծախսերի վճարման մասով.

Ըստ Պալատի կողմից ներկայացված պնդման՝ Անի պլազա հոթել ՓԲԸ-ի կողմից հյուրանոցային ծառայության համար տրված հաշիվ ապրանքագրի համաձայն՝ հյուրանոցային ծառայությունից օգտված մարդկանց ցուցակում ընդգրկվել է ութ մարդու անուն, ովքեր հրավիրված երաժիշտների ցուցակում չեն եղել: Համերգին մասնակցած մասնակիցների վերջնական ցուցակը առկա է նվագախմբի պաշտոնական կայքում (https://www.24-04worldorchestra.com), 24/04 համաշխարհային նվագախմբի կազմում, բացի երաժիշտներից, ընդգրկված են եղել նաև Financial Times պարբերականի լրագրող Մ.Զ., որի հոդվածը հայոց ցեղասպանության և 24/04 համաշխարհային նվագախմբի մասին լույս է տեսել 2015թ. մայիսի 1-ին (https://www.ft.com/content/c46b1308-ed90-11e4-987e-00144feab7de), Է.Յ., ով, որպես այդ համերգի դիրիժոր, Մ.Յու. կին և ամենուր ուղեկցող իր ամուսնուն, քանի որ Մ.Յու. այդ ժամանակ 70 տարեկան էր և առողջական լուրջ խնդիրներ ուներ և չէր կարող գալ Հայաստան մենակ, ինչպես նաև աշխարհահռչակ երաժշտական պրոդյուսեր Տ.Դ., ով ապահովում էր երաժիշտների պրոֆեսիոնալ աշխարհում այս միջոցառման մեծ հնչեղությունը: Նվագախմբի կազմում նաև եղել են երաժիշտներ, որոնց անունները համերգի ծրագրերում նշված են եղել ծածկանուններով՝ EuN Hye Song՝ Grace, Sung Chul Kim՝ Leo, Tsz Hong Chan՝ Kurt Chan, Kasda Angeliki՝ Angeliki Kasada: Հյուրանոցում նաև գիշերել են նվագախմբի կազմակերպիչներից երկուսը՝ Ս.Մ. և Ֆ.Բ., որոնք կարգավորում էին նվագախմբի բոլոր ծագած խնդիրները

24/7 ձևաչափով: Հյուրանոցի հյուրերի ցանկերի մեջ նաև եղել են անճշտություններ՝ օրինակ հյուրանոցի ձևակերպումների մեջ նշվել էր Gamaris Valentina-ն իրականում Gamaris Xenia է, իսկ Barisova Marina-ն՝ Barisova Valentina-ն է և այլն:

Վերոնշյալ անձինք բոլորը միջոցառման կազմակերպման առանցքային դերակատարներ են և տրամաբանորեն պետք է վճարվեին նախատեսված միջոցներից:

Վերոգրյալը արտացոլվում է կից ներկայացվող ցանկում, որը կազմվել է հիմնավորող փաստաթղթերի հիման վրա: Արդյունքում կարելի է փաստել, որ որևէ ֆինանսական միջոց անարդյունավետ չի ծախսվել **:**

Կոնցերտմայստերներին վճարված օրավճարի մասով.

Պալատը արձանագրել է խախտում, առ այն, որ ՀԿ-ի կողմից Կոնցերտմայստերներին վճարվել է օրավճար՝ 7 օրվա համար, յուրաքանչյուր օրվա համար՝ 111,000 ՀՀ դրամ, սակայն, նրանցից երկուսը յոթ օրից պակաս են մնացել ՀՀ-ում, բայց ստացել են յոթ օրվա կտրվածքով օրավճար: Ըստ ՀԿ-ի կողմից Տնօրինությանը ներկայացված հիմնավորման՝ Կոնցերտմայստերների հետ առկա է եղել պայմանավորվածություն ՀՀ ժամանելու, այստեղ մնալու մասով կոնկրետ գումար վճարելու համար, յուրաքանչյուրի հետ պայմանավորվածությունը եղել է 777.000 ՀՀ դրամ, որը պայմանավորված չի եղել ՀՀ-ում մնալու օրերի քանակով:

Համաձայն դասական երաժշտության ոլորտում գործող միջազգային գործելաոճի՝ նվագախմբի մասնակիցներին, այս պարագայում կոնցերտմայստերներին, վճարվել է օրավճար համապատասխան իրենց բացակայությանը իրենց աշխատանքի վայրից, որը համարվել է իրենց մեկնումը իրենց ապրելու վայրից, քանի որ իրենք ելույթ են ունեցել ապրիլի 24-ին առանց լրացուցիչ վարձավճարի, սակայն, պայմանավորվածության համաձայն իրենց պետք է փոխհատուցվեր իրենց նվազագույն օրական աշխատավարձը, որպեսզի կորուստ չունենան այն պատճառով, որ բացակայում են իրենց հիմնական աշխատանքից:

Նվագախմբի երաժիշտներին վճարված օրավճարի մասով.

Պալատը արձանագրել է խախտում, առ այն, որ ՀԿ-ի կողմից ցուցակում ընդգրկված յոթ երաժիշտներ ՀՀ չեն ժամանել, նրանց համար ավիատոմս ձեռք չի բերվել, հյուրանոցում չեն բնակվել, սակայն ստացել են օրավճարներ:

Առնվազն տարակուսանք է առաջացնում տվյալ պնդումը, քանի որ անհայտ է թե Պալատը ինչ տվյալների հիման վրա է եկել եզրահանգման, որ ցուցակում նշված երաժիշտները Հայաստան առհասարակ չեն ժամանել:

Հարկ ենք համարում նշել, որ համերգին մասնակցել են երաժիշտներ, որոնք մեքենաներով ժամանել են Վրաստանից, ուստի, նրանց համար չի գնվել ավիատոմս, նաև առկա էին մասնակիցներ, որոնք ունեցել են բարեկամներ և ընկերներ Երևանում և կարիք չեն ունեցել զբաղեցնելու հյուրանոցային համարներ, այդ պատճառով հնարավոր են տարբերություններ ցուցակներում:

Վերոնշյալ գործընթացը կազմակերպիչների ջանքերի շնորհիվ կազմակերպվել է հնարավոր առավելագույն արդյունավետությամբ՝ հաշվարկների առանցքում ունենալով միջոցների խնայողության տրամաբանությունը:

Տնօրինությունը հնարավորություն չի ունեցել տրամադրված տեղեկատվությունը ստուգելու և այդ իսկ պատճառով Տնօրինությունը հիմք է ընդունել տրամադրված տեղեկատվությունը և հավանություն է տվել ՀԿ-ի կողմից կատարված վճարմանը:

13 երաժիշտների՝ պայմանագրով նախատեսված 175.000 դրամից բացի հավելյալ վճարված գումարի մասով.

Պալատը արձանագրել է խախտում, առ այն, որ ՀԿ-ի կողմից 13 երաժիշտների պայմանագրով նախատեսված 175.0 հազար դրամից բացի յուրաքանչյուրին լրացուցիչ վճարվել է ևս 96 հազար ՀՀ դրամ, ինչը պայմանագրով նախատեսված չէր: Տնօրինության հիմնավորումը հետևյալն է. հնարավոր չէր նախապես լրիվ ճշգրտությամբ պլանավորել բոլոր ծախսերը: Այդ պատճառով Հիմնադրամն ընդունել է որոշ շեղումներ նախահաշվից, քանի որ դրանք, ըստ էության, ծառայել են պայմանագրի կատարմանը, պայմանագրի կնքման նպատակին: 13 երաժիշտների հետ պայմանավորվածությունը ենթարկվել է փոփոխության և Հիմնադրամը համաձայնվել է ընդունել այդ փոփոխությունները, նվագախմբի 13 երաժիշտների վճարվել է ավելի գումար, քանի որ իրենք խնդիրներ ունեին իրենց հիմնական աշխատանքի վայրում և պետք է տույժ վճարեին իրենց հիմնական նվագախմբերի փորձերին և համերգին չմասնակցելու համար:

Է.Ս. մասով.

Պալատը արձանագրել է խախտում, առ այն, որ Դասական երաժշտության աջակցության ՀԿ-ի կողմից Է.Ս. վճարվել է 96,000 ՀՀ դրամ, սակայն, նա, ըստ Պալատում առկա ցուցակների, ընդգրկված չի եղել հրավիրված երաժիշտների ցանկում:

Պալատի պնդումը սխալ է, քանի որ Պալատին ներկայացված արձանագրությանը կից ցուցակում Է.Ս. առկա է: Բայց, հարկ ենք համարում նշել, որ Է.Ս. ծածկանուն է, ում իսկական անունը Է.Ս. է:

Պալատը արձանագրել է խախտում, առ այն, որ ՀԿ-ի կողմից հրավիրված երաժիշտներին վճարվել է օրավճար՝ 7 օրվա համար, յուրաքանչյուր օրվա համար՝ 25,000 ՀՀ դրամ, սակայն, նրանցից 27-ը յոթ օրից պակաս են մնացել ՀՀ-ում, բայց ստացել են յոթ օրվա կտրվածքով օրավճար: Ըստ ՀԿ-ի կողմից Տնօրինությանը ներկայացված հիմնավորման՝ հրավիրված երաժիշտների հետ առկա են եղել պայմանավորվածություններ ՀՀ ժամանելու, այստեղ մնալու մասով կոնկրետ գումար վճարելու համար, յուրաքանչյուրի հետ պայմանավորվածությունը եղել է 175.000 ՀՀ դրամ, որը պայմանավորված չի եղել ՀՀ-ում մնալու օրերի քանակով: Նվագախմբի մասնակիցներին, ինչպես և կոնցերտմայստերներին, վճարվել է օրավճար համապատասխան իրենց բացակայությանը իրենց աշխատանքի վայրից, որը համարվել է իրենց մեկնումը իրենց ապրելու վայրից, քանի որ իրենք ելույթ են ունեցել ապրիլի 24-ին առանց լրացուցիչ վարձավճարի, սակայն պայմանավորվածությունը եղել է առ այն, որ իրենք կորուստ չեն ունենա այն պատճառով, որ բացակայում են իրենց հիմնական աշխատանքից:

Չորս կոնցերտմայստերների մասով.

Պալատը նշել է, որ պայմանագրի հավելվածով նախատեսված է եղել յուրաքանչյուրին վճարել 111,000 ՀՀ դրամ, բայց նրանցից յուրաքանչյուրին վճարվել է ևս 175,000 ՀՀ դրամ:

Նշվածի հիմնավորումը հետևյալն է. Նշված պայմանագրի հավելված թիվ 1-ում հստակ նշված է, որ երաժիշտներին, որպես ընդհանուր նվագախմբի կազմ, նախատեսվում է վճարել օրական 25 հազար ՀՀ դրամ և կոնցերտմայստերներին՝ 111 հազար ՀՀ դրամ: Ինչից պարզ երևում է, որ թվով չորս կոնցերտմայստերներին պետք է վճարվեր նաև 25 հազ դրամ բազային գումար, որը բազմապատկելով օրերի թվով (7) ստացվում է 700 հազար դրամ գումարը:

Է.Յու. մասով.

Պալատը արձանագրել է, որ Հիմնադրամը Դասական երաժշտության աջակցություն ՀԿ-ին փոխհատուցել է Է.Յու. համար ձեռք բերված ավիատոմսի գումարը, սակայն,

վերջինս նվագախմբի հետ ոչ մի կապ չի ունեցել, Հիմնադրամի կողմից, հետևաբար, վճարման ենթակա չէր:

Է.Յու նվագախմբի հետ ունեցել է ամենաանմիջական կապը, քանի որ ապրիլի 24-ի համերգի կարևորագույն մասնակից Մ.Յու. կինն է, ով ուղեկցել է աշխարհահռչակ դիրիժորին և առանց ում հնարավոր չէր ապահովել դիրիժորի մասնակցությունը այդ երեկոյին: Քանի որ Մ.Յու. համար, ըստ նախնական պայմանավորվածության, գնվել էր բիզնես դասի ավիատոմս, իր կնոջ համար նույնպես գնվեց բիզնես դասի ավիատոմս, որի արժեքը կազմել է 993.9 հազար ՀՀ դրամ:

Պալատը նշել է, որ Դասական երաժշտության աջակցություն ՀԿ-ն 27.07.2015 թվականին կնքել է քաղաքացիաիրավական պայմանագրեր 9 քաղաքացիների հետ՝ 24.04 նվագախմբի համերգի ծրագրում ընդգրկված ստեղծագործությունների՝ նվագախմբի երգչախմբի ձայնաբաժինների համակարգչային շարվածքի համար: Պալատի պնդմամբ, քանի որ համերգը տեղի է ունեցել 24.04.2015 թվականին, հետևաբար, վերոնշյալ աշխատանքների կատարումը 27.07.2015 թվականին բացարձակ անհրաժեշտություն չի եղել:

Գումարը մուտք է եղել ՀԿ-ի հաշվին մի քանի փուլով և վճարվել՝ համապատասխան այդ մուտքերի: Պայմանագրերի ամսաթվերում պարզապես տեխնիկական վրիպակ է տեղի ունեցել: Նշված ծառայությունները պատշաճ կերպով իրականացվել են, այլապես համերգը պարզապես չէր կայանա, ինչպես և արդարացիորեն նշվել է Պալատի կողմից այս աշխատանքի անհրաժեշտությունը համերգից հետո չկար:

Օրկեստրա 24.04 համերգի գրասենյակային ծախսերի մասով.

Պալատը նշել է, որ համերգի կազմակերպման գրասենյակային ծախսերի գծով Դասական երաժշտության աջակցություն ՀԿ-ի կողմից կազմվել և ներկայացվել է վճարման ակնհայտ ուռճացված նախահաշիվ: Պալատը նշել է, որ նախահաշվով նվագախմբի երաժիշտների մենեջեր նախատեսվել են 2 հոգի, սակայն, նախատեսված 2 մենեջերների փոխարեն աշխատել է մեկը և ստացել է 2 մենեջերների համար նախատեսված գումարը, ինչպես նաև, գրասենյակի մենեջերներ նախատեսվել են 2 հոգի, սակայն աշխատել է մեկ մենեջեր և ստացել է 2 մենեջերների համար նախատեսված գումարը:

Նշվածի վերաբերյալ՝ հայտնում ենք հետևյալը.

Նշված աշխատանքը հնարավոր է եղել իրականացնել մեկ անձի միջոցով, մեկ մենեջերի միջոցով, որը, սակայն, համաձայնվել է կատարել այդ աշխատանքը կրկնակի վարձատրությամբ:

Համերգի գույքի և ռոյալի տեղափոխության մասով.

Պալատը նշել է, որ Դասական երաժշտության աջակցություն ՀԿ-ն գույքի և ռոյալի տեղափոխության համար կատարել է ավել վճարում, քան նախատեսված է եղել պայմանագրում:

Ավելի կատարված ծախսի փոխհատուցման հիմք է հանդիսացել ՀԿ-ի կողմից Հիմնադրամին ուղղված համապատասխան գրությունը**:**

Քանի որ համերգը նախատեսված է եղել անցկացնել Հանրապետության հրապարակում (https://www.youtube.com/watch?v=9wNQGCy9OBM, https://www.youtube.com/watch?v=sivyPRG0fKk), իսկ փաստացի, հաշվի առնելով ապրիլի 24-ի եղանակային վատ պայմանները, համերգը տեղի է ունեցել Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում, կատարվել է լրացուցիչ

տեղափոխության աշխատանք, որի համար և փաստացի վճարվել է համաձայն կնքված պայմանագրի:

Դասական երաժշտության աջակցություն ՀԿ-ի համար ավիատոմսերի ձեռքբերման մասով.

Պալատը նշել է, որ Պեգաս Թրավել Քլաբ ՍՊԸ-ից ձեռք են բերվել ավիատոմսեր՝ 97 անձանց համար, որոնց ցանկում ընդգրկվել է 6 մարդու անուն, ովքեր հրավիրված երաժիշտների ցանկում չեն եղել:

Նվագախմբի կազմում ընդգրկված են եղել մասնակիցներ, որոնք համերգային ծրագրի ցուցակներում ներկայացված են եղել իրենց ծածկանուններով, որի պատճառով հնարավոր են տարբերություններ: Ինչպես նաև ավիատոմս է ձեռք բերվել մենակատար Հ.Ն. համար, ով առանձին տողով է նշված նախահաշվի մեջ և Մ.Ջ. համար, ով լրագրող է “The Garideins” ամսագրից, ով մեծ հոդված է գրել Ցեղասպանության և այս համերգի մասին**:**

4) Պալատը նշել է, որ Պայմանագիրը կնքվել է համերգները ավարտվելու հաջորդ օրը՝ 2015 թ. հուլիսի 1-ին, սակայն, համերգները մեկնարկել էին 2015 թ. հունիսի 11-ին և ավարտվել հունիսի 30-ին: Հայտնում ենք, որ տեղի է ունեցել տեխնիկական բնույթի վրիպակ: Ամսաթիվը պետք է թվագրվեր հունիսը, սակայն տեխնիկական սխալի, վրիպակի պատճառով թվագրվել է հուլիսը՝ 6-րդ ամսվա փոխարեն 7-րդ ամիսը: Կատարող ֆիզիկական անձը, ամեն դեպքում, ծառայությունները մատուցել է պատշաճ՝ պայմանագրի պայմաններին համապատասխան:

Հաշվեքննիչ պալատի արձագանքը՝

1) Պայմանագիրը կնքվել է 01.02.2015 թվականին և մինչև 01.02.2015 թվականը ‘‘Եվրոպայի և Ասիայի լրագրողների մեդիակոնգրես’’ ՍՊԸ-ի կողմից կատարված ոչ մի ծախս չէր կարող առնչություն ունենալ պայմանագրային պարտավորությունների կատարման հետ և ներառվել հաշվետվություններում նշված ծախսերի մեջ: Եվրո-ռուբլի փոխարժեքը հաշվարկվել է ՍՊԸ-ին փոխանցված գումարների օրվա կուրսով:

2) Կնքված պայմանագրերով նախատեսվել է առավելագույն հատկացվելիք գումարների չափ: Առավելագույն չափերը գերազանցող գումարները Հիմնադրամի կողմից վճարման ենթակա չէին:

3) Պայմանագրով նախատեսված վճարումները պետք է կատարվեին պայմանագրին կից նախահաշվով նախատեսված ձևով և չափով, իսկ հրավիրված երաժիշտներին պետք է վճարվեր նախահաշվով նախատեսված՝ յուրաքանչյուր մարդ օրվա համար:

4) Նշված տեխնիկական վրիպակը ընդունելի չէ:

1.18 Անհամապատասխանություն

Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի տարածքում 2015 թվականի ապրիլի 22-24-ը և Վաղարշապատում 2015 թվականի ապրիլի 23-ին տեխնիկական ապահովման ծառայություններ մատուցելու համար Հիմնադրամը ‘‘Տեխնոպրոջեքթ’’ ՍՊԸ-ի հետ 01.04.2015 թվականին կնքել է 5,049.9 հազ ռուսական ռուբլի արժեքով /46,198.2 հազ. դրամ/ պայմանագիր:Պայմանագիրը ուժի մեջ է մտել ստորագրման պահից և գործում էր մինչև պայմանագրային պարտավորությունների կատարումը:

Փաստացի վճարումը կազմել է 5,372.5 հազ. ռուսական ռուբլի /48, 892.8 հազ. դրամ/, որից 322.6 հազ. ռուբլին որպես միջոցառման ժամանակ կորած սարքավորումների փոխհատուցման գումար:

Վաղարշապատում կայացած միջոցառման ժամանակ կորած սարքավորումների վերաբերյալ 24.04.2015 թվականին կազմված ակտի համաձայն կորել է 21 հատ ИК ընդունիչ 160.0 հազ. ռուբլի արժեքով, մեկ հատ 32 ալիքանոց հաղորդիչ 50.0 հազ. ռուբլի արժեքով և 38 հատ ականջակալ 112.6 հազ. ռուբլի արժեքով, ընդամենը՝ 322.6 հազ. ռուբլի:

Համաձայն թիվ 1 լրացուցիչ համաձայնագրին կից մոնտաժվող սարքավորումների ցանկի, որոնք օգտագործվել են Վաղարշապատում, 21 հատ ИК ընդունիչներ և 1 հատ 32 ալիքանոց հաղորդիչ, ընդհանուր՝ 210.0 հազ. ռուբլի արժեքով, ցանկում չի եղել, ուստի այդ սարքավորումները չէին կարող կորել Վաղարշապատում:

Հիմնադրամի կողմից կապալառուին կորած ապրանքների համար վճարվել է 1,753.5 հազ. դրամ, ինչի կորուստը հիմնավորված չէ:

Հիմնադրամի առարկությունը՝

Հիմնադրամը և Տեխնոպրոջեքթ ՍՊԸ-ն կնքել են տեխնիկական ծառայություններ մատուցելու համար պայմանագիր, որի շրջանակներում Ծիծեռնակաբերդում և Վաղարշապատում կազմակերպված միջոցառումների համար ՍՊԸ-ի կողմից տրամադրվել են սարքավորումներ: Հարկ է նշել, որ նշված միջոցառումները միմյանց հաջորդող օրերի են եղել՝ 22, 23, 24 ապրիլի, 2015 թվական: Ծիծեռնակաբերդի տարածքում կազմակերպված միջոցառումների մասնակիցների մի մասը մասնակցել է նաև Վաղարշապատում կազմակերպված միջոցառումներին և Ծիծեռնակաբերդում իրենց օգտագործման համար տրամադրված սարքավորումները /օրինակ՝ ականջակալներ/ իրենց հետ տեղափոխել և օգտագործել են նաև Վաղարշապատում կազմակերպված միջոցառման ժամանակ: Ինչպես նաև կազմակերպիչները ևս որոշ սարքավորումներ Ծիծեռնակաբերդից տեղափոխել են իրենց հետ և օգտագործել նաև Վաղարշապատի միջոցառման ժամանակ: Այդ ամենը պայմանագիրը ստորագրելիս պայմանագրի կողմերը չէին կարող ճշգրիտ հաշվարկով նախատեսել: Եվ, քանի որ նշված սարքավորումների կորստի փաստն արձանագրվել է Վաղարշապատում՝ միջոցառման ավարտին սարքավորումները հանձնում ընդունում կատարելու ժամանակ, այդ իսկ պատճառով էլ սարքավորումների կորստյան վայրը նշված է Վաղարշապատը: Այդ իսկ պատճառով Հիմնադրամը կորած սարքավորումների համար ՍՊԸ-ին փոխհատուցել է դրանց արժեքը:

Հաշվեքննիչ պալատի արձագանքը՝

Վաղարշապատում օգտագործվող սարքավորումների ցանկը տրված է առանձին, և հիմք է հանդիսացել արձանագրելու կորստի չհիմնավորված լինելու փաստը:

1.19 Անհամապատասխանություն

Հյուրանոցային ծառայությունների ձեռքբերման նպատակով Հիմնադրամը պայմանագիր է կնքել ''Արմենիա Հյուրանոցային Համալիր'' ՓԲԸ–ի հետ 71,278.0 հազ. դրամ արժեքով: Գումարն ամբողջովին փոխանցվել է հյուրանոցային համալիրին:

Հյուրանոցային Համալիրի կողմից պայմանագրով նախատեսված հյուրանոցային ծառայություն դիմաց, փաստացի մատուցել է 15,574.6 հազ. դրամի ծառայություններ:

Հիմնադրամի կողմից սխալ պլանավորելու, սխալ հաշվարկելու արդյունքում ամրագրվել են մեծ թվով սենյակներ, որոնք հետագայում չեղարկվել են, իսկ «Արմենիա Հյուրանոցային համալիր» ՓԲԸ-ի կողմից կիրառվել է պայմանագրով նախատեսված տուգանք՝ 14,088.4 հազ. դրամ՝ ամրագրումներ կատարելու, սակայն հյուրեր չուղարկելու հիմնավորմամբ: Մնացած 41,615.0 հազ. դրամը հետ է վերադարձվել Հիմնադրամին:

Հիմնադրամի առարկությունը՝

Հյուրանոցային համալիրի հետ կնքվել է 71,278.0 հազ. ՀՀ դրամի չափով պայմանագիր, փաստացի ծառայություն է մատուցվել հյուրանոցի կողմից 15,574.6 հազ. ՀՀ դրամի չափով և չեղարկված սենյակների համար հյուրանոցի կողմից կիրառվել է պայմանագրով նախատեսված տուգանք՝ 14,088.4 հազ. ՀՀ դրամի չափով: Այս առումով, հարկ է ընդգծել, որ Հիմնադրամը զբաղվել է միայն ֆինանսավորման հարցերով, իսկ սենյակների քանակների ամրագրումն իրականացվել է ՀՀ ԱԳՆ-ի կողմից տրված տեղեկատվության հիման վրա: Հետևաբար, Պալատի կողմից ներկայացված պնդումը, որով նշվում է, որ տուգանքը վրա է հասել Հիմնադրամի սխալ պլանավորելու պատճառով, չի համապատասխանում իրականությանը, քանի որ, ինչպես նշվեց, պլանավորումն իրականացվել է ՀՀ ԱԳՆ-ի կողմից:

Հաշվեքննիչ պալատի արձագանքը՝

Ծրագիրը պլանավորվել և իրականացվել է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումների տնօրինության կողմից:

1.20 Անհամապատասխանություն

''Միջազգային Քաղաքականություն'' /Պոլիտիկ Էնտերնասիոնալ/ ամսագրի հերթական 147-րդ համարում՝ բաղկացած 300 օրինակից, Հայաստանի մասին ֆրանսալեզու հոդվածներ հրատարակելու և այդ հոդվածների 1000 օրինակից բաղկացած գրքույկներ ֆրանսերեն և անգլերեն լեզուներով տպագրելու համար Հիմնադրամի և Ֆրանսիայում ՀՀ դեսպանության միջև 23.01.2015 թվականին կնքվել է պայմանագիր 53,000.0 հազ. դրամ արժեքով /100.0 հազ. եվրո/:

Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարելու համար Ֆրանսիայում ՀՀ դեսպանությունը իր հերթին ''Պոլիտիկ Էնտերնասիոնալ'' եռամսյա հանդեսի հետ կնքել է պայմանագիր, որով ''Պոլիտիկ Էնտերնասիոնալը'' պարտավորվել է ՀՀ դեսպանատանը բացառիկ օգտագործման համար տրամադրել 147-րդ համարի 300 օրինակ, որում ներառված լինի հատուկ դոսիեի ֆրանսերեն տարբերակը և նույն դոսիեի անգլերեն առանձնատիպի 1000 օրինակը: Անհրաժեշտ է նշել, որ ''Պոլիտիկ Էնտերնասիոնալ'' եռամսյա հանդեսի հետ կնքված պայմանագրում չի ներառվել

նախատեսված դոսիեի ֆրանսերեն առանձնատիպի 1000 օրինակի տպագրման աշխատանքները, սակայն գումարը վճարվել է ամբողջությամբ:

Հիմնադրամի կողմից Ֆրանսիայում ՀՀ դեսպանության ներկայացրած հաշվետվությունները և դրանց կցված ծախսերը հավաստող փաստաթղթերը հաշվեքննողներին չի ներկայացվել, իսկ պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումը հիմնավորված չէ:

Հիմնադրամի առարկությունը՝

Պալատը նշել է, որ Հիմնադրամի կողմից չեն ներկայացվել դեսպանության կողմից ներկայացված հաշվետվությունները: Սակայն, դա չի համապատասխանում իրականությանը, քանի որ Պալատին ներկայացվել է դեսպանության և Պոլիտիկ էնտերնասիոնալ եռամսյա հանդեսի միջև կնքված պայմանագիրը, որը և իրենից ներկայացնում է ծախսի հիմնավորում /ներկայացված է Պալատին/:

Հաշվեքննիչ պալատի արձագանքը՝

Կնքված պայմանագիրը չի կարող դիտվել, որպես ծախսի հիմնավորում:

1.18 Անհամապատասխանություն

Գերմանիայից վարձակալած մետաղական արգելափակոցի 1գծմ-ի համար 4.7 անգամ ավել է վճարվել Հայաստանում ձեռքբերվածից

Հիմնադրամը 23.03.2015 թվականին՝ ըստ ներկայացրած հաշիվ ապրանքագրի /INVOISE/ և հաստատման ուղարկված փաստաթղթի /CONFIRMATION/ Գերմանիայի Մյունխեն քաղաքում գրանցված և գործունեություն իրականացնող ''EPS'' ընկերությունից վարձակալել է 310 գծամետր /1.09մ*1.10մ/ այլումինե արգելափակոցներ՝ գումարով 7,645.6 հազ. դրամ /14,300 եվրո/:

Արգելափակոցների հավաքման աշխատանքների հսկման համար վեց օրով նույն ընկերությունից հրավիրել են նաև երկու տեխհսկիչներ, որոնց ճանապարհածախսի և կեցության համար վճարվել է 3,143.8 հազ. դրամ /5,880 եվրո/:

Արգելափակոցները Գերմանիայի Բերգեմ քաղաքից Երևան, այնուհետև Գերմանիայի Բերգեմ քաղաք տեղափոխման համար վճարվել է շուրջ 3,357.2 հազ. դրամ:

Արդյունքում վարձակալված արգելափակոցի մեկ մետրի համար վճարվել է 45,634 դրամ վարձավճար, այն դեպքում, երբ հիմնադրամը արգելափակոցներ 01.04.2015 թվականին ''Վարդգես Ճյուղարյան'' Ա/Ձ-ից ձեռք է բերել՝ մեկ մետրը 9,600 դրամով: Ընկերությունը արգելափակոցները վարձակալել է 475.3 տոկոսով ավելի թանկ, քան արգելափակոցի ձեռքբերման գինը, կամ վարձակալման արդյունքում հիմնադրամը վճարել է 10,902.8 հազ. դրամ ավելի գումար, քան այն ձեռք կբերեր ՀՀ շուկայից:

Հիմնադրամի առարկությունը՝

Պալատը նշել է, որ Վարդգես Ճյուղուրյան ԱՁ-ից Հիմնադրամը մի քանի անգամ ավելի մատչելի գնով է ձեռքբերել արգելափակոցները, քան թե EPS ընկերությունից վարձակալել: Սակայն, պետք է նշել, որ այս պնդումը լիովին անհիմն է, քանի որ արգելափակոցները ամբողջովին տարբեր, միմյանցից էապես տարբերվող են եղել և

նրանց համեմատելը սխալ է, քանի որ խոսքը վերաբերում է տարբեր տեխնիկական բնութագրեր ունեցող, տարբեր որակական հատկանիշներ ունեցող արգելափակոցներին:

Հաշվեքննիչ պալատի արձագանքը՝

Հիմնադրամի ներկայացրած առարկությունը, ըստ էության, պարզաբանում է:

1.22 Անհամապատասխանություն

Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի կայքի սպասարկման համար Հիմնադրամը 73,722.8 հազ. դրամ արժեքով պայմանագիր է կնքել ''Պան-Մեդիա'' ՍՊԸ-ի հետ:

Կայքի բովանդակային սպասարկումը ներառել է՝ կայքի համար Հայոց ցեղասպանության առնչությամբ նյութերի պատրաստում հայերեն և այդ պահին կայքում գործող բոլոր լեզուներով և ''Այս օրը 100 տարի առաջ'', ''Պատմիր քո մասին'', Պատմիր քո պատմությունը, ''Կայքի ծանոթագրական բաժինների'' բաժնի համար նախօրոք տրամադրված թվայնացված տեքստերի խմբագրման և տեղադրման աշխատանքները: Փաստացի կատարողականը կազմել է 66,937.6 հազ. դրամ, իսկ փոխանցված գումարից՝ 6,785.2 հազ. դրամը հետ է վերադարձվել Հիմնադրամ, որից հետո կայքը փակվել է:

Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված /armeniangenocide100.org/ վեբ կայքի զարգացման և սպասարկման ծառայությունների մատուցման համար Հիմնադրամը 43,238.6 հազ. դրամ արժեքով պայմանագիր է կնքել ''Ֆլուպեն'' ՍՊԸ-ի հետ: Մատուցվող ծառայությունը ընդգրկել է վեբկայքի զարգացման տարբեր որոնողական համակարգերը: Փաստացի կատարողականը կազմել է 42,943.8 հազ. դրամ, որի դիմաց վճարվել է 42,943.8 հազ. դրամ, որից հետո կայքերը փակվել են:

Հիմնադրամի առարկությունը՝

Նշված կայքը փոխանցվել է Ցեղասպանության թանգարանին՝ հետագա սպասարկման և գործարկման նպատակով: 19.09.2019 թվականի թիվ հհհ 2-405 նամակով ներկայացված առարկության լրացումով հատնվում է, որ ֆբ-էէը տրամադրվել է ցեղասպանության թանգարան ինստիտուտին, իսկ /armeniangenocide100.org/ կայքի ողջ բովանդակությունը գտնվում է գիտությունների ազգային ակադեմիայում:

Հաշվեքննիչ պալատի արձագանքը՝

Հիմնադրամի կողմից ներկայացված փոխանցման փաստը չի հիմնավորվում ոչ մի փաստաթղթով:

1.23 Անհամապատասխանություն

77,400.0 հազար դրամի գույք առանց կոնցեսիոն վճարի հանձնվել է կոնցեսիոն կառավարման, որը պայմանագրի ժամկետի ավարտից հետո դառնալու է կոնցեսիոների սեփականությունը:

Հիմնադրամը գտնելով, որ Հայոց ցեղասպանության 100-ամյակի միջոցառումների անցկացման ընթացքում ձեռքբերված ապրանքները /համակարգչային

տեխնիկան, գրասենյակային գույքը, արգելափակոցները, միջոցառման համար ներկրած բիոզուգարանները և այլ նշանակության գույքը/ իրենց անհրաժեշտ չեն /ցանկը կցվում է/ գումարով 77,399.9 հազ. դրամ և մի շարք ապրանքներ ու հաստոցներ, որոնց ձեռքբերման փաստաթղթերը բացակայում են և արժևորված չեն, 26.10.2015 թվականին՝ առանց Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից Հիմնադրամի գույքի տնօրինման կարգի հաստատման որոշման /կանոնադրության 38 կետի ,,գ,, ենթակետ/ կնքված ''Գույքի կոնցեսիոն կառավարման պայմանագրի'' համաձայն, հանձնել է ''Լոմա Սիսթեմս'' ՍՊԸ-ին:

Հիմնադրամը Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների շրջանակում, Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումների 15 աշխատակիցներից բաղկացած տնօրինության գործունեության համար, որից մեկը վարորդ, ձեռք է բերվել 32 հատ հզոր և գերհզոր համակարգիչներ, 2 հզոր սերվերներ, 34 հատ կոշտ սկավառակներ, որից 14-ը՝ 27.05.2015 թվականին, 3-ը՝ 14.07.2015 թվականին՝ միջոցառումների ավարտից հետո և բոլորը 26.10.2015 թվականին վեց տարի ժամկետով անհատույց հանձնել կոնցեսիոն կառավարման:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից որակվել են բարեգործական և ազատվել ԱԱՀ-ից: Հիմնադրամը 29.12.2014 թվականին ''Էդելնա'' ՍՊԸ-ից ձեռք է բերել համակարգչային տեխնիկա և վճարել նաև ապրանքի արժեքի նկատմամբ կիրառված ԱԱՀ-ի դիմաց 1,825.8 հազ. դրամ: Հիմնադրամի կողմից համակարգչային տեխնիկայի ձեռքբերումը չի դասվել բարեգործական ծրագրերի շարքին և դրա համար ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին չի դիմել:

Կոնցեսիոն կառավարման պայմանագրում Հիմնադրամի կողմից կոնցեսիոն վճար չի նախատեսվել, գույքը հանձնվել է կառավարման անհատույց, վեց տարի ժամկետով, պայմանով, որ կոնցեսիոները հոգ տանի գույքի մասին և կատարի անհրաժեշտ ներդրումներ, իսկ պայմանագրի ժամկետը լրանալուց հետո գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետք է անցներ կոնցեսիոներին:

Կոնցեսիոն կառավարման պայմանագրի 7.2-րդ կետով սահմանվել է, որ Հիմնադրամի կողմից հանձնված յուրաքանչյուր գույքային միավորի համար կիրառվելու էր ՀՀ կառավարության 01.07.2004թ.-ի թիվ 957-ն որոշմամբ սահմանված ամորտիզացիոն մասհանումների նորմը, իսկ ամորտիզացիայի 100 տոկոս լրացած յուրաքանչյուր գույքային միավորի նկատմամբ, Հիմնադրամը կորցնելու էր սեփականության իրավունքը և այդ գույքային միավորները դառնալու էին Կոնցեսիոների սեփականությունը:

Հիմնադրամը գույքը կառավարման հանձնելուց հետո դրա օգտագործման և բարելավման նպատակով կատարված ներդրումների վերաբերյալ պայմանագրի 3.1.2-րդ կետով նախատեսված ձևով Կոնցեսիոներից հաշվետվություն չի պահանջել, իսկ վերստուգիչ հանձնաժողովը չի հետևել գույքի պահպանմանը և դրա մասով տարեկան հաշվետվություն չի ներկայացրել:

Հիմնադրամի գործադիր վարչությունը գործադիր տնօրենի գլխավորությամբ կանոնադրության 48 կետի ''բ'' ենթակետի համաձայն, պարտավոր էր ըստ նպատակի և խնայողաբար օգտագործել հիմնադրամի միջոցները, սակայն կոնցեսիոն կառավարման հանձնված գույքի մասով ոչ մի աշխատանք չի կատարել:

Հիմնադրամի առարկությունը՝

Պալատը պնդում է, որ Հիմնադրամը գտնելով, որ Հայոց ցեղասպանության 100-ամյակի միջոցառումների անցկացման ընթացքում ձեռքբերված ապրանքներն անհրաժեշտ չեն իրենց՝ գումարով 53,781.8 հազար ՀՀ դրամ, և մի շարք ապրանքներ ու հաստոցներ, որոնց ձեռքբերման փաստաթղթերը բացակայում են և արժևորված չեն, 26.10.2015 թվականին առանց Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից Հիմնադրամի գույքի տնօրինման կարգի հաստատման որոշման՝ կնքված գույքի կոնցեսիոն կառավարման պայմանագրի համաձայն հանձնել է Լոմա Սիսթեմս ՍՊԸ-ին:

Այս պնդումը չի համապատասխանում իրականությանը, քանի որ 26.10.2015թ. Հիմնադրամի և Լոմա Սիսթեմս-ի միջև կնքված պայմանագրի Ա կետի համաձայն՝ այդ միջոցառումների շրջանակներում Հիմնադրամի ձեռքբերած գույքը Հիմնադրամին իր ամենօրյա գործունեության համար անհրաժեշտ չեն և Հիմնադրամը ցանկանում է օգտագործել գույքը հանրօգուտ նպատակներով, երրորդ անձանց միջոցով: Պայմանագրի Բ կետի համաձայն, այս միտումը հրապարակվել է Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Սերժ Սարգսյանի կողմից՝ 2015թ. սեպտեմբերի 26-ին կայացած 6-րդ նիստի ընթացքում:

Կոնցեսիոներ Լոմա Սիսթեմսը իրականացնում է գործունեություն և ներգրավված է ծրագրերում, որոնք համահունչ են Հիմնադրամի կանոնադրական նպատակներին և այդ իսկ պատճառով էլ որոշվել է Հիմնադրամին ամենօրյա օգտագործման համար ոչ անհրաժեշտ գույքը հանձնել այդ կազմակերպությանը՝ Կոնցեսիոն կառավարման նպատակով: Կանոնադրության համաձայն՝ գույքի տնօրինումն իրականացնում է Հիմնադրամի գործադիր տնօրենը:

Բացի այդ, նշենք, որ Պալատի կողմից վկայակոչված մի շարք ապրանքներ և հաստոցներ, որոնց ձեռքբերման փաստաթղթերը բացակայում են և արժևորված չեն, ՀՀ են բերվել ՀՀ նախագահի ինքնաթիռով, և դրանց ծագման մասին տեղեկատվությանը Հիմնադրամը չի տիրապետում:

Պալատը պնդել է, որ Հիմնադրամը ձեռք է բերել պահանջվածից ավելի ապրանքներ՝ չունենալով դրանց կարիքը, քանի որ Տնօրինությունը բաղկացած է եղել 15 աշխատակիցներից: Սակայն, այս պնդումն անհիմն է և առարկայազուրկ, քանի որ Հիմնադրամը համակարգչային տեխնիկան ձեռք է բերել ոչ միայն Հիմնադրամի 15 աշխատակիցների համար, այլ նաև ընդդեմ Ցեղասպանության կանխարգելման գլոբալ ֆորումի քարտուղարության աշխատակիցների համար:

Պալատը նշել է, որ 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից որակվել են բարեգործական և ազատվել ԱԱՀ-ից: Հիմնադրամը 29.12.2014 թվականին Էդելնա ՍՊԸ-ից ձեռք է բերել համակարգչային տեխնիկա, սակայն այդ ձեռքբերումը չի դասվել բարեգործական և այդ ձեռքբերման համար ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի հանձնաժողովին չի դիմել:

Նշվածի վերաբերյալ պարզաբանումը հետևյալն է. 100-րդ տարելիցի միջոցառումները ՀՀ կառավարության կողմից բարեգործական որակելու և ԱԱՀ-ից ազատելու որոշումը եղել է 2015 թվականին /կից ներկայացվում է որոշումը՝ Հավելված 30/:

Էդելնա ՍՊԸ-ից ձեռքբերումը կատարվել է 2014 թվականին և հետևաբար, հնարավոր չէր այդ գործարքն ազատել ԱԱՀ-ից:

Հիմնադրամը, կնքելով գույքի կոնցեսիոն կառավարման պայմանագիր Լոմա Սիսթեմս ՍՊԸ-ի հետ՝ նախապես կատարել է ուսումնասիրություն և գտել է, որ նշված ՍՊԸ-ն վստահելի կազմակերպություն է և գործընկերային վստահության մթնոլորտի հիման վրա չի պահանջել հաշվետվություններ, սակայն դա չի նշանակում, որ Հիմնադրամը գույքի ճակատագիրը թողել է բախտի քմահաճույքին: Գույքի կոնցեսիոն կառավարման պայմանագրի 3.1.2 կետը դիսպոզիտիվ է, վերապահում է իրավունք Հիմնադրամին պահանջելու կոնցեսիոներից ներկայացնել հաշվետվություն, սակայն 3.1.2 կետում նշված չէ, որ պարտավոր է պահանջել: Հիմնադրամն իրավունք ուներ պահանջելու կամ չպահանջելու: Հաշվի առնելով վստահության բարձր մակարդակը՝ Հիմնադրամը չի պահանջել: Սա չի նշանակում, որ Հիմնադրամի գործադիր վարչությունը իր հիմնական միջոցները օգտագործել է ոչ նպատակային և ոչ խնայողաբար:

Հաշվեքննիչ պալատի արձագանքը՝

Հիմնադրամի ներկայացրած առարկությունը, ըստ էության, պարզաբանում է:

2 Որոշ ապրանքների, ծառայությունների և աշխատանքների գնման գործընթացի վերաբերյալ

2.1 Անհամապատասխանություն

2017թ. կնքված պայմանագրերը չեն համապատասխանում «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին

Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանում Հիմնադրամի կողմից իրականացված գնումների շրջանակում կնքված պայմանագրերից ընտրանքային կարգով հաշվեքննվել են 19 կազմակերպությունների հետ կնքված՝ ապրանքների մատակարարման, ծառայությունների մատուցման և աշխատանքների կատարման 55 պայմանագրեր՝ 613,199 հազար դրամ ընդհանուր արժեքով, որոնց փաստացի վճարվել է 619,272 հազար դրամ (տարբերությունը կապված է հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանից առաջ և հետո կատարված վճարումներով՝ պայմանավորված պայմանագրերի պայմաններով):

2017 թվականներին կնքված պայմանագրերը չեն համապատասխանում «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին, մասնավորապես՝ պայմանագրերը կնքվել են առանց համապատասխան մրցույթի անցկացման, իսկ կնքված պայմանագրերի կատարումն իրականացվել է բազմաթիվ թերություններով և բացթողումներով:

Հիմնադրամի առարկությունը՝

Հիմնադրամը չի առաջնորդվում Գնումների մասին օրենքով, քանի որ իրականացվող ծրագրերի ֆինանսավորումը կատարվում է ոչ թե Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին, այլ ծրագրերի ֆինանսավորումը իրականացվում է Հիմնադրամի բարերարների կողմից՝ սեփական միջոցներով:

Հիմք ընդունելով Հիմնադրամի Գործադիր վարչության տնօրենի 2008թ.-ի 30 դեկտեմբերի թիվ 174 հրամանի 3.2 կետը՝

<<Բարերարի պահանջով կապալի պայմանագիր կնքել բարերարի կողմից առաջարկված շինարարական կազմակերպության հետ եւ գնումը կատարել բարերարի կողմից առաջարկված կազմակերպությունից>> (Հրամանը կցվում է):

Հաշվեքննիչ պալատի արձագանքը՝

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի ե) կետի՝ պատվիրատու են հանդիսանում պետության կամ համայնքի կամ պետական կամ համայնքային ոչ առևտրային կամ պետության կամ համայնքների՝ հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպությունների կողմից ստեղծված հիմնադրամները կամ ձևավորված միավորումները (միությունները): Նշված կետը ուժի մեջ մտնել 25.04.2017թ-ից:

Նշված պայմանագրերը հանդիսանում են բժշկական սարքավորումների ձեռքբերման և ոչ թե կապալի:

2.2 Անհամապատասխանություն

Ապրանքի, գույքի, սարքավորման հաշվապահական ձևակերպումները չեն համապատասխանում հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին

Ապրանքների մատակարարման պայմանագրերով նախատեսված է որոշակի ծրագրերի իրականացման շրջանակում ձեռք բերել ապրանքներ, սարքավորումներ և գույք (բժշկական սարքավորումներ, համակարգչային տեխնիկա, հուշամեդալներ և այլն), և դրանք նվիրատվության կարգով հանձնել այլ անձանց և կազմակերպություններին:

Կնքված պայմանագրերով նախատեսված է, որ մատակարարը ապրանքները հանձնման-ընդունման ակտով պետք է հանձնի Հիմնադրամին: Համաձայն մատակարարի կողմից դուրս գրված հաշվարկայի փաստաթղթերի, հանձնման-ընդունման ակտերի՝ ապրանքները փաստացի հանձնվել են Հիմնադրամին, վերջինս նվիրաբերության պայմանագրով և համապատասխան հանձնման-ընդունման ակտով ապրանքները հանձնել է երրորդ կողմին, սակայն հաշվապահական գրանցումներում ապրանքների մուտք և ելք չի ձևակերպվել: «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն Հիմնադրամում պետք է կիրառվի Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտները, որոնցով սահմանված են ապրանքներ ձեռք բերելիս, դրանց մուտքը և ելքը ձևակերպելու անհրաժեշտությունը:

Հիմնադրամի առարկությունը՝

Հիմնադրամի կողմից իրականացվող բոլոր ծրագրերը արտացոլված են Հիմնադրամի հաշվեկշռում (գրանցամատյաններում): Հիմնադրամի գործադիր վարչության բյուջեով նախատեսված ապրանքների, հիմնական միջոցների ձեռք բերման հաշվապահական հաշվառումը կատարվում է հիմնադրամի հաշվապահական ծրագրի Պահեստի համակարգի անալիտիկ հաշվառմամբ, սակայն հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրերի շրջանակներում գործնականորեն անհնար է Պահեստ համակարգի անալիտիկ հաշվառումը, քանի որ այն ապրանքները, որոնք հիմնադրամի կողմից ուղարկվում են շահառուներին հիմնադրամ փաստացի մուտք չեն լինում՝համապատասխան պահեստային և պահպանության պայմանների բացակայության հիմքով և յուրաքանչյուր ապրանքատեսակի համար պահեստային անալիտիկ հաշվառումը գործնականորեն անհնար է: Այն ապրանքները, որոնք ձեռք են բերվել ՀՀ տարածքում, Հիմնադրամի գրանցամատյաններում ձևակերպվել են որպես համապատասխան ծախս, ավելացնելով պարտավորությունը մատակարարի նկատմամբ (կրկնակի գրանցում), այն ապրանքատեսակները, որոնք ներմուծվել են արտերկրից որպես նյութական նվիրատվություն հիմնադրամին, ձևակերպվել են՝ թղթակցելով պահեստի սինթետիկ հաշվի հետ, ավելացնելով բարերարի կողմից հիմնադրամին նվիրաբերած նյութական նվիրատվության համարժեք դրամը (կրկնակի գրանցում):

Հաշվեքննիչ պալատի արձագանքը՝

06.08.2019թ թիվ ՀՊԵ-ԱԳ-130 գրությամբ պահանջվել է Հիմնադրամի կողմից հաստատված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը (Հիմնադրամը պետք է ունենար համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետի ա) ենթակետի): Հիմնադրամը պարտավոր էր տրամադրել այն 3 աշխատանքային օրվա ընթացքում, որը չի արվել: «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն, Հիմնադրամում պետք է կիրառվի Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտները:

Հաշվապահական հաշվառման քաղաքականություն փաստաթղթով, հավանաբար, հստակ սահմանված է պաշարների հաշվառման սկզբունքները, եղանակները, ձևերը, չափման և ճանաչման մոտեցումները:

Պաշարների հաշվառումը միջազգային ստանդարտներին համապատասխան գործնականում հնարավոր է, և իրենից ներկայացնում է ընդամենը հաշվապահական հաշվառման կազմակերպչական խնդիր, իսկ ստանդարտ չպահպանելը իրենից ներկայացնում է ռիսկ, որը կասկածի տակ է դնում գործարքների պատշաճ արտացոլման արժանահավատությունը:

Ինչ վերաբերվում է այն մտքին, որ Շահառուին ուղարկվող ապրանքները փաստացի մուտք չեն լինում Հիմնադրամ, այն դեպքում, երբ Հիմնադրամի տնօրենը Հիմնադրամի անունից ստորագրում և ընդունում է այդ ապրանքները, իսկ հարկային հաշիվներում և հաշվարկային փաստաթղթերում ապրանքի առաքման վայրը նշվում է Հիմնադրամի հասցեն, կասկածի տակ է դրվում գործարքների արժանահավատությունը:

2.3 Անհամապատասխանություն

Ընդհանուր առմամբ առկա անհամապատասխանությունները համատարած են (55 պայմանագրերից 41-ում առկա են անհամապատասխանություններ) և նմանատիպ (միևնույն անհամապատասխանությունը առկա է տարբեր պայմանագրերում):

Անհամապատասխանությունները կարելի է պայմանական խմբավորել հետևյալ կերպ, մանրամասները ներկայացված են հավելված 14-ում:

1. **<u>Փաստաթղթերի թերի բովանդակություն:</u>** Փաստաթղթերում առկա են բազմաթիվ թերություններ և դրանք ընդունվել են Հիմնադրամի կողմից, մասնավորապես, ստորագրվել են հանձնման-ընդունման ակտեր առանց ամսաթվի, հանձնման-ընդունման ակտերի ամսաթիվը չի համապատասխանում հարկային հաշիվներում նշված մատակարարման ամսաթվին, հանձնման-ընդունման ակտում և հարկային հաշվում նշված ապրանքի անվանումները չեն համապատասխանում միմյանց, իսկ որոշ դեպքերում ներկայացված փաստաթղթերի բովանդակությունը չի պարունակում անհրաժեշտ ամբողջական տեղեկատվությունը:

Հիմնադրամի առարկությունը՝

Հիմնադրամի և իր գործընկերների միջև կնքված պայմանագրերի հավելվածների և գործընկեր կազմակերպությունների կողմից դուրս գրված հաշվարկային և հարկային փաստաթղթերում նշված ապրանքների անվանումների անհամապատասխանությունները պայմանավորված են նրանով, որ որոշ դեպքերում պայմանագրերի հավելվածներում գույքի նկարագրերը գրվել են անգլերեն տեքստերով, իսկ դուրս գրված հաշվարկային և հարկային փաստաթղթերում նույն

ապրանքների անվանումները նշվել են հայերեն լեզվով ավելացնելով նաև կոնկրետ մոդելների անվանումները անգլերեն տարբերակներով:

Հաշվեքննիչ պալատի արձագանքը՝

Անվանումների անհամապատասխանությունը պայմանավորված չէ թարգմանությամբ, այլ պայմանավորված է պարամետրերի և մոդելների անվանումների անհամապատասխանությամբ, օրինակ. «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից 15.06.2017թ-ին դուրս գրված հարկային հաշվում սարքավորման անունը նշվել է QPCR SYBRG.FLUOR MIX, 200 RXN 50 ul,իսկ ընդունման-հանձնման ակտում այն նշվել է iQ SYBR Green supermix, 100x50 մկլ թեսթեր; 2.5 մլ (2*1.25 մլ); Biorad

2. **<u>Պայմանագրով նախատեսված ժամկետից ուշ մատակարարում:</u>** Ապրանքները մատակարարվել են պայմանագրով սահմանված ժամկետի ավարտից հետո, որոնք Հիմնադրամի կողմից ընդունվել են առանց պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները կիրառելու: Ստուգված 55 պայմանագրերից 10-ով ապրանքները փաստացի մատակարարվել են (համաձայն մատակարարի կողմից դուրս գրված հաշիվ ապրանքագրերի և հարկային հաշիվների) պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո:

Հիմնադրամի առարկությունը՝

Ապրանքատեսակների մատակարարման ուշացման դեպքում չի եղել նախադեպ, համաձայն որի հիմնադրամը ամբողջությամբ վճարի պայմանագրերով նախատեսված գումարները: Պայմանագրերով նախատեսված ժամկետների ուշացման պարագայում, մատակարար կազմակերպությանն ապրանքատեսակների մատակարարման դիմաց վճարումը կատարվել է միայն ողջ ապրանքատեսակները Հիմնադրամին կամ շահառուին հանձնելուց հետո:

Հաշվեքննիչ պալատի արձագանքը՝

Ստուգված 55 պայմանագրերից 10-ով ապրանքները փաստացի մատակարարվել են (համաձայն մատակարարի կողմից դուրս գրված հաշիվ ապրանքագրերի և հարկային հաշիվների) պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո:

3. **<u>Պայմանագրով նախատեսված վճարման ժամկետից շեղում:</u>** Վճարումները կատարվել են ժամկետներից շեղումներով, մասնավորապես, վճարվել են պայմանագրով սահմանված ժամկետներից ուշ կամ պայմանագրով սահմանված է վճարել ապրանքները ստանալուց հետո, կանխավճար չի նախատեսվել, սակայն վճարվել է նախապես կամ պայմանագրով նախատեսված կանխավճարը կատարվել է սահմանված ժամկետից ուշ: Ստուգված 55 պայմանագրերից 14-ում առկա են պայմանագրով սահմանված և փաստացի վճարման ժամկետների շեղումներ:

Հիմնադրամի առարկությունը՝

Պայմանագրերով նախատեսված վճարման ժամկետներից շեղումը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով՝

Ինչպես գիտեք, հիմնադրամը բարեգործական կազմակերպություն է և իր ծրագրերը իրագործելու համար համագործակցում է աշխարհասփյուռ հայության հետ: Հիմնադրամի ֆինանսական միջոցները գոյանում են բարերարների կողմից նվիրաբերած գումարների հաշվին: Հիմնադրամի բանկային հաշիվներին մուտքագրված ցանկացած գումար ունի օգտագործման նպատակային ուղղություն՝ այն է բարերարների կողմից հաստատված ծրագրերը: Որոշ դեպքերում բարերարների կողմից նվիրաբերվող գումարների ուշ փոխանցմամբ է պայմանավորված պայմանագրերով նախատեսված վճարման ժամկետներից շեղումները: Ինչ վերաբերում է պայմանագրերով նախատեսված կանխավճարների վճարմանը, հիմնադրամն իր գրեթե բոլոր պայմանագրերում հստակ նշել է կանխավճարի փոխանցման պայմանները, այն է՝ պայմանագրով նախատեսված կանխավճարը հիմնադրամը վճարում է մատակարարին կամ ծառայություն մատուցող կազմակերպություններին՝ վերջիններիս կողմից ներկայացվող, պատվիրատուի կողմից /Հիմնադրամ/ ընդունելի կանխավճարի բանկային երաշխիքի հիման վրա: Կանխավճարի բանկային երաշխիքի առկայությունը ապահովում է հիմնադրամին խուսափել ֆինանսական ռիսկերից, որոնք կարող էին ի հայտ գալ պայմանագրային պարտավորությունների ոչ պատշաճ կատարման ժամանակ: Որոշ դեպքերում մատակարար կամ ծառայություններ մատուցող կազմակերպությունների կողմից վերը նշված բանկային երաշխիքներ չեն ներկայացվել հիմնադրամ, որի արդյունքում էլ չեն վճարվել կանխավճարներ: Առանց բանկային երաշխիքների գործընկերներին հիմնադրամի կողմից չեն վճարվել կանխավճարներ:

Հաշվեքննիչ պալատի արձագանքը՝

Արձանագրության հավելված 3-ում նշված կանխավճարների ուշ կատարման 6 դեպքի պայմանագրերից ոչ մեկով **նախատեսված չէ բանկային երաշխիքի ներկայացում**, և հստակ սահմանված են կանխավճարի կատարման պայմանները, որոնք չեն կատարվել:

Հիմնադրամում գնումների կազմակերպման, կնքված պայմանագրերի շրջանակում ապրանքների մատակարարման, ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման և դրանց համար կատարված վճարումների (այդ թվում՝ կանխավճար) նկատմամբ հսկողության համակարգը պարունակում է բազմաթիվ թերություններ, ինչի մասին վկայում է այն հանգամանքը, որ տարբեր ժամանակաշրջաններում, տարբեր պայմանագրերում առկա են նույնատիպ անհամապատասխանություններ (միևնույն անհամապատասխանությունն առկա է տարբեր պայմանագրերում):

Գնումների գործընթացի նկատմամբ հսկողության առկա համակարգը կարող է հանգեցնել ոչ պատշաճ որակի և շուկայականից բարձր արժեք ունեցող ապրանքների մատակարարմանը, ծառայությունների մատուցմանը և աշխատանքների կատարմանը, իսկ վճարումները նախատեսված ժամկետներից շեղումներով կատարելը կարող է հանգեցնել նաև ֆինանսական հետևանքների: Պայմանագրով սահմանված վճարումները (այդ թվում կանխավճարները) սահմանված ժամկետից ուշ կատարելը կարող է հանգեցնել պայմանագրով սահմանված տույժերի և տուգանքների առաջացմանը, որը Հիմնադրամի համար կարող է առաջացնել հավելյալ ֆինանսական պարտավորություններ:

«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի և Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան ապրանքների հաշվառում չիրականացնելն իրենից ներկայացնում է ռիսկ, որը կասկածի տակ է դնում հաշվապահական գրանցումներում գործարքների պատշաճ արտացոլումը և/կամ ստորագրված հանձնման-ընդունման և հաշվարկային փաստաթղթերի արժանահավատությունը:

Այլ տեղեկատվություն

Հիմնադրամի կողմից Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների շրջանակում ծրագրերի մասնակիցների համար ձեռք են բերվել 607,826.0 հազ. դրամ ընդհանուր արժողությամբ ավիատոմսեր, մասնավորապես՝

Ծրագիր իրականացնողների կողմից - 213,147.1 հազ. դրամ

Տարբեր կազմակերպությունների կողմից ձեռքբերված, որոնք չեն ուսումնասիրվել 98,876.1 հազ. դրամ/ հաշվեքննության ընտրանքում չեն ներառվել/:

Հիմնադրամի կողմից ձեռքբերված - 295,802.8 հազ. դրամ:

Հաշվեքննության լիարժեք իրականացումը դարձել է անհնար, քանի որ Հիմնադրամը գրությամբ տեղեկացրել է, որ իրենց կողմից ձեռքբերված ավիատոմսերի մասով չեն կարող ներկայացնել անձանց անձնագրերի, ինչպես նաև որոշ անձանց չվերթի ուղղությունների, ժամանման և մեկնման օրերի վերաբերյալ տեղեկատվությունը: Քանի որ լիարժեք տեղեկատվությունը տիրապետել են Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումների տնօրինության մենեջերները, որոնք տնօրինության գործունեության ավարտից հետո այլևս չեն աշխատում Հիմնադրամում: Մենեջերների և վերոնշյալ ՍՊԸ-ներին տեղեկատվությունը Հիմնադրամին տրամադրվել է ՀՀ արտաքին գործերի նախարարության, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կամ այլ կազմակերպությունների կողմից էլեկտրոնային եղանակով, որի պատճառով թղթային օրինակներ առկա չէ: Էլեկտրոնային օրինակներ Հիմնադրամում նույնպես չի պահպանվել, քանի որ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումների տնօրինության էլեկտրոնային հասցեն տնօրինության գործունեության ավարտից հետո ջնջվել է:

Նշված ծախսերն ուսումնասիրվել են բացառապես Հիմնադրամում առկա ոչ ամբողջական և ճշգրիտ փաստաթղթերի հիման վրա: Այդ կազմակերպությունների մոտ փաստացի մատուցված ծառայությունների, դրանց որակի և գնի մասով հանդիպակաց ստուգում իրականացնել հնարավոր չէր՝ կապված ՀՀ հաշվեքննիչ պալատի մասին ՀՀ օրենքով նախատեսված սահմանափակումների հետ:

II. ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հիմք ընդունելով ՀՀ հաշվեքննիչ պալատի մասին օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի ա/ ենթակետի պահանջները՝ կատարողականի հաշվեքննության ընթացիկ եզրակացությունը ներառում է հաշվետվություն հաշվեքննության առարկայի տնտեսման, նպատակային արդյունավետության և ծախսային արդյունավետության վերաբերյալ: Հաշվեքննության ընթացքում ՀՀ հաշվեքննիչ պալատը հանգել է հետևյալին՝

- Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառման ծրագրերի նախահաշիվները նախօրոք կազմված և հաստատված չեն եղել և ֆինանսավորումը իրականացվել է փաստացի ծախսերի հիման վրա, ուստի Պալատը տնտեսման սկզբունքի գնահատման շրջանակում եզրահանգման չի կարող գալ:
- Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառման շրջանակում կնքված պայմանագրերից բխող նպատակները իրականացվել են և կնքված բոլոր պայմանագրերով նախատեսված ծրագրերը իրականացվել են և բխել են կնքված պայմանագրերով սահմանված նպատակներից, ՀՀ հաշվեքննիչ պալատը եկել է եզրահանգման, որ չի խախտվել նպատակային արդյունավետության (օգտավետության)՝ սկզբունքը:
- Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառման համար նվիրատվությունները կազմել են 5,221,929.0 հազ. դրամ, ծախսերը՝ 4,759,717.0 հազ. դրամ: Հաշվեքննող խմբի կողմից ընտրանքային կարգով ուսումնասիրվել են 3,904,304.1 հազ. դրամ արժեքով 145 պայմանագրեր: Ուսումնասիրված ծախսերից՝ 3,218,000.0 հազ. դրամ արժեքով կնքված պայմանագրերի դիմաց կատարված ծախսերը հաշվեքննվել են բացառապես հիմնադրամում առկա փաստաթղթերի հիման վրա: Այդ կազմակերպությունների մոտ փաստացի կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների և մատակարարված ապրանքների, դրանց որակի և գնի մասով համադրում իրականացնել հնարավոր չէր կապված հաշվեքննիչ պալատի մասին օրենքով նախատեսված սահմանափակումներով: ՀՀ Հաշվեքննիչ պալատի լիազորությունների շրջանակում համապատասխան ստուգում հնարավոր էր իրականացնել միայն 686,000.0 հազ. դրամ ծախսի շրջանակում կնքված պայմանագրերի մասով, 9 կազմակերպությունների մոտ: Հաշվեքննության ընթացքում ծախսային արդյունավետության գնահատման շրջանակներում արձանագրվել են մի շարք անհամապատասխանություններ, ինչի արդյունքում ՀՀ հաշվեքննիչ պալատը եկել է եզրահանգման, որ ծախսային արդյունավետության սկզբունքը չի պահպանվել: Մասնավորապես.

✓ Հիմնադրամը 626,756.9 հազ. դրամ արժեքով, թվով 10 մասնակի ֆինանսավորման պայմանագրեր է կնքել ''Երևանյան հեռանկարներ միջազգային երաժշտական փառատոն'' ՀԿ-ի հետ: Ըստ կնքված պայմանագրի, ֆինանսավորվողը պարտավոր էր կազմակերպված համերգից ստացված ողջ եկամուտը փոխանցել ՀՀ պետական բյուջե: Ընդհանուր առմամբ Հիմնադրամի հաշվին փոխանցվել է 46,734.9 հազ. դրամ, սակայն ՀՀ պետական բյուջե ոչ մի գումար Հիմնադրամի կողմից չի փոխանցվել: Ամբողջ գումարը հիմնադրամի կողմից օգտագործվել է սեփական կարիքների համար:

✓ Հիմնադրամը վեց քաղաքներում՝ Վարշավայում, Նյու-Յորքում, Լոնդոնում, Գյոթեբորգում, Փարիզում և Մոսկվայում գրքի միջազգային ցուցահանդես-տոնավաճառ կազմակերպելու ու նպատակային թարգմանությունների աջակցման համար պայմանագրեր է կնքել ''Գրքի և հրատարակչական գործի կենտրոն'' ՊՈԱԿ-ի հետ 77,088.0 հազ. դրամ արժեքով: Ըստ պայմանագրերի, ֆինանսավորվողը պարտավոր էր կազմակերպված գրքի միջազգային ցուցահանդես-տոնավաճառների արդյունքում ստացված ողջ եկամուտը փոխանցել ՀՀ պետական բյուջե: ՊՈԱԿ-ը Հիմնադրամին ցուցահանդես-տոնավաճառի վերաբերյալ ֆինանսական հաշվետվություն չի ներկայացրել և գումարներ պետական բյուջե չի վճարվել:

✓ Վավերագրական, անիմացիոն, լիամետրաժ գեղարվեստական, լիամետրաժ վավերագրական, խաղարկային և անիմացիոն տեսարաններով վավերագրական կինոնկարների նկարահանման համար Հիմնադրամը ''Հայաստանի ազգային կինոկենտրոն,, ՊՈԱԿ-ի հետ կնքել է հինգ պայմանագրեր՝ ընդհանուր 130,000.0 հազ. դրամ արժեքով: Կնքված պայմանագրերով նախատեսվել է, որ նկարահանված կինոնկարների ցուցադրումից ստացված եկամտից մեկ տարի շարունակ, 10 տոկոսի չափով Հիմնադրամին փոխանցվեր գումարներ, սակայն Հիմնադրամ ոչ մի գումար չի փոխանցվել:

✓ ''100'' պայմանական վերնագրով վավերագրական կինոնկարի նկարահանման, երգի և երկու տեսահոլովակների պատրաստման, ''Իմ սիրտը հայկական է'' պայմանական անվամբ վավերագրական տեսանյութի նկարահանման և ''Իմ նախնիները արմատներով'' 100 հատ հեռուստաալբոմների շարքի ստեղծում, ինչպես նաև վերոնշյալ նախագծերը համակարգելու համար ''Լուսաբաց'' մշակութային հիմնադրամի հետ կնքվել է ֆինանսական միջոցների տրամադրման պայմանագիր՝ գումարով 117,000.0 հազ.դրամ: Կնքված պայմանագրերի համաձայն ''Լուսաբաց'' Մշակութային Հիմնադրամի կողմից ստեղծված ստեղծագործությունների օգտագործումից ստացված եկամտից պետք է 15 տոկոսի չափով մեկ տարվա ընթացքում Հիմնադրամին վճարվեին գումարներ, սակայն Հիմնադրամը նման գումարներ չի ստացել:

✓ Երևան, Գյումրի, Վանաձոր և Ստեփանակերտ քաղաքներում ''Ձույգ արեգակներ'' բալետային ներկայացումը կազմակերպելու և ցուցադրելու համար Հիմնադրամը պայմանագիր է կնքել ''Բալետ 2021'' զարգացման հիմնադրամի հետ 65,841.2 հազ. դրամ արժեքով: Ըստ կնքված պայմանագրի ''Բալետ 2021'' զարգացման հիմնադրամը պարտավորվել է ծրագրի իրականացման ընթացքում ''Ձույգ արեգակներ'' բալետային առաջին ինը ներկայացումներից ստացված եկամտի 10 տոկոսը փոխանցել Հիմնադրամի բանկային հաշվին, սակայն ծրագրի իրականացման արդյունքում ֆինանսավորվողը ոչ մի դրամ չի փոխանցել:

✓ Չինաստանում ընթացող Պեկինի արվեստի միջազգային բիենալեին մասնակցելու համար Հիմնադրամի և ''Ցուցահանդեսային կենտրոն'' ՊՈԱԿ-ի միջև կնքվել է պայմանագիր 22,000.2 հազ. դրամ արժեքով: Ծրագրով նախատեսվել է իրականացնել ցուցադրության կազմակերպում: Կնքված պայմանագրերի համաձայն ՊՈԱԿ-ը ստեղծված ստեղծագործությունների օգտագործումից ստացված եկամտից մեկ տարվա ընթացքում պետք է 15 տոկոսի չափով Հիմնադրամին վճարեր գումարներ, սակայն Հիմնադրամը նման գումարներ չի ստացել:

III. ՍՏՈՒԳՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ Ի ՀԱՅՏ ԵԿԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՌԵՐԵՎՈՒՅԹ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՍԿԱԾՆԵՐՈՎ ԿԱԶՄՎԱԾ ԵՎ ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆԵՐԻՆ ՈՒՂԱՐԿՎԱԾ ՆՅՈՒԹԵՐ

Հաշվեքննողների մոտ կահույքի, կենցաղային տեխնիկայի, գուդրոնի, բիտումի և մազութի գնման գործընթացների ստուգման ընթացքում ի հայտ են եկել հանցագործության առերևույթ հատկանիշների կասկածներ: Հիմք ընդունելով ,,Հաշվեքննիչ պալատի մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի 7-րդ կետի պահանջը հանցագործության առերևույթ հատկանիշների կասկածներ պարունակող նյութերը թվով 2 հավելվածների տեսքով ուղարկվել են ՀՀ գլխավոր դատաղազություն: Ստորև ներկայացվում են դատախազություն ուղարկած նյութերը:

1. «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից 2015-2017 թվականներին իրականացված ծրագրերի շրջանակում կահույքի և կենցաղային տեխնիկայի գնման գործընթացի ստուգման վերաբերյալ

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2018թ.-ի օգոստոսի 20-ի թիվ 7/2 որոշման հիման վրա Հայաստանի Հանրապետության կողմից հիմնադրված «Հայաստան» համահայկական հիմնադրամում իրականացված գնումների հաշվեքննության շրջանակներում ՀՀ հաշվեքննիչ պալատի 2018թ.-ի օգոստոսի 20-ի թիվ 7/3 որոշմամբ ստուգում է իրականացվում «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից 2015-2017 թվականներին իրականացված ծրագրերի շրջանակում կահույքի և կենցաղային տեխնիկայի գնման գործընթացի նկատմամբ:

Ըստ ստուգման առաջադրանքի, նախատեսվել է իրականացնել համապատասխանության և կատարողականի ստուգում՝ որպես ընթացակարգեր սահմանելով հարցման, արտաքին հաստատման, վերահաշվարկի և վերակատարման տեսակները: Ստուգումն ընդգրկում է 2015 թվականի հունվարի 1-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը ներառող ժամանակաշրջանը: Ստուգումը կատարելու ժամկետ է սահմանվել 2018 թվականի օգոստոսի 29-ից մինչև 2019 թվականի մարտի 29-ը ներառյալ ժամանակահատվածը, որն իրականացվում է Հաշվեքննիչ պալատի հինգերորդ վարչության կողմից:

Հաշվեքննություն իրականացնող պաշտոնատար անձիք (այսուհետ՝ Հաշվեքննողներ) ստուգում են ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի անապահով ընտանիքների համար ձեռք բերված բնակարանների, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հինգ և ավելի երեխա ունեցող քսանյոթ ընտանիքների ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վեց և ավելի երեխա ունեցող ինը ընտանիքների համար կառուցված առանձնատների, ՀՀ-ում ու ԼՂՀ-ում կառուցված և հիմնանորոգված մանկապարտեզների, դպրոցների և այլ կառույցների համար գույքի պատրաստման, գնման, տեղափոխման և տեղադրման գործընթացները:

Հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրերի մրցույթների անցկացման կարգի հաստատման վերաբերյալ «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր վարչության թիվ 174 հրամանի համաձայն, քսանհինգ միլիոն ՀՀ դրամը չգերազանցող գնումները պետք է կատարվեր ուղղակի կամ տարբեր մատակարարների հետ բանակցությունների միջոցով: Նախնական բանակցությունների ժամանակ առնվազն

երեք կազմակերպությունների պետք է ուղարկվեր ձեռքբերվող ապրանքի ծավալաթերթերը, գծագրերը և առաջարկվեր ներկայացնելու գնային առաջարկ, այնուհետև՝ պայմանագիր կնքվեր ամենացածր գին առաջարկած մասնակցի հետ:

Քսանհինգ միլիոն ՀՀ դրամ գերազանցող գնումները պետք է կատարվեն երկու ձևով՝ բաց մրցակցային բանակցությունների մրցույթի ձևով (կարճ ընթացակարգով), և բաց մրցույթի ձևով (երկար ընթացակարգով), ինչը չի կատարվել:

«Հայաստան» համահայկական հիմնադրամը ծրագրերի իրականացման համար պայմանագրեր է կնքվել «ՀԱՏՄ» ՍՊԸ-ի, «Արման Գևորգյան» ՍՊԸ-ի և «Բելինդա» ՍՊԸ-ի հետ:

«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի վերաբերյալ

«ՀԱՏՄ» ՍՊԸ-ն համարվում է շահույթ ստանալու նպատակով հիմնադրված արտադրական կազմակերպություն՝ գրանցված ձեռնարկությունների պետական ռեգիստրում 31.08.1999թ.-ին, իրավաբանական անձի կարգավիճակով, որի կանոնադրական կապիտալը բաժանված բաժնետոմսերով ամբողջությամբ պատկանում է «Հայաստան» համահայկական հիմնադրամին:

Ըստ աուդիտի եզրակացությունների[1] «ՀԱՏՄ» ՍՊԸ-ն 2015 թվականին ունեցել է 33,869.0 հազ. դրամ զուտ շահույթ, 2016 թվականին վնասը կազմել է 17,106.0 հազ. դրամ, իսկ 2017 թվականի զուտ շահույթը՝ 19,126.0 հազ. դրամ:

«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի կանոնադրության 5.5 կետի համաձայն՝ ընկերությունը պետք է տարեկան զուտ շահույթը բաշխեր կանոնադրական կապիտալում մասնակիցների ունեցած բաժնեմասերին համապատասխան՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամին փոխանցելու միջոցով, նրա կանոնադրական նպատակներն ու խնդիրներն իրականացնելու համար: ***Սակայն ընկերության կողմից «Հայաստան» համահայկական հիմնադրամին ձևավորված զուտ շահույթից որևէ գումար չի փոխանցվել:***

2015-2017 թվականների ընթացքում «Հայաստան» համահայկական հիմնադրամի և «ՀԱՏՄ» ՍՊԸ-ի միջև կքվել են գույքի պատրաստման, գնման, տեղափոխման և տեղադրման 50 պայմանագրի՝ 948,527.1 հազ. դրամ արժեքով, փաստացի կատարողականը, ըստ տրամադրված տեղեկատվության, կազմել է 895,698.6 հազ. դրամ, վճարումը՝ 919,428.0 հազ. դրամ:

Հիմնադրամի և «ՀԱՏՄ» ՍՊԸ-ի միջև բոլոր պայմանագրերը, անկախ գումարի մեծությունից, կնքվել են ուղղակի ձևով: Պայմանագրերը կնքվել են առանց գնման հայտի և գնման առարկայի բնութագրի հաստատման: Կնքված բոլոր պայմանագրերում բացակայում են գնման առարկայի տեխնիկական բնութագրերը, որտեղ պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրվեին ձեռքբերվող ապրանքների հատկանիշները (չափսեր, ձև, օգտագործվող նյութեր և այլն), ինչպես նաև՝ դրանց վերաբերվող պայմանների հստակ նկարագրությունը: ***Արդյունքում՝ ապրանքները ձեռք են բերվել կամայական ձևով:***

[1] «Գրանտ Թորնթոն» ՓԲԸ կողմից տրված՝ 2015թ, 2016թ և 2017թ եզրակացություններ:

Կնքված պայմանագրերում գնման առարկայի տեխնիկական բնութագրերի բացակայության արդյունքում հաշվեքննողների կողմից ստուգված՝ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հինգ և ավելի երեխա ունեցող քսանյոթ ընտանիքների Հիմնադրամի կողմից կառուցված առանձնատների համար գույքի պատրաստման, գնման, տեղափոխման և տեղադրման» պայմանագրերով նախատեսված ապրանքներից հյուրասենյակի դարակներով պահարանի փոխարեն՝ 18 ընտանիքներից 16-ին տրամադրվել է հյուրասենյակի ապակեպատ պահարան, միևնույն ժամանակ փոխելով այդ ընտանիքներին տրամադրվող հյուրասենյակի պահարանների և հյուրասենյակի դարակներով պահարանների կառուցման նյութերն ավելի ցածր գին ունեցող նյութերով:

Հիմնադրամի կողմից գնումներ կատարելուց շուկան չի ուսումնասիրվել, գնման ենթակա ապրանքների գները չի ճշտվել, ինչի հետևանքով շատ ապրանքներ «ՀԱՏՄ» ՍՊԸ-ից ձեռք է բերվել շուկայական գներից էականորեն բարձր գներով:

«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի կողմից մատակարարված ապրանքների գները էականորեն բարձր են շուկայում առկա նմանատիպ ապրանքների գներից: Բազմաթիվ ապրանքների մատակարարման գծով ընկերությունը հանդիսացել է որպես միջնորդ, և ձեռքբերված ապրանքները վաճառել է հիմնադրամին՝ մինչև 380 տոկոս հավելավճարով: Մասնավորապես.

- Հիմնադրամի կողմից անապահով ընտանիքների համար ձեռք բերված բնակարանների, կառուցված առանձնատների, կառուցված և հիմնանորոգված մանկապարտեզների ու դպրոցների համար գույքի պատրաստման, գնման, տեղափոխման և տեղադրման համար կնքված պայմանագրերով նախատեսված ապրանքներից՝ կենցաղային տեխնիկան (հեռուստացույցներ, սառնարաններ, գազօջախներ, օդաքաշ պահարաններ) «ՀԱՏՄ» ՍՊԸ-ն ձեռք է բերել «ՎԻ ԷԼ ՎԻ Սենթր» ՍՊԸ-ից՝ 23,609.1 հազ. Դրամով և վաճառել՝ 39,996.8 հազ. դրամով, կամ 16,387.7 հազ. դրամով ավելի բարձր գնով:
- Ռուսաստանի Դաշնությունից ներմուծված դահլիճի աթոռները «ՀԱՏՄ» ՍՊԸ-ն ձեռք է բերել 11,103.2 հազ. դրամով, վաճառել Հիմնադրամին՝ 29,360.0 հազ. դրամով կամ՝ 18,256.8 հազ. դրամով ավելի թանկ, կիսափափուկ աթոռները ձեռք է բերել 12,360.5 հազ. դրամով, վաճառել՝ 35,160.7 հազ. դրամով կամ՝ 22,792.3 հազ. դրամով ավելի թանկ, ծալվող աթոռները ձեռք է բերել 18,168.3 հազ. դրամով, վաճառել՝ 58,418.4 հազ. դրամով կամ՝ 40,249.9 հազ. դրամով ավելի բարձր գնով:

Այսպիսով, հիմնադրամն ապրանքները ձեռք չի բերել մրցույթների կազմակերպման միջոցով արտադրողներից կամ ներմուծողներից, փոխարենը՝ կատարել է միջնորդավորված գնումներ, նշված ապրանքները ձեռք են բերվել ավելի բարձր գներով:

Ընդհանուր առմամբ, կնքված պայմանագրերի շրջանակում «ՀԱՏՄ» ՍՊԸ-ի կողմից ձեռք բերված և «Հայաստան» համահայկական հիմնադրամին 269.0 մլն դրամով վաճառված կենցաղային տեխնիկայի, փափուկ կահույքի և կահույքի տարբեր բաղադրիչների գնային տարբերությունները կազմել են շուրջ 117.1 մլն դրամ:

Հաշվարկների համար հիմք են ընդունվել «ՀԱՏՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքների ձեռքբերման և Հիմնադրամին օտարված փաստաթղթերը: Հաշվարկները կատարվել են նմանատիպ ապրանքների «ՀԱՏՄ» ՍՊԸ-ի կողմից ձեռքբերման և Հիմնադրամին օտարման գների տարբերության հաշվարկման սկզբունքով:

«Անապահով ընտանիքներին տրամադրելու համար», «ՀԱՏՄ» ՍՊԸ-ի կողմից արտադրվել և «Հայաստան» համահայկական հիմնադրամին վաճառվել է 169.2 ք/մ խոհանոցի կահույք՝ պատրաստված լամինացված ԴՍՊ-ից, որի մեկ ք/մ-ի գինը սահմանվել է 105.0 հազ. դրամ՝ առանց հարկերի: Շուկայական գների ուսումնասիրությունից պարզվել է, որ լամինացված ԴՍՊ-ից պատրաստված խոհանոցի կահույքի մեկ ք/մ-ի գինը շուկայում կազմել է 40.0-ից 60.0 հազ. դրամ, այդ թվում՝ հարկերը, կամ հիմնադրամը խոհանոցի կահույքը ձեռք է բերվել շուրջ 9.3 մլն դրամով ավելի թանկ:

Հարկ է նշել, որ «ՀԱՏՄ» ՍՊԸ-ն նույն ժամանակաշրջանում նմանատիպ կահույք վաճառել է ավելի էժան գներով: Մասնավորապես՝ Կոտայքի մարզի Պռոշյան գյուղի «Սոսե և Ալլենս Լեգասի Ֆաունդեյշն» երիտասարդական կենտրոնին մեկ ք/մ խոհանոցի կահույքը վաճառել է 43.2 և 60.0 հազ. դրամով, Տավուշի մարզի Խաչարձան գյուղի դպրոցի մանկապարտեզին՝ 60.0 հազ. դրամով, ԼՂՀ Ասկերանի շրջանի Իվանյան գյուղի դպրոցին՝ 70.0 հազ. դրամ, ԼՂՀ Շուշիի շրջանի Քարին տակ գյուղի մանկապարտեզին՝ 70.0 հազ. դրամով, ՀՀ Արմավիրի մարզի Նալբանդյան գյուղի դպրոցին՝ 85.0 հազ. դրամով: ***Այսինքն «ՀԱՏՄ» ՍՊԸ-ն իր այլ առևտրային գործունեության շրջանակներում նմանատիպ ապրանքները մատակարարել է շատ ավելի էժան, քան՝ Հիմնադրամին:***

«ՀԱՏՄ» ՍՊԸ-ից ձեռքբերված հյուրասենյակի պահարանների, ննջասենյակի պահարանների, երկտեղանոց մահճակալների և երկհարկանի մահճակալների գները 16-34 տոկոսով գերազանցում է «Բելինդա» և «Արման Գևորգյան» ՍՊԸ-ներից ձեռք բերված նմանատիպ ապրանքների գներից:

Ըստ էության, «ՀԱՏՄ» ՍՊԸ-ի կողմից ապրանքների մատակարարումը Հիմնադրամին պետք է լիներ հնարավորինս մատչելի և նպաստեր Հիմնադրամի միջոցների խնայողությանը, սակայն իրականում տեղի է ունեցել հակառակ գործընթացը:

<u>«Արման Գևորգյան» ՍՊԸ-ի վերաբերյալ</u>

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի անապահով ընտանիքների համար ձեռքբերված բնակարանների համար գույքի պատրաստման, գնման և տեղափոխման համար Հիմնադրամի և «Արամ Գևորգյան» ՍՊԸ-ի միջև 2015-2017 թվականների ընթացքում կնքվել են 16 պայմանագիր՝ 39.5 մլն դրամ ընդհանուր արժեքով, փաստացի կատարողականը կազմել է 39.5 մլն դրամ, որի դիմաց վճարվել է 39.5 մլն դրամ:

Հիմնադրամի կողմից բոլոր պայմանագրերը կնքվել են ուղղակի ձևով՝ առանց գնման հայտի և գնման առարկայի բնութագրի (չափեր, ձև, օգտագործվող նյութեր և

այլն) հաստատման: Գնման առարկայի տեխնիկական բնութագրերը, որտեղ պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրվեն ձեռքբերվող ապրանքների հատկանիշները, ինչպես նաև՝ դրանց վերաբերվող պայմանների հստակ նկարագրությունը, բացակայում են: Ապրանքները ձեռք են բերվել կամայական ձևով:

26.08.2015թ-ին կնքված ՀՀ-4-17/15 պայմանագրում 25.09.2015 թվականին կատարվել է փոփոխություն, լրացուցիչ գույք ձեռքբերելու համար պայմանագրային գումարը ավելացվել է 334.0 հազ. դրամով, սակայն չի նշվել ավելացվող գույքի կազմը և չի հիմնավորվել:

«Բելինդա» ՍՊԸ-ի վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի 13 անապահով ընտանիքների համար ձեռքբերված բնակարանների համար գույքի պատրաստման, գնման և տեղափոխման համար Հիմնադրամի և «Բելինդա» ՍՊԸ-ի միջև 2015-2017 թվականների ընթացքում առանց մրցույթի՝ ուղիղ գնման ձևով, առանց գնման առարկայի բնութագրերի (չափեր, ձև, օգտագործվող նյութեր և այլն) և գնման հայտի հաստատման կնքվել են 3 պայմանագիր՝ 27.9 մլն դրամ ընդհանուր արժեքով, փաստացի կատարողականը կազմել է 27.9 մլն դրամ, որի դիմաց վճարվել է 27.4 մլն դրամ:

«ԷԿԱ» ՍՊԸ-ի վերաբերյալ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտ քաղաքի ատամնաբուժարանի, Ասկերանի շրջանի Այգեստանի մանկապարտեզի, Մարտունու շրջանի Կարմիր Շուկայի մանկապարտեզի և Շուշի քաղաքի արհեստագործական ուսումնարանի գույքի պատրաստման, գնման, տեղափոխության և տեղադրման համար Հիմնադրամի և «ԷԿԱ» ՍՊԸ-ի միջև 2015-2017 թվականների ընթացքում, առանց մրցույթի՝ ուղիղ գնման ձևով, առանց գնման առարկայի բնութագրերի (չափեր, ձև, օգտագործվող նյութեր և այլն) և գնման հայտի հաստատման կնքվել են 5 պայմանագիր՝ 22.5 մլն դրամ ընդհանուր արժեքով, փաստացի կատարողականը կազմել է 22.5 մլն դրամ, որի դիմաց վճարվել է 22.5 մլն դրամ:

Այսպիսով, ստուգման ընթացքում ի հայտ են եկել կասկածներ, որ հիմնադրամի նշված գործարքներում և վերը նշված ընկերությունների հետ կնքված պայմանագրերում առկա են հանցագործության առերևույթ հատկանիշներ, իսկ, թե ինչ հանգամանքներում և շարժառիթներով է հիմնադրամը առաջնորդվել, հնարավոր չէ պարզել, քանի որ հաշվեքննիչ պալատը իր կողմից բացահայտված անհամապատասխանությունների վերաբերյալ որակում չի տալիս և դրանց հետևանքների վերաբերյալ կանխատեսումներ չի անում:

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից 2015-2017 թվականներին իրականացված ծրագրերի շրջանակում գուդրոնի, բիտումի և մազութի գնման գործընթացի ստուգման վերաբերյալ

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2018թ.-ի օգոստոսի 20-ի թիվ 7/2 որոշման հիման վրա Հայաստանի Հանրապետության կողմից հիմնադրված «Հայաստան» համահայկական հիմնադրամում (այսուհետ՝ հիմնադրամ) իրականացված գնումների հաշվեքննության շրջանակներում ՀՀ հաշվեքննիչ պալատի 2018թ.-ի օգոստոսի 20-ի թիվ 7/3 որոշմամբ ստուգում է իրականացվում Հայաստան համահայկական հիմնադրամի կողմից 2015-2017 թվականներին իրականացված ծրագրերի շրջանակում գուդրոնի, բիտումի և մազութի գնման գործընթացի նկատմամբ:

Ըստ ստուգման առաջադրանքի, նախատեսվել է իրականացնել համապատասխանության և կատարողականի ստուգում՝ որպես ընթացակարգեր սահմանելով հարցման, արտաքին հաստատման, վերահաշվարկի և վերակատարման տեսակները: Ստուգումն ընդգրկում է 2015 թվականի հունվարի 1-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը ներառող ժամանակաշրջանը: Ստուգումը կատարելու ժամկետ է սահմանվել 2018 թվականի օգոստոսի 29-ից մինչև 2019 թվականի մարտի 29-ը ներառյալ ժամանակահատվածը, որն իրականացվում է Հաշվեքննիչ պալատի հինգերորդ վարչության կողմից:

Հաշվեքննություն իրականացնող պաշտոնատար անձիք (այսուհետ՝ Հաշվեքննողներ) կատարում են հիմնադրամի կողմից 2015-2017թթ. ընթացքում գուդրոնի, բիտումի և մազութի ձեռքբերման պայմանագրերով ստանձնած պարտականությունների կատարման ստուգում:

- **Գուդրոնի ձեռքբերում**

Հիմնադրամի կողմից 2015 թվականի ապրիլի 8-ին հայտարարվել է մրցույթ՝ 14,000 տոննա ռուսական հումքից ստացված 90/130 տեսակի բիտումի ձեռքբերման համար: Այդ մրցույթի միակ մասնակիցը եղել է «Մերիան Գրուպ» ՍՊԸ-ն: Վերջինս ճանաչվել է հաղթող՝ 2,947,458.5 հազ. դրամ գնառաջարկով: Մեկ տոննայի գինը կազմել է 210.5 հազ. դրամ:

Համապատասխան պայմանագիր չի կնքվել, փոխարենը՝ 2015 թվականի հունիսի 18-ին հիմնադրամի և «Մերիան Գրուպ» ՍՊԸ-ի միջև կնքվել է 15,625 տոննա գուդրոնի վերամշակման և տեղափոխման «Հանձնարարության, մատակարարման և ծառայությունների մատուցման» պայմանագիր, որի համաձայն՝ ընկերությունը պետք է Ռուսաստանի Դաշնությունից ներկրի 15,625 տոննա գուդրոն, այնուհետև՝ վերամշակի այդ գուդրոնը՝ ստանալով 15,000 տոննա 90/130 տեսակի բիտում և մատակարարի համապատասխան ընկերություններին: Պայմանագրի արժեքը կազմում է 3,157,991.3 հազ. դրամ: Այս դեպքում ևս՝ մեկ տոննա բիտումի գինը կազմում է 210.5 հազ. դրամ: ***Այսինքն՝ գուդրոնի ձեռքբերման և վերամշակման տարբերակով բիտումի ձեռքբերումը խնայողություններ չի ենթադրում:***

Ըստ պայմանագրի, մեկ տոննա գուդրոնի արժեքը կազմում էր 156.6 հազար դրամ, իսկ վերջինիս վերամշակումը բիտումի և տեղափոխումը նախատեսված վայրեր՝ 45.5 հազ. դրամ:

Հիմնադրամի կողմից չեն ներկայացվել պատրաստի բիտումը գուդրոնով փոխարինելու հիմնավորումները, ինչպես նաև՝ գուդրոնի և բիտումի գների շուկայական ուսումնասիրությունները:

Պայմանագրում իրականացվել են մի շարք փոփոխություններ՝ մասնավորապես առանց համապատասխան հիմնավորումների կրճատվել է մատակարարման ենթակա գուդրոնի ծավալը՝ այն նվազեցնելով մինչև 12,504.5 տոննա:

6,901 տոննա ռուսական գուդրոնի ներմուծումից հետո նախատեսվել է գուդրոն ներմուծել Իրանի Իսլամական Հանրապետությունից:

Մի քանի անգամ երկարաձգվել է պայմանագրի կատարման ժամկետը:

Անընդհատ փոխվել են գուդրոնի մատակարարման գները, տարանջատվել են տրանսպորտային և վերամշակման ծախսերը:

Փաստաթղթերի հետազոտությունից պարզ դարձավ, որ՝

1. 2015թ.-ին, համաձայն ընդունման-հանձնման փաստաթղթերի, մատակարարվել է 6,901 տոննա գուդրոն՝ 1,381,333.2 հազ. դրամ արժեքով ***(հատկանշական է, որ ներկայացված մաքսային փաստաթղթերի համաձայն՝ «Մերիան Գրուպ» ՍՊԸ-ն ներմուծել է 4,565 տոննա հեղուկ գուդրոն):*** 2015թ.-ին ներմուծված և մատակարարված գուդրոնի մեկ տոննայի արժեքը, ըստ մատակարարման և վճարման փաստաթղթերի, կազմել է 158.5-ից 160.1 հազ. դրամ՝ այն դեպքում, երբ վերը նշված պայմանագրով մեկ տոննայի ներմուծումը նախատեսված է եղել 156.6 հազ. դրամ, մանրամասները ներկայացված են աղյուսակում.

հազ. դրամ

Ամսաթիվ	Մեկ տոննայի փաստացի արժեք	Քանակ	Փաստացի գումար	Պայմանագրային գումար	Տարբերություն
14.07.2015	158.8	475	75,393.6	74,335.6	1,058.0
15.07.2015	158.8	1,200	190,552.2	187,878.2	2,674.0
06.08.2015	158.5	725	114,919.2	113,542.6	1,376.6
12.10.2015	157.5	1,500	236,208.8	234,847.8	1,361.0
11.11.2015	160.1	3,001	480,426.8	469,788.0	10,638.8
ԸՆԴԱՄԵՆԸ		**6,901**	**1,097,500.7**	**1,080,392.3**	**17,108.4**

Արդյունքում՝ ընկերությանը ավելի է վճարվել 17,108.4 հազ. դրամ:

2. Գուդրոնի վերամշակման և տեղափոխման ծախսերի համար պայմանագրով նախատեսվել է՝ մեկ տոննայի համար՝ 45.5 հազ. դրամ, սակայն որոշ խմբաքանակների

համար փաստացի վճարումները գերազանցել են սահմանված արժեքը, մանրամասները՝ աղյուսակում.

հազ. դրամ

Ամսաթիվ	Մեկ տոննայի վերամշակման փաստացի արժեք	Քանակ	Փաստացի գումար	Պայմանագրային գումար	Տարբերություն
26.08.2015	46.8	511	23,921.1	23,256.2	664.8
14.07.2015	46.2	475	21,923.9	21,624.8	299.1
06.08.2015	46.1	1,415	65,184.3	64,428.9	755.4
ԸՆԴԱՄԵՆԸ		**2,400**	**111,029.3**	**109,310.0**	**1,719.3**

Արդյունքում՝ ընկերությանը ավելի է վճարվել 1,719.3 հազ. դրամ:

3. Պայմանագրի 01.07.2016թ.-ի թիվ 3 համաձայնագրով գուդրոնի 1 տոննայի արժեքը նախատեսվել է 112.6 հազ. դրամ, իսկ 24.08.2016թ.-ի թիվ 4 համաձայնագրով՝ 123.1 հազ. դրամ, սակայն փաստացի մատակարարվել և վճարվել է ավելի մեծ գումար, մանրամասները՝ աղյուսակում.

հազ. դրամ

Ամսաթիվ	Մեկ տոննայի փաստացի արժեք	Քանակ	Փաստացի գումար	Պայմանագրային գումար	Տարբերություն
29.09.2016	125.5	199	24,960.9	24,482.9	478.0
12.08.2016	114.9	111	12,716.5	12,451.4	265.1
19.08.2016	115.0	131	15,100.2	14,782.3	317.9
24.08.2016	125.5	199	24,950.4	24,480.4	470.0
26.08.2016	125.5	111	13,975.1	13,709.5	265.6
30.08.2016	125.5	132	16,553.0	16,234.5	318.5
08.09.2016	125.5	220	27,584.5	27,069.4	515.0
14.09.2016	125.5	174	21,905.0	21,480.2	424.8
19.09.2016	125.6	174	21,790.5	21,365.7	424.7
22.09.2016	125.6	130	16,357.3	16,038.8	318.5
23.09.2016	125.5	240	30,171.2	29,587.0	584.1
29.09.2016	125.5	66	8,303.0	8,143.7	159.3
10.10.2016	125.5	174	21,869.3	21,444.5	424.7

11.10.2016	125.5	198	24,819.2	24,341.3	477.9
18.10.2016	125.5	132	16,601.2	16,282.5	318.6
24.10.2016	125.5	176	22,075.0	21,650.1	424.8
31.10.2016	125.5	242	30,321.3	29,737.2	584.1
01.11.2016	125.6	64	8,048.1	7,888.9	159.2
ԸՆԴԱՄԵՆԸ		**2,873**	**358,101.7**	**351,170.6**	**6,931.1**

Արդյունքում՝ ընկերությանն ավելի է վճարվել 6,931.1 հազ. դրամ:

4. 2016թ.-ին «Մեհան գրուպ» ՍՊԸ-ի կողմից վերամշակվել և տեղափոխվել է 1824 տոննա գուդրոն, որը ներմուծվել էր 2015թ.-ին: Նշված խմբաքանակը վերամշակման վայր տեղափոխելու համար 2015թ.-ին արդեն իսկ վճարվել էր 26,539.2 հազ. դրամ՝ մեկ տոննայի համար՝ 14.6 հազ. դրամ: 2016թ.-ին նշված խմբաքանակը վերամշակվել և տեղափոխվել է, որի համար վճարվել է 68,613.7 հազ. դրամ՝ մեկ տոննայի համար՝ 37.6 հազ. դրամ, այսինքն՝ պայմանագրով մեկ տոննայի գուդրոնի վերամշակման և տողափոխման համար սահմանված 45.5 հազ. դրամը նշված խմբաքանակի համար կազմել է 52.2 հազ. դրամ՝ կամ՝ 6.7 հազ. դրամով ավելի: Վերամշակման վայր գուդրոնի տեղափոխման, վերամշակման, պատրաստի բիտումը հանձնարարողի նշած վայր տեղափոխման արժեքները սահմանված են 01.07.2016թ կնքված՝ պայմանագրում և պայմանագրի հավելվածում փոփոխություններ կատարելու մասին թիվ 3 համաձայնագրով:

Արդյունքում՝ ընկերությանը վճարվել է 12,220.0 հազ. դրամով ավելի:

5. 2017թ.-ի համար գուդրոնի մեկ տոննայի արժեքը սահմանված է եղել 123.1 հազ. դրամ, սակայն փաստացի ներմուծվել է 152 հազ. դրամից ավելի գումարով, մանրամասները՝ ստորև աղյուսակում.

հազ. դրամ

Ամսաթիվ	Մեկ տոննայի փաստացի արժեք	քանակ	Փաստացի գումար	Պայմանագրային գումար	Տարբերություն
15.06.2017	152.3	220,7	33,614.4	27,171.6	6,442.8
20.06.2017	152.3	312,9	47,666.1	38,518.7	9,147.5
26.06.2017	152.2	155,6	23,681.4	19,158.4	4,523.1
4.07.2017	152.3	156,2	23,795.4	19,233.5	4,562.0
28.07.2017	152.4	132,5	20,195.1	16,308.4	3,886.8
ԸՆԴԱՄԵՆԸ		**978**	**148,952.6**	**120,390.5**	**28,562.1**

Արդյունքում՝ ընկերությանը վճարվել է 28,562.1 հազ. դրամով ավելի:

Պայմանագրի 4.2.4-րդ կետի համաձայն՝ ապրանքների մաքսազերծումը պետք է իրականացներ հիմնադրամը, իսկ պայմանագրի 6-րդ կետի համաձայն՝ ներկրման հետ

կապված բնապահպանական վճարները և մաքսավճարները պետք է կատարվեին հիմնադրամի կողմից, ինչը սակայն չի կատարվել և գումարները փոխանցվել են «Մերիան գրուպ» ՍՊԸ-ին:

Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացված տեղեկատվության, տվյալ ժամանակահատվածում բիտումի ներմուծման գները էապես ցածր են եղել: Մասնավորապես՝ երկու խոշոր ներկրողների կողմից (որոնց ներկրումների ծավալը 2015 թվականին կազմել է երկրի ընդհանուր ծավալի ավելի քան 70%-ը) ներմուծվել են տվյալ ժամանակահատվածում մեկ տոննա պատրաստի բիտում 143 հազ. դրամ միջին ձեռքբերման գնով: Մաքսազերծման մեկ տոննայի արժեքը կազմել է 167.4 հազ. դրամ: Պայմանագրի ընթացքում «Մերիան գրուպ» ՍՊԸ-ն իրականացրել է պատրաստի բիտումի ներմուծում Ռուսաստանի Դաշնությունից՝ շուրջ 3000 տոննայի չափով, մեկ տոննայի միջին արժեքը՝ 130 հազ. դրամով (վերոնշյալ պայմանագրով մեկ տոննայի արժեքը կազմում է 210.5 հազ. դրամ՝ ներառյալ մատակարարման ծախսերը): Ռուսական կողմի մատակարար և Հայաստանում գուդրոնի վերամշակող կողմ հանդիսացող «Ռոսնեֆտ Արմենիան» ևս ներմուծել է պատրաստի բիտում՝ 1480 տոննա, մեկ տոննայի միջին արժեքը՝ 135 հազ. դրամով:

Հատկանշական է նաև, որ 2015 թվականին հիմնադրամը նույնպես ներմուծել է պատրաստի բիտում՝ 173 հազ. դրամով:

«Մերիան գրուպ» ՍՊԸ-ին մեկ տոննա գուդրոնի համար 2017 թվականին վճարվել է 152 հազ. դրամից ավելի գումար, իսկ վերամշակված և տեղափոխված բիտումի ծախսերը, ներառված Հիմնադրամին մատակարարվող մեկ տոննա բիտումի արժեքը, կազմում է ավելի քան 195 հազ. դրամ՝ այն դեպքում, երբ 2017թ.-ին Հիմնադրամը ներմուծել է 190 տոննա բիտում՝ մեկ տոննայի արժեքը՝ մոտ 146 հազ. դրամով: Հատկանշական է, որ, համաձայն ՊԵԿ-ց ստացված տեղեկատվության, ծրագրի գլխավոր կապալառուներից «Քարավան» ՍՊԸ-ն 2017 թվականին ներմուծել է պատրաստի բիտում՝ մեկ տոննայի ձեռքբերման արժեքը՝ 145 հազ. դրամով (մաքսային արժեքը՝ 150 հազ. դրամով):

«Մերիան գրուպ» ՍՊԸ-ի պայմանագրով նախատեսված ամբողջ ծավալը չի մատակարարվել (փաստացի չի մատակարարվել 1,753 տոննա), պայմանագրում համապատասխան փոփոխություններ չեն իրականացվել: Պայմանագրի 5.1 կետով ապրանքը ժամկետանց տեղափոխելու կամ ապրանքը ժամկետանց վերամշակելու համար նախատեսված է տույժ՝ յուրաքանչյուր ուշացրած օրվա համար չմատակարարված ապրանքի արժեքի 0.1 տոկոս, բայց ոչ ավելի քան չմատակարարված ապրանքի արժեքի 10 տոկոսը:

- **Բիտումի և մազութի ձեռքբերում**

Հիմնադրամի կողմից բիտումի և մազութի ձեռքբերման նպատակով 2015-2017թթ. կնքվել են թվով 5 պայմանագրեր՝ ընդհանուր առմամբ 701.5 տոննա բիտում և 1900 տոննա մազութ ձեռքբերելու, ներմուծելու համար՝ 466,459 հազ. դրամ գումարով: Փաստացի ներմուծվել է 684.1 տոննա բիտում և 508.7 տոննա մազութ, այսինքն՝ համապատասխանաբար 17.4 տոննա և 776.5 տոննա պակաս: Բոլոր պայմանագրերով

մատակարարվել են բիտումի և մազութի ավելի քիչ քանակություն, քան սահմանված է եղել պայմանագրով: Բացառությամբ մեկ դեպքի, պայմանագրերը դադարեցնելու կամ լուծելու վերաբերյալ համաձայնագրեր չեն կնքվել:

Կնքված պայմանագրերը չեն համապատասխանում «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին, մասնավորապես՝ պայմանագրերը կնքվել են առանց համապատասխան մրցույթի անցկացման, չնայած այն բանի, որ պայմանագրերի արժեքը կազմել են 162,960-27,816 հազ. դրամ, ինչպես նաև՝ չի իրականացվել ձեռքբերվող ապրանքի շուկայական արժեքի ուսումնասիրություն, գնահատում և նախահաշվային արժեքի կազմում:

Պայմանագրերի հետազոտությունից պարզ դարձավ, որ՝

1. 2015թ օգոստոսի 4-ին հիմնադրամի (հանձնարարող), «ԲԱՐՍԵԼ» ՍՊԸ-ի (հանձնակատար) և «ԴՈՐՈԺՆԻԿ» ՍՊԸ-ի (ստացող) միջև կնքվել է թիվ Մ-01/15 հանձնարարության պայմանագիրը, համաձայն որի՝ հանձնակատարը Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի կառուցման շինարարական աշխատանքների համար պետք է Իրանի Իսլամական Հանրապետության GOHAR DARADIZ JOLFA LTD ընկերությունից ձեռքբերեր և Հայաստան տեղափոխեր Իրանական նավթի ազգային ընկերության կողմից արտադրված M-100 տիպի 800 տոննա մազութ: Պայմանագրով նախատեսվել է մազութը ձեռքբերել մինչև նոյեմբերի 30-ը, պայմանագրի ընդհանուր արժեքը կազմել է 162,960 հազ. դրամ, այդ թվում՝ 1,250 հազ. դրամ միջնորդավճար, մեկ տոննա մազութի ձեռքբերման արժեքը նախատեսվել է 203.3 հազ. դրամ:

Փաստացի ներմուծվել է 224.9 տոննա մազութ՝ նախատեսվածից 575.1 տոննա պակաս: Մազութի չմատակարարված քանակության մասով պայմանագիրը չի խզվել, և պայմանագրային պարտավորությունների դադարման վերաբերյալ համաձայնագիր չի կնքվել: Ներմուծումը փաստացի կատարվել է երեք խմբաքանակներով՝ համապատասխանաբար՝ օգոստոս ամսին՝ 80.45 տոննա՝ մեկ տոննայի մաքսային արժեքը՝ 203.3 հազ. դրամ, սեպտեմբեր ամսին՝ 24.48 տոննա՝ մեկ տոննայի մաքսային արժեքը՝ 181.2 հազ. դրամ, և հոկտեմբեր ամսին՝ 119.98 տոննա՝ մեկ տոննայի մաքսային արժեքը՝ 200.6 հազ. դրամ:

Հարկ է նշել, որ, համաձայն ՊԵԿ-ից ստացված տեղեկատվության, նույն ժամանակաշրջանում այլ ընկերության կողմից ներմուծվել է մազութ՝ մեկ տոննայի մաքսային արժեքը՝ 145 հազ. դրամով (իսկ ձեռքբերման արժեքը՝ 110 հազ. դրամ):

2. 2015թ. սեպտեմբերի 10-ին հիմնադրամի (հանձնարարող) և «SEVAN» CENTRAL TRADING CO ընկերության (հանձնակատար) միջև կնքվել է թիվ Բ-02/15 հանձնարարության պայմանագիրը, համաձայն որի՝ հանձնակատարը Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի կառուցման շինարարական աշխատանքների համար պետք է գներ և հանձնարարողի նշված վայրը տեղափոխեր Իրանական նավթի ազգային ընկերության կողմից արտադրված 85/100 տիպի 500 տոննա բիտում: Պայմանագրով նախատեսվել է բիտումը ձեռքբերել մինչև նոյեմբերի 10-ը, պայմանագրի ընդհանուր արժեքը կազմել է 87,500 հազ. դրամ, այդ թվում 1,250 հազ. դրամ միջնորդավճար, մեկ տոննա բիտումի ձեռքբերման արժեքը նախատեսվել է 173 հազ. դրամ:

Փաստացի ներմուծվել է 494.1 տոննա բիտում՝ նախատեսվածից 5.9 տոննա պակաս: Բիտումի չմատակարարված քանակության մասով պայմանագիրը չի խզվել և

պայմանագրային պարտավորությունների դադարման վերաբերյալ համաձայնագիր չի կնքվել:

Համաձայն ՊԵԿ-ից ստացված տեղեկատվության, 2015թ. նույն ժամանակաշրջանում խոշոր ընկերության կողմից ներմուծվել է բիտում՝ մեկ տոննայի ձեռքբերման արժեքը՝ 144 հազ. դրամ: Հարկ է նշել, որ հիմնադրամի 173 հազ. դրամ ձեռքբերման արժեքն իր մեջ ներառում է նաև բեռնափոխադրման ծախսերը:

3. 2016թ. հունիսի 7-ին հիմնադրամի (հանձնարարող), «ԺԱՅՌ» ՍՊԸ-ի (հանձնակատար) և «ՀԱՅԿ-ՇԻՆ» ՍՊԸ-ի (ստացող) միջև կնքվել է թիվ B-03/16 հանձնարարության պայմանագիրը, համաձայն որի՝ հանձնակատարը Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի կառուցման շինարարական աշխատանքների համար պետք է Իրանի Իսլամական Հանրապետության AZAR SURUSH TEJARAT ARAS LTD ընկերությունից ձեռքբերեր և Հայաստան տեղափոխեր Իրանական նավթի ազգային ընկերության կողմից արտադրված M-40 տիպի 800 տոննա մազութ: Պայմանագրով նախատեսվել է մազութը ձեռքբերել մինչև հոկտեմբերի 31-ը, պայմանագրի ընդհանուր արժեքը կազմել է 135,200 հազ. դրամ, այդ թվում՝ 300 հազ. դրամ միջնորդավճար, մեկ տոննա մազութի ձեռքբերման արժեքը նախատեսվել է 168.6 հազ. դրամ:

Փաստացի ներմուծվել է 185.2 տոննա մազութ՝ նախատեսվածից 614.8 տոննա պակաս, սակայն, համաձայն 2016 թվականի սեպտեմբերի 20-ին կնքված համաձայնագրի, պայմանագիրը դադարեցվել է, և կողմերի փոխադարձ համաձայնությամբ տարբերությունը չի մատակարարվել:

4. 2016թ. սեպտեմբերի 23-ին հիմնադրամի (հանձնարարող), «ԲԱՐՍԵԼ» ՍՊԸ-ի (հանձնակատար) և «ՀԱՅԿ-ՇԻՆ» ՍՊԸ-ի (ստացող) միջև կնքվել է թիվ B-01/16 հանձնարարության պայմանագիրը, համաձայն որի՝ հանձնակատարը Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի կառուցման շինարարական աշխատանքների համար պետք է Իրանի Իսլամական Հանրապետության REZA NOSRATI ALAMDARI ընկերությունից ձեռքբերեր և Հայաստան տեղափոխեր Իրանական նավթի ազգային ընկերության կողմից արտադրված M-100 տիպի 300 տոննա մազութ: Պայմանագրով նախատեսվել է մազութը ձեռքբերել մինչև դեկտեմբերի 31-ը, պայմանագրի ընդհանուր արժեքը կազմել է 52,980 հազ. դրամ, այդ թվում՝ 120 հազ. դրամ միջնորդավճար, մեկ տոննա մազութի ձեռքբերման արժեքը նախատեսվել է 176.2 հազ. դրամ:

Փաստացի ներմուծվել է 98.6 տոննա մազութ՝ նախատեսվածից 201.4 տոննա պակաս: Մազութի չմատակարարված քանակության մասով պայմանագիրը չի խզվել, և պայմանագրային պարտավորությունների դադարման վերաբերյալ համաձայնագիր չի կնքվել: Պայմանագրով նախատեսվել է ձեռքբերել Իրանի ծագման մազութ, սակայն, համաձայն մաքսային հայտարարագրի, ներմուծվել է Իրաքի ծագման մազութ:

5. 2017թ. սեպտեմբերի 15-ին հիմնադրամի (հանձնարարող) և «ԿԱՌԳՈՅԼ» ՍՊԸ-ի (հանձնակատար) միջև կնքվել է թիվ B-02/17 հանձնարարության պայմանագիրը, համաձայն որի՝ հանձնակատարը Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի կառուցման շինարարական աշխատանքների համար պետք է գներ և հանձնարարողի նշված վայրը տեղափոխեր Իրանական նավթի ազգային ընկերության կողմից արտադրված 85/100 տիպի 190 տոննա բիտում: Պայմանագրով նախատեսվել է բիտումը ձեռքբերել մինչև նոյեմբերի 15-ը, պայմանագրի ընդհանուր արժեքը կազմել է 27,816 հազ.

դրամ, այդ թվում՝ 1,368 հազ. դրամ միջնորդավճար, մեկ տոննա բիտումի ձեռքբերման արժեքը նախատեսվել է 139.2 հազ. դրամ:

Համաձայն 2017 թվականի նոյեմբերի 14-ին կնքված՝ պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին համաձայնագրի, պայմանագրի վերջնաժամկետը երկարացվել է մինչև 2017 թվականի դեկտեմբերի 15-ը:

Համաձայն 2017 թվականի դեկտեմբերի 14-ին կնքված՝ պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին համաձայնագրի, ապրանքի ընդհանուր ծավալը սահմանվել է 201.5 տոննա, պայմանագրի արժեքը՝ 29,416 հազ. դրամ, իսկ վերջնաժամկետը՝ մինչև 2018 թվականի հունվարի 19-ը:

Փաստացի ձեռքբերումը առ 2017 թվականի դեկտեմբերի 31-ը, ըստ հաշիվ ապրանքագրերի, կազմել է 190 տոննա՝ համաձայնագրով սահմանվածից 11.5 տոննա պակաս, սակայն ըստ մաքսային հայտարարագրերի ներմուծվել է 201.5 տոննա:

Հիմնադրամի կողմից գուդրոնի, բիտումի և մազութի ձեռքբերման համար ավել է վճարվել 66,540.9 հազ. դրամ, իսկ մատակարարված ապրանքների գներն էապես տարբերվում են (բարձր են) այլ ներմուծող ընկերությունների կողմից կատարված ներմուծումների գներից:

Այսպիսով, ստուգման ընթացքում ի հայտ են եկել կասկածներ, որ հիմնադրամի նշված գործարքներում և վերը նշված ընկերությունների հետ կնքված պայմանագրերում առկա են հանցագործության առերևույթ հատկանիշներ, իսկ, թե ինչ հանգամանքներում և շարժառիթներով է հիմնադրամը առաջնորդվել, հնարավոր չէ պարզել, քանի որ հաշվեքննիչ պալատը իր կողմից բացահայտված անհամապատասխանությունների վերաբերյալ որակում չի տալիս և դրանց հետևանքների վերաբերյալ կանխատեսումներ չի անում:

IV. ՎԱՐԴԵՆԻՍ-ՄԱՐՏԱԿԵՐՏ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի վերակառուցման ծրագրի շրջանակում վերակառուցվել է 131,9 կմ երկարությամբ ասֆալտբետոնե ծածկույթով ավտոճանապարհ, որի գերակշռող մասը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում:

Ընդհանուր 17,163,000.0 հազար դրամ աշխատանքներից 10,521,000.0 հազար դրամի աշխատանքներն իրականացվել են եռակողմ պայմանագրերով, որտեղ պատվիրատու 1-ը հանդիսացել է Հիմնադրամը, իսկ պատվիրատու 2-ը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը:

Վերակառուցված ճանապարհի որոշակի հատվածներում ծրագրի շրջանակներում իրականացրած աշխատանքներին գրեթե զուգահեռ, նույն կապալառուների կողմից, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության ծրագրերով և ֆինանսավորմամբ իրականացվել են նմանատիպ աշխատանքներ, որոնց վերաբերյալ որևէ փաստաթուղթ հաշվեքննությանը հասանելի չէ:

Հաշվեքննության ընթացքում պահանջված փաստաթղթերը տրամադրվել են հատվածաբար և ոչ ամբողջական ծավալով: Վերջին 602 թերթ փաստաթղթերը

տրամադրվել են սույն թվականի սեպտեմբերի 5-ին, իսկ նախագծերը և լաբորատոր հետազոտության արդյունքները՝ սույն թվականի սեպտեմբերի 17-ին: Պակաս են տրամադրվել փորձաքննություն անցած նախագծերը, լաբորատոր փորձարկման արձանագրությունները, բաղադրատոմսերը, որակի հավաստագրերը և նույնիսկ ամսեկան կատարողական ակտերը: Ներկայացրել են նույն նախագծի տարբեր օրինակներ միմյանցից էականորեն տարբերվող ծավալներով, նույն տեղից վերցրած ասֆալտբետոնի լաբորատոր հետազոտության արձանագրություններ միմյանցից էականորեն տարբերվող ցուցանիշներով, նույն պայմանագրի գինը հիմնավորող ծավալաթերթ նախահաշվի տարբեր օրինակներ միմյանցից էականորեն տարբերվող ծավալներով և միավոր գներով: Պայմանագրերում ցույց տրված աշխատանքների տեսակները և ծավալները էականորեն տարբերվում են նախագծով նախատեսված տեսակներից և ծավալներից: Հարյուրավոր միլիոնների փոփոխություններ և լրացուցիչ աշխատանքներ կատարվել են առանց նախագծային փոփոխությունների և ծավալները հիմնավորող հաշվարկների: Կատարողականներով հաշվարկվել են նաև տասնյակ միլիոների աշխատանքներ ոչ միայն առանց նախագծային փոփոխության և ծավալները հիմնավորող փաստաթղթերի այլ նաև առանց պայմանագրի փոփոխության: Պակաս տրամադրած տեղեկատվության, փաստաթղթերի և տրամադրած փաստաթղթերում առկա անհամապատասխանությունների և անճշգրտությունների մասին բացատրություններ ստանալու համար <<Հաշվեքննիչ պալատի մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված լիազորությունների շրջանակներում բազմաթիվ անգամ գրավոր դիմել ենք հաշվեքննվող օբյեկտի ղեկավարին, միաժամանակ <<Հաշվեքննիչ պալատի մասին>> ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասին 2-րդ կետի հիման վրա պահանջելով ներկայացնել հաշվեքննվող առարկայի վերաբերյալ ամբողջական և ճշգրիտ տեղեկատվություն, փաստաթղթեր և գրանցումներ ինչին ի պատասխան Հիմնադրամն ընդամենը տվել է բանավոր բացատրություն փաստաթղթավորման նման անմխիթար վիճակի վերաբերյալ, այն հիմնավորելով օբյեկտի ստրատեգիական նշանակությամբ և աշխատանքներն օպերատիվ և սեղմ ժամկետներում կատարելու անհրաժեշտությամբ:

Ստեղծված իրավիճակը հնարավորություն չի տվել հաշեքննողներին այդ մասով հաշվեքննությունը (ստուգումն) իրականացնել <<Հաշվեքննիչ պալատի մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով սահմանված <<հաշվետվության օբյեկտիվության սկզբունքի>> համաձայն:

Այսպիսով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի վերակառուցման ծրագրի մասով անհրաժեշտ և պահանջված տեղեկատվությունը ամբողջական չէ և ճշգրիտ չէ, հաշվեքննողներն այդ մասով որևէ եզրակացություն չեն ներկայացնում, քանի որ հնարավոր ոչ բոլոր փաստերն են հետազոտվել, վերահսկվել և հնարավոր չէ եզրահանգումների գալ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումների տնօրինության կողմից բոլոր պայմանագրերը, բացառությամբ՝ ավիատոմսերի և տրանսպորտային ծառայությունների, անկախ գումարի մեծությունից, կնքվել են ուղղակի ձևով: Պայմանագրերը կնքվել են առանց գնման հայտի և գնման առարկայի բնութագրի հաստատման: Կնքված բոլոր պայմանագրերում բացակայում են գնման առարկայի տեխնիկական բնութագրերը, որտեղ պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրվեին ձեռքբերվող ապրանքների հատկանիշները (չափեր, ձև, օգտագործվող նյութեր և այլն), ինչպես նաև՝ դրանց վերաբերվող պայմանների հստակ նկարագրությունը, դրանց առնչություն ունեցող և պահանջվող փաստաթղթերն ու տեղեկությունները:

2. Մատուցված ծառայությունների ժամանակ օգտագործված Հիմնադրամին հետ վերադարձման ենթակա ապրանքներից 113,374.3 հազ. դրամի ապրանքներ հետ չի վերադարձվել Հիմնադրամին, չի մուտքագրվել պահեստ և չի հաշվառվել, իսկ դրանց դիմաց ոչ մի պարտավորություն չի ձևավորվել

3. Կատարված գնումների արդյունքում պայմանագրերի շրջանակում ձեռքբերված ապրանքներից և ապրանքանյութական արժեքներից 6,940.5 հազ. դրամ արժեքով ապրանքանյութական արժեքներ չի մուտքագրվել Հիմնադրամի պահեստ և չի հաշվառվել, իսկ դրանց դիմաց ոչ մի պարտավորություն չի ձևավորվել:

4. Ձեռք բերված ապրանքների գները 5,642.0 հազար դրամով գերազանցում են շուկայական գները:

5. Հիմնադրամը ԱՊՀ տարածքում ''ՍՊԻ'' ֆիլմի ցուցադրման 50 տոկոսի իրավունքը ձեռքբերելու և ֆիլմի ցուցադրումից ստացված եկամտի 50%-ը ստանալու համար պայմանագիր է կնքել ''Մարս մեդիա էնթերթեյմենթ'' ՍՊԸ-ի հետ՝ 106,000.0 հազ. դրամ արժեքով /200,000 եվրո/, սակայն ընկերությունը 01.07.2019 թվականի դրությամբ Հիմնադրամին ''ՍՊԻ'' ֆիլմի ցուցադրումից որևէ գումար չի փոխանցել: Ըստ համացանցում զետեղված կայքերի տեղեկատվության ԱՊՀ տարածքում ֆիլմի ցուցադրումից միայն 2015 թվականին ստացվել է 140.2 հազ. ԱՄՆ դոլար եկամուտ:

6. ''Երևանյան հեռանկարներ միջազգային երաժշտական փառատոն'' ՀԿ-ի հետ 626,756.9 հազ. դրամ արժեքով կնքված, թվով 10 պայմանագրերի արդյունքում կազմակերպված համերգների տոմսերի վաճառքից ստացված եկամուտը, որը կազմել է 46,734.9 հազ. դրամ, ըստ կնքված պայմանագրերի, պետք է փոխանցվեր ՀՀ պետական բյուջե, սակայն հիմնադրամը ստացված գումարները պետական բյուջե չի փոխանցել, օգտագործել է սեփական կարիքների համար, իսկ չստացած գումարների համար քայլեր չի ձեռնարկել:

7. ''Երևանյան հեռանկարներ միջազգային երաժշտական փառատոն'' ՀԿ-ի կողմից Բրյուսելում կազմակերպված Բրյուսելի ազգային նվագախմբի համերգի համար Հիմնադրամի հաշվին փոխանցվել էր 8,721.2 հազ. դրամ: Բրյուսելում կայացած համերգի

վերաբերյալ ՀԿ-ի կողմից ներկայացված հաշվետվության համաձայն վաճառվել է համերգի 544 տոմս (դահլիճի տարողությունը կազմում է 2052 տեղ):

8. ‘‘Երևանյան հեռանկարներ միջազգային երաժշտական փառատոն’’ ՀԿ-ի կողմից կազմակերպված Լա Սկալայի համերգի տոմսերի վաճառքից ստացված եկամտից հիմնադրամին պետք է վճարվեր եկամտի 80 տոկոսը, սակայն որևէ գումար Հիմնադրամ չի փոխանցվել:

9. ‘‘Երևանյան հեռանկարներ միջազգային երաժշտական փառատոն’’ ՀԿ-ի կողմից Նյու Յորքում կազմակերպված ‘‘Յովեր’’ երգչախմբի համերգի համար նախատեսված 15-20 հոգու համար հյուրասիրության կազմակերպման համար նախատեսվածից ավելի է վճարել 110.5 հազ. դրամ:

10. ‘‘Երևանյան հեռանկարներ միջազգային երաժշտական փառատոն’’ ՀԿ-ի կողմից կազմակերպված Բրիտանիայի Թագավորական ֆիլհարմոնիկ նվագախմբի համերգի կազմակերպման համար Հիմնադրամը պայմանագրային գնից ավելի է վճարել 1,205.1 հազ. դրամ:

11. Պայմանագրով նախատեսված՝ Երուսաղեմի սիմֆոնիկ նվագախմբի (Երուսաղեմ) համերգի կազմակերպման համար ավելի է վճարվել 713.8 հազ. դրամ:

12. ‘‘Գրքի և հրատարակչական գործի կենտրոն’’ ՊՈԱԿ-ը Վարշավայում, Նյու-Յորքում, Լոնդոնում, Գյոթեբորգում, Փարիզում և Մոսկվայում գրքի միջազգային ցուցահանդես-տոնավաճառ կազմակերպելու ու նպատակային թարգմանությունների աջակցման համար Հիմնադրամին ցուցահանդես-տոնավաճառի վերաբերյալ ֆինանսական հաշվետվություն չի ներկայացրել և գումարներ պետական բյուջե չի վճարվել:

13. ‘‘Արարատի ստորոտին’’ մեդիա ֆորումի կազմակերպման և անցկացման համար Հիմնադրամը ‘‘Եվրոպայի և Ասիայի լրագրողների մեդիակոնգրես’’ ՍՊԸ-ին ավելի է վճարել 649.4 հազ. ռուսական ռուբլի /5,026.4 հազ. դրամ/ այլ ծախսերի դիմաց, իսկ տարադրամի սխալ վերահաշվարկի արդյունքում ավելի է վճարել 239.2 հազ. ռուբլի /1,829.9 հազ. դրամ/:

14. Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ 2015 թվականի ապրիլի 24-ին Երևանում ‘‘Օրկեստրա’’ 24/04 ֆիլհարմոնիկ նվագախմբի համերգը կազմակերպելու և անցկացնելու համար ‘‘Դասական երաժշտության աջակցություն’’ ՀԿ-ին ավելի է վճարվել 14,249.3 հազ. դրամ:

15. Ֆինանսավորվողի կողմից Հիմնադրամին համերգի կազմակերպումից ստացված եկամուտների վերաբերյալ, կնքված պայմանագրի 1/3 կետի համաձայն, հաշվետվություն չի ներկայացրել և գումարներ չեն վճարվել, իսկ Հիմնադրամը չի պահանջել:

16. ‘‘Լոյս ի Լուսոյ’’ ՍՊԸ-ի կողմից Հայաստանում, Թուրքիայում և Վրաստանում կազմակերպված հիշատակային համերգների նկարահանված նյութից չի հասկացվում, թե համերգները որտեղ են կազմակերպվել, որոնց համար փաստացի վճարվել է 13,500.0 հազ. դրամ:

17. Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի տարածքում 2015 թվականի ապրիլի 22-24-ը և Վաղարշապատում 2015 թվականի ապրիլի 23-ին տեխնիկական ապահովման ծառայություններ մատուցելու համար Հիմնադրամը ''Տեխնոպրոջեքթ'' ՍՊԸ-ին վճարել է 1,753.5 հազ. դրամ, որպես միջոցառման ժամանակ կորած սարքավորումների փոխհատուցման գումար, ինչի կորուստը հիմնավորված չէ:

18. Հիմնադրամի կողմից սխալ պլանավորելու, սխալ հաշվարկելու արդյունքում ամրագրված մեծ թվով սենյակների, այնուհետև դրանք չեղարկելու համար, «Արմենիա Հյուրանոցային համալիր» ՓԲԸ-ի կողմից կիրառվել է պայմանագրով նախատեսված տուգանք՝ 14,088.4 հազ. դրամ՝ ամրագրումներ կատարելու, սակայն հյուրեր չուղարկելու հիմնավորմամբ:

19. Հիմնադրամը՝ Գերմանիայի Մյունխեն քաղաքում գրանցված ''EPS'' ընկերությունից վարձակալել է 310 մետր /1.09մ*1.10մ/ ալյումինե արգելափակոցներ, մեկ մետրի համար վճարելով 45,634 դրամ վարձավճար, այն դեպքում, երբ հիմնադրամը արգելափակոցներ ՀՀ-ում ձեռք է բերել, մեկ մետրը 9,600 դրամով: Ընկերությունը արգելափակոցները վարձակալել է 475.3 տոկոսով ավելի թանկ և վճարել է 10,902.8 հազ. դրամ ավելի գումար, քան այն ձեռք կբերեր ՀՀ շուկայից:

20. Հիմնադրամը գտնելով, որ Հայոց ցեղասպանության 100-ամյակի միջոցառումների անցկացման ընթացքում ձեռքբերված ապրանքները իրենց անհրաժեշտ չեն՝ համակարգչային տեխնիկան, գրասենյակային գույքը, արգելափակոցները, միջոցառման համար ներկրած բիոզուգարանները և այլ նշանակության գույքը՝ գումարով 77,399.9 հազ. դրամ և մի շարք ապրանքներ ու հաստոցներ, որոնց ձեռքբերման փաստաթղթերը բացակայում են և արժևորված չեն, առանց Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից Հիմնադրամի գույքի տնօրինման կարգի հաստատման որոշման, անհատույց, վեց տարի ժամկետով և պայմանով, որ պայմանագրի ժամկետը լրանալուց հետո գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետք է անցներ կոնցեսիոներին, կնքված ''Գույքի կոնցեսիոն կառավարման պայմանագրի'' համաձայն, հանձնել է ''Լոմա Սիսթեմս'' ՍՊԸ-ին:

21. ''ՀԱՏՄ'', ''Արամ Գևորգյան'', ''ԷԿԱ'' և ''Բելինդա'' ՍՊԸ-ների հետ Հիմնադրամի կողմից բոլոր պայմանագրերը, անկախ գումարի մեծությունից, կնքվել են ուղղակի ձևով: Պայմանագրերը կնքվել են առանց գնման հայտի և գնման առարկայի բնութագրի հաստատման: Կնքված բոլոր պայմանագրերում բացակայում են գնման առարկայի տեխնիկական բնութագրերը, որտեղ պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրվեին ձեռքբերվող ապրանքների հատկանիշները /չափսեր, ձև, օգտագործվող նյութեր և այլն/, ինչպես նաև դրանց վերաբերվող պայմանների հստակ նկարագրությունը:

22. Հիմնադրամի կողմից անապահով ընտանիքների համար ձեռք բերված բնակարանների, կառուցված առանձնատների, կառուցված և հիմնանորոգված մանկապարտեզների ու դպրոցների համար գույքի պատրաստման, գնման, տեղափոխման և տեղադրման համար կնքված պայմանագրերով նախատեսված ապրանքներից՝ տեխնիկական /հեռուստացույցներ, սառնարաններ, գազօջախներ, օդաքաշ պահարաններ/ ''ՀԱՏՄ'' ՍՊԸ-ն ձեռք է բերել ''ՎԻ ԷԼ ՎԻ Սենթր'' ՍՊԸ-ից 23,609.1 հազ. դրամով, վաճառել 39,996.8 հազ. դրամով, կիրառել 16,387.7 հազ. դրամ վերադիր:

23. Ռուսաստանի Դաշնությունից ներմուծված դահլիճի աթոռները ‘‘ՀԱՏՄ’’ ՍՊԸ-ն ձեռք է բերել 11,103.2 հազ. դրամով, վաճառել Հիմնադրամին 29,360.0 հազ. դրամով, վերադիրը կազմել է 18,256.8 հազ. դրամ, կիսափափուկ աթոռները ձեռք են բերվել 12,360.5 հազ. դրամով, վաճառվել 35,160.7 հազ. դրամով, վերադիրը կազմել է 22,792.3 հազ. դրամ, ծալվող աթոռները ձեռք են բերվել 18,168.3 հազ. դրամով, վաճառվել 58,418.4 հազ. դրամով, վերադիրը կազմել է 40,249.9 հազ. դրամ:

24. Հիմնադրամն ապրանքները ձեռք չի բերել մրցույթների կազմակերպման միջոցով արտադրողներից կամ ներմուծողներից, փոխարենը՝ կատարել է միջնորդավորված գնումներ, նշված ապրանքները ձեռք են բերվել ավելի թանկ:

25. Կնքված պայմանագրերի շրջանակում ‘‘ՀԱՏՄ,, ՍՊԸ-ի կողմից ձեռք բերված և Հիմնադրամին 269.0 մլն դրամով վաճառված տեխնիկայի, փափուկ կահույքի և կահույքի տարբեր բաղադրիչների գնային տարբերությունները կազմել են շուրջ 117.1 մլն դրամ:

26. ‘‘ՀԱՏՄ,, ՍՊԸ-ի կողմից արտադրված և Հիմնադրամին վաճառված 169.2 ք/մ խոհանոցի կահույքը՝ պատրաստված լամինացված ԴՍՊ-ից, որի մեկ ք/մ-ի գինը սահմանվել էր 105.0 հազ. դրամ, առանց հարկերի: Շուկայական գների ուսումնասիրությունից պարզվել է, որ լամինացված ԴՍՊ-ից պատրաստված խոհանոցի կահույքի մեկ ք/մ-ի գինը շուկայում կազմել է 40.0-ից 60.0 հազ. դրամ, այդ թվում՝ հարկերը, կամ հիմնադրամը խոհանոցի կահույքը ձեռք է բերել շուրջ 9.3 մլն դրամ ավելի թանկ:

27. ‘‘ՀԱՏՄ’’ ՍՊԸ-ն իր այլ առևտրային գործունեության շրջանակներում նմանատիպ ապրանքները մատակարարել է շատ ավելի էժան, քան Հիմնադրամին՝ այս պայմանագրերի շրջանակում:

28. ‘‘ՀԱՏՄ,, ՍՊԸ-ից ձեռք բերված հյուրասենյակի պահարանների, ննջասենյակի պահարանների, երկտեղանոց մահճակալների և երկհարկանի մահճակալների գները 16-ից 34 տոկոսով գերազանցում են ‘‘Բելինդա’’և ‘‘Արման Գևորգյան’’ ՍՊԸ-ներից ձեռք բերված նմանատիպ ապրանքների գները:

29. Գուդրոնի, բիտումի և մազութի ձեռքբերման համար ավել է վճարվել 66,540.9 հազ. դրամ, իսկ մատակարարված ապրանքների գներն էապես տարբերվում են (բարձր են) այլ ներմուծող ընկերությունների կողմից կատարված ներմուծումների գներից:

30. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի վերակառուցման ծրագրի մասով անհրաժեշտ և պահանջված տեղեկատվությունը ամբողջական չէ և ճշգրիտ չէ, հաշվեքննողներն այդ մասով որևէ եզրակացություն չեն ներկայացնում, քանի որ հնարավոր ոչ բոլոր փաստերն են հետազոտվել, վերահսկվել և հնարավոր չէ եզրահանգումներ կատարել:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

1. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հիմնադրամում ստուգման ընթացքում Հաշվեքննիչ պալատի աշխատակազմի ծառայողների՝ ստուգմանը վերաբերող օրինական պահանջներին մի շարք դեպքերում պատշաճ ընթացք չի տրվել հաշվեքննության օբյեկտի պաշտոնատար անձանց կողմից, մի շարք դեպքերում չի պահպանվել «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջը, ըստ որի հաշվեքննության օբյեկտի պաշտոնատար անձը պարտավոր է հաշվեքննության ընթացքում հաշվեքննողի պահանջով երեք աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել հաշվեքննության առարկայի վերաբերյալ առկա և հասանելի, ամբողջական և ճշգրիտ տեղեկատվություն, փաստաթղթեր և գրանցումներ, ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ մասով, առաջարկվում է պատասխանատվության ենթարկել ստուգման օբյեկտի համապատասխան պաշտոնատար անձանց:

2. Միջոցներ ձեռնարկել գնումների գործընթացում ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջների պահպանման ուղղությամբ:

3. Ձեռնարկել միջոցառումներ Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների շրջանակում ձեռքբերված, սակայն չհաշվառված ապրանքանյութական արժեքների սահմանված կարգով վերադարձման, վերականգման և հաշվառման նկատմամբ:

4. Ձեռնարկել միջոցառումներ կնքված պայմանագրերի շրջանակներում Հիմնադրամի կողմից ավելի վճարված գումարների վերադարձման ուղղությամբ:

5. Ձեռնարկել միջոցառումներ «Լոմա Սիստեմս» ՍՊԸ-ի հետ կնքված գույքի կոնցեսիոն կառավարման պայմանագիրը վերանայելու և կառավարման հանձնված ապրանքները հետ վերադարձնելու ուղղությամբ:

«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, հաշվեքննության օբյեկտի ղեկավարը, ընթացիկ եզրակացությունը ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հաշվեքննիչ պալատին տրամադրում է ընթացիկ եզրակացությունում ամրագրված անհամապատասխանության, խեղաթյուրման վերացման, առաջարկությունների իրականացման և ընթացիկ եզրակացությանը վերաբերող այլ գրավոր տեղեկատվություն:

5-րդ վարչության աշխատանքները համակարգող

Հաշվեքննիչ պալատի անդամ ***Ա. Գևորգյան***

ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվեքննության ընթացքում կազմվել և ծանոթացման ու ստորագրման նպատակով ստուգվող օբյեկտին են ներկայացվել չորս արձանագրություններ, որին ի պատասխան ներկայացվել են առարկությունները և բացատրությունները:

Մեր կողմից ուսումնասիրվել են ներկայացրած առարկությունները, որոնց մի մասը ընդունվել է մեր կողմից և ստուգման արդյունքներում կազմված արձանագրություններում արձանագրված որոշակի անհամապատասխանություններ ընթացիկ եզրակացությունում շտկվել են, իսկ առարկությունների հիմնական մասը չի ընդունվել հիմնավոր չլինելու հիմքով, իսկ որոշ դեպքերում առարկություն վերնագրվածները, ըստ էության, պարզաբանումներ են եղել:

Ներկայացված առարկությունները և այդ առարկությունները մեր կողմից չընդունելու հիմնավորումները ներկայացրված են ընթացիկ եզրակացությունում:

Հավելված 1

«Էքսպոմեդիա»ՍՊԸ Գլոբալ

ֆորում Մարզահամերգայինհամալիր ապրիլի 22-23

Հ/Հ	Ապրանքի և ապրանքայնության արժեքի անվանումը	Չափի միավոր	Քանակ	Գին, դրամ	Գումար /դրամ/	Ծանոթություն
1	Տառեր,լուսավորող վահանակ	հատ	1	179,500	179,500.0	
2	Տառեր	կոմպ	2	420,000	840,000.0	
3	Հենքլույսով / ալյումին/	կոմպ	1	809,000	809,000.0	
4	լուսավորող վահանակ	հատ	10	18,050	180,500.0	
5	Տարբեր տեսակի մալուխներ	կոմպ	1	450,000	450,000.0	
6	3*82 րջանակներ, լույսեր	կոմպ	4	349,500	1,398,000.0	
7	Սեղաններ	կոմպ	2	454,500	989,000.0	
8	Սեղանների համար լույսերով ն2 անաբաններ	հատ	2	235,000	470,000.0	
9	Տեղեկատվական կանգնակ	հատ	20	55,750	1,115,000.0	
10	Հենքալյումինե	տաղ	4	173,925	695,700.0	
11	ԿառուցվածԷԼցացմալուխ5*10կվտ	կոմպ	1	475,000	475,000.0	
12	Հենքալյումինե	Տաղ.	7	899,815	6,298,705.0	
13	Վրանայինծածք	հատ	1	1,136,250	1,136,250.0	

15	Մոնտաժ վաճ Մալ ու խն եր		1	4,750,000	4,750,000.0	
16	Մոնիտորների տեղադրման սարքավորում/երկաթ/	հատ	4	1,050,000	4,200,000.0	
17	Նշանաբանների տեղադրման համար սարքավորումներ	հատ	3	225,000	675,000.0	
18	Վարագույրների և լուսարձակների տեղադրման սարք	հատ	100	45,600	4,568,000.0	
19	Դահլիճի երկարությամբ շրիշակ/ԴՍՊ/	մ	150	42,620	6,393,000.0	
20	Ծավալային տառեր /2 մոնիտորի տեղադրում/	կոմպ	2	600,000	1,200,000.0	
21	Պոդիում	հատ	1	170,000	170,000.0	
22	Մանրահատակ	ք/մ	2800	2,500	7,000,000.0	Գևորգ-Արման
23	Գորգածածկ	ք/մ	2800	2,500	0.0	անհայտ ձեռքբերում
24	Բեմի հետնամաս և բեմի շրիշակ	դրամ	1	4,250,000	4,250,000.0	
25	Հեռուստակայանի տաղավար	հատ	1	270,000	270,000.0	
25	**Ընդամենը**				48,512,655.0	
	եկամուտ 15տոկոս				7,276,900.0	
	Ընդամենը				**55,789,555.0**	

Հավելված 2

«Էքսպոմեդիա»ՍՊԸ 18-20.03.2015թ.Արարատի տորոտին միջազգային մեդիաֆորում

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Չափի միավոր	Քանակ	Գին, դրամ	Գումար դրամ
1	Լույս և լույսի կանգնակ	հատ	2	73,000.0	146,000.0
2	Մետաղյա կարկաս ետնապատկլոր հենք	կոմպ	1	330,000.0	330,000.0
3	100մուժեղացվածսնուցման մալուխ,մալուխներ, վահանակներ	կոմպ	1	370,000.0	370,000.0
4	Անկյունայինհենք	հատ	2	64,000.0	128,000.0
5	Հենքիպատրաստումև մոնտաժումարտաքինգովազդ	հատ	4	80,850.0	323,400.0
6	Բեմիետնապատ 14*4.8մ /մետաղյա կարկաս/	հատ	1	140,000.0	140,000.0
	Ընդամենը				1,437,400.0
	եկամուտ 10տոկոս				143,740.0
	Ընդամենը				**1,581,140.0**

Հավելված 3

«Նաիրաստգսյան»ԱՁ

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Չափի միավոր	Քանակ	Գին, դրամ	Գումար դրամ	Ծանոթություն
1	Հատակի փռվածք	Ք/Մ	350	2,400.0	840,000.0	տեղադրվել է արարատյան ստորոտ ֆորումում

Հավելված 4

Ա/Ձ Արթուր Հարությունյան-Ծիծեռնակաբերդի հուշահամալիր,Մայրաթոռ

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Չափի միավոր	Քանակ	Գին /միայն ապրանքի արժեք, /դրամ/	Գումար /դրամ/
1	Մեդիակենտրոնի կավրալիտ ծիծեռնակաբերդ	ք/մ	400	2,200.0	880,000.0
2	Պարտերի,ամֆիթատրոնի, ելույթների տաղավարի կավրալիտ-համալիր	ք/մ	600	1,666.0	999,600.0
3	կոնստրուկցիաբետոնե սալերը ծածկելու համար - համալիր	հատ	8	200,000.0	1,600,000.0
4	Էջմիծնումկայանալիք միջոցառումկավրալիտ	ք/մ	1650	1,800.0	2,970,000.0
Ընդամենը					6,449,600.0

Հավելված 5

«Վարդգես Ճուղարյան»Ա/Ձ

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Չափի միավոր	Քանակ	Գին, /դրամ/	Գումար /դրամ/
1	Արգել ապատնեշներ/ մետաղական 2.5մ *1մ /300հատ-ից կոնցեսիոն կառավարման է հանձնվել 265հատ	հատ	35	24,000.0	840,000.0
2	Լեդէկրանների /9.5մ *5.5մ /համար կոնստրուկցիա	հատ	5	5,000.0	25,000,000.0
	Ընդամենը				25,840,000.0

Հավելված 6

''Սթեյջ Դիզայն'' ՍՊԸ
Ծիծեռնակաբերդի համալիրի տարածքում մալուխների և խողովակների
մոնտաժային աշխատանքներ

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Չափի միավոր	Քանակ	Գին, հազ. դրամ	Գումար,/ դրամ/
1	Մալուխ 8*6	մ	900	3,250.0	2,925,000.0
2	Մալուխ 6*6	մ	400	2,500.0	1,000,000.0
3	Մալուխ 4*6	մ	600	1,850.0	1,110,000.0
4	Մալուխ 2*6	մ	400	1,200.0	480,000.0
5	Մալուխ 2*1.5	մ	400	2,500.0	1,000,000.0
6	Խողովակ 50չ ափի	մ	900	1,200.0	1,080,000.0
7	Խողավակ 40չ ափի	մ	1000	800.0	800,000.0
8	Խողովակ 32չ ափի	մ	400	450.0	200,000.0
9	Խողովակ 25չ ափի	մ	200	250.0	50,000.0
10	Խողովակ 20չ ափի	մ	200	200.0	40,000.0
11	Համակարգիչ նաթբուկ	հատ	1	250.0	250,000.0
12	Տոմետ	ք/մ			250,000.0
	Ընդամենը				**9,185,000.0**

Հավելված 7

''Ֆիլիշին'' ՍՊԸ

Ծիծեռնակաբերդում հեռուստատեսային տաղավարի կառուցում

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Չափի միավոր	Քանակ	Գին, /դրամ/	Գումար, /դրամ/
14	Օդորակիչ	հատ	1	343,000.0	343,000.0
17	Փ-57.2մմ խողովակով պատրաստվածլույսերի կոնստրուկցիաներ	Գծ/մ	58.5	4,800.0	280,800.0
	Ընդամենը				**623,800.0**
	Վերադիր ծախսեր 8+3 տոկոս				**68,600.0**
	Ընդամենը				**692,400.0**

Հավելված 8

<<ՍՏԵՑՋՍՏԱՑԼ >>ՍՊԸ Կառավարության որոշման նախագծի
դեկորացիաների պատրաստում

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Չափի միավոր	Քանակ	Գին, դրամ	Գումար /դրամ/
1	Հենք կախովի հեռուստացույցի համար/մետաղ, ալյումին/250*350սմ	հատ	1	186,600.0	186,600.0
2	Ստենդ 350*115սմ /մետաղական/	հատ	3	54,200.0	162,600.0
3	Ստենդ 450*750սմ/մետաղական/	հատ	1	248,300.0	248,300.0
4	Ստենդ 380*140սմ/մետաղական/	հատ	8	55,800.0	446,400.0
5	Ստենդ 460*400սմ/մետաղական/	հատ	4	196,230.0	904,920.0
6	Ստենդ 460*600սմ/մետաղական/	հատ	1	359,000.0	359,500.0
7	ԴՍՊլամինապատ 180*360	հատ	6.5	27,000.0	175,500.0
8	Հեռուստացույցի տակդիր և ծաղկաման /500*200*80սմ/	հատ	1	430.0	430,000.0
	Ընդամենը				2,913,820.0
	ավելացրած շահույթ 18տոկոս				524,000.0
9	Սեղանի ծածկոց				350,000.0
	Ընդամենը				**3,787,820.0**

Հեպի Իվենթ ՍՊԸ

Ապրանքի անվանումը	Չափի միավոր	Քանակ	Գինը, /դրամ/	Գումարը /դրամ/
Հատակի փռվածք /կավրալին/	ք/մ	54	2,400.0	129,600.0

Հավելված 10

„Մեգապրոֆ„ ՍՊԸ

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Չափի միավոր	Քանակ	Գինը /դրամ/	Գումար /դրամ/
1	Ծիծեռնակաբերդի մեդիակենտրոն	հատ	1	8,100.0	8,100,000.0
2	Մեդիակենտրոնի մալուխներ				980,000.0
	Ընդամենը				**9,080,000.0**

Հավելված 11

„ԷՅՎԻԷՆ Նահապետյաններ՚՚ ՍՊԸ

Ապրանքի անվանումը	Չափի միավոր	Քանակ	Գինը /դրամ/	Գումար, /դրամ/
Ցուցանակ	հատ	750	9,000.0	6,750,000.0

Հավելված 12

„Կարեն Սահակյան'' Ա/Ձ

Ապրանքի անվանումը	Չափի միավոր	Քանակ	Գինը, հազ. դրամ	Գումարը, հազ.դրամ
Կախիչ	հատ	1	18,000.0	18,000.0

Հավելված 13

,Բլիցքոմփ՝ ՍՊԸ

Ապրանքի անվանումը	Չափի միավոր	Քանակ	Գին, հազ. դրամ	Գումար, հազ. դրամ
16GB /FLACH SANDISK/ Էլ. Կրիչներ	հատ	15	11,500.0	172,500.0

Հավելված 14

«Հայաստան» համահայկական հիմնադրամի հետևյալ պայմանագրերում առկա անհամապատասխանությունների վերաբերյալ

Հ/հ	Կազմակերպություն	Պայմանագրային գին, հազար դրամ	Պայմանագրի առարկա	Նշումն անհամապատասխանության մասին
1	Մեդիտեք ՍՊԸ	612.0	Ն.Նասիբյանի անվան նոյեմբերյան ԲԿ ՓԲԸ-ի համար բժշկական սարքավորումներ	*Հավելվածի և հարկային հաշվի գույքի անվանումները չեն համապատասխանում *Հանձնման-ընդունման ակտում նշված չէ որակը (պայմ.2.4.2գ) *Հավելվածում նշված չէ գույքի որակը (պայմ.2.2.4), *Հավելվածում նշված չէ գույքի պիտանելիության ժամկետը (պայմ.2.2.5),
2		3,184.0	ԼՂՀ առողջապահության նախարարության համար բժշկական սարքավորումներ	*Հանձնման-ընդունման ակտում նշված չէ որակը (պայմ.2.4.2գ) *Պայմանագրի հավելվածում նշված չէ գույքի որակը (պայմ.2.2.4), *Հավելվածում նշված չէ գույքի պիտանելիության ժամկետը (պայմ.2.2.5), *50%կանխավճար չի կատարվել
3	Մեդիտեք	5,400.0	ԼՂՀ առողջապահության նախարարության համար սոնոգրաֆ	*Հանձնման-ընդունման ակտում ամսաթիվ չկա, *Հանձնման-ընդունման ակտում նշված չէ որակը (պայմ.2.4.2գ) *Հավելվածում նշված չէ գույքի որակը (պայմ.2.2.4), *Հավելվածում նշված չէ գույքի պիտանելիության ժամկետը (պայմ.2.2.5),

	ՍՊԸ			*50%կանխավճարչիկատարվել *Ստացմանհաշիվ-ֆակտուրան 21.07.2016,31օրուշ
4		398.0	ԼՂՀ առողջապահությաննախարարությանհամարբժշկականսարքավորումներ (Կենցաղայինսառնարան)	*Հանձնման-ընդունմանակտումնշվածչէորակը(պայմ.2.4.2գ) *Հավելվածումնշվածչէգույքիորակը(պայմ.2.2.4), *Հավելվածումնշվածչէգույքիպիտանելիությանժամկետը(պայմ.2.2.5), *50%կանխավճարչիկատարվել *Ստացմանհաշիվ-ֆակտուրան 21.07.2016,Հանձնման-ընդունմանակտից 3օրուշ
5		4,689.0	ԼՂՀ առողջապահությաննախարարությանհամարբժշկականսարքավորումներ	*Հանձնման-ընդունմանակտումնշվածչէորակը(պայմ.2.4.2գ) *Հավելվածումնշվածչէգույքիորակը(պայմ.2.2.4), *Հավելվածումնշվածչէգույքիպիտանելիությանժամկետը(պայմ.2.2.5), *50%կանխավճարչիկատարվել
6		65.0	Առաջինբուժօգնությանպայուսակ	*Հանձնման-ընդունմանակտումնշվածչէորակը(պայմ.2.4.2գ) *Հավելվածումնշվածչէգույքիորակը(պայմ.2.2.4), *Գույքիպիտանելիությանժամկետը(պայմ.2.2.5), *Ժամկետիցուշվճարում

7	Մեդիտեք ՍՊԸ	7,560.0	ԼՂՀ առողջապահության նախարարության համարբժշկական սարքավորումներ	*Հանձնման-ընդունման ակտում ամսաթիվչկա,*Հանձնման-ընդունման ակտումնշվածչէ որակը (պայմ.2.4.2գ)*Հավելվածումնշվածչէ գույքիորակը (պայմ.2.2.4),*Հավելվածումնշվածչէ գույքի պիտանելիության ժամկետը (պայմ.2.2.5),*Ստացման ՀՖ 10.10.2016, պայմանագրիավարտից 3օրուշ
8		507.0	Ն.Նասիբյանի անվան նոյեմբերյան ԲԿ ՓԲԸ-ի համարբժշկական սարքավորումներ	*Հանձնման-ընդունման ամսաթիվչկա, *Հանձնման-ընդունման ակտումնշվածչէ որակը (պայմ.2.4.2գ) *Հավելվածումնշվածչէ գույքիորակը (պայմ.2.2.4), *Հավելվածումնշվածչէ գույքի պիտանելիության ժամկետը (պայմ.2.2.5),
9		29,568.0	ԼՂՀ ԱՆ Ահամարինկուբատորներ	*Հանձնման-ընդունման ակտումնշվածչէ որակը (պայմ.2.4.2գ) *Հավելվածումնշվածչէ գույքիորակը (պայմ.2.2.4), *Հավելվածումնշվածչէ գույքի պիտանելիության ժամկետը (պայմ.2.2.5),
10		6,615.9	Շիրակիմարզ Գյումրիքաղաքի Երեխաներիտուն ՊՈԱԿ մանկատան համարբժշկական սարքավորումներ	*Հանձնման-ընդունման ակտում ամսաթիվչկա, *Հանձնման-ընդունման ակտումնշվածչէ որակը (պայմ.2.4.2գ) *Հավելվածումնշվածչէ գույքիորակը (պայմ.2.2.4), *Հավելվածումնշվածչէ գույքի պիտանելիության ժամկետը (պայմ.2.2.5), *50%կանխավճարչիկատարվել *Ժամկետիցուշվճարում

11		16,568.8	Շիրակի մարզ Գյումրի քաղաքի Երեխաների տուն ՊՈԱԿ մանկատան համար ուլտրաձայնային սարքավորումներ	*Հանձնման-ընդունման ակտում համապատասխանություն չկա, *Հանձնման-ընդունման ակտում նշված չէ որակը (պայմ.2.4.2գ) *Հավելվածում նշված չէ գույքի որակը (պայմ.2.2.4), *Հավելվածում նշված չէ գույքի պիտանելիության ժամկետը (պայմ.2.2.5),
12		45,016.6	Ամասիայի Տիրամայր Նարեկ բժշկական սարքավորումներ	*Հանձնման-ընդունման ակտում նշված չէ որակը (պայմ.2.4.2գ) *Հավելվածում նշված չէ գույքի որակը (պայմ.2.2.4), *Հավելվածում նշված չէ գույքի պիտանելիության ժամկետը (պայմ.2.2.5),
13		29,631.1	Ամասիայի Տիրամայր Նարեկ բժշկական սարքավորումներ	*Հանձնման-ընդունման ակտում նշված չէ որակը (պայմ.2.4.2գ) *Հավելվածում նշված չէ գույքի որակը (պայմ.2.2.4), *Հավելվածում նշված չէ գույքի պիտանելիության ժամկետը (պայմ.2.2.5), *Ստացման ՀՖ 07.07.2017,Հանձնման-ընդունման ակտից 7օրում *Մնացորդայի գումարի վճարման ուշացում
14		1,107.0	Ն.Նասիբյանի անվան նոյեմբերյան ԲԿ ՓԲԸ-ի համար բժշկական սարքավորումներ	Կիրառելի չէ
ԸՆԴԱՄԵՆԸ		150,922.4		

15	Յունիքոմ ՓԲԸ	69,990.0	Համակարգչային սարքավորումներ ի ձեռքբերում վարժարանների համար	Կիրառելի չէ
ԸՆԴԱՄԵՆԸ		69,990.0		
16	Վերսուս ստուդիա ՍՊԸ	18,000.0	<<Ձեռք ձեռքի>>8 հատ*15րոպե հաղորդաշարի պատրաստում	Կիրառելի չէ
17		3,000.0	ԼՂՀ ֆրանս.Կողմից կառուցվածհամայնքային կենտրոնի մասին տեսաֆիլմ 15րոպե	*Հանձնման-ընդունման ակտում ամսաթիվչկա
18		18,000.0	<<Ձեռք ձեռքի>>9 հատ*15րոպե հաղորդաշարի պատրաստում	Կիրառելի չէ
19		18,000.0	<<Ձեռք ձեռքի>>9 հատ*15րոպե հաղորդաշարի պատրաստում	*Հանձնման-ընդունման ամսաթիվչկա
ԸՆԴԱՄԵՆԸ		57,000.0		
20	Միկրոալֆա ՍՊԸ	2,205.0	35հուշամեդալի պատրաստում	*Հավելվածումչափանիշներընշվածչեն *Հավելվածումէսքիզներըչկան
21		1,980.0	44արծանիկի պատրաստում	*Հավելվածումէսքիզներըչկան
22		1,530.0	50հուշամեդալև 50կրծքանշան	*Հավելվածումչափանիշներընշվածչեն *Հավելվածումէսքիզներըչկան *Հանձնման-ընդունման ամսաթիվչկա(Հ/ֆ ամսաթիվը 06.10.2015՝ պայմ.ժամկետիուշացում)

23		11,805.1	1 ոսկե մեդալ, 1 գլոբալ մրցանակ	Կիրառելի չէ
23		2,625.0	50 հուշամեդալ	*Հավելվածում չափանիշները նշված չեն
24		1,935.0	43 արծանիկ	*Հ/ֆ ամսաթիվը 14.08.2016՝ ժամկետի ուշացում
25		525.0	10 հուշամեդալ	*Հավելվածում չափանիշները նշված չեն
26		1,155.0	30 հուշամեդալ և 3 մեծ մեդալ	*Հավելվածում չափանիշները նշված չեն *Հ/ֆ ամսաթիվը 20.10.2016՝ ժամկետի ուշացում *Ամբողջ գումարը փոխանցվել է 12.10.2016-ին՝ կանխավճար նախատեսված չէ
27		11,805.1	1 ոսկե մեդալ, 1 գլոբալ մրցանակ	*Հավելվածում էսքիզները չկան *Հ/ֆ ամսաթիվը 07.06.2017 ժամկետի ուշացում
27		1,950.0	42 արծանիկ	Կիրառելի չէ
28		1,500.0	30 հուշամեդա	*Հավելվածում չափանիշները նշված չեն
29		1,440.0	30 հուշամեդալ և 3 մեծ մեդալ	*Հավելվածում չափանիշները նշված չեն
30		725.0	3 հուշամրցանակ	*Հավելվածում չափանիշները նշված չեն *Հ/ֆ ամսաթիվը 28.10.2017 ժամկետի ուշացում
ԸՆԴԱՄԵՆԸ		41,180.2		
31	Արեգ ԱԿ	37,458.6	ԼՂՀ Շուշիի Ե. Մոզյանի անվան դպրոցի համար արհեստագործական սարքավորումներ	Կիրառելի չէ

32		6,415.0	Սիրիական հակամարտությունից տուժած բնակիչների մարդասիրական օգնություն (Հոսանքի գեներատոր)	Կիրառելի չէ
ԸՆԴԱՄԵՆԸ		43,873.6		
33	ՋԻ-Է Ֆ ՍՊԸ	11,100.0	ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքի ուռուցքաբանության կենտրոնի համար գույք, տեխնիկա	Հանձնման-ընդունման ակտում համապատասխանություն չկա
34		22,495.0		
ԸՆԴԱՄԵՆԸ		33,595.0		
35	Արմտեքս գրուպ ՍՊԸ	11,864.0	Սիրիական հակամարտությունից տուժած բնակիչների մարդասիրական օգնություն (Հագուստ)	Կիրառելի չէ
36		8,604.0		
37		10,770.0		
ԸՆԴԱՄԵՆԸ		31,238.0		
38	Բկեքսմիթ ինստիտուտ բնապահպանական	11,972.8	Մարդկանց առողջության վրա կապարի ազդեցության ռիսկի կանխման ազդեցություն Ախթալայում 1-ին փուլ	*Իրականացվածծրագրի արդյունքների վերավերյալ վերջնական ամփոփհաշվետվությունը չի ներկայացվել (պայմ.3.2.2)

39		11,942.5	Մարդկանց առողջության վրա կապարի ազդեցության ռիսկի կանխման ազդեցություն Ախթալայում 2-րդ փուլ	
ԸՆԴԱՄԵՆԸ		23,915.3		
40	Կոնցեռն-ԷնեգոմաշՓԲԸ	23,882.0	ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի գենետիկայի և բջջաբանության ամբիոնի գենետիկայի լաբորատորիայի համար սարքավորումներ ի ձեռքբերում	*Հավելվածի և հարկայինհաշվի գույքի անվանումները չեն համապատասխանում *Հանձնման-ընդունման ակտումնշված չէ որակը (պայմ.2.4.2գ) *Հավելվածումնշված չէ գույքի որակը (պայմ.2.2.4), *Հավելվածումնշված չէ գույքի պիտանելիության ժամկետը (պայմ.2.2.5), *Պայմանագրովկանխավճար նախատեսվածչէ,սակայնգույքստանալուցմոտճամիսշուտվճարում
ԸՆԴԱՄԵՆԸ		23,882.0		
41	ԲազումֆիրմաԱԿ	19,931.6	Սիրիական հակամարտությունից տուժածբնակիչներին մարդասիրականօգնություն (զգեստ,բաճկոն, գուլպաեայլն)	*Հաշվապահականձևակերպում՝ գույքընդունելըստ պայմանագրիևհարկայինհաշվիգույքըպետքէստանարգնորդը *Ժամկետիցուշվճարում
ԸՆԴԱՄԵՆԸ		19,931.6		

42	Էսզեթ ֆարմա ՍՊԸ	18,978.4	Մարտակերտի ատամնաբուժարանի համար սարքավորումներ	*Ապրանքը մատակարարվել է պայմ. ժամկետից ու 2 (մոտ 77օր), պատասխանատվություն նախատեսված չէ *Պայմանագրի ավարտին ապրանքը չի մատակարարվել և պայմանագիրը չի խզվել *Ժամկետից ու 2 վճարում
ԸՆԴԱՄԵՆԸ		18,978.4		
43	Համլետ Հովսեփյան Ա/Ձ	17,741.8	Սիրիական հակամարտությունից տուժած բնակիչներին մարդասիրական օգնություն (պահածոներ)	*2016թ պայմանագրով կանխավճար նախատեսված չէ,սակայն գույքստանալուց 10օր 2ուտվճարում* 2016թ պայմանագրովհա2իվ-ֆակտուրա 18.10.2016-ին,իսկ հանձնում-ընդունումը՝ 30.10.2016-ի՝ 11օր ու 2,երբ պայմանագրի խախտման մասին ծանուցման ժամկետը 5օր (պայմ.2.4.3)* Հա2վապահական ձևակերպում՝ գույքընդունելըստ պայմանագրի և հարկայինհա2վի գույքըպետքէստանարգնորդը
ԸՆԴԱՄԵՆԸ		17,741.8		
44	Սուրեն Մարգարյան Ա/Ձ	15,688.2	Սիրիական հակամարտությունից տուժած բնակիչներին մարդասիրական օգնություն (պահածոներ)	*Հա2վապահական ձևակերպում՝ գույքընդունելըստ պայմանագրի և հարկայինհա2վի գույքըպետքէստանարգնորդը
ԸՆԴԱՄԵՆԸ		15,688.2		

45		1,894.5	ՀՀ ԿԳՆՀՊՃՀ Վանաձորի մասնաճյուղի ֆիզ-մաթ թեքումովավազդպրոց ՊՈԱԿ-ի համար համակարգչային սարքավորումներ	*Հանձնման ընդունման ակտում ամսաթիվչկա *Հաշվապահականձևակերպում՝ գույքընդունելըստ պայմանագրիևհարկայինհաշվի գույքըպետքէստանարգնորդը
46	Վահագն Մելիք-Մարտիրոսյան Ա/Ձ	8,329.5	ԼՂՀ Քարվաճառի Վ. Սարոյանի անցան դպրոցի,Վերին Շեն,Նոր Բրաջուր, Նոր Գետաշեն, Եղեգնուտ գյուղերի դպրոցների համար համակարգչային սարքավորումներ	*Հաշիվ-ֆակտուրայի ամսաթիվը 29.05.2015՝ Հանձնման-ընդունման ամսաթիվը 17.05.2015 *Հավելվածի,հաշվի-ֆակտուրայի և նվիրաբերության հավելվածի գույքի անվանումներըչեն համապատասխանում * 03.07.2017-ին վճարվածէ ամբողջ գումարը,30տոկոսկանխավճար արվածչէ,2,499հազ.դրամ կանխավճարիուշացում 48օր *Մնացած 5,830.5հազ.դրամիվճարման ուշացում 33օր *Հաշվապահականձևակերպում՝ գույքընդունելըստ պայմանագրիևհարկայինհաշվի գույքըպետքէստանարգնորդը
47		1,076.5	Արագածոտնի մարզի Մելի գյուղի դպրոցի համար համակարգչային սարքավորումներ	*Հավելվածի հարկայինհաշվի գույքի անվանումներըչեն համապատասխանում *Հաշվապահականձևակերպում՝ գույքընդունելըստ պայմանագրիևհարկայինհաշվի գույքըպետքէստանարգնորդը
48		390.0	Տավուշի մարզի խաչարձանգյուղի ուսանողների	*Հաշվապահականձևակերպում՝ գույքընդունելըստ պայմանագրիևհարկայինհաշվի գույքըպետքէստանարգնորդը

			համարդյուրակիր համակարգիչներ	
49		1,286.0	ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՋԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ համար համակարգչային սարքավորումներ	*Հաշվապահական ձևակերպում՝ գույքընդունելը ըստ պայմանագրի և հարկային հաշվի գույքը պետք էստանար գնորդը *Ժամկետից ուշ վճարում 22օր
50		76.0	համակարգչային սարքավորումներ	Կիրառելի չէ
ԸՆԴԱՄԵՆԸ		13,052.5		
51	Արֆարմացիա ԱՍՊԸ	12,845.2	ԼՂՀ բնակչության համար դեղորայք	Հանձնման-ընդունման ակտում ամսաթիվչկա՝ 2.2մլն ապրանքի հ/ֆ 31.05.2016՝ ժամկետից ուշ ացում
ԸՆԴԱՄԵՆԸ		12,845.2		
52	Մագաս ինվեստ ՓԲԸ	10,145	Գյումրու <<Երեխաների տուն >>ՊՈԱԿԻ համար ավտոմեքենայի գնում	Կիրառելի չէ
ԸՆԴԱՄԵՆԸ		10,145.0		
53	ԱՎԵ-Էլմոնտաժ ՍՊԸ	9,800.0	<<Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբ >> ՊՈԱԿ-ի համար սարքավորումներ	Կիրառելի չէ
ԸՆԴԱՄԵՆԸ		9,800.0		
54	Էլեկտրոն ԱԿ	10,000.0	Ե.Մոզյանի դպրոցի կաթսայատան ձևափոխման շինարարական աշխատանքներ	Կիրառելի չէ
ԸՆԴԱՄԵՆԸ		10,000.0		

55	Ֆրեզեն ՍՊԸ	9,420.0	ԼՂՀ համար հեմոդիալիզի սարքավորում	Կիրառելի չէ
ԸՆԴԱՄԵՆԸ		9,420.0		
ԸՆԴԱՄԵՆԸ		**613,199.2**		

Գ ո ւ յ ք ի կ ո ն ց ե ս ի ո ն կ առ ավ ար մ ան պայ մ ան ագ ր ո վ ի ան ձ ն վ ած գ ո ւ յ ք ի ց ան կ

	Անվանում	Չափման միավոր	Քանակը	Միեքը (դր.)	Գումարը (դր.)	Ամառնպատակ	Ձեռքբերման ամիս ամսաթիվ	Ծանոթություն
1	Սերվեր HP ProLiant DL380p Gen8 SFF 2U	հատ	1.00	2,765,000.00	2,765,000.00	,,'''' Եղել նա. ՄԸ	29.12.2014թ	
2	Սերվեր Super Micro MB X10SLL-F	հատ	1.00	975,000.00	975,000.00	,,'''' Եղել նա. ՄԸ	29.12.2014թ	
3	Կոշտսկավառակ 300GB 6G SAS 10.000 rpm 2.5in	հատ	1.00	128,000.00	128,000.00	,,'''' Եղել նա. ՄԸ	29.12.2014թ	
4	Canon MF4410 Բազմաֆունկցիոնալ սարք	հատ	4.00	99,000.00	396,000.00	,,'''' Եղել նա. ՄԸ	29.12.2014թ	
5	Կոշտսկավառակ 3TB 3.5 SATA	հատ	1.00	68,000.00	68,000.00	,,'''' Եղել նա. ՄԸ	29.12.2014թ	
6	UPS Mercury 850VA Անխափան սնուցման սարք	հատ	10.00	23,500.00	235,000.00	,,'''' Եղել նա. ՄԸ	29.12.2014թ	
7	UPS Mercury 1000VA Անխափան սնուցման սարք	հատ	3.00	34,000.00	102,000.00	,,'''' Եղել նա. ՄԸ	29.12.2014թ	
8	Համակարգիչ i3-3220, 4Gb, 500 GB, Asus	հատ	17.00	235,000.00	3,995,000.00	,,'''' Եղել նա. ՄԸ	29.12.2014թ	
9	Համակարգիչ i3-4130, 2*4Gb, 1Tb, Asus H81M-K	հատ	2.00	293,000.00	586,000.00	,,'''' Եղել նա. ՄԸ	29.12.2014թ	
10	Կոշտսկավառակ TB External	հատ	2.00	53,000.00	106,000.00	,,'''' Եղել նա. ՄԸ	29.12.2014թ	

11	Lenovo B50 70GI34030U4G500RZK, Intel i3, 4GB, 500G Դ ու րագրգիռ համակարգիչ	հատ	3.00	245,000.00	735,000.00	,,՝՝՝՝ Եղել նա. ՄԸ	29.12.2014թ	
12	Microtik 2011UAS Երթու ղիչ	հատ	2.00	72,000.00	144,000.00	,,՝՝՝՝ Եղել նա. ՄԸ	29.12.2014թ	
13	Ցանցայ ին սվիչ	հատ	1.00	30,000.00	30,000.00	,,՝՝՝՝ Եղել նա. ՄԸ	29.12.2014թ	
14	Asus zenbook UX303LN-R4116H, I7 4510U, 8GB, 500GB Դ ու րագրգիռ համակարգիչ	հատ	1.00	670,000.00	670,000.00	,,՝՝՝՝ Եղել նա. ՄԸ	29.12.2014թ	
15	Գրասփոփան	հատ	1.00	70,000.00	70,000.00	Հրաչ յ ա Կանոյ ան Կ/Հ	16.03.2015թ	
16	Շիրկիզվող սփոփան	հատ	1.00	194,450.00	194,450.00	Նարե Տիգրանի Ասիանյ ան	21.03.2015թ	
17	Հեռախոս PANASONIC KX-TG1311BX1	հատ	1.00	41,600.00	41,600.00	,,Ախայ՝ .. ՄԸ	20.01.2015թ	
18	Կափիչ	հատ	2.00	18,000.00	36,000.00	Կարեն Ասիանյ ան Կ/ձ	24.03.2015թ	
19	Կեռոռ	հատ	2.00	80,000.00	160,000.00	Կարեն Ասիանյ ան Կ/ձ	04.02.2015թ	
20	ASUS 17,3"/Core i5-4210U(1,7GHz up Համակարգիչ	հատ	1.00	435,000.00	435,000.00	Ա իցքոմի, ՄԸ	04.02.2015	
21	ACER 15,6"/Core i5-4200U(1,7GHz up Համակարգիչ	հատ	1.00	343,000.00	343,000.00	Ա իցքոմի, ՄԸ	04.02.2016	

22	Պատճենահանման սպրք Canon IR 2202, A3	հատ	1.00	498,000.00	498,000.00	Ձի իցքոմսի, ՄԸ	04.02.2015	
23	Տպիչ HP Laserlet Pro 3015DN	հատ	1.00	445,000.00	445,000.00	Ձի իցքոմսի, ՄԸ	04.02.2015	
24	Ռեսուեր. Microtic, Router-Firewall (RB750GL)	հատ	1.00	43,000.00	43,000.00	Ձի իցքոմսի, ՄԸ	23.02.2015	
25	Ամիսչ. TP-Link(Tel-SG1016)	հատ	1.00	48,000.00	48,000.00	Ձի իցքոմսի, ՄԸ	23.02.2016	
26	UPS Mercury 650 PRO	հատ	3.00	20,000.00	60,000.00	Ձի իցքոմսի, ՄԸ	23.02.2017	
27	Գրասեղան	հատ	7.00	60,000.00	420,000.00	Հրաչյա Կակոյանց ԱՁ	13.02.2015	
28	Գրասենյակային աթոռ	հատ	7.00	11,000.00	77,000.00	Հրաչյա Կակոյանց ԱՁ	13.02.2016	
29	Intel Core i5(4460)/8GB RAM DDR3 1600MHz/Seagate Barracuda HDD 500GB/HDD 2TB/ASUS H97 PLUS/DVD_RW/Keyboard Multimedia/KB 110E/Mouse Genius NS120 USB/Speaker HF500A/Case USB 3,0 550W Համակարգիչ	հատ	1.00	445,000.00	445,000.00	Ձի իցքոմսի ՄԸ	23.02.2015թ	
30	MONITOR SAMSUNG S22D300NY	հատ	3.00	78,000.00	234,000.00	Ձի իցքոմսի ՄԸ	23.02.2015թ	

31	Intel Server System R1304RPOSHBN/Intel Xeon Processor E3-1230 v3(8MB Cavhe, 3.30GHz)DDR3 ECC DIMM PC12800 8GB/Seagate 1TB SATA 6GB*4?SATA DVD Write Optical Drive/KEYBOARD KB110E/Mouse Genius NS120 Համակարգիչ	հատ	1.00	1,283,000.00	1,283,000.00	Ձ հցքումի ՄԸ	23.02.2015թ	
32	SEAGATE HDD 1TB USB 3.0	հատ	4.00	49,000.00	196,000.00	Ձ հցքումի ՄԸ	23.02.2015թ	
33	SEAGATE 1TB USB3.0 1 տերաբայտանոց վինչեստր	հատ	6.00	49,000.00	294,000.00	Ձ հցքումի ՄԸ	23.03.2015թ	
34	SEAGATE 1TB USB3.0 1 տերաբայտանոց վինչեստր	հատ	14.00	49,000.00	686,000.00	Ձ հցքումի ՄԸ	27.05.2015թ	
35	Կոշտսկավառակ պրոտքին 5TB seagate	հատ	2.00	162,000.00	324,000.00	,,Վագրիկ.. ՄԸ	14.07.2015թ	
36	Կոշտսկավառակ պրոտքին 4TB	հատ	1.00	135,000.00	135,000.00	,,Վագրիկ.. ՄԸ	14.07.2015թ	
38	Հայկականծրագրեր	հատ	1.00	198,000.00	198,000.00			
39	Intel Core i5 (4440)/ 4GB RAM DDR3 1600MHz Համակարգիչ	հատ	5.00	312,800.00	1,564,000.00	,,Ձ հցքումֆ. ՄԸ	04.02.2015թ	

41	Կառոչ steel frame with silver powder coating	հատ	4.00	11,779.00	47,116.00			
43	Գրատախտակ	հատ	1.00	25,000.00	25,000.00			
	ԸՆԴԱՄԵՆԸ		**122.00**		**19,237,166**			
	կառավարման հանձնված ապրանքներ որոնք չ են պժեվորվել							
38	Սեղան	հատ	485			5 հատվնասված		
39	Կառոչ	հատ	2185		8,010,816	BAZHOU ELITE IMPORT AND EXSPORTTRADING GO>> LTD		
40	Պեվեհատփոքր լ իստ	հատ	243					կառավարման հանձնված ապրանքներ որոնք չ են պժեվորվել
41	Պեվեհատմիջին լ իստ	հատ	50					կառավարման հանձնված ապրանքներ որոնք չ են պժեվորվել
42	Պեվեհատմեծ լ իստ	հատ	329					կառավարման հանձնված ապրանքներ որոնք չ են պժեվորվել
43	ԿոնստրուկցիաP-ածևռոլ իկներով	հատ						կառավարման հանձնված ապրանքներ որոնք չ են պժեվորվել
44	Հողովակե այ ուներ	հատ	4					կառավարման հանձնված ապրանքներ որոնք չ են պժեվորվել

45	Ներդրվածք ապրանքներ	Միավոր	27					Կառավարման հաշվետվություններ որոնք չեն պահանջվել
46	Լուսային կլոր-լեդ	Հատ	226			4 հատվածված		Կառավարման հաշվետվություններ որոնք չեն պահանջվել
47	Լեդ լուսային երկար	Հատ	138		360,000	Էքսպրեդիա ՍՊԸ		
48	Ավտոմինե կոնստրուկցիա	Կտոր	141					Կառավարման հաշվետվություններ որոնք չեն պահանջվել
49	Ավտոմինե ասիճանաձև կոնստրուկցիա	Հատ	16					Կառավարման հաշվետվություններ որոնք չեն պահանջվել
50	Ամբիոն	Հատ	2	2,957,000	5,914,000	Էքսպրեդիա ՍՊԸ ՍՊԸ		
51	Աստղադիր MDF/պոդստավկա/-	Հատ	20					Կառավարման հաշվետվություններ որոնք չեն պահանջվել
52	Ափսեակ քառակուսի MDF	Հատ	20					Կառավարման հաշվետվություններ որոնք չեն պահանջվել
53	Ցուցանակ հատակի	Հատ	52			Էքսպրեդիա ՍՊԸ ՍՊԸ	13 հատ վնասված	Կառավարման հաշվետվություններ որոնք չեն պահանջվել

54	Աեղ դիֆտո	հատ	40					կառավարման հանձնված ապրանքներ որոնք չեն արժեվորվել
55	Ռ ղեփակոց լ ենսերով	հատ	30					կառավարման հանձնված ապրանքներ որոնք չեն արժեվորվել
56	Աեղանների ամրակներ	հատ	900					կառավարման հանձնված ապրանքներ որոնք չեն արժեվորվել
57	Աեյ մ թաղ	հատ	617					կառավարման հանձնված ապրանքներ որոնք չեն արժեվորվել
58	Փգել ափակոց երկարեյ ա	հատ	265	24,000	6,360,000	Վարդգես Ճուղուրյան		
59	Գրասկտարան	հատ	50	89,640	4,482,000	Էքսարմեդիա ՍՊԸ		
60	Ապակե անմոռուկ	հատ	1	410,000	410,000	Ֆիլիշին		
61	Բիո զուգարան	հատ	75	91,301	8,737,838	,,Կոմարանս.. ՕՕՕ		
62	Հաստոց լազերայինն	հատ	1					կառավարման հանձնված ապրանքներ որոնք չեն արժեվորվել
63	Հաստոց /փրեզ/ վարագրող	հատ	1					կառավարման հանձնված ապրանքներ որոնք չեն արժեվորվել

64	Հեռու ստադիայի ապամոնտաժում	հատ	1	23,888,100	23,888,100	Ֆիլ իշին ՍՊԸ		
	ԸՆԴԱՄԵՆԸ				**58,162,754**	-	-	
	ԸՆԴԱՄԵՆԸ				**77,399,920**			

ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ 2015-2017 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԿԱՀՈՒՅՔԻ ԵՎ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 04 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019 թ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ԹԻՎ 1 ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏՆՈՒՄ ԵՆՔ .

Հայաստան Համահայկական Հիմնադրամը իր կազմակերպա-իրավական տեսակով հանդիսանում է Հիմնադրամ՝ ոչ առևտրային կազմակերպություն և իր գործունեության ընթացքում առաջնորդվում է Հիմնադրամների մասին օրենքով եւ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթներով:

Հայաստան Համահայկական հիմնադրամը չի առաջնորդվում Գնումների մասին օրենքով, քանի որ իրականացվող ծրագրերի ֆինանսավորումը կատարվում է ոչ թե Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին, այլ բարերարների կողմից՝ սեփական միջոցներով:

Համաձայն Հաշվեքննիչ պալատի ներկայացրած Թիվ 1 ստուգման արձանագրության ՀԱՏՄ ՍՊԸ-ն 2015թ.-ին ունեցել է 33,869,000.00 ՀՀ դրամ շահույթ, 2016թ.-ին վնասը կազմել է 17,106,000.00 ՀՀ դրամ, իսկ 2017թ.-ի զուտ շահույթը կազմել է 19,126,000.00 ՀՀ դրամ: Համաձայն ՀԱՏՄ ՍՊԸ-ի կանոնադրության 5.5 կետի ընկերությունը պետք է տարեկան զուտ շահույթը բաշխեր կանոնադրական կապիտալում մասնակիցների ունեցած բաժնեմասերին համապատասխան, այն է՝ փոխանցելով Հայաստան Համահայկական Հիմնադրամի բանկային հաշվին, ինչը չի կատարվել:

Վերը նշված հանգամանքը պայմանավորված է նրանով, որ Հիմնադրամի և ՀԱՏՄ ՍՊԸ-ի ղեկավարությունը նպատակահարմար չեն գտել տարեկան զուտ շահույթի փոխանցումը կատարել Հիմնադրամի բանկային հաշվին, քանի որ Հայաստան Համահայկական Հիմնադրամի և ՀԱՏՄ ՍՊԸ –ի տարեկան հաշվեկշիռները համախմբվում/կոնսելիդացվում/ են և հանդես են գալիս ու հրապարկվում , որպես մեկ միասնական հաշվեկշիռ:

Թիվ 1 ստուգման արձանագրության մեջ նշված է նաև, որ 2015-2017թվականների ընթացքում Հայաստան Համայկական Հիմնադրամի և ՀԱՏՄ ՍՊԸ-ի միջև կնքվել են գույքի պատրաստման, գնման,տեղափոխման և տեղադրման թվով 50 պայմանագրեր՝ 948,527,100.00 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով, փաստացի կատարողականի գումարը կազմել է 895,698,600.00 ՀՀ դրամ, վճարումը Հիմնադրամի կողմից կազմել է 919,428,000.00 ՀՀ դրամ:

Հայտնում ենք, որ 2015-2017թթ.-ի ընթացքում Հիմնադրամի և ՀԱՏՄ ՍՊԸ-ի միջև կնքվել են գույքի պատրաստման, գնման, տեղափոխման և տեղադրման պայմանագրեր 948,527,100.00 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով, փաստացի կատարողականների հանրագումարը կազմել է 911,255,200.00 ՀՀ դրամ, իսկ վճարումը Հիմնադրամի կողմից կազմել է 919,183,500.00 ՀՀ դրամ: Փաստացի ներկայացրած կատարողականների հանրագումարի և Հիմնադրամի կողմից կատարված վճարումների հանրագումարների տարբերությունը կազմում է 7,928,400.00 ՀՀ դրամ, ինչն էլ գործող պայմանագրերով նախատեսված կանխավճար է :

Հաշվեքննիչ պալատի Թիվ 1 ստուգման արձանագրության մեջ նշված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հինգ և ավելի երեխա ունեցող քսանյոթ ընտանիքների համար գույքի պատրաստման, գնման, տեղափոխման եւ տեղադրման պայմանագրերով նախատեսված հյուրասենյակների դարակներով պահարանների փոխարեն ապակեպատ պահարանների տրամադրումը եղել է շահառուների խնդրանքով, Հիմնադրամի համաձայնությամբ: Կահույքի փոփոխմամբ չի փոխվել պայմանագրային արժեքը, քանի որ դարակներով պահարանների և ապակեպատ պահարանների գները համարժեք են և բացակայում է գնային տարբերությունը:

Հաշվեքննիչ պալատի Թիվ 1 ստուգման արձանագրության մեջ նշված ՀԱՏՄ ՍՊԸ-ի կողմից մատակարարված ապրանքների 380 տոկոս հավելավճարը (իրականում հավելյալ աճ) չի համապատասխանում իրականությանը:

Դիտարկմանը, որ Հիմնադրամը ապրանքները ձեռք է բերել միջնորդավորված գնումներով, այլ ոչ թե արտադրողներից կամ ներմուծողներից պայմանավորված է հետեւյալով.

ՀԱՏՄ ՍՊԸ-ի միակ սեփականատերը հանդիսանում է Հայաստան Համահայկական Հիմնադրամը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀԱՏՄ ՍՊԸ-ն գործում է աղետի գոտում՝ Շիրակի մարզում, շուկայականից բարձր գներով կնքված պայմանագրերը պայմանավորված են գործարանի պահպանման եւ շահագործման, աշխատատեղերի ստեղծման եւ պահպանման ինչպես նաև ծախսերի փոխհատուցման նպատակով: Տարիներ շարունակ ՀԱՏՄ ՍՊԸ-ի տարեկան ֆինանսական արդյունքները ամփոփվել են ոչ թե զուտ շահույթով, այլ վնասով: Հոգաբարձուների խորհրդի հաշվեքննիչ հանձնաժողովի նախագահի՝ Վ.Ջազմաղարյանի կողմից տրված զեկույցներում, նույնիսկ առաջարկվում էր օտարել գործարանը, քանի որ, այն աշխատում էր վնասով: Հիմնադրամի և ՀԱՏՄ ՍՊԸ-ի տարեկան հաշվեկշիռները կոնսոլիդացվում էր, և ՀԱՏՄ ՍՊԸ-ի տարեկան վնասը արտացոլվում էր համախմբված ֆինանսական հաշվետվություններում: Սակայն, ամերիկահայ բարերար Հ.Հովնանյանը, ով հիմնադրել եւ այնուհետեւ գործարանը նվիրաբերել է Հիմնադրամին եւ ներկայումս հանդիսանում է Հիմնդարամի հոգաբարձուների խորհրդի անդամ դեմ է եղել գործարանի օտարմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը, Հոգաբարձուների խորհուրդը դեմ է եղել գործարանի օտարմանը:

Այսպիսով, շուկայականից բարձր գներով ապրանքների ձեռքբերումները արտացոլված են ՀԱՏՄ ՍՊԸ-ի հաշվապահական հաշվեկշռում եւ գրանցամատյաններում, ինչպես նաեւ ՊԵԿ e-inviosing էլեկտրոնային կայքում դուրս գրված հաշվարկային եւ հարկային փաստաթղթերում՝ արդյունքում ապահովելով համապատասխան շրջանառություն: Շահութահարկի հաշվետվություններ են ներկայացվել ՊԵԿ՝ վճարելով հարկվող շրջանառությունից գոյացած շահութահարկ: Իսկ զուտ շահույթը, Հիմնադրամի ղեկավարության համաձայնությամբ, ուղղվել է գործարանի վերազինմանը, նոր հաստոցների, տեխնիկայի եւ փոխադրամիջոցների ձեռքբերմանը, շահագործմանը եւ պահպանմանը:

Դիտարկմանը, որ կահույքի գները տատանվում են 40,0-105,0 հազար դրամի միջև, պայմանավորված է 1 ք.մ արժեքի մեջ ներառված հնարավոր սարքավորումների, տարատեսակ մեխանիզմների եւ այլ աքսեսուարների արժեքներ:

Հայաստան Համահայկական հիմնադրամը չունի կնքված պայմանագրեր Արամ Գեւորգյան ՍՊԸ-ի հետ, ինչպես նշված է Հաշվեքննիչ պալատի կողմից տրված վերոնշյալ արձանագրության մեջ :

2015-2017 թթ ընթացքում Հիմնադրամը պայմանագրեր է կնքել Արման Գեւորգյան ՍՊԸ-ի հետ, հիմք ընդունելով Հայաստան Համահայկական հիմնադրամի Գործադիր վարչության տնօրենի 2008 թ.-ի 30 դեկտեմբերի թիվ 174 հրամանի 3.2 կետը, այն է՝ <<Բարերարի պահանջով կապալի պայմանագիր կնքել բարերարի կողմից առաջարկված շինարարական կազմակերպության հետ և գնումը կատարել բարերարի կողմից առաջարկված կազմակերպությունից>> (Հրամանը կցվում է):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հիմնադրամը չի առաջնորդվում ՀՀ Գնումների մասին օրենքով, ուստի 2015-2017 թ.թ. Արման Գեւորգյան ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրերը կնքվել են առանց գնման հայտի, իսկ գնման առարկայի տեխնիկական բնութագրեր հանդիսացել են պայմանագրերի ծավալաթերթները, որտեղ հստակ նկարագրված են գնման ապրանքների քանակը, տեսակը եւ միավոր արժեքները:

Հաշվեքննիչ պալատի կողմից նշված 2015 թ. օգոստոսի 26-ին կնքված ՀՀ-4-17/15 պայմանագիրը, համաձայն որի պայմանագիրը ավելացել է 334,000.00 ՀՀ դրամով, սակայն չի նշվել ավելացած գույքի կազմը և չի հիմնավորվել դրա ավելացումը և կատարումը, հայտնում ենք, որ պայմանագրի ավելացած 334,0000.00 ՀՀ դրամի հիմնավորումը նշված է Արման Գեւորգյան ՍՊԸ-ի կողմից դուրս գրված հաշիվ ապրանքագրում, որտեղ հստակ նշված է ավելացրած գումարի դիմաց մատակարարվող գույքը՝ համապատասխան քանակությամբ: Եթե հաշիվ-ապրանքագրում ներառված լրացուցիչ գույքի վերաբերյալ Հիմնադրամը ուներ առարկություններ, որի հանրագումարը կազմել է 334,000.00 ՀՀ դրամ, Հիմնադրամի կողմից չէր հաստատվի e-invoising էլեկտրոնային համակարգում: Հաշիվ-ապրանքագրում նշված լրացուցիչ գույքը հանձնվել է շահառուին հանձնման-ընդունման ակտով:

Հայաստան Համահայկական Հիմնադրամի և Բելինդա ՍՊԸ-ի միջև կնքված թվով 3 պայմանագրերի վերաբերյալ հայտնում ենք, որ Հաշվեքննիչ պալատի կողմից նշված թվով 3 պայմանագրերի հանրագումարը կազմում է 27,900,000.00 ՀՀ դրամ, փաստացի կատարողականը կազմում է 27,900,000.00 ՀՀ դրամ չի համապատասխանում իրականությանը: Հիմնադրամի կողմից Հաշվքեննիչ պալատի աշխատանքային խմբին տրամադրված փաստաթղթերում հստակ երևում է , որ մատակարար կազմակերպության կողմից ներկայացվել է 27,400,000.00 ՀՀ դրամ գումարի կատարողական, ինչն էլ ամբողջությամբ վճարվել է հիմնադրամի կողմից:

Հայաստան համահայկական հիմնադրամի և Էկա ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրերի վերաբերյալ հայտնում ենք, որ Հիմնադրամը առաջնորդվել է Հայաստան Համահայկական հիմնադրամի Գործադիր վարչության տնօրենի 2008թ.-ի 30 դեկտեմբերի թիվ 174 հրամանի 3.2 կետով (Հրամանը կցվում է):

Հայկակ Արշամյան

Գործադիր տնօրեն

Քրիստինե Մկրտչյան

Ֆինանսական բաժնի պետ, գլխավոր հաշվապահ

09.09.2019թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԻՄՆԱԴՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՈՒՄ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ 2015-2017 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՈՐՈՇ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ , ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ Թիվ 4 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏՆՈՒՄ ԵՆՔ .

Հայաստան Համահայկական Հիմնադրամը իր կազմակերպա-իրավական տեսակով հանդիսանում է Հիմնադրամ՝ ոչ առևտրային կազմակերպություն և իր գործունեության ընթացքում առաջնորդվում է Հիմնադրամների մասին օրենքով և ՀՀ քաղաքացիական Օրենքի համապատասխան դրույթներով:

Հայաստան Համահայկական Հիմնադրամը չի առաջնորդվում Գնումների մասին օրենքով, քանի որ իրականացվող ծրագրերի ֆինանսավորումը կատարվում է ոչ թե Հայաստանի Հանրապետության պետական բյուջի միջոցների հաշվին, այլ ծրագրերի ֆինանսավորումը իրականացվում է Հիմնադրամի բարերարների կողմից՝ սեփական միջոցներով:

Հայաստան Համահայկական Հիմնադրամը 2015-2017թթ.ընթացքում պայմանագրեր է կնքել Մեդիտեք ՍՊԸ-ի հետ 150,922,000.00 ՀՀ դրամ ընհանուր արժեքով:

Հիմք ընդունելով Հայաստան Համահայկական հիմնադրամի Գործադիր վարչության տնօրենի 2008թ.-ի 30 դեկտեմբերի թիվ 174 հրամանի 3.2 կետը՝

<<Բարերարի պահանջով կապալի պայմանագիր կնքել բարերարի կողմից առաջարկված շինարարական կազմակերպության հետ եւ գնումը կատարել բարերարի կողմից առաջարկված կազմակերպությունից>>(Հրամանը կցվում է):

2015-2017թթ-ի ընթացքում Մեդիտեք ՍՊԸ-ի հետ կնքվել են 150,922,000.00 ՀՀ դրամի ընդհանուր արժեքով պայմանագրեր: Հիմնադրամի կողմից 2015-2017 թթ. ընթացքում, համաձայն կնքված պայմանագրերի Մեդիտեք ՍՊԸ-ին վճարվել է 146,421,000.00 ՀՀ դրամ, տարբերությունը, որը կազմել է 4,502 ,000.00 ՀՀ դրամ, վճարվել է 2018թ.-ի հունվար ամսին:

2015-2017թթ.-ի ընթացքում Հիմնադրամը պայմանագրեր է կնքել Միկրոալֆա ՍՊԸ-ի հետ 41,180,000.00 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով: Նշված ժամանակահատվածում Հիմնադրամի կողմից կատարվել է 52,255,000.00 ՀՀ դրամի վճարումներ, տարբերությունը, որը կազմում է 11,075,000.00 ՀՀ դրամ՝ 2014 թվականին կնքված պայամանագրային պարտավորությունն էր, որը վճարվել է 2015 թվականի ընթացքում:

2015 թվականին հիմնադրամը պայմանգիր է կնքել Էլեկտրոն ԱԿ-ի հետ 10,000,000.00 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով: Նշված պայմանագրի շրջանակներում կատարվել է 9,500,000.00 ՀՀ դրամի վճարում, տարբերությունը կազմում է 500,000.00 ՀՀ դրամ: Նշված տարբերությունը վճարվել է կազմակերպությանը 2018 թվականի ընթացքում: Հարկ ենք համարում տեղեկացնել,

որ համաձայն կնքված ԼՂ/ՄԴ-01/15 պայմանագրի հիմնադրամի կողմից կատարվել է 5% պահում, որպես հետավարտական երաշխիքային գումար, ինչպես նաև վերը նշված գումարը, համաձայն պայմանագրի կապալառու կազմակերպությանը ենթակա է վճարման հաստատված ավարտական ակտից հետո՝ շահագործող կազմակերպության կողմից ներկայացված գրության հիման վրա, ինչը և կատարվել է հիմնադրամի կողմից 2018 թվականին:

Անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումներ .

Հայաստան Համահայկական Հիմնադրամը իր կազմակերպա-իրավական տեսակով հանդիսանում է Հիմնադրամ՝ ոչ առևտրային կազմակերպություն և իր գործունեության ընթացքում առաջնորդվում է Հիմնադրամների մասին օրենքով և ՀՀ քաղաքացիական օրենքի համապատասխան դրույթներով:

Հայաստան Համահայկական հիմնադրամը չի առաջնորդվում Գնումների մասին օրենքով, քանի որ իրականացվող ծրագրերի ֆինանսավորումը կատարվում է ոչ թե Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին, այլ ծրագրերի ֆինանսավորումը իրականացվում է Հիմնադրամի բարերարների կողմից՝ սեփական միջոցներով:

Համաձայն Հաշվեքննիչ պալատի կողմից ներկայացված Թիվ 4 ստուգման արձանագրության, մատակարարի կողմից դուրս գրված հաշվարկային փաստաթղթերի, հանձնման-ընդունման ակտերի ապրանքները փաստացի մատակարարվել են Հիմնադրամին, վերջինս նվիրաբերության պայմանագրով և համապատասխան հանձնման–ընդունման ակտով ապրանքները հանձնել է երրորդ կողմին, սակայն հաշվապահական գրանցումներում ապրանքների մուտք և ելք չի ձևակերպվել:

Հիմնադրամի արձագանք.

Հիմնադրամի կողմից իրականացվող բոլոր ծրագրերը արտացոլված են Հիմնադրամի հաշվեկշռում(գրանցամատյաններում): Հիմնադրամի գործադիր վարչության բյուջեով նախատեսված ապրանքների, հիմնական միջոցների ձեռք բերման հաշվապահական հաշվառումը կատարվում է հիմնադրամի հաշվապահական ծրագրի Պահեստի համակարգի անալիտիկ հաշվառմամբ, սակայն հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրերի շրջանակներում գործնականորեն անհնար է Պահեստ համակարգի անալիտիկ հաշվառումը, քանի որ այն ապրանքները, որոնք հիմնադրամի կողմից ուղարկվում են շահառուներին հիմնադրամ փաստացի մուտք չեն լինում՝ համապատասխան պահեստային և պահպանության պայմանների բացակայության հիմքով եվ յուրաքանչյուր ապրանքատեսակի համար պահեստային անալիտիկ հաշվառումը գործնականորեն անհնար է: Այն ապրանքները, որոնք ձեռք են բերվել ՀՀ տարածքում, Հիմնադրամի գրանցամատյաններում ձևակերպվել են որպես համապատասխան ծախս, ավելացնելով պարտավորությունը մատակարարի նկատմամբ(կրկնակի գրանցում), այն ապրանքատեսակները որոնք ներմուծվել են արտերկրներից որպես նյութական նվիրատվություն հիմնադրամին, ձևակերպվել են

թղթակցելով պահեստի սինթետիկ հաշվի հետ, ավելացնելով բարերարի կողմից հիմնադրամին նվիրաբերած նյութական նվիրատվության համարժեք դրամը(կրկնակի գրանցում) :

Վերսուս ստուդիա ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրերի համաձայն կատարված աշխատանքները՝ տեսաֆիլմերը էլեկտրոնային կրիչներով հանձնվել են հիմնադրամի Հասարակայնության հետ կապերի բաժնի պատասխանատուներին, որից հետո աշխատանքների հանձնման-ընդունման ակտերը հաստատվել են հիմնադրամի կողմից: Նշված տեսաֆիլմերը տեղադրված են www.youtube.com կայքում: 2015-2016 թվականների ընթացքում Վերսուս Ստուդիա ՍՊԸ-ի կողմից ներկայացված բոլոր կատարողական ակտերը հաստատվել են հիմնդրամի գործադիր տնօրենի կողմից և գտնվում են Հիմնադրամում:

Ապրանքատեսակների մատակարարման ուշացման դեպքում չի եղել նախադեպ, համաձայն որի հիմնադրամը ամբողջությամբ վճարի պայմանագրերով նախատեսված գումարները: Պայամանագրերով նախատեսված ժամկետների ուշացման պարագայում, մատակարար կազմակերպությանը ապրանքատեսակների մատակարարման դիմաց վճարումը կատարվել է միայն ողջ ապրանքատեսակները Հիմնադրամին կամ շահառուին հանձնելուց հետո:

Պայմանագրերով նախատեսված վճարման ժամկետների շեղումը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով՝

Ինչպես գիտեք, հիմնադրամը բարեգործական կազմակերպություն է և իր ծրագրերը իրագործելու համար համագործակցում է աշխարհասփյուռ հայության հետ: Հիմնադրամի ֆինանսասական միջոցները գոյանում են բարերարների կողմից նվիրաբերած գումարների հաշվին: Հիմնադրամի բանկային հաշիվներին մուտքագրված ցանկացած գումար ունի օգտագործման նպատակային ուղղություն՝ այն է բարերարների կողմից հաստատված ծրագրերը: Որոշ դեպքերում բարերաների կողմից նվիրաբերվող գումարների ուշ փոխանցմամբ է պայմանավորված պայմանագրերով նախատեսված վճարման ժամկետներից շեղումները: Ինչ վերաբերում է պայմանագրերով նախատեսված կանխավճարների վճարմանը, հիմնադրամը իր գրեթե բոլոր պայմանագրերում հստակ նշել է կանխավճարի փոխանցման պայմանները, այն է՝ պայմանագրով նախատեսված կանխավճարը հիմնադրամը վճարում է մատակարարին կամ ծառայություն մատուցող կազմակերպություններին վերջիններիս կողմից ներկայացվող, պատվիրատուի կողմից/Հիմնադրամ/ ընդունելի կանխավճարի բանկային երաշխիքի հիման վրա: Կանխավճարի բանկային երաշխիքի առկայությունը ապահովում է հիմնդրամին խուսափել ֆինանսական ռիսկերից, որոնք կարող էին ի հայտ գալ պայմանագրային պարտավորությունների ոչ պատշաճ կատարման ժամանակ: Որոշ դեպքերում մատակարար կամ ծառայություններ մատուցող կազմակերպությունների կողմից վերը նշված բանկային երաշխիքներ չեն ներկայացվել հիմնադրամ, որի արդյունքում էլ չեն վճարվել կանխավճարներ: Առանց բանկային երաշխիքների գործընկերներին հիմնադրամի կողմից չեն վճարվել կանխավճարներ:

Հայաստան Համահայկական Հիմնադրամի և Կոնցեռն-Էներգոմաշ ՓԲԸ-ի միջև 03.05.2017թ.-ին կնքվել է թիվ ԱՎԳԼ-02/17 պայմանագիր 23,882,000.00 ՀՀ դրամ արժեքով, համաձայն որի

մատակարարը պետք է մատակարարի ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի գենետիկայի և բջջաբանության ամբիոնի համար համապատասխան մասնագիտական սարքավորումներ: Նշենք, որ վճարման հետ կապված բոլոր գործողությունները կատարվել են համաձայն կնքված պայմանագրի եւ վճարման համար հիմք հանդիսացող փաստաթղթերի:

Նշված պայմանագրի ժամկետը երկարացվել է մինչև 29.12.2017թ.-ը: Պայմանագրային ժամկետի ընթացքում մատակարարին կանխավճար չի փոխանցվել: 15.06.2017թ.-ին մատակարար կազմակերպության կողմից ՊԵԿ-ի e-invoicing էլեկտրոնային համակարգում դուրս է գրվել թիվ Ա096294754 հարկային հաշիվը 23,820,000.00 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով համապատասխան ապրանքատեսակներով, որն էլ տրամադրվել է շահառուին , այնուհետև 19.12.2017թ.-ին նույն էլեկտրոնային համակարգում դուրս է գրվել թիվ Ա4566745306 հարկային հաշիվը 62,000.00 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով համապատասխան ապրանքատեսակներով և կրկին հանձնման-ընդունման ակտով տրամադրվել է շահառուին, որից հետո կազմվել է հանձնման-ընդունման ակտ 23,882,000.00 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով:

Հարկ ենք համարում տեղեկացնել, որ Կոնցեռն-Էներգոմաշ ՓԲԸ-ի ընտրությունը կատարվել է ԵՊՀ կենսաբանական ֆակուլտետի գենետիկայի և բջջաբանության ամբիոնի վարիչի և նշված ծրագրի բարերարի կողմից: Սարքավորումները սպասարկող անձնակազմի ուսուցման վերաբերյալ տեղեկությունները կարող են հաստատել վերը նշված պատասխանատու անձիք:

Հ.Գ. Հիմնադրամի և իր գործընկերների միջև կնքված պայմնագրերի հավելվածների և գործընկեր կազմակերպությունների կողմից դուրս գրված հաշվարկային և հարկային փաստաթղթերում նշված ապրանքների անվանումների անհամապատասխանությունները պայմանավորված են նրանով, որ որոշ դեպքերում պայմանագրերի հավելվածներում գույքի նկարագրերը գրվել են անգլերեն տեքստերով, իսկ դուրս գրված հաշվարկային և հարկային փաստաթղթերում նույն ապրանքների անվանումները նշվել են հայերեն լեզվով ավելացնելով նաև կոնկրետ մոդելների անվանումները անգլերեն տարբերակներով:

Հայկակ Արշամյան

Գործադիր տնօրեն

Քրիստինե Մկրտչյան

Ֆինանսական բաժնի պետ, գլխավոր հաշվապահ

09.09.2019թ.

09 սեպտեմբերի, 2019

ՀՀ հաշվեքննիչ պալատի նախագահ

Պարոն Լ. Յոլյանին

Հարգելի պարոն Յոլյան,

Ձեզ ենք տրամադրում ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից տրված Թիվ 1 և Թիվ 4 ստուգման արձանագրությունների վերաբերյալ Հայաստան Համահայկական Հիմնադրամի առարկություններն ու դիտարկումները:

Առդիր՝ 10 թերթ:

Հարգանքով՝

Հայկակ Արշամյան

Գործադիր տնօրեն

ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝
06 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ ՀՀՀ 2/1-389 գրության

Սույն փաստաթղթում ստորև նշված տերմինները օգտագործվում են հետևյալ կերպ.

- «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ, ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ- այսուհետ նաև՝ Տնօրինություն կամ Հիմնադրամ
- ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆԻՉ ՊԱԼԱՏ- այսուհետ նաև՝ Պալատ:

Պալատը նշել է, որ գնումներ կատարելուց շուկան չի ուսումնասիրվել, գնման ենթակա ապրանքների գները չեն ճշտվել, ապրանքները ձեռք են բերվել շուկայական գներից էականորեն բարձր գներով, չեն պահպանվել գնումների գործընթացին վերաբերող պահանջները, ապրանքները ձեռք են բերվել կամայական ձևով, սակայն չի կոնկրետացրել, թե որ գնումների կամ կոնկրետ որ ապրանքների մասին է խոսքը: Նշված պնդումները առարկայազուրկ են և չեն համապատասխանում իրականությանը, քանի որ Հիմնադրամը բազմաթիվ գնումներ իրականացրել է մրցույթի բաց մրցույթի միջոցով, մասնավորապես, ավիատոմսերի ձեռքբերումը, տրանսպորտային ծառայությունների մատուցումը, սննդի ապահովումը: Իսկ այլ գնումներ կատարելիս շուկան ուսումնասիրվել է, գները ճշտվել են Տնօրինության աշխատակիցների միջոցով:
Հարկ ենք համարում ընդգծել, որ իրավահարաբերության ծագման պահին գործող Գնումների մասին ՀՀ օրենքը նախատեսել է միայն պետական միջոցների ֆինանսավորմամբ ստացված գումարների շրջանակում կատարել մրցութային հիմունքներով գնումներ, իսկ քանի որ Հիմնադրամի ստացած միջոցները հանգանակության արդյունքում ստացված միջոցներ են, հետևաբար, Հիմնադրամը պարտավոր չէր կատարելու մրցութային հիմունքներով գնումներ այն գումարներով, որոնք պետական բյուջեից չեն տրամադրված այլ եղել են հանգանակության արդյունքում հավաքված գումարներ: Գնումների գործընթացի կարգավորումները պահպանված են:

1. Էքսպոմեդիա ՍՊԸ-ի մասով.

1. Պալատը նշել է, որ Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում 2015 թ. ապրիլի 22 և 23-ին Ընդդեմ ցեղասպանության հանցագործության Գլոբալ Ֆորումի կազմակերպման ծառայությունների մատուցման շրջանակներում Հիմնադրամը պայմանագիր է կնքել Էքսպոմեդիա ՍՊԸ-ի հետ, ծառայության ավարտից հետո կողմերի

միջև *պետք է կնքվեր հանձնման ընդունման ակտ, սակայն չի կնքվել, պետք է կնքվեր փոխադարձ ակտ, որը կրկին չի կնքվել:*

Հարկ ենք համարում ընդգծել, որ սա չի համապատասխանում իրականությանը, քանի որ 01.04.2015 թվականին Էքսպոմեդիա ՍՊԸ-ի հետ կնքվել է ծառայությունների մատուցման պայմանագիր, <u>որի հանձնման ընդունման ակտը կնքվել է 23.04.2015թ.: Պայմանագրի 1.5 կետի համաձայն՝ ծառայությունները մատուցված են համարվում պատվիրատուի կողմից հանձնման ընդունման ակտը ստորագրելու պահից</u> **<u>(պայմանագիրը և հանձնամ ընդունման ակտը՝ Հավելված 1):</u>**

Փոխադարձ ակտ կնքվում է, եթե առկա է լինում վերադարձման ենթակա որևէ գույք, իսկ փոխադարձ ակտը չի կնքվել, քանի որ պատվիրատուին վերադարձման ենթակա գույք և/կամ ապրանքանյութական արժեքներ չեն եղել: Սա ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր է, **այլ ոչ թե սեփականության իրավունքով գույք ձեռք բերելու պայմանագիր:** Պատվիրատուն վճարել է գումարը, ստացել է ծառայությունը և կատարողից ապրանքանյութական արժեքներ հետ պահանջելու պայման չկա: Պայմանագրի 1.5 կետի համաձայն՝ ծառայությունները մատուցված են համարվում պատվիրատուի կողմից հանձնման ընդունման ակտը ստորագրելու պահից: Իսկ հանձնման ընդունման ակտը կնքված և ստորագրված է:

Հանձնման ընդունման ակտը կնքելով՝ պայմանագրի կողմերը հավաստել են, որ պայմանգրով նախատեսված ծառայությունները մատուցվել են պատշաճ և այն ընդունվել է պատվիրատուի կողմից:

Առկա է պայմանագիրը, փաստաթղթավորված ֆինանսական հաշվարկը, հանձնման ընդունման ակտը, ծառայությունների ցանկը: Այս ամբողջը վկայում է, որ պայմանագիրը կնքված և ծառայությունները մատուցված են օրենքով սահմանված կարգով և պայմանագրի պայմաններին համապատասխան:

Ինչ վերաբերում է 1,000 մետր վարագույրների տեղադրմանը և գորգածածկին, ապա հայտնում ենք հետևյալը. Պալատը նշել է, որ Էքսպոմեդիան կատարել է նաև գորգածածկի փռման աշխատանքներ և վարագույրների տեղադրման, կարելու և ձևելու աշխատանքներ, որոնց ձեռքբերումը Հիմնադրամի կողմից չի հիմնավորվում: Հիմնադրամի հիմնավորումն այն է, որ ՀՀ նախագահի ինքնաթիռով 100-ամյակի հետ կապված բազմաթիվ ապրանքանյութական արժեքներ են ժամանել ՀՀ տարածք, այդ թվում և վերոնշյալ երկու ապրանքները՝ գորգածածկը և վարագույրների կտորները, որոնց ծագման աղբյուրների մասին Հիմնադրամը տեղեկատվություն չունի:

2. Գևորգ Արամ ՍՊԸ-ի մասով.

30.03.2015 թ. Գևորգ Արամ ՍՊԸ-ի հետ կնքվել է առուվաճառքի պայմանագիր, որի շրջանակներում ձեռք բերված գույքի վերաբերյալ կողմերի /Հիմնադրամ և Գևորգ Արամ ՍՊԸ/ միջև կնքված պայմանագրի համաձայն՝ Հիմնադրամը վաճառողին կատարել է 7 միլիոն ՀՀ դրամի չափով վճարում և ձեռք է բերել պայմանագրով որոշված ապրանքները՝ 2800 մետր քառակուսի լամինացված մանրահատակը, պայմանագրի գինը՝ 7,000,000 ՀՀ դրամ:

Պալատը նշել է, որ Գևորգ Արամ ՍՊԸ-ից ձեռքբերված ՄԴՖ-ը՝ լամինացված մանրահատակը, ենթակա էր վերադարձման Հիմնադրամին և հաշվառման՝ Հիմնադրամի պահեստում: Այս պնդումը անհիմն է և առարկայազուրկ, քանի որ, թեև մանրահատակը ձեռք էր բերվել սեփականության իրավունքով, սակայն խոսքը լամինացված մանրահատակի մասին է, որը մեկանգամյա տեղադրման և օգտագործման գույք է, օգտագործումից հետո ենթակա չէ վերականգնման կամ այլ կերպ օգտագործման, տեղադրվել է Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում և միջոցառումներից հետո հնարավոր չի եղել այն ապամոնտաժել, չի ապամոնտաժվել:

Հետևաբար, վերադարձման ենթակա որևէ գույք չի եղել: Գևորգ Արամ ՍՊԸ-ի և Հիմնադրամի միջև առկա է հաշիվ ապրանքագիրը, որը ստորագրելով և գումարը փոխանցելով՝ պատվիրատուն հաստատել է, որ պայմանագրով վաճառողի կողմից գնորդին հանձնվել է պայմանագրով նշված ապրանքը պատշաճ, պայմանագրի պայմաններին համապատասխան, ամբողջ ծավալով և պայմանագրով սահմանված կարգով, իսկ գնորդն էլ՝ ընդունելով ապրանքը, կատարել է վճարում, առկա է հաշիվ ապրանքագիր **(պայմանագիրը և հաշիվ ապրանքագիրը՝ Հավելված 2):**

3. Էքսպոմեդիա ՍՊԸ-ի մասով.

1. 15.03.2015 թվականին Հիմնադրամը պայմանագիր է կնքել Էքսպոմեդիա ՍՊԸ-ի հետ՝ Արարատի ստորոտին միջազգային մեդիա ֆորումի կազմակերպման ծառայությունների համար: Պայմանագրի գինը՝ 12,881,4 հազար ՀՀ դրամ: Կնքվել է հանձնման ընդունման ակտ: Հանձնման ընդունման ակտը կնքելով՝ պայմանագրի կողմերը հավաստել են, որ պայմանգրով նախատեսված ծառայությունները մատուցվել են պատշաճ և այն ընդունվել է պատվիրատուի կողմից:

2. Պալատը նշել է, որ կատարողի կողմից առանց պայմանագրում փոփոխություն կատարելու միակողմանի փոփոխվել է պայմանագրով նախատեսված 276.4 մետր քառակուսի պաստառի տպագրության քանակը և մոնտաժման արժեքը: Սա չի համապատասխանում իրականությանը, քանի որ չկա միակողմանի փոփոխության մասին փաստաթուղթ: Պալատի պնդումն անհիմն է, քանի որ հանձնամն ընդունման ակտում նշված է, որ ծառայությունը մատուցվել է պայմանագրին համապատասխան:

3. Պալատը նշել է, որ Հիմնադրամի կողմից ընդունվել և վճարվել է նաև պայմանագրին կից նախահաշվով չնախատեսված 35,72 մետր քառակուսի բեմի հենքի վարձակալման և

89,3 հազար ՀՀ դրամ արժեքով գործվածքի ու տեսախցիկների տեղադրման աշխատանքները: Սա չի համապատասխանում իրականությանը, քանի որ չկա միակողմանի փոփոխության մասին փաստաթուղթ: Պալատի պնդումն անհիմն է, քանի որ հանձնաման ընդունման ակտում նշված է, որ ծառայությունը մատուցվել է պայմանագրին համապատասխան:

4.Պալատը նշել է, որ կատարողի կողմից Պայմանագրով նախատեսված աշխատանքների ծավալները ամբողջությամբ չեն կատարվել, իսկ պատվիրատու-Հիմնադրամն էլ, դա հաշվի չառնելով, կատարողին կատարել է վճարում՝ ամբողջ ծավալով:

Հարկ ենք համարում ընդգծել, որ այս պնդումը չի համապատասխանում իրականությանը, քանի որ աշխատանքները, ինչպես նշվեց նախորդիվ, կատարվել են պայմանագրի պայմաններին համապատասխան և ըստ այդմ էլ պատվիրատուի կողմից կատարվել է վճարումը: Առկա է հանձնման ընդունման ակտը և հաշիվ ապրանքագիրը:

5.Պալատը նշել է, որ պայմանագրի կատարման արդյունքում ստեղծված ապրանքանյութական արժեքները՝ 1,581.1 հազար ՀՀ դրամ, չի վերադարձվել, չի մուտքագրվել պահեստ և չի հաշվառվել որպես նյութական արժեք: Այս պնդումը անհիմն է և առարկայազուրկ, քանի որ կատարողի կողմից մատուցվել են ծառայություններ՝ պատշաճ, պայմանագրի պայմաններին համապատասխան և պատվիրատուն ընդունել է ծառայությունը, կատարել վճարում, կնքվել է հանձնման ընդունման ակտ: ***Պատվիրատուն ձեռք չի բերել որևէ գույք սեփականության իրավունքով, պատվիրատուն ստացել է ծառայություն:*** Հետևաբար, վերադարձման ենթակա որևէ գումար կամ գույք չի եղել (պայմանագիրը, ապրանքների գնման հայտը, հանձնման ընդունման ակտը, հաշիվ ապրանքագիրը՝ **Հավելված 3**):

4. Նաիրա Սարգսյան ԱՁ-ի մասով.

2015 թ. հունվարի 27-ին Հիմնադրամը Նաիրա Սարգսյան ԱՁ-ից ձեռք է բերել 350 մետր քառակուսի հատակի փռվածք, արժեքը՝ 2400 ՀՀ դրամ 1 մետր քառակուսու համար, ընդհանուր արժեքը՝ 840,000 ՀՀ դրամ: 2015 թ. հունվարի 27-ին Կատարողը դուրս է գրել հաշիվ ապրանքագիր, իսկ պատվիրատուն էլ կատարել է վճարումը, ինչը, ինքնին, վկայում է ծառայության պատշաճ կատարման և պատվիրատուի կողմից դրա ընդունման մասին: Քանի որ հաշիվ ապրանքագիրը պարունակում է անհրաժեշտ ամբողջ տեղեկատվությունը, պայմանագրի առկայությունը պարտադիր չէ: Պատվիրատուի կողմից կատարված վճարումը, ինքնին, վկայում է ծառայության պատշաճ կատարման և պատվիրատուի կողմից դրա ընդունման մասին (հաշիվ ապրանքագիրը՝ **Հավելված 4**):

5. Արթուր Հարությունյան ԱՁ-ի մասով.

2015 թ. փետրվարի 04-ին Հիմնադրամը Արթուր Հարությունյան ԱՁ-ից ձեռք է բերել 350 մետր քառակուսի հատակի փռվածքի տեղադրման աշխատանքներ, 1 մետր քառակուսին՝ 1,000 ՀՀ դրամ: 2015 թ. փետրվարի 04-ին Կատարողը դուրս է գրել հաշիվ ապրանքագիր, իսկ պատվիրատուն էլ կատարել է վճարումը, ինչը, ինքնին, վկայում է ծառայության պատշաճ կատարման և պատվիրատուի կողմից դրա ընդունման մասին: Քանի որ հաշիվ ապրանքագիրը պարունակում է անհրաժեշտ ամբողջ տեղեկատվությունը, պայմանագրի առկայությունը պարտադիր չէ: Պատվիրատուի կողմից կատարված վճարումը, ինքնին, վկայում է ծառայության պատշաճ կատարման և պատվիրատուի կողմից դրա ընդունման մասին (հաշիվ ապրանքագիրը՝ **Հավելված 5)**:

6. Շուկայական գների ուսումնասիրության մասով.

1. Պալատը նշել է, որ շուկայական գների ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ այդ ժամանակահատվածում հատակի փռվածքի գինը եղել է 1300-ից 1500 ՀՀ դրամ, տեղադրման արժեքը՝ 500 ՀՀ դրամ, Հիմնադրամը ձեռք է բերել ծառայությունները շուրջ 728 հազար ՀՀ դրամ ավելի թանկ, սակայն, այս պնդումը առարկայազուրկ է և չի համապատասխանում իրականությանը: Հիմնադրամի կողմից կատարվել է շուկայական գների ուսումնասիրություն, իսկ վկայակոչված պնդումը, թե իբր շուկայական գինը եղել է 1300-ից 1500 ՀՀ դրամ, տեղադրման արժեքը՝ 500 ՀՀ դրամ, չունի որևէ հիմնավորվածություն, և բացակայում են վկայակոչված պնդումը ապացուցող ապացույցներ:

2. Հատակի փռվածքը՝ 840,000 ՀՀ դրամի մասով, պահեստ վերադարձնելու հնարավորությունը բացակայել է, քանի որ ամբողջ ձեռքբերվածը՝ օգտագործվել է, փռվել է հատակին և հետո հնարավոր չի եղել այն ապամոնտաժել:

7. Արթուր Հարությունյան ԱՁ-ի մասով.

1. Արթուր Հարությունյան ԱՁ-ի և Հիմնադրամի միջև 2015 թ. ապրիլի 13-ին կնքվել է ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր, պայմանագրի գինը՝ 9,100,000 ՀՀ դրամ: Մատուցված ծախսերի նկարագրությունը եղել է ներկայացված հաշիվ ապրանքագրում և արժեքի բաշխվածքում: Պալատը արձանագրել է խախտում առ այն, որ ԱՁ-ի և Հիմնադրամի միջև պետք է կնքվեր կատարողական ակտ և ծախսերի նկարագրություն, որը չի կնքվել: Հարկ է նշել, որ ծախսերի նկարագրությունը ներկայացված է պայմանագրում՝ հավելված 1, իսկ հանձնման ընդունման ակտ կնքվել է և առկա է **/Կից՝ Հավելված 6/**:

2. Շուկայական գների ուսումնասիրության մասով.

Պալատը նշել է, որ շուկայական գների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ 1 քառակուսի մետր փռվածքի համար գինը կազմել է 1300-ից 1500 ՀՀ դրամ՝ հարկերը ներառյալ, Հիմնադրամը ձեռք է բերել և տեղադրել՝ շուրջ 2,200 հազար ՀՀ դրամով ավելի

թանկ: Սա չի համապատասխանում իրականությանը այս պնդումը չունի որևէ հիմնավորված փաստարկ և ապացույց:
3. Պալատը նշել է, որ Հատակի փռվածքը՝ 2,650 մետր քառակուսի, շուրջ 4,849.6 հազար ՀՀ դրամ և պատրաստված կոնստրուկցիաները՝ 1,600 հազար ՀՀ դրամ, ընդհանուր՝ 6,449.6 հազար ՀՀ դրամ, միջոցառումից հետո չի վերադարձվել, չի մուտքագրվել պահեստ և չի հաշվառվել որպես նյութական արժեք: Հարկ է ընդգծել, որ պահեստ վերադարձնելու հնարավորությունը բացակայել է, քանի որ ամբողջ ձեռքբերվածը՝ օգտագործվել է, փռվել է հատակին և հետո չի ապամոնտաժվել: Մնացել է մոնտաժված (ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը, ծառայությունների և դրանց արժեքի բաշխվածքը, հաշիվ ապրանքագիրը, հանձնման ընդունման ակտ՝ **Հավելված 6**):

8. Վարդգես Ճուղուրյան ԱՁ-ի մասով.

1. 2015 թ. ապրիլի 1-ին Վարդգես Ճուղուրյան ԱՁ-ի և Հիմնադրամի միջև կնքվել է ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր:
Մատուցված ծախսերի նկարագրությունը եղել է ներկայացված հաշիվ ապրանքագրում և պայմանագրում՝ արժեքի բաշխվածքում՝ պայմանագրի հավելված 1-ում, իսկ հանձնման ընդունման ակտ կնքվել է և առկա է (ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը, ծառայությունների և դրանց արժեքի բաշխվածքը, հաշիվ ապրանքագիրը՝ **Հավելված 7**):
2. Հիմնադրամի կողմից ձեռքբերված 300 հատ արգելափակոցներից 35-ը գումարով՝ 840,000 ՀՀ դրամ և 5 հատ կոնստրուկցիաները, ընդհանուր՝ 25,840.000 ՀՀ դրամ միջոցառումից հետո չի վերադարձվել, չի մուտքագրվել պահեստ և չի հաշվառվել որպես նյութական արժեք: Հարկ ենք համարում նշել, որ 35 հատ արգելափակոցներ գողացվել են, հաղորդում չենք ներկայացրել: 5 հատ կոնստրուկցիաների մասով հայտնում ենք, որ առկա են կտրտված, մասնատված վիճակով, քանի որ չափսերով շատ մեծ են եղել և որպես մեկ ամբողջություն հնարավոր չէր պահպանել: Բերվել են պահեստ, մուտքագրվել, սակայն, չենք հաշվառել:

9. Սթեյջ Դիզայն ՍՊԸ-ի մասով.

1. Պալատը նշել է, որ կատարողը պատվիրատու Հիմնադրամին պետք է ներկայացներ կատարողական ակտ և հաշիվ ապրանքագիր, Պալատը նշել է, որ հաշիվ ապրանքագիրը ներկայացված է, իսկ կատարողական ակտը՝ ոչ: Հարկ է նշել, որ պատվիրատուի և կատարողի միջև կնքվել և ստորագրվել է հանձնման ընդունման ակտ, որը բովանդակությամբ նույն կատարողական ակտն է, որով կողմերը հավաստել են, որ պայմանագրային պարտավորությունները կատարված են պատշաճ և միմյանց

նկատմամբ չկատարված և չմարված պարտավորություններ չկան: Հետևաբար, ներկայացված պնդումը անհիմն է և առարկայազուրկ:

2. Պալատը նշել է, որ Հիմնադրամը Սթեյջ Դիզայն ՍՊԸ-ից խողովակները և մալուխները գնել է շուկայական գներից թանկ, մասնավորապես, հիմք է ընդունվում ՀՀ ՖՆ Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն ՊՈԱԿ-ի կողմից ՀՀ պետական կարիքների համար շինարարության նյութերի կողմնորոշիչ գների 2015 թ. փետրվարի տեղեկագրի տվյալները, ըստ որի՝ շուկայական արժեքը ըստ տեղեկագրի, 3 տեսակի մալուխների և հինգ տեսակի խողովակների համար կազմել է 1,550. Հազար ՀՀ դրամ, ձեռք է բերվել՝ 317,4 տոկոսով թանկ՝ 4,920 հազար ՀՀ դրամով:

Այս պնդումը չունի որևէ իրավական հիմնավորվածություն, քանի որ Հիմնադրամի կողմից ձեռքբերված մալուխները և խողովակները տարբեր գների են եղել, տարբեր տեխնիկական բնութագրերի, տարբեր բաղադրությունների և որակների, քան գնագոյացման կենտրոնի ներկայացրած ապրանքները: Բացի այդ, հարկ է ընդգծել, որ Գնագոյացման վերլուծական կենտրոնի կողմից ներկայացավծ կողմնորոշիչ գները վերաբերելի են եղել միայն և բացառապես ՀՀ պետական կարիքների համար ձեռքբերվող նյութերին: Հիմնադրամը նյութեր, ապրանքանյութական արժեքներ ձեռք չի բերել ՀՀ պետական կարիքների համար: Չկա որևէ իրավական ակտ, որը կստիպեր Հիմնադրամին կամ Տնօրինությանը առաջնորդվել բացառապես գնագոյացման կենտրոն ՊՈԱԿ-ի հրապարակած գներով: (Պայմանագիրը, հանձնման-ընդունման ակտը և հաշիվ ապրանքագիրը՝ **Հավելված 8):**

3. Նշված է, որ իրականացված միջոցառումներից հետո Հիմնադրամ չի վերադարձվել և պահեստ չի մուտքագրվել ու չի հաշվառվել **նախահաշվով նախատեսված նոթբուկը, տոմետները, մալուխներ և խողովակներ:**

Բացի այդ, հարկ է ընդգծել, որ այստեղ խոսքը վերաբերում է ծառայության մատուցմանը, այլ ոչ թե սեփականության իրավունքով ձեռք բերված ապրանքի մասին: Կատարողը Պատվիրատուին մատուցել է ծառայություն, կատարողի կողմից պատվիրատուին սեփականության իրավունքով գույքի հանձնում չի եղել: Հետևաբար, պատվիրատուին կատարողի կողմից գույք չի փոխանցվել, փոխանցման ենթակա չի եղել, նոթբուկը, տոմետները, մալուխներ և խողովակները սեփականության իրավունքով չեն պատկանել Հիմնադրամին, ծառայության ավարտին կատարողն իր հետ տարել է:

10. Ֆիլիշին ՍՊԸ-ի մասով.

Հիմնադրամի և Ֆիլիշին ՍՊԸ-ի միջև կնքվել է շինարարական աշխատանքների պայմանագիր՝ 11.03.2015 թ., պայմանագրի գինը՝ 24,580,480 ՀՀ դրամ: Պայմանագրին կից՝ առկա է նախահաշիվը, կատարողական ակտը, հանձնման ընդունման ակտը, հաշիվ ապրանքագիրը, նախագիծը **/Հավելված՝ 9.1/:**

Հիմնադրամի և Ֆիլիշին ՍՊԸ-ի միջև 13.04.2015 թ. կնքվել է ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր, պայմանագրի գինը՝ 3,819,980 ՀՀ դրամ: Պայմանագրին կից՝ առկա է նախահաշիվը, կատարողական ակտը, հաշիվ ապրանքագիրը **/Հավելված՝ 9.2/:**
Պալատի պնդումը, թե իբր նախահաշվային փաստաթղթեր չեն ներկայացվել, չի համապատասխանում իրականությանը, գները հիմնավորված են, նախահաշիվն էլ հաստատված է Հիմնադրամի կողմից:
Պալատը նշել է, որ հեռուստատաղավարի ապամոնտաժումից հետո չի վերադարձվել Հիմնադրամի պահեստ 1 հատ օդորակիչը, մետաղական խողովակներ, մետաղական տարրեր, մալուխներ, դռներ, պատուհաններ:
Նշված պնդումը առարկայազուրկ է և անհիմն, քանի որ վերոնշյալ օդորակիչը, մետաղական խողովակները, մետաղական տարրերը, դռները և պատուհանները, հեռաուսատատաղավարի հետ միասին հանձնվել են կոնցեսիոն կառավարման՝ կոնցեսիոն կառավարման պայմանագրի շրջանակներում՝ Լոմա Սիսթեմս ընկերությանը /Կից՝ **Հավելված 9.1.1/**:
Պալատը նշել է, որ Ֆիլիշին ՍՊԸ-ի կողմից կատարվել է ապամոնտաժումը՝ 1,800,000 ՀՀ դրամով, հաշվարկվել է ԱԱՀ, մինչդեռ չպետք է հաշվարվեր:
Հիմնադրամի պարզաբանումը այս պնդման վերաբերյալ.
Հիմնադրամի և Ֆիլիշին ՍՊԸ-ի միջև կնքվել է շինարարական աշխատանքների պայմանագիր՝ 11.03.2015 թ.:
Պայմանագրի համաձայն՝ կատարողը պետք է իրականացներ հեռուստատեսային տաղավարի կառուցում: Պայմանագրի գինը ներառել է միայն կառուցման աշխատանքները: Ապամոնտաժման համար Պատվիրատուն դիմել է կատարողին, վճարել 1,800,000 ՀՀ դրամ՝ ԱԱՀ ներառյալ: Ճիշտ է, Հիմնադրամը կառավարության որոշմամբ ազատված էր ԱԱՀ-ից, սակայն, յուրաքանչյուր պայմանագրի դեպքում ՀՀ կառավարությունը ցուցաբերում էր ինդիվիդուալ մոտեցում և յուրաքանչյուր պայմանագիր ներկայացվում էր կառավարությանը՝ ԱԱՀ-ից ազատման հաստատման նպատակով: Ելնելով հրատապությունից, որ անհրաժեշտ է շտապ ապամոնտաժել, Հիմնադրամը չի դիմել կառավարություն, քանի որ, եթե դիմեր, սպասեր կառավարության կողմից հաստատմանը՝ դա տևելու էր շուրջ մեկ ամիս, իսկ Հիմնադրամը չէր կարող սպասել, ապամոնտաժումը հրատապ էր: (Պայմանագրեր, նախահաշիվներ, հաշիվ ապրանքագրեր, կատարողական ակտեր, հանձնման ընդունման ակտեր՝ **Հավելվածներ 9.1, 9.1.1, 9.2, 9.3**):

11. Սթեյջ Սթայլ ՍՊԸ-ի մասով.

Սթեյջ Սթայլ ՍՊԸ-ի և Հիմնադրամի միջև 01.09.2015 թ. կնքվել է ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր, ըստ որի՝ կատարողը պատվիրատուի հանձնարարությամբ պետք է իրականացներ դեկորացիաների պատրաստում, սրահի

ձևավորում՝ Կառավարության ընդունելությունների տանը կայանալիք միջոցառումների շրջանակներում: Պալատը նշել է, որ կատարողի կողմից Հիմնադրամին չի ներկայացվել կատարված ծախսերի մանրամասն նկարագրությունը և կատարողական ակտը: Նշված է, որ առանց այս փաստաթղթերի առկայության՝ Հիմնադրամը կատարել է ամբողջական վճարում՝ ըստ հաշիվ ապրանքագրի, որը չպետք է կատարեր:

Այս պնդումը անհիմն է և առարկայազուրկ, քանի որ հանձնման ընդունման ակտ կնքվել է և առկա է, իսկ կատարված ծախսերի նկարագրությունը ներկայացված է, մասնավորապես՝ պայմանագրի հավելված 1-ով և հաշիվ ապրանքագրում /**կից՝ Հավելված 10**/:

Նշված է, որ կավրալինի տեղադրման աշխատանքների համար <u>գորգածածկի ձեռքբերումը չի հիմնավորվում</u> Հիմնադրամի կողմից, նշված է, որ գորգածածկ ձեռք չի բերվել: Նշված է, որ միջոցառումից հետո Հիմնադրամ չի վերադարձվել չի մուտքագրվել պահեստ և չի հաշվառվել որպես նյութական արժեք պայմանագրի հավելվածով նախատեսված գույքը, ինչպես նաև կավրալինը: Այս մասով հայտնում ենք, որ ի թիվս այլ ապրանքանյութական արժեքների՝ Կավրալինը ՀՀ է ժամանել ՀՀ նախագահի ինքնաթիռով: Կավրալինը տեղադրվել է և հետո չի ապամոնտաժվել, մնացել է մոնտաժված միջոցառման վայրում: Իսկ մնացած գույքի մասով հարկ ենք համարում շեշտադրել, որ այստեղ կնքվել է ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր, այլ ոչ թե գույքի ձեռքբերում սեփականության իրավունքով (Պայմանագրեր, ապրանքների-ծառայությունների-դրանց արժեքների ցանկ, հաշիվ ապրանքագիր՝ **Հավելված 10**):

12. Հեփփի իվենթ ՍՊԸ-ի մասով.

1. Հեփփի իվենթ ՍՊԸ-ի և Հիմնադրամի միջև 11.04.2015թ. կնքվել է ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր, որին կից առկա է ծառայությունների և դրանց արժեքի բաշխվածքը, որը մանրամասն նկարագրում է կատարման ենթակա ծախսերը, կնքվել է կատարողական ակտ, դուրս է գրվել հաշիվ ապրանքագիր և պատվիրատուի կողմից կատարվել է վճարումը: Սրանով պայմանագրի կողմերը հաստատել են, որ նախատեսված պարտավորությունները կատարված են պայմանագրի պայմաններին համապատասխան և միմյանց միջև չմարված կամ չկատարված պարտավորություններ բացակայում են:

2. Հեփփի իվենթ ՍՊԸ-ի և Հիմնադրամի միջև 20.05.2015 թ. կնքվել է ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր, ըստ որի՝ կատարողը պատվիրատուի հանձնարարությամբ պետք է իրականացներ ձայնային տեխնիկական միջոցների մոնտաժում, ապամոնտաժում և սպասարկում: Կնքվել է կատարողական ակտ և հաշիվ ապրանքագիրը հաստատված է պատվիրատուի կողմից: Սա վկայում է, որ

պայմանագրային պարտավորությունները կողմերի միջև կատարված են և միմյանց միջև չմարված կամ չկատարված պարտավորություններ բացակայում են:
3. Հեփփի իվենթ ՍՊԸ-ի և Հիմնադրամի միջև 15.01.2015 թ. կնքվել է ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր: Պայմանագիրը կատարված է պայմանագրի պայմաններին համապատասխան, կողմերի միջև բացակայում է չմարված կամ չկատարված որևէ պարտավորություն: Կատարողական ակտը կնքված է, հաշիվ ապրանքագիրը դուրս գրված և վճարումը՝ կատարված:
4. Հեփփի իվենթ ՍՊԸ-ի և Հիմնադրամի միջև կնքված վերանշյալ բոլոր պայմանագրերում առկա են և՛ հաշիվ ապրանքագրեր, և՛ հավելվածներով նախատեսված անվանում-քանակ-գին-տեսակ մանրամասն նկարագրերը, և՛ կատարողական ակտերը: Հարկ է ընդգծել, որ Պատվիրատուն ստացել է ծառայություն, սա ծառայությունների մատուցման պայմանագիր է, որի շրջանակներում կատարողն իր միջոցներով ծառայություն է մատուցել պատվիրատուին: Պատվիրատուն սեփականության իրավունքով գույքի ձեռքբերում չի իրականացրել, հետևաբար, եթե գույք ձեռք չի բերել, այլ ձեռք է բերել միայն ծառայություններ, ապա Հիմնադրամը *պահեստ վերադարձման ենթակա գույք չի ունեցել, պահեստ վերադարձնելու կամ հաշվառելու որևէ պարտականություն չի ունեցել*: (Պայմանագրեր, կատարողական ակտեր, հաշիվ ապրանքագրեր՝ **Հավելված 11**):

13. Պերֆեկտ ՍՊԸ-ի մասով.

Պերֆեկտ ՍՊԸ-ի և Հիմնադրամի միջև 10.04.2015 թ. կնքվել է ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր: Պայմանագրային պարտավորությունները կատարված են պատշաճ, որն ապացուցվում է ստորագրված կատարողական ակտով և դուրս գրված ու վճարված հաշիվ ապրանքագրով: Կատարողական ակտը ստորագրելով՝ կողմերը հավաստել են, որ միմյանց միջև վեճեր և տարաձայնություններ չկան, պատվիրված ծառայություններն էլ կատարված են պայմանագրով սահմանված ժամկետներում և պատշաճ կարգով: Ծախսերի նկարագիրը մանրամասն ներկայացված է պայմանագրի հավելված 1-ում՝ ծառայությունների և դրանց արժեքի բաշխվածքում: Հետևաբար, Պալատի պնդումը, որ բացակայում է կատարողական ակտը և ծախսերի նկարագրությունը, անհիմն է և չի համապատասխանում իրականությանը (ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր, արժեքի բաշխվածք, կատարողական ակտ **Հավելված 12**):

14. Մեգապրոֆ ՍՊԸ-ի մասով.

Մեգապրոֆ ՍՊԸ-ի և Հիմնադրամի միջև 14.04.2015 թ. կնքվել է ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր: Պայմանագրի 1.4 կետի համաձայն՝ ծառայությունները համարվում են մատուցված՝ հանձնման-ընդունման ակտի

ստորագրման պահից: Առկա է կատարողական ակտ, դուրս գրված և վճարված հաշիվ ապրանքագրեր:
Պալատը ներկայացվել է, սակայն Պալատը ուսումնասիրության առարկա չի դարձրել System of a Down խմբի կողմից ներկայացված անգլերեն լեզվով տեխնիկական առաջադրանքը, որով վերջինս հստակ նշել է գեներատորների քանակը, հզորությունը, աշխատանքի օրերի քանակը, ծախսվող դիզվառելիքի քանակը, որը եղել է պարտադիր կատարման, առանց դրա համերգ չէր լինի: Բացի այդ հարկ է Պալատի ուշադրությունը հրավիրել միջազգային պրակտիկային, առ այն, որ միջազգային մակարդակի նմանատիպ խոշոր համերգներին պարտադիր պայման է գեներատորներով աշխատելը:
Դիզելային վառելիքի և գեներատորի մասով. Հարկ ենք համարում նշել, որ մինչև միջոցառումների սկսվելը կազմակերպվել, տեղի են ունեցել փորձեր, նախապատրաստական աշխատանքներ՝ 10 օր շարունակ, այդ իսկ պատճառով էլ նշված օրերի համար օգտագործվել է և դիզելային վառելիքը և գեներատորները, որը հիմնավորված է, եղել է անհրաժեշտ և պարտադիր՝ միջոցառումը հավուր պատշաճի կազմակերպելու համար **/Հավելված 13/:**

15. Ինժեներ սերվիսի մասով.
Հիմնադրամի հիմնավորումը. Ծրագրի ծանրաբեռնվածությունից ելնելով՝ անհրաժեշտություն է առաջացել, որ շարժական հեռուստատեսության կայանը աշխատի և՛ ֆիլհարմոնիայի դահլիճում և՛ Խոր Վիրապում: Ուստի, փաստացի ավելացվել է երկու աշխատանքային վայր՝ Ֆիլհարմոնիայի դահլիճը և Խոր վիրապը, որպեսզի այս երկու վայրերում ևս անցկացվեն նկարահանումները: 24.04.2015 թ. շարժական հեռուստատեսության կայանը աշխատել է Ֆիլհարմոնիայի դահլիճում, քանի որ եղանակային անբարենպաստ պայմանների պատճառով հնարավոր չի եղել աշխատել Հանրապետության հրապարակում:
Բացի այդ, դիզելային վառելիքի ծախսը եղել է, քանի որ կատարվել են նախապատրաստական աշխատանքներ, փորձեր՝ միջոցառումները հավուր պատշաճի կազմակերպելու համար /**Հավելված՝ 14**/:

16. Մոբիլ էներգոսիստեմ ընկերության մասով.
Մոբիլ էներգոսիստեմ ընկերության և Հիմնադրամի միջև 30.03.2015 թ. կնքվել է սարքավորումների վարձակալության պայմանագիր, որով վարձատուն ժամանակավորապես Հիմնադրամին է տրամադրել սարքավորումներ: Սարքավորումները պատկանել են վարձատուին: Վարձակալին տրամադրվել է **օգտագործման իրավունքով այլ ոչ թե սեփականության**: Հետևաբար, այն պնդումը, որ մետաղական կոնստրուկցիաներով պատրաստված մեդիակենտրոնը և մալուխները չեն հաշվառվել և վերադարձվել պահեստ, չունի իրավական հիմնավորվածություն և

առարկայազուրկ է: Չի կարող հաշվառվել և պահեստ վերադարձվել մի ապրանք, որը օգտագործվել է վարձակալական հիմունքներով այլ ոչ թե սեփականատիրական հիմունքներով և պայմանագրի ավարտին էլ վերադարձվել է վարձատուին /կից պայմանագիրը և պայմանագրին կից փաստաթղթերը՝ **Հավելված 15/:**

17. Էյվիեն Նահապետյան ՍՊԸ-ի մասով.

Հիմնադրամը Էյվիեն Նահապետյան ՍՊԸ-ից պատվիրել և ստացել է ցուցանակներ, արժեքը՝ 6,750,000 ՀՀ դրամ: Կողմերը ստորագրել են հանձնման ընդունման ակտ, որով ամրագրված է, թե ինչ և ինչ քանակով է հանձնվել պատվիրատուին:

Առկա է կատարողի կողմից դուրս գրված հաշիվ ապրանքագիր, որը ստորագրված է պատվիրատու-Հիմնադրամի կողմից: Հաշիվ ապրանքագրի դուրս գրումը և պատվիրատուի կողմից այն հաստատելը և վճարելը, ինքնին, վկայում է պայմանագրային պարտավորության գոյության, պայմանագրային պարտավորության պատշաճ կատարման մասին: Հիմնավորումն առկա է՝ հաշիվ ապրանքագրի և հանձնման ընդունման ակտի տեսքով:

Ձեռքբերված ցուցանակները օգտագործվել են կոնկրետ ծրագրի իրականացման համար՝ Ռուբեն Գալիչյանի «A Glance into the History of Armenia through Cartographic Documents»/ «Հայաստանի պատմությունը քարտեզներով» գրքի տարբեր երկրներում Հայաստանի դեսպանատների կողմից ցուցահանդեսների կազմակերպման համար: Հետևաբար, Հիմնադրամի կողմից պահեստ ետվերադարձման ենթակա ապրանքանյութական արժեքներ չեն եղել:

18. Կարեն Սահակյան ԱՁ-ի մասով.

2015 թ. հոկտեմբերի 25-ին Հիմնադրամի և Լոմա Սիսթեմս ՍՊԸ-ի միջև կնքվել է գույքի կոնցեսիոն կառավարման պայմանագիր: Նշված պայմանագրի հավելված 1-ի համաձայն, կետ 18՝ Հիմնադրամը երկու հատ կախիչ հանձնել է Լոմա Սիսթեմս ՍՊԸ-ին: Իսկ կախիչներից երրորդը տեղափոխության ընթացքում վնասվել է և հաշվառման ենթակա չի եղել: Այդ իսկ պատճառով էլ չի հաշվառվել:

19. Բլիցքոմփ ՍՊԸ-ի մասով.

Բլիցքոմփ ՍՊԸ-ից Հիմնադրամը ձեռք է բերել 15 հատ 16GB ծավալով հիշողության սարքեր՝ /Flash Sandisk/:

Հարկ է ընդգծել, որ Ձեռք բերված 15 հատ էլեկտրոնային կրիչները տրվել են «Արարատի ստորոտին» 4-րդ միջազգային մեդիաֆորումի մասնակից լրագրողներին և Հիմնադրամ վերադարձման ենթակա չեն եղել, այդ իսկ պատճառով չեն հաշվառվել:

20. Իտալիայում ՀՀ դեսպանության հետ կնքված պայմանագրի մասով

Հիմնադրամի և Իտալիայում ՀՀ դեսպանության միջև 2015 թ. մարտի 1-ին կնքվել է ֆինանսական միջոցների տրամադրման պայմանագիր: Պայմանագրով ֆինանսավորող է հանդիս գալիս Հիմնադրամը, իսկ ֆինանսական միջոցներ ստացող՝ ֆինանսավորվող՝ Իտալիայում ՀՀ դեսպանությունը: Հիմնադրամը ֆինանսավորել է դեսպանությանը ծրագրեր իրականացնելու համար: Իսկ դեսպանության կողմից ձեռք բերված գույքը արդեն **հանդիսացել է դեսպանության սեփականությունը, այլ ոչ թե Հիմնադրամի**:

Ներկայացված պնդումն անհիմն է և առարկայազուրկ: Պնդման հիմքում դրված է դեսպանատան կողմից Հիմնադրամին ներկայացրած հաշվետվությունը, որում երևում է, որ Դեսպանատունը ձեռք է բերել գորգ և տարբեր իրեր՝ իր ցուցահանդեսը կազմակերպելու համար: Այս պայմանագիրը ֆինանսական միջոցների տրամադրման պայմանագիր է, այսինքն, Հիմնադրամն աջակցել է դեսպանությանը, որպեսզի դեսպանությունն իրականացնի իր ծրագիրը: Պայմանագրում նշված չէ, որ Դեսպանությունը պետք է իր ձեռքբերած ապրանքները տա Հիմնադրամին /կից՝ պայմանագիրը՝ **Հավելված 16/:**

21.Իլուզիոն պրոդաքշն ՍՊԸ-ի մասով.

Պալատը նշել է, որ Հիմնադրամը պայմանագիր է կնքել Իլուզիոն պրոդաքշն ՍՊԸ-ի հետ՝ Ցեղասպանության թանգարանում և Ցեղասպանության 100-ամյակ խորագրերով 20 և 80 րոպպե տևողությամբ վավերագրական տեսաֆիլմերի արտադրության համար: Չնայած կողմերի միջև կազմվել են հանձնման ընդունման ակտեր, որոնցով Հիմնադրամը հավաստել է, որ Պայմանագրով նախատեսված տեսաֆիլմերը արտադրվել և հանձնվել են պատշաճ կերպով, սակայն, իրականում Հիմնադրամը նշված ֆիլմերը որպես պատվիրված ապրանք չի ստացել և սահմանված կարգով չի ձևակերպել: Հիմնադրամը փաստացի ստացել է այդ ֆիլմերը, առկա են: Կից ներկայացվում է էլեկտրոնային կրիչի վրա ներբեռնված տարբերակով նշված ֆիլմերը՝ /**Հավելված 16.1/:**

ԲԱԺՆԵՄԱՍԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ

22. Մարս Մեդիա էնթերթեյմենթի մասով.

<<Մարս Մեդիա Էնթերթեյմենթ>> ՍՊԸ-ն 2015 թվականի ընթացքում Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումների տնօրինության org@armeniangenocide100.org էլեկտրոնային հասցեին ուղարկել է եռամսյակային հաշվետվություններ՝ <<ՍՊԻ>> ֆիլմի ցուցադրումից ստացված եկամուտների վերաբերյալ, համաձայն որոնց՝ ֆիլմի օգտագործումից ընկերության ստացած եկամուտների և ֆիլմի գովազդային ծախսերի տարբերությունը եղել է բացասական մեծություն: Ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումների ծրագրի ավարտից

հետո org@armeniangenocide100.org էլեկտրոնային հասցեն ջնջվել է, քանի որ տվյալ դոմեյնի համար այլևս չեն կատարվել վճարումներ: Այդ իսկ պատճառով Հիմնադրամը չի կարող Պալատին տրամադրել վերոնշյալ հաշվետվությունների պատճենները:
Լիցենզիա ձեռք բերելու ծախսերի մասով.
Առկա է 100 ամյակի միջոցառումների համակարգող Վ. Սարգսյանի կողմից հաստատված նախահաշիվը: Տնօրինության գլխավոր տնօրենը՝ հանձին Արման Ծատուրյանի, հիմք ընդունելով Վ. Սարգսյանի կողմից ստացած թույլտվությունը, <<Մարս Մեդիա Էնթերթեյմենթ>> ՍՊԸ-ին կատարել է վճարում՝ լիցենզիա ձեռք բերելու համար: Հետևաբար, լիցենզիա ձեռք բերելու ծախսը նախահաշվով եղել է նախատեսված **/նախահաշիվը՝ հավելված՝ 17/:**

23. Հիմնադրամին տոմսերի վաճառքից վճարումներ եղել են միայն Երևանյան հեռանկարներ միջազգային երաժշտական փառատոն ՀԿ-ի կողմից՝ 3 պայմանագրերի շրջանակներում՝ ԹԻՎ 51/0405 պայմանագիրը՝ 22.04.2015 թվականին կնքված, թիվ **53/1905** պայմանագիրը՝ 19.05.2015 թվականին կնքված, թիվ **78/0308** պայմանագիրը: Վճարումները եղել են Իսրայելի Ֆիլհարմոնիկ նվագախմբի մասնակցությամբ Երևանում կազմակերպված համերգի տոմսերի վաճառքից ստացված գումարները, Բրյուսելում կայացած համերգի տոմսերի վաճառքից ստացված գումարները և Նյու Յորքում կայացած համերգի տոմսերի վաճառքից ստացված գումարները: Ընդհանուր առմամբ՝ 46,734.9 հազար ՀՀ դրամ, փոխանցվել են Հիմնադրամին:
Նշված պնդումը, որ պետք է վճարումներ կատարվեին պետական բյուջե, սակայն չեն կատարվել, իսկ Հիմնադրամն էլ հետևողական չի գտնվել, որ վճարումները կատարվեն պետական բյուջե, չի համապատասխանում իրականությանը, քանի որ պայմանագրի կողմ են հանդիսացել «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ-ը և «ԵՐԵՎԱՆՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՓԱՌԱՏՈՆ» ՀԿ-ն: Այստեղ գործ ունենք երկկողմանի պայմանագրի հետ, այ ոչ թե եռակողմ պայմանագրի հետ և ՀՀ-ն չի հանդիսանում պայմանագրի կողմ, հետևաբար, ՀՀ պետական բյուջե վճարում կատարելու անհրաժեշտություն և համապատասխան պարտականություն ոչ Հիմնադրամը և ոչ էլ պայմանագրի մյուս կողմը չեն ունեցել:
Իսկ այն, որ Պայմանագրերի 1.3-րդ կետում նշված է, որ Ֆինանսավորվողը պարտավորվում է Համերգի կազմակերպումից ստացված ողջ եկամուտը փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ այն տրամաբանությամբ է շարադրված, որ քանի որ Տնօրինությունը ձևավորվել, ստեղծվել էր կոնկրետ նպատակով, կոնկրետ ժամկետով, այդ ժամկետի ավարտից հետո պետք է լուծարվեր, իսկ ֆինանսական միջոցները, որոնք Տնօրինության լուծարման պահին լինելու էին Տնօրինության հաշիվներում, Տնօրինության տիրապետության ներքո, ենթադրվում էր, որ

պետք է փոխանցվեին ՀՀ պետական բյուջե: Տնօրինությունը լուծարվել է, իսկ Հիմնադրամի գլխավոր տնօրենը՝ Ա. Վարդանյանը, կարող էր Տնօրինության՝ ՀՀ կենտրոնական բանկում բացված հաշիվներում առկա դրամական միջոցները փոխանցել ՀՀ պետական բյուջե, սակայն չի փոխանցել, Տնօրինությունը այս մասով պատասխանատվություն չի կրում:

23. Արմենպրես լրատվական ծառայության տվյալների մասով.

Ըստ Հիմնադրամի տվյալների՝ 26.04.2015 թվականին Բրյուսելում կայացած համերգի ժամանակ վաճառվել են տոմսեր՝ 544 հատ, այնինչ Արմենպրես լրատվականը տեղեկատվություն է տարածել, թե իբր վաճառվել են 2052 հատ տոմս: Արմենպրեսի հաղորդագրությունները Տնօրինությունը չի ուսումնասիրել, Տնօրինությունը հիմք է ընդունել «ԵՐԵՎԱՆՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՓԱՌԱՏՈՆ» ՀԿ-ի կողմից ներկայացված հաշվետվությունները՝ ըստ որի վաճառվել են 544 հատ տոմս **/Հաշվետվությունը ներկայացված է Պալատին/:**

“Երևանյան Հեռանկարներ” երաժշտական միջազգային փառատոնը 2015թ.-ին իրականացրել է պատմական նշանակության համերգաշար՝ “Քեզ հետ, Հայաստան” խորագրով: Նախագծի նպատակն էր միջազգային լայն հանրությանը իրազեկել Հայոց ցեղասպանության խնդրին և թուրքական ամոթալի ժխտողականությանը: Այն նաև նպատակ էր հետապնում բարձրացնել քաղաքական և հանրային ակտիվությունն այն երկրներում, որոնք պաշտոնապես դեռևս չեին ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Փառատոնի տարիներ ի վեր ձևավորված բացառիկ կապերի և միջազգային բարձր հեղինակության շնորհիվ ծրագրում ընդգրկվեցին մեր օրերի գերաստղ-երաժիշտներ և հռչակավոր նվագախմբեր, որոնք ի լուր աշխարհի հայտարարելով Հայաստանի հետ լինելու փաստի մասին, մեկընդմիշտ անցան Թուրքիայի “սև ցուցակ”, միևնույն ժամանակ, կամովին հրաժարվելով ահռելի հոնորարներից, որոնց ստանում էին այդ երկրում հանդես գալու համար: Ծրագիրը նախադեպը չուներ. նման մեծության երաժիշտների մասնակցությունը պիտի լուսաբանվեր այդ երկրների առաջատար մամուլի կողմից՝ ուղղակիորեն հանրայնացում ապահովելով հայկական խնդրին: Փառատոնի շուրջ հավաքվեցին փորձառու գործընկերներ, որոնք իրենց վրա պատասխանատվություն վերցրեցին ծառայելու Հայաստանի շահին՝ անտեսելով իրենց երկրների պաշտոնական դիրքորոշումը: “Քեզ հետ Հայաստան” համերգաշարի շրջանակներում կազմակերպվեցին համերգ-ակցիաներ, որոնց ընթացքում բեմից վկայակոչվում էր ցեղասպանության սարսափները և կոչ արվում քաղացիական համերաշխություն դրսևորել Հայաստանի հետ: Առաջին անգամ Հայաստանի պատմության մեջ Երևանից կազմակերպիչներին հաջողվեց համերգներ իրականացնել աշխարհի ամենահեղինակավոր բեմերում, ինչպիսիք են Նյու Յորքի Քարնեգի հոլը, Բրյուսելի Բոզարը կամ Վիեննայի Մուզիքվերայնը: Ողջ աշխարհում շատ քիչ են այն

կառույցները, որոնք կարող են իրավունք ստանալ համերգներ կազմակերպելու նմանատիպ համերգասրահենում, իսկ քաղաքական թեմայով գրեթե ոչ ոքի դա մինչ օրս չի հաջողվել: Համերգների շուրջ հզոր գովազդային արշավներ կազմակերպվեցին ցեղասպանությունը չճանաչած Իսրայելում, ԱՄՆ-ում, Միացյալ Թագավորությունում, Բելգիայում, Էստոնիայում, Ավստրիայում: Այս երկրներից ցանկացածում եղել են անհաղթահարելի խնդիրներ, բախումներ թուրքական լոբբինգի հետ, վտանգեր՝ ընդուպ մինչև ահաբեկչության փորձեր: Երուսաղեմում բեմից հրեական հանրությանը դիմել է ՀՀ Արտաքին գործերի նախարար Էդուրդ Նալբանդյանը, Արիս Սրբազանը և Երուսաղեմի օպերայի տնօրեն Յայիր Շտերնը: Էստոնիայում համերգից առաջ Սուրբ Հովհաննես եկեղեցում խոսել է ՀՀ դեսպանը և ազգային ժողովի պաշտոնյաներ, Լոնդոնում համերգային բեմից ջախջախիչ ելույթ է ունեցել թեմի առաջնորդը, Նյու Յորքում, Վիեննայում, Հռոմում՝ ՀՀ դեսպանները: Դժվար է գերագնահատել ՀՀ դեսպանատների գործուն աջակցությունը՝ համերգային ակցիաներին, որոնց ամենակարևոր մասն էր դիվանագիտական կառույցների, լրատվամիջոցների ներկայացուցիչների, պատվավոր հյուրերի և հնարավորինս լայն զանգվածների ներգրավումը: Դեսպանատների աշխատակիցներն առանց դադարի աշխատել են անհրաժեշտ հրավիրյալների ներկայությունը ապահովելու համար: “Քեզ հետ, Հայաստան” համերգաշարի նպատակներում եկամուտ ստանալ կամ տոմսերի վաճառք իրականացնելը չի եղել, սակայն բացառիկ է, որ որոշ երկրներում ստացվել է կատարել նաև այդ գործառույթը՝ իբրև բացարձակ պրոֆեսիոնալ և թիմային աշխատանքի խոսուն արդյունք: Համերգաշարի նպատակներից է եղել նաև համաշխարհային մեծության աստղերի կողքին ներկայացնել հայ լավագույն երաժիշտներին՝ խորհրդնաշելու համար վերածնունդը և նշելու համար մեր տեղը աշխարհի երաժշտական երկնակամարում. այդպես, Նյու Յորքում Եվեգնի Կիսինի հետ բեմը կիսեց Հովեր պետական կամերային երգչախումբը՝ առաջին անգամ հայ կոմպոզիտորներ հնչեցնելով պատմական բեմում, Լոնդոնում Պինխաս Յուկերմանի և Թագավորական Ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ ելույթ ունեցավ պատանի ջութակահար Դիանա Ադամյանը, ով այնուհետ դարձավ Մենուհինի անվան մրցույթի առաջին մրցանակակիրը, Վիեննայում Զալցբուրգ կամերատայի և Բախ երգչախմբի հետ ելույթ ունեցան չորս հայ անվանի օպերային երգիչներ, իսկ երիտասարդ կոմպոզիտոր Ալեքսանդր Իրադյանի նոր ստեղծագործության պրեմիերան հնչեց Բրյուսելում՝ Բելգիայի ազգային սիմֆոնիկի կողմից: Հայազգի դիրիժոր Ջորջ Փեհլիվանյանը հանդես եկավ մեգա-աստղեր Մաքսիմ Վենգերովի, Միշա Մայսկիի և Սերգեյ Նակարիակովի հետ, որոնք իրենց հերթին առաջին անգամ սիմֆոնիկ նվագախմբով հնչեցրեցին Կոմիտաս:

24. Բրյուսելի ազգային նվագախմբի համերգի հաշվետվությունների մասով.

«ԵՐԵՎԱՆՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՓԱՌԱՏՈՆ» ՀԿ-ի կողմից Հիմնադրամին ներկայացված են գնման ակտեր, քանի որ ավտոտրանսպորտային միջոցների /561.000 դրամ համարժեք եվրո/ վարձակալությունը և սրահի ձևավորման համար ծաղիկների ձեռքբերումը կատարվել են ֆիզիկական անձանցից, շուկայից: ՀԿ-ն ձեռք է բերել շուկայից, քանի որ դա ավելի մատչելի է եղել: Հաշվի առնելով, որ հարկային օրենսդրության տեսանկյունից ևս սա օրենքի խախտում չէ, վճարումներն իրականացվել են գնման ակտերի հիման վրա /**Գնման ակտերը ներկայացված են Պալատին**/:

Պնդումը, առ այն, որ ընդհանուր առմամբ 777,4 հազար ՀՀ դրամը չհիմնավորված ծախսեր են եղել, չի համապատասխանում իրականությանը և հիմնավորվում են այդ ծախսերը հենց գնման ակտերով:

25. Լոնդոնի համերգի և Լասկալայի համերգների մասով.

Անգլիայի և Իտալիայի քաղաքացիներ Ջեյմս Ինվերներնիի և Մասիմո Մերցելիի հետ Երևանյան հեռանկարներ ՀԿ-ն կնքել է պայմանագրեր լրատվամիջոցների համար նյութերի պատրաստման և մամլո ասուլիսների, գովազդի կազմակերպման համար: Գումարները նրանց վճարվել են կանխիկ եղանակով՝ դրամարկղի ելքի օրդերների միջոցով, որն ամբողջությամբ իրենից ներկայացնում է հիմնավորված ծախս /Փաստաթղթերը ներկայացված են Պալատին/:

Վերոնշյալ անձինք հանդիսանում են Իտալական Էմիլիո Ռոմանիա ընկերության և Ինվեն Պրայս կոնսալթինգ ընկերության ղեկավարներ, որոնք պատասխանատու էին անհավանական բնույթի և ծավալի PR 7 գովազդային փաթեթների իրականացման համար: Իրենց աշխատանքի դիմաց վճարված գումարը շատ խորհրդանշական է՝ համեմատ նրանց կատարած հայանպաստ աշխատանքի և այն ռիսկերի, որոնցով անցել են:

Բացի պայմանագրերից և ելքի օրդերներից՝ ներկայացված է բովանդակային հաշվետվություն, որտեղ կետ առ կետ առկա են երկու ընկերությունների և նրանց ղեկավարների կատարած աշխատանքը: Այդ հաշվետվությունները հիշեցնում են հաստափոր հատորներ, դրանք ընդգրում եմ Նյու Յորք Թայմզից մինչև Լոնդոնի "Ինդեփենդենտ"-ում անվճար (Նյու Յորք թայզմի նույն հոդվածի վճարը կազմում է մի քանի տասնյակ ԱՄՆ դոլարներ) հիմունքներով տպագրված հոդվածներ, հեռուստա, ռադիո գովազդ, համացանց, մամուլի ասուլիսներ, ցեղասպանության լոգոյի տեղադրում փողոցներում, սրահների վրա, և շատ ավելին /Հատորները ֆիզիկապես գտնվում են Հայաստան համահայկական հիմնադրամում/:

26. 27.06.2015 թվականին Երևանյան հեռանկարներ միջազգային երաժշտական փառատոն ՀԿ-ի կողմից Էմիլիա Ռոմագնա Էվենթի ընկերության հետ կնքված

գովազդային ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակներում Երևանյան հեռանկարներ միջազգային երաժշտական փառատոն ՀԿ-ին նշված ընկերությունը մատուցել է գովազդային ծառայություններ: Քանի որ համերգը բավականին մեծամաշտաբ է եղել և մեծ կարևորության, այդիսկ պատճառով բավականին շատ է գովազդվել և լիովին նորմալ է, որ համերգի գովազդն իրականացրել են մի քանի կազմակերպություններ և/կամ մի քանի ֆիզիկական անձինք:

27. Լա Սկալայի համերգի մասով.

ՀՀ դեսպանատունն իտալացի գործընկերոջ հետ համատեղ իրականացրել է ահռելի աշխատանք՝ դահլիճը հրավիրյալներով "լցնելու" և կարևոր պաշտոնյաներ և լրատվամիջոցներ ներգարվելու համար, ինչն իրականում փայլուն կերպով հաջողվել է: Հայտնում ենք, որ տոմսեր չեն վաճառվել, իսկ եթե տոմսեր չեն վաճառվել, հետևաբար, նաև բյուջե գումար վերադարձնելու հարց չի կարող առաջանալ: **/Տեղեկանք՝ Հավելված՝ 18/:**

28. Քրոնոս քառյակի համերգի կազմակերպման մասով.

Պալատը նշել է, որ քաղաքացի Ս. Մելքոնյանի հետ կնքվել է վարձակալության պայմանագիր, որով ՀԿ-ն ձեռք է բերել համերգի կազմակերպման և անցկացման համար նախատեսված սարքավորումներ՝ 700,000 ՀՀ դրամով: Նշված է, որ քաղաքացի Վ. Գրիգորյանի հետ կնքվել է վարձակալության պայմանագիր, որով ՀԿ-ն ձեռք է բերել համերգի կազմակերպման և անցկացման համար նախատեսված սարքավորումներ՝ 500,000 ՀՀ դրամով: Նշված է, որ Քրոնոս քառյակը նույն համերգի կազմակերպման համար Երևան է բերել անհրաժեշտ սարքավորումները, իսկ անհրաժեշտ ձայնային և լուսային սարքավորումները վարձակալել է Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի հետ կնքված վարձակալության պայմանագրով: Պալատը պնդել է, որ 1.200.000 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով Ս. Մելքոնյանից և Վ. Գրիգորյանից վարձակալված գույքը վարձակալելու անհրաժեշտություն չկար: Այս պնդումը անհիմն է և առարկայազուրկ, քանի որ, **Քրոնոս քառյակը իր հետ ՀՀ է բերել միայն երաժշտական գործիքները, իսկ անհրաժեշտ սարքավորումները վարձակալվել են ՀՀ-ում:** Իսկ այն, որ համապատասխան տեխնիկան վարձակալվել է 2 ֆիզիկական անձանցից և Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնից, պայմանավորված է նրանով, որ անհրաժեշտ է եղել մեծաքանակ տեխնիկայի ձեռքբերում և միայն 3 սուբյեկտների հետ կնքված վարձակալության պայմանագրերի արդյունքում է հնարավոր եղել ունենալ պահանջվող ողջ տեխնիկան: Առավել մանրամասն ինֆորմացիա ստանալու համար Պալատը կարող է դիմել «ԵՐԵՎԱՆՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՓԱՌԱՏՈՆ» ՀԿ-ին:

Առաջացել է անհրաժեշտություն վարձակալել տեխնիկան՝ համերգի բնականոն ընթացքը ապահովելու նպատակով: Հետևաբար, անհրաժեշտությունը կար և ՀԿ-ն ունեցել է նման լիազորություն: Նշված ծախսերը ներկայացվել են Տնօրինությանը **/ծախսերի վերաբերյալ**

փաստաթղթեը՝ ներկայացված են Պալատին/: Ամերիկյան Քրոնոս քառյակի հետ կնքված պայմանագրում հստակ նշված է այն մասին, որ անհրաժեշտ լուսային և ձայնային տեխնիկայի մաս կա, որ ապահովվում է Երևանում: Backline տեխնիկան իրենք են բերում իրենց հետ, իսկ մնացածը, առանց որի դա չի աշխատում վարձակալվում է տեղում: Պնդումը, որ տեխնիկա վարձակալելու անհրաժեշտություն չկար թյուր է և չի համապատասխանում իրականությանը:

29. Նյու Յորքում կայացած Հովեր երգչախմբի համերգի մասով.

Պալատը նշել է, որ Հովեր երգչախմբի համերգի համար նախատեսվել է հյուրասիրություն, որպես ծախսի հիմնավորում ներկայացվել է 4 փաստաթուղթ, սակայն դրանցից միայն մեկն է համապատասխանում ծրագրով նախատեսված համերգից հետո հյուրասիրությանը: Այս պնդումը սխալ է, քանի որ Նյու Յորքի Քարնեգի Հոլի համերգից հետո կազմակերպվել է հյուրասիրություն, որին ներկա են եղել մասնակից երաժիշտները՝ աշխարհահռչակ դաշնակահար Եվգենի Կիսինն իր հյուրերի հետ, դեսպան Տիգրան Սարգսյանը՝ կնոջ հետ, ՄԱԿ-ում ՀՀ դեսպան Զոհրաբ Մնացականյանը, Նյու Յորքի հայ համայնքի կարևոր ներկայացուցիչները և կազմակերիչները: Վճարումն իրականացվել է ՀԿ-ի բանկային քարտի միջոցով:

Պալատը, հավանաբար, նկատի է ունեցել պայմանագրի հավելվածի 15-րդ կետը, որն իրենից ներկայացնում է Հայաստանի հեռուստատեսության լուրերի նկարահանող խմբի ճանապարհածախսը, սակայան, վրիպակ է տեղի ունեցել և սխալմամաբ հավելվածի 15-րդ կետում նշվել է հյուրասիրություն համերգից հետո: Դա երևում է նաև տվյալ կետի մեկնաբանությունից, որտեղ նշված է նկարահանող խմբի մեկնման և ժամանման ամսաթվերը **/նշված պայմանագիրը և կից փաստաթղթերը ներկայացված են Պալատին/:**

30. Բրիտանիայի Թագավորական ֆիլհարմոնիկ նվագախմբի համերգի կազմակերպման համար ՀԿ-ն և Հիմնադրամը կնքել են ֆինանսական միջոցների տրամադրման պայմանագիր: Նախատեսվել է Հիմնադրամի կողմից ՀԿ-ին տրամադրել առավելագույնը 66,672.2 հազար ՀՀ դրամ: Փաստացի ծախսը ըստ ներկայացված հաշվետվության կազմել է 72,002 հազար ՀՀ դրամ, ֆինանսավորումը՝ 67,877.3 հազար ՀՀ դրամ: Նշված է, որ պայմանագրային գնից ավել է վճարվել 1,205.1 հազար ՀՀ դրամ: Պալատը նշել է, որ Երուսաղեմի սիմֆոնիկ նվագախմբի կողմից համերգի կազմակերպման համար առավելագույն գումարը տրամադրման ենթակա եղել է 28.067.9 հազար ՀՀ դրամ, փաստացի ծախսը՝ ըստ հաշվետվության, 28,674.6 հազար ՀՀ դրամ, ֆինանսավորումը՝ 28,781.7 հազար ՀՀ դրամ: Նշված է, որ Հիմնադրամի կողմից ՀԿ-ին ավել է վճարվել պայմանագրի գնից 713,8 հազար ՀՀ դրամի չափով: Վերը նշված ենթադրյալ հավելյալ վճարում-խախտումները չեն որակվում որպես խախտումներ, քանի որ 30.11.2015 թվականին ՀԿ-ի կողմից Հիմնադրամին ներկայացվել է գրություն՝ կնքված և ստորագրված, որով ՀԿ-ն Հիմնադրամին հայտնել է, որ Հիմնադրամի հետ կնքված այլ պայմանագրերի մասով

առկա են խնայողություններ, տրամադրված գումարներն ամբողջովին չեն ծախսվել և խնդրել է Հիմնադրամին թույլ տալ նշված խնայողություն հանդիսացող գումարներն օգտագործել վերոնշյալ երկու համերգների կազմակերպման և անցկացման ընթացքում առաջացող հավելյալ ծախսերի համար: Հիմնադրամն էլ նշված գրությանը տվել է ընթացք և Հիմնադրամի վարքագծում բացակայել է խախտումը, քանի որ արդեն իսկ այլ համերգների շրջանակներում կնքված պայմանագրերով այդ գումարները տրամադրված են եղել ՀԿ-ին: Հիմնադրամի և ՀԿ-ի միջև առկա պայմանագրային հարաբերությունները, որի շրջանակներում տրվել է ֆինանսավորումը, բոլոր պայմանագրերը դիտարկվել են մեկ ամբողջականության մեջ և այդ պատճառով Հիմնադրամը թույլ է տվել ծախսերի տեղաբաշխում պայմանագրերի միջև /**Կից՝ գրությունը՝ Հավելված 19 /:**

Ընդհանուր առմամբ, Պալատի կողմից ներկայացված պնդումը, թե իբր 2,806,8 հազար ՀՀ դրամի չափով առկա է չհիմնավորված ծախս, չի համապատասխանում իրականությանը և առարկայազուրկ է՝ հաշվի առնելով վերը նշված հիմնավորումները:

ՀԿ-ի կողմից պետական բյուջե գումար փոխանցելու մասով հստակեցնում ենք, որ գործ ունենք երկկողմանի պայմանագրի հետ, այլ ոչ թե եռակողմ պայմանագրի հետ և ՀՀ-ն չի հանդիսանում պայմանագրի կողմ, հետևաբար, ՀՀ պետական բյուջե վճարում կատարելու անհրաժեշտություն և համապատասխան պարտականություն ոչ Հիմնադրամը և ոչ էլ պայմանագրի մյուս կողմը՝ ՀԿ-ն, չեն ունեցել: Քանի որ Տնօրինությունը ձևավորվել, ստեղծվել էր կոնկրետ նպատակով, կոնկրետ ժամկետով, այդ ժամկետի ավարտից հետո պետք է լուծարվեր, իսկ ֆինանսական միջոցները, որոնք Տնօրինության լուծարման պահին լինելու էին Տնօրինության հաշիվներում, Տնօրինության տիրապետության ներքո, ենթադրվում է, որ կարող էին փոխանցվել ՀՀ պետական բյուջե: Տնօրինությունը լուծարվել է, իսկ Հիմնադրամի գլխավոր տնօրենը՝ Ա. Վարդանյանը, կարող էր Տնօրինության՝ ՀՀ կենտրոնական բանկում բացված հաշիվներում առկա դրամական միջոցները փոխանցել ՀՀ պետական բյուջե, սակայն չի փոխանցել, Տնօրինությունը այս մասով պատասխանատվություն չի կրում:

31. ՀԿ-ի կողմից Հիմնադրամին տոմսերի վաճառքից պակաս վճարված 10,810,000 ՀՀ դրամի մասով.

Հարկ է ընդգծել, որ Տնօրինությունը հիմք է ընդունել ՀԿ-ի կողմից տրված տեղեկատվությունը և այլ լծակներ չի ունեցել ստուգելու այդ տեղեկատվության հավաստիությունը և ճշգրտությունը: Այդ իսկ պատճառով նշված 10,810,000 ՀՀ դրամը ՀԿ-ից պահանջելու հիմք չի ունեցել:

32. Գրքի և հրատարակչական գործի կենտրոն ՊՈԱԿ-ի մասով.

Նշված է, որ ֆինանսավորվող ՊՈԱԿ-ը Հիմնադրամին ցուցահանդես տոնավաճառից ստացված եկամուտների վերաբերյալ հաշվետվություններ չի ներկայացրել և գումարներ պետական բյուջե չի վճարել:
Հարկ է ընդգծել, որ ՊՈԱԿ-ը Տնօրինությանը բանավոր տեղեկացրել է, որ ցուցահանդես-տոնավաճառներից եկամուտ չի ստացել:
Այն պնդումը, որ Հիմնադրամին ՊՈԱԿ-ի կողմից գրքի տոնավաճառներից առաջացած գրքերի վաճառքից վճարվել է 6,866.9 հազար ՀՀ դրամ, չի համապատասխանում իրականությանը; Հիմնադրամին վերոնշյալ գրքերի վաճառքից որև գումար չի փոխանցվել և, հետևաբար, Հիմնադրամն էլ չի օգտագործել սեփական կարիքների համար **/Հիմնադրամի բանկային հաշիվների շարժի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվել է Պալատին/:**

33. Դասական երաժշտության աջակցություն ՀԿ-ի և Հիմնադրամի միջև կնքված ֆինանսական միջոցների տրամադրման պայմանագրի մասով.
Պալատը արձանագրել է Հիմնադրամի կողմից 1,652,3 հազար ՀՀ դրամի չափով ավել կատարված վճարում: Այդ թիվը այդքան էլ ճշգրիտ չէ, քանի որ Հիմնադրամի կողմից ավել վճարված գումարը կազմում է 1,637.5 հազար ՀՀ դրամ: Այս գումարը վճարվել է ՀԿ-ի կողմից համերգի կազմակերպման չնախատեսված հավելյալ ծախսերի փոխհատուցման նպատակով, որի համար հիմք են հանդիսացել այդ ծախսերը հիմնավորող փաստաթղթերը և համապատասխան գրությունը, որի պատճենը ներկայացվում է՝ **/Կից՝ Հավելված 20/:**

34. Հիմնադրամի կողմից ՀԿ-ին ծրագրի հետ կապ չունեցող ծախսերի վճարման մասով.
Ըստ Պալատի կողմից ներկայացված պնդման՝ Անի պլազա հոթել ՓԲԸ-ի կողմից հյուրանոցային ծառայության համար տրված հաշիվ ապրանքագրի համաձայն՝ հյուրանոցային ծառայությունից օգտված մարդկանց ցուցակում ընդգրկվել է ութ մարդու անուն, ովքեր հրավիրված երաժիշտների ցուցակում չեն եղել: Համերգին մասնակցած մասնակիցների վերջնական ցուցակը առկա է նվագախմբի պաշտոնական կայքում (https://www.24-04worldorchestra.com), **/Կից ներկայացվում է, Հավելված՝ 21/:**
24/04 համաշխարհային նվագախմբի կազմում, բացի երաժիշտներից, ընդգրկված են եղել նաև Financial Times պարբերականի լրագրող Մայա Զագին, որի հոդվածը հայոց ցեղասպանության և 24/04 համաշխարհային նվագախմբի մասին լույս է տեսել 2015թ. մայիսի 1-ին (https://www.ft.com/content/c46b1308-ed90-11e4-987e-00144feab7de), Էլեոնորա Յուրովսկին, ով, որպես այդ համերգի դիրիժոր, Միխայիլ Յուրովսկու կին և ամենուր ուղեկցող իր ամուսնուն, քանի որ Մաեստրո Յուրովսկին այդ ժամանակ 70 տարեկան էր և առողջական լուրջ խնդիրներ ուներ և չէր կարող գալ Հայաստան մենակ, ինչպես նաև աշխարհահռչակ երաժշտական պրոդյուսեր Տանյա Դորնը, ով ապահովում էր երաժիշտների պրոֆեսիոնալ աշխարհում այս միջոցառման մեծ հնչեղությունը: Նվագախմբի կազմում նաև եղել են երաժիշտներ, որոնց անունները համերգի ծրագրերում նշված են եղել ծածկանուններով՝ EuN

Hye Song՝ Grace, Sung Chul Kim՝ Leo, Tsz Hong Chan՝ Kurt Chan, Kasda Angeliki՝ Angeliki Kasada: Հյուրանոցում նաև գիշերել են նվագախմբի կազմակերպիչներից երկուսը՝ Սոնա Մատինյանը և Ֆելիքս Բաբուրյանը, որոնք կարգավորում էին նվագախմբի բոլոր ծագած խնդիրները 24/7 ձևաչափով: Հյուրանոցի հյուրերի ցանկերի մեջ նաև եղել են անճշտություններ՝օրինակ հյուրանոցի ձևակերպումների մեջ նշվել էր Gamaris Valentina-ն իրականում Gamaris Xenia է, իսկ Barisova Marina-ն՝ Barisova Valentina-ն է և այլն:
Վերոնշյալ անձինք բոլորը միջոցառման կազմակերպման առանցքային դերակատարներ են և տրամաբանորեն պետք է վճարվեին նախատեսված միջոցներից:
Վերոգրյալը արտացոլվում է կից ներկայացվող ցանկում, որը կազմվել է հիմնավորող փաստաթղթերի հիման վրա: Արդյունքում կարելի է փաստել որ որևէ ֆինանսական միջոց անարդյունավետ չի ծախսվել **/Կից Հավելված՝ 21/:**

35. Նվագախմբի սննդի ծախսերի մասով.

Պալատը արձանագրել է նվագախմբի անդամների սննդի ծախսերի մասով խախտումներ: Հարկ ենք համարում ընդգծել, որ Հիմնադրամը, բացի սննդի համար վճարումներից, կատարել է վճարումներ՝ հյուրերի կողմից հյուրանոցային համարի մինի բառից և հեռախոսակապից օգտվելու դիմաց, քանի որ նպատակահարմար է գտել նման միջոցառման կարևոր հրավիրյալ մասնակիցների հյուրանոցում մնալու բոլոր ծախսերը հոգալը: Բացի այդ, հարկ ենք համարում ընդգծել, որ Պալատի կողմից ներկայացված՝ նախատեսվածից ավել վճարված 31,200 ՀՀ դրամը, չի համապատասխանում իրականությանը: Ըստ թիվ 55/2204 պայմանագրի հաշվետվության՝ Հիմնադրամի կողմից կատարվել է ավել վճարում, նվագախմբի սննդի մասով, 21,182 ՀՀ դրամի չափով **/ներկայացված է Պալատին**/:
Նվագախմբի մասնակիցների մեկնումից հետո կազմակերպիչներին պարզ դարձավ, որ առկա է չվճարված ծախս մինի բառի և հեռախոսային խոսակցության համար, որը և վճարվեց ըստ հաշիվ ապրանքագրի: Հաշվի առնելով միջոցառման պետական նշանակությունը և այն փաստը որ տվյալ ծառայություններից օգտվողները աշխարհահռչակ երաժիշտներ էին, ինչպես նաև այդ ծառայությունների արժեքը՝ նպատակահարմար չհամարվեց այդ գումարը լրացուցիչ հարցումների ձևաչափով պահանջել:

36. Նվագախմբի անդամների ներքաղաքային տեղափոխման և տրանսֆերի մասով.

Պալատը արձանագրել է խախտում, առ այն, որ Հիմնադրամի կողմից ՀԿ-ին փոխհատուցվել է 1,314 հազար ՀՀ դրամ, որն, իբրև թե կատարվել է առանց հիմնավոր փաստաթղթերի առկայության, սակայն, առկա են հիմնավոր փաստաթղթեր, մասնավորապես՝ Տրանսպորտային ծախսերը կատարվել են համաձայն «ԱրտՎոյաժ» ընկերության կողմից ներկայացված հաշիվ ապրանքագրերի: Հաշիվ ապրանքագիր և վճարման հանձնարարագիր /Հաշիվ ապրանքագիրը և վճարման հանձնարարագիրը՝ **Հավելված 22**/: Հետևաբար,

ներկայացված խախտման փաստը չի համապատասխանում իրականությանը, Տնօրինությունը հիմք է ընդունել հաշիվ ապրանքագիրը և վճարման հանձնարարագիրը:

37. Կոնցերտմայստերներին վճարված օրավճարի մասով.

Պալատը արձանագրել է խախտում, առ այն, որ ՀԿ-ի կողմից Կոնցերտմայստերներին վճարվել է օրավճար՝ 7 օրվա համար, յուրաքանչյուր օրվա համար՝ 111,000 ՀՀ դրամ, սակայն, նրանցից երկուսը յոթ օրից պակաս են մնացել ՀՀ-ում, բայց ստացել են յոթ օրվա կտրվածքով օրավճար: Ըստ ՀԿ-ի կողմից Տնօրինությանը ներկայացված հիմնավորման՝ Կոնցերտմայստերների հետ առկա է եղել պայմանավորվածություն ՀՀ ժամանելու, այստեղ մնալու մասով կոնկրետ գումար վճարելու համար, յուրաքանչյուրի հետ պայմանավորվածությունը եղե է 777.000 ՀՀ դրամ, որը պայմանավորված չի եղել ՀՀ-ում մնալու օրերի քանակով:

Համաձայն դասական երաժշտության ոլորտում գործող միջազգային գործելաոճի՝ նվագախմբի մասնակիցներին, այս պարագայում կոնցերտմայստերներին, վճարվել է օրավճար համապատասխան իրենց բացակայությանը իրենց աշխատանքի վայրից, որը համարվել է իրենց մեկնումը իրենց ապրելու վայրից, քանի որ իրենք ելույթ են ունեցել ապրիլի 24-ին առանց լրացուցիչ վարձավճարի, սակայն, պայմանավորվածության համաձայն իրենց պետք է փոխհատուցվեր իրենց նվազագույն օրական աշխատավարձը, որպեսզի կորուստ չունենան այն պատճառով, որ բացակայում են իրենց հիմնական աշխատանքից:

38. Նվագախմբի երաժիշտներին վճարված օրավճարի մասով.

Պալատը արձանագրել է խախտում, առ այն, որ ՀԿ-ի կողմից ցուցակում ընդգրկված յոթ երաժիշտներ ՀՀ չեն ժամանել, նրանց համար ավիատոմս ձեռք չի բերվել, հյուրանոցում չեն բնակվել, սակայն **ստացել են օրավճարներ**:

Առնվազն տարակուսանք է առաջացնում տվյալ պնդումը, քանի որ անհայտ է թե Պալատը ինչ տվյալների հիման վրա է եկել եզրահանգման, որ ցուցակում նշված երաժիշտները Հայաստան առհասարակ չեն ժամանել:

Հարկ ենք համարում նշել, որ համերգին մասնակցել են երաժիշտներ, որոնք մեքենաներով ժամանել են Վրաստանից, ուստի, նրանց համար չի գնվել ավիատոմս, նաև առկա էին մասնակիցներ, որոնք ունեցել են բարեկամներ և ընկերներ Երևանում և կարիք չեն ունեցել զբաղեցնելու հյուրանոցային համարներ, այդ պատճառով հնարավոր են տարբերություններ ցուցակներում:

Վերոնշյալ գործընթացը կազմակերպիչների ջանքերի շնորհիվ կազմակերպվել է հնարավոր առավելագույն արդյունավետությամբ՝ հաշվարկների առանցքում ունենալով միջոցների խնայողության տրամաբանությունը:

Տնօրինությունը հնարավորություն չի ունեցել տրամադրված տեղեկատվությունն ստուգելու և այդ իսկ պատճառով Տնօրինությունը հիմք է ընդունել տրամադրված տեղեկատվությունը և հավանություն է տվել ՀԿ-ի կողմից կատարված վճարմանը:

39. 13 երաժիշտների՝ պայմանագրով նախատեսված 175.000 դրամից բացի հավելյալ վճարված գումարի մասով.

Պալատը արձանագրել է խախտում, առ այն, որ ՀԿ-ի կողմից 13 երաժիշտների պայմանագրով նախատեսված 175.0 հազար դրամից բացի յուրաքանչյուրին լրացուցիչ վճարվել է ևս 96 հազար ՀՀ դրամ, ինչը պայմանագրով նախատեսված չէր: Տնօրինության հիմնավորումը հետևյալն է. հնարավոր չէր նախապես լրիվ ճշտգրտությամբ պլանավորել բոլոր ծախսերը: Այդ պատճառով Հիմնադրամն ընդունել է որոշ շեղումներ նախահաշվից, քանի որ դրանք, ըստ էության, ծառայել են պայմանագրի կատարմանը, պայմանագրի կնքման նպատակին: 13 երաժիշտների հետ պայմանավորվածությունը ենթարկվել է փոփոխության և Հիմնադրամը համաձայնվել է ընդունել այդ փոփոխությունները, նվագախմբի 13 երաժիշտների վճարվել է ավել գումար, քանի որ իրենք խնդիրներ ունեին իրենց հիմնական աշխատանքի վայրում և պետք է տույժ վճարեին իրենց հիմնական նվագախմբերի փորձերին և համերգին չմասնակցելու համար:

40. Էրոյան Սերոսի մասով.

Պալատը արձանագրել է խախտում, առ այն, որ Դասական երաժշտության աջակցության ՀԿ-ի կողմից Էրոյան Սերոսին վճարվել է 96,000 ՀՀ դրամ, սակայն, նա, ըստ Պալատում առկա ցուցակների, ընդգրկված չի եղել հրավիրված երաժիշտների ցանկում:

Պալատի պնդումը սխալ է, քանի որ Պալատին ներկայացված արձանագրությանը կից ցուցակում Էրոյան Սերոսը առկա է: Բայց, հարկ ենք համարում նշել, որ Էրոյան Սերոսը ծածկանուն է, ում իսկական անունը Էրոյան Սերգեյ է **/Արձանագրությունը կրկին ներկայացվում է Պալատին, Հավելված՝ 23/:**

41. Պալատը արձանագրել է խախտում, առ այն, որ ՀԿ-ի կողմից հրավիրված երաժիշտներին վճարվել է օրավճար՝ 7 օրվա համար, յուրաքանչյուր օրվա համար՝ 25,000 ՀՀ դրամ, սակայն, նրանցից 27-ը յոթ օրից պակաս են մնացել ՀՀ-ում, բայց ստացել են յոթ օրվա կտրվածքով օրավճար: Ըստ ՀԿ-ի կողմից Տնօրինությանը ներկայացված հիմնավորման՝ հրավիրված երաժիշտների հետ առկա են եղել պայմանավորվածություններ ՀՀ ժամանելու, այստեղ մնալու մասով կոնկրետ գումար վճարելու համար, յուրաքանչյուրի հետ պայմանավորվածությունը եղել է 175.000 ՀՀ դրամ, որը պայմանավորված չի եղել ՀՀ-ում մնալու օրերի քանակով: Նվագախմբի մասնակիցներին, ինչպես և կոնցերտմայստերներին, վճարվել է օրավճար համապատասխան իրենց բացակայությանը իրենց աշխատանքի վայրից, որը համարվել է իրենց մեկնումը իրենց ապրելու վայրից, քանի որ իրենք ելույթ են ունեցել ապրիլի 24-ին

առանց լրացուցիչ վարձավճարի, սակայն պայմանավորվածությունը եղել է առ այն, որ իրենք կորուստ չեն ունենա այն պատճառով, որ բացակայում են իրենց հիմնական աշխատանքից:

42. Չորս կոնցերտմայստերների մասով.

Պալատը նշել է, որ պայմանագրի հավելվածով նախատեսված է եղել յուրաքանչյուրին վճարել 111,000 ՀՀ դրամ, բայց նրանցից յուրաքանչյուրին վճարվել է ևս 175,000 ՀՀ դրամ:

Նշվածի հիմնավորումը հետևյալն է. Նշված պայմանագրի հավելված թիվ 1-ում հստակ նշված է, որ երաժիշտներին, որպես ընդհանուր նվագախմբի կազմ, նախատեսվում է վճարել օրական 25 հազար ՀՀ դրամ և կոնցերտմայստերներին՝ 111 հազար ՀՀ դրամ: Ինչից պարզ երևում է, որ թվով չորս կոնցերտմայստերներին պետք է վճարվեր նաև 25 հազ դրամ բազային գումար, որը բազմապատկելով օրերի թվով (7) ստացվում է 700 հազար դրամ գումարը:

43. Էլեոնորա Յուրովսկիի մասով.

Պալատը արձանագրել է, որ Հիմնադրամը Դասական երաժշտության աջակցություն ՀԿ-ին փոխհատուցել է Էլեոնորա Յուրովսկի համար ձեռք բերված ավիատոմսի գումարը, սակայն, վերջինս նվագախմբի հետ ոչ մի կապ չի ունեցել, Հիմնադրամի կողմից, հետևաբար, վճարման ենթակա չէր:

Էլիանորա Յուրովսկին նվագախմբի հետ ունեցել է ամենաանմիջական կապը, քանի որ ապրիլի 24-ի համերգի կարևորագույն մասնակից Միխայիլ Յուրովսկու կինն է, ով ուղեկցել է աշխարհահռչակ դիրիժորին և առանց ում հնարավոր չէր ապահովել դիրիժորի մասնակցությունը այդ երեկոյին: Քանի որ Միխայիլ Յուրովսկու համար, ըստ նախնական պայմանավորվածության, գնվել էր բիզնես դասի ավիատոմս, իր կնոջ համար նույնպես գնվեց բիզնես դասի ավիատոմս, որի արժեքը կազմել է 993.9 հազար ՀՀ դրամ:

44. Ջանլուկա Մարչիանոյի մասով.

Պալատը արձանագրել է, որ Դասական երաժշտության աջակցություն ՀԿ-ի և դիրիժոր Ջանլուկա Մարչիանոյի միջև կնքված քաղաքացիաիրավական պայմանագրի համաձայն՝ ՀԿ-ն Ջանլուկա Մարչիանոյին 13.11.2015 թվականին կատարել է կանխիկ վճարում՝ տեղի ունցած համերգի համար հասանելիք հոնորարը:

Ըստ Պալատի՝ 13.11.2015 թ. Ջանլուկա Մարչիանոն ՀՀ-ում չի գտնվել և չէր կարող կանխիկ եղանակով գումար ստանալ:

Հարկ է նշել, որ Տնօրինության համար ՀԿ-ի ներկայացրած պայմանագիրը և դրամարկղի ելքի օրդերը ամբողջությամբ հիմք են ընդունվել որպես ծախսի հիմնավորում: Բացի այդ, 2015թ. ապրիլի 24-ին կայացած համերգի մուտքերը եղել են մի քանի փուլով և առկա միջոցները չէին բավականացնում նշված ժամանակահատվածում կատարելու բոլոր վճարումները, այդ պատճառով Ջանլուկա Մարչիանոյի հետ պայմանավորվածություն ձեռք բերվեց վճարել իրեն հոնորարը մինչ տարվա վերջ, քանի որ ինքը ուներ պլանավորված համերգ Երևանում 2015թ.

նոյեմբերի 14-ին (https://www.facebook.com/events/883340761734154/): Այդ իսկ պատճառով վճարումը կատարվել է այն ժամանակ, երբ նա վերադարձել է Հայաստան: **/կից ներկայացնում ենք Զիանլուկա Մարչիանոյի տոմսի bording pass, որտեղ երևում է իր Երևան ժամանման ամսաթիվը՝ Կից Հավելված 23.1/:**

45. Միխայիլ Յուրովսկիի մասով Պալատը ստուգել է փաստաթղթերը և խախտում չի հայտնաբերել:

46. Պալատը նշել է, որ Դասական երաժշտության աջակցություն ՀԿ-ն 27.07.2015 թվականին կնքել է քաղաքացիաիրավական պայմանագրեր 9 քաղաքացիների հետ՝ 24.04 նվագախմբի համերգի ծրագրում ընդգրկված ստեղծագործությունների՝ նվագախմբի երգչախմբի ձայնաբաժինների համակարգչային շարվածքի համար: Պալատի պնդմամբ, քանի որ համերգը տեղի է ունեցել 24.04.2015 թվականին, հետևաբար, վերոնշյալ աշխատանքների կատարումը 27.07.2015 թվականին բացարձակ անհրաժեշտություն չի եղել:
Գումարը մուտք է եղել ՀԿ-ի հաշվին մի քանի փուլով և վճարվել՝ համապատասխան այդ մուտքերի: Պայմանագրերի ամսաթվերում պարզապես տեխնիկական վրիպակ է տեղի ունեցել: Նշված ծառայությունները պատշաճ կերպով իրականացվել են, այլապես համերգը պարզապես չէր կայանա, ինչպես և արդարացիորեն նշվել է Պալատի կողմից այս աշխատանքի անհրաժեշտությունը համերգից հետո չկար:

47. ԱՍՔ մշակութային կենտրոնի մասով.
Դասական երաժշտության աջակցություն ՀԿ-ն ԱՍՔ մշակութային կենտրոնի հետ կնքել է պայմանագիր, որի շրջանակներում պատվիրել է 24.04 նվագախմբի համերգ ակցիայի իրականացման նպատակով 23.01-23.04 2015 թվականն ընկած ժամանակահատվածում ապահովել տեսանյութի թեմատիկ ժապավենի պատրաստման և մոնտաժման, համակարգչային գրաֆիկայի իրականացման և լուսանկարների թվայնացման ծառայություններ: Պալատը պնդել է, որ չնայած, որ ՀԿ-ի և ԱՍՔ-ի միջև կազմվել է հանձնման-ընդունման ակտ, ըստ որի՝ կատարող ԱՍՔ-ը կատարել է իր պարտավորությունները, սակայն, ՀԿ-ն Հիմնադրամին ներկայացրած հաշվետվության մեջ պատշաճ կերպով չի հիմնավորել ծառայությունների ծախսերի հիմնավորումը՝ պատրաստված ֆիլմը չի ներկայացվել Հիմնադրամին, իսկ Հիմնադրամը ընդունել է ՀԿ-ի կողմից կատարված ծախսը:
«ԱՍՔ» մշակութային կենտրոնի կողմից կատարվել է թեմատիկ ժապավենի պատրաստում և մոնտաժում 82 րոպե տևողությամբ՝ համապատասխան համերգի տևողությանը, և ցուցադրվել համերգի ընթացքում՝ բեմին տեղադրված էկրանի վրա: Այս հղումով երևում է ամբողջ համերգի ընթացքում ներկայացված տեսանյութը https://www.youtube.com/watch?v=rvCMwt73PhY սկսած 1:17:35-ից: Հիմնադրամին, ինչպես և ՀԿ-ին ֆիլմը ներկայացվել է էլեկտրոնային տեսքով **wetransfer** էլեկտրոնային հարթակով, քանի

որ շատ մեծ ծավալի էր, որտեղից էլ այն ներբեռնվել է և ցուցադրվել հարյուր հազարավոր հանդիսատեսի դատին:

48. Օրկեստրա 24.04 համերգի գրասենյակային ծախսերի մասով.

Պալատը նշել է, որ համերգի կազմակերպման գրասենյակային ծախսերի գծով Դասական երաժշտության աջակցություն ՀԿ-ի կողմից կազմվել և ներկայացվել է վճարման ակնհայտ ուրճացված նախահաշիվ: Պալատը նշել է, որ նախահաշվով նվագախմբի երաժիշտների մենեջեր նախատեսվել են 2 հոգի, սակայն, նախատեսված 2 մենեջերների փոխարեն աշխատել է մեկը և ստացել է 2 մենեջերների համար նախատեսված գումարը, ինչպես նաև, գրասենյակի մենեջերներ նախատեսվել են 2 հոգի, սակայն աշխատել է մեկ մենեջեր և ստացել է 2 մենեջերների համար նախատեսված գումարը:

Նշվածի վերաբերյալ՝ հայտնում ենք հետևյալը.

Նշված աշխատանքը հնարավոր է եղել իրականացնել մեկ անձի միջոցով, մեկ մենեջերի միջոցով, որը, սակայան, համաձայնվել է կատարել այդ աշխատանքը կրկնակի վարձատրությամբ:

49. Էյչ-Դի ստուդիո ՍՊԸ-ի մասով.

Պալատը նշել է, որ Դասական երաժշտության աջակցություն ՀԿ-ն Էյչ-Դի ստուդիո ՍՊԸ-ին պատվիրել է Օրկեստրի մասին ֆիլմի պատրաստում, գումարը վճարվել է ամբողջությամբ, սակայն պատրաստված ֆիլմը չի ներկայացվել Տնօրինությանը:

«ԷՅՉ-ԴԻ ստուդիո» ՍՊԸ-ի կողմից նկարահանումներ են իրականացվել և պատրաստված ֆիլմը՝ 24/04 համաշխարհային նվագախմբի մասին, տեղադրված է առցանց տիրույթում (https://www.youtube.com/watch?v=zqHciUg4pYA) **/Հաշիվ ապրանքագիրը և վճարման հանձնարարագիրը՝ ներկայացված է Պալատին/:**

50.Համերգի գույքի և ռոյալի տեղափոխության մասով.

Պալատը նշել է, որ Դասական երաժշտության աջակցություն ՀԿ-ն գույքի և ռոյալի տեղափոխության համար կատարել է ավել վճարում քան նախատեսված է եղել պայմանագրում:

Ավել կատարված ծախսի փոխհատուցման հիմք է հանդիսացել ՀԿ-ի կողմից Հիմնադրամին ուղղված համապատասխան գրությունը **/Կից՝ Հավելված՝ 20/:**

Քանի որ համերգը նախատեսված է եղել անցկացնել Հանրապետության հրապարակում (https://www.youtube.com/watch?v=9wNQGCy9OBM, https://www.youtube.com/watch?v=sivyPRG0fKk), իսկ փաստացի, հաշվի առնելով ապրիլի 24-ի եղանակային վատ պայմանները, համերգը տեղի է ունեցել Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում, կատարվել է լրացուցիչ տեղափոխության աշխատանք, որի համար և փաստացի վճարվել է համաձայն կնքված պայմանագրի:

51.Դասական երաժշտության աջակցություն ՀԿ-ի համար ավիատոմսերի ձեռքբերման մասով.
Պալատը նշել է, որ Պեգաս Թրավել Քլաբ ՍՊԸ-ից ձեռք են բերվել ավիատոմսեր՝ 97 անձանց համար, որոնց ցանկում ընդգրկվել է 6 մարդու անուն, ովքեր հրավիրված երաժիշտների ցանկում չեն եղել:
Նվագախմբի կազմում ընդգրկված են եղել մասնակիցներ, որոնք համերգային ծրագրի ցուցակներում ներկայացված են եղել իրենց ծածկանուններով, որի պատճառով հնարավոր են տարբերություններ: Ինչպես նաև ավիատոմս է ձեռք բերվել մենակատար Հախնազարյան Նարեկի համար, ով առանձին տողով է նշված նածահաշվի մեջ և Մայա Ջազգիի համար, ով լրագրող է "The Garideins" ամսագրից, ով մեծ հոդված է գրել Ցեղասպանության և այս համերգի մասին: **/Մասնակիցների ամբողջական ցուցակը ներկայացված է՝ Հավելված 21/:**

52. Դասական երաժշտության աջակցություն ՀԿ-ի եկամուտների հաշվետվության մասով.
Պալատը նշել է, որ ՀԿ-ն համերգի կազմակերպումից ստացված իր եկամուտների վերաբերյալ հաշվետվություն չի ներկայացրել Հիմնադրամին, գումարներ չի վճարել, իսկ Հիմնադրամը՝ չի պահանջել:
Հարկ է նշել, որ Հիմնադրամն իսկզբանե տեղյակ է եղել 24.04 համերգի ազատ մուտքի մասին, տեղյակ է եղել, որ նշված համերգը պետք է կայանար Հանրապետության հրապարակում, մուտքն ազատ է եղել բոլորի համար, հետևաբար, համերգի կազմակերպումից ստացված եկամուտների վերաբերյալ որևէ հաշվետվություն պահանջելու կարիք չի եղել: Նշված համերգը չի պարունակել իր մեջ որևէ կոմերցիոն բաղադրիչ, հետևապես՝ ՀԿ-ն չի ունեցել ոչ մի եկամուտ: Հակառակը հավաստող որևէ փաստ գոյություն չունի:

53. Հայաստանի ազգային կինոկենտրոն ՊՈԱԿ-ին տրված 130 միլիոն ֆինանսական միջոցների թվով 5 պայմանագրերի մասով.
Պալատը նշել է, որ ՊՈԱԿ-ի և Հիմնադրամի միջև կնքված պայմանգրերով ՊՈԱԿ-ը կինոնկարների ցուցադրումից ստացված եկամտից պարտավորվել է մեկ տարի շարունակ Հիմնադրամին փոխանցել գումարներ, սակայն Հիմնադրամին գումար չի փոխանցվել, իսկ Հիմնադրամը չի պահանջել գումարների վճարումը և այդ ուղղությամբ աշխատանքներ չի տարել, Հիմնադրամը կինոնկարների ցուցադրումների և հավաքված գումարների վերաբերյալ տեղեկություններ չունի:
Այս պնդումը չի համապատասխանում իրականությանը՝ հետևյալ հիմնավորմամբ.
ՊՈԱԿ-ը գրություն է ներկայացրել Հիմնադրամին **/Կից՝ հավելված՝ 24/** նշելով, որ վերջինս կինոցուցադրումներից ոչ մի եկամուտ չի ստացել: Այդ պատճառով որևէ գումար չի փոխանցել Հիմնադրամի հաշվին:

54.Լուսաբաց մշակութային հիմնադրամի մասով.

Պալատը նշել է, որ Լուսաբաց հիմնադրամի և Հիմնադրամի միջև կնքվել է ֆինանսական միջոցների տրամադրման պայմանագիր, որի համաձայն՝ Լուսաբաց հիմնադրամը նշված պայմանագրի շրջանակներում իր կողմից ստեղծված ստեղծագործությունների օգտագործումից ստացված եկամտից պետք է 15 տոկոսի չափով մեկ տարվա ընթացքում Հիմնադրամին վճարեր գումարներ։ Սակայն, Հիմնադրամը նման գումարներ չի ստացել և Հիմնադրամը դրա ստանալու ուղղությամբ աշխատանքներ չի տարել։ Այս պնդումը չի համապատասխանում իրականությանը՝ հետևյալ հիմնավորմամբ.
Լուսաբաց հիմնադրամը 2015 թվականին եռամսյակային գրություն-հաշվետվություններ է ներկայացրել Հիմնադրամին, որում նշել է, որ ստեղծագործությունների օգտագործումից եկամուտներ չի ստացել **/Կից՝ հավելված՝ 25/:**

55. Զույգ արեգակներ բալետային ներկայացման մասով՝ Հիմնադրամի և Բալետ 2021 հիմնադրամի միջև կնքված պայմանագրի մասով.
Ըստ Հիմնադրամի և Բալետ 2021 հիմնադրամի միջև 2015թ. կնքված պայմանագրի՝ Բալետ հիմնադրամը պարտավորվել է ծրագրի իրականացման ընթացքում <<Զույգ Արեգակներ>> բալետային առաջին 9 ներկայացումներից ստացված եկամտի 10 տոկոսը փոխանցել Հիմնադրամի բանկային հաշվեհամարին։ Սակայն ֆինանսավորվողը որևէ գումար չի փոխանցել։ Բալետ հիմնադրամը Հիմնադրամին պետք է ներկայացներ հաշվետվություններ տոմսերի վաճառքի վերաբերյալ, սակայն, չի ներկայացրել։ Պալատի պնդումը ճիշտ է, սակայն հայտնում ենք, որ Բալետ հիմնադրամին ներկայացվել է պահանջ՝ գումարը փոխանցելու համար, իսկ վերջինս ստանձնել է պարտավորություն՝ նշված գումարը մոտ ժամանակահատվածում վճարել։

56. Հիմնադրամի և Ցուցահանդեսային Կենտրոն ՊՈԱԿ-ի միջև Իտալիայում ընթացող Վենետիկի արվեստի միջազգային բիենալեին մասնակցելու նպատակով կնքված պայմանագրի մասով.
Կնքվել է 39.428.4 հազար ՀՀ դրամի պայմանգիր՝ ՊՈԱԿ-ին ֆինանսավորելու համար։ Պալատը պնդում է, որ Հիմնադրամը կատարել է պակաս վճարում, վճարել է՝ 38.238.2 հազար ՀՀ դրամ։
Որպես նշվածի հիմնավորում. Հիմնադրամը ՊՈԱԿ-ի ներկայացրած հաշվետվությունից ընդունել է միայն 38.238.2 հազար ՀՀ դրամի ծախսը։ Անհրաժեշտ է ընդգծել, որ այդ ծրագրի շրջանակներում Հիմնադրամը ձեռք է բերել նաև ավիատոմսեր՝ 720,6 հազար ՀՀ դրամ արժեքով **/փաստաթղթերը ներկայացված են Պալատին/:**

57. Հիմնադրամի և Ցուցահանդեսային Կենտրոն ՊՈԱԿ-ի միջև կնքված Չինաստանում ընթացող Պեկինի արվեստի միջազգային բիենալեին մասնակցելու նպատակով կնքված պայմանագրի մասով.

Կնքվել է 22,000,2 հազար ՀՀ դրամ արժեքով պայմանագիր՝ ՊՈԱԿ-ին ֆինանսավորելու համար: ՊՈԱԿ-ը, փաստացի, կատարել է ծախս՝ 18,062,7 հազար ՀՀ դրամի չափով, որը Հիմնադրամի կողմից վճարվել է ամբողջությամբ:
Ցուցահանդեսային Կենտրոն ՊՈԱԿ-ը Հիմնադրամին տեղեկացրել է, որ այս միջոցառումներից ՊՈԱԿ-ը եկամուտ չի ստացել, հետևաբար, չէր կարող Հիմնադրամին գումար փոխանցել:

58. Արարատի ստորոտին մեդիա ֆորումի կազմակերպման և անցկացման համար Հիմնադրամի և Եվրոպայի և Ասիայի լրագրողների մեդիակոնգրես ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրի մասով.
Կնքվել է պայմանագիր՝ 23,543 եվրո արժեքով: Պալատը պնդում է, որ Հիմնադրամը հիմք է ընդունել ծախսեր, որոնք արվել են Եվրոպայի և Ասիայի լրագրողների մեդիակոնգրես ՍՊԸ-ի կողմից մինչ պայմանագրի կնքելը:
Հիմնադվորումն այն է, որ այդ ծախսերն անմիջականորեն կապված են եղել Արարատի ստորոտին մեդիա ֆորումի կազմակերպման հետ, իսկ պայմանագիրն ավելի ուշ է կնքվել, քանի որ Տնօրինությունն իր գործունեությունն սկսել է ավելի ուշ:
Այդ իսկ պատճառով՝ Տնօրինությունը հարկ է գտել ընդունել այդ ծախսերը՝ որպես հիմնավորված ծախսեր և փոխհատուցել: Առկա է նախահաշիվը և վերջնահաշիվը՝ հաստատված Վ. Սարգսյանի կողմից **/Կից՝ Հավելված՝ 26/:**
Տարադրամի սխալ վերահաշվարկի մասով.
Բացակայում է հիմնավորումը, թե Պալատը ինչն է հիմք ընդունել և եկել եզրահանգման, առ այն, որ եվրո-ռուբլի փոխարժեքի սխալ հաշվարկման արդյունքում Հիմնադրամը կատարել է ավել վճարում 239,2 Հազար ռուբլու չափով:

59. Լույս ի լուսոյ ՍՊԸ-ի և Հիմնադրամի միջև կնքված պայմանագրի մասով.
Պալատը նշել, որ ՍՊԸ-ն պայմանագիր է կնքել Մքքան Էրիքսոն ՍՊԸ-ի հետ նկարահանման, նյութերի մոնտաժման, գրաֆիկական աշխատանքների և ֆիլմի պատրաստման համար: Ինչպես նաև նշել է, որ կողմերի միջև հանձնման ընդունման ակտ չի կազմվել, այնուամենայնիվ, նախատեսված գումարն ամբողջությամբ վճարվել է: Իսկ նկարահանված նյութը դիտելիս ակնհայտ է դառնում, որ այն կատարվել է սիրողական մակարդակով: Փաստացի, Հիմնադրամը վճարել է 13,500,000 ՀՀ դրամ:
Լույս ի լուսոյ ՍՊԸ-ի և Մքքան Էրիքսոն ՍՊԸ-ի միջև կնքվել է հանձնման ընդունման ակտ **/Կից՝ Հավելված՝ 26.1 /:** Իսկ վերոնշյալ ֆիլմը Տնօրինությունը չի պահանջել ՍՊԸ-ից, քանի որ Տնօրինությանը բավարար է եղել պայմանագիրը և հանձնման ընդունման ակտը /Պայմանագիրը ներկայացված է Պալատին/:
Լույս ի լուսոյ ՍՊԸ-ն պայմանագիր է կնքել անհատի հետ՝ 2015 թվականի հուլիսի 1-ին՝ 1,200,000 ՀՀ դրամ արժեքով: Կնքվել է միջոցառումների կազմակերպման աշխատանքներ իրականացնելու համար:

Պալատը նշել է, որ Պայմանագիրը կնքվել է համերգները ավարտվելու հաջորդ օրը՝ 2015 թ. հուլիսի 1-ին, սակայն, համերգները մեկնարկվել էին 2015 թ. հունիսի 11-ին և ավարտվել հունիսի 30-ին: Հայտնում ենք, որ տեղի է ունեցել տեխնիկական բնույթի վրիպակ: Ամսաթիվը պետք է թվագրվեր հունիսը, սակայն տեխնիկական սխալի, վրիպակի պատճառով թվագրվել է հուլիսը՝ 6-րդ ամսվա փոխարեն 7-րդ ամիսը: Կատարող ֆիզիկական անձը, ամեն դեպքում, ծառայությունները մատուցել է պատշաճ՝ պայմանագրի պայմաններին համապատասխան /Պայմանագիրը ներկայացված է Պալատին/:
Լույս ի լուսոյ ՍՊԸ-ն Տիգրան Համասյանի և նկարահանող խմբի համար ավիատոմսեր ձեռք բերելու համար կատարել է վճարում՝ 6472 ԱՄՆ դոլարի չափով: Նշվում է, որ փաստաթղթային հիմնավորումը բացակայում է, սակայն այս պնդումն անհիմն է, քանի որ Լույս ի լուսոյ ՍՊԸ-ն Տնօրինությանն իր ներկայացրած հաշվետվության մեջ ներկայացրել է հաշիվ ապրանքագիր և վճարման հանձնարարական, որը և ամբողջովին հիմնավորում է վերոնշյալ ծախսը: **/Կից՝ Հավելված՝ 27/:**

60. Տեխնոպրոջեքթ ՍՊԸ-ի մասով.

Հիմնադրամը և Տեխնոպրոջեքթ ՍՊԸ-ն կնքել են տեխնիկական ծառայություններ մատուցելու համար պայմանագիր, որի շրջանակներում Ծիծեռնակաբերդում և Վաղարշապատում կազմակերպված միջոցառումների համար ՍՊԸ-ի կողմից տրամադրվել են սարքավորումներ: Հարկ է նշել, որ նշված միջոցառումները միմյանց հաջորդող օրերի են եղել՝ 22, 23, 24 ապրիլի 2015 թվական: Ծիծեռնակաբերդի տարածքում կազմակերպված միջոցառումների մասնակիցների մի մասը մասնակցել է նաև Վաղարշապատում կազմակերված միջոցառումներին և Ծիծեռնակաբերդում իրենց օգտագործման համար տրամադրված սարքավորումները /օրինակ՝ ականջակալներ/ իրենց հետ տեղափոխել և օգտագործել են նաև Վաղարշապատում կազմակերված միջոցառման ժամանակ: Ինչպես նաև կազմակերպիչները ևս որոշ սարքավորումներ Ծիծեռնակաբերդից տեղափոխել են իրենց հետ և օգտագործել նաև Վաղարշապատի միջոցառման ժամանակ: Այդ ամենը պայմանագիրը ստորագրելիս պայմանագրի կողմերը չէին կարող ճշգրիտ հաշվարկով նախատեսել: Եվ, քանի որ, նշված սարքավորումների կորստի փաստն արձանագրվել է Վաղարշապատում՝ միջոցառման ավարտին սարքավորումները հանձնում ընդունում կատարելու ժամանակ, այդ իսկ պատճառով էլ սարքավորումների կորստյան վայրը նշված է Վաղարշապատը: Այդ իսկ պատճառով Հիմնադրամը կորած սարքավորումների համար ՍՊԸ-ին փոխհատուցել է դրանց արժեքը:

61. Արմենիա հյուրանոցային համալիրի մասով.

Հյուրանոցային համալիրի հետ կնքվել է 71,278,0 հազար ՀՀ դրամի չափով պայմանագիր, փաստացի ծառայություն է մատուցվել հյուրանոցի կողմից 15,574,6 հազար ՀՀ դրամի չափով և չեղարկված սենյակների համար հյուրանոցի կողմից կիրառվել է պայմանագրով

նախատեսված տուգանք՝ 14,088,4 հազար ՀՀ դրամ: Այս առումով, հարկ է ընդգծել, որ Հիմնադրամը զբաղվել է միայն ֆինանսավորման հարցերով, իսկ սենյակների քանակների ամրագրումը իրականացվել է ՀՀ ԱԳՆ կողմից տրված տեղեկատվության հիման վրա: Հետևաբար, Պալատի կողմից ներկայացված պնդումը, որով նշվում է, որ տուգանքը վրա է հասել Հիմնադրամի սխալ պլանավորելու պատճառով, չի համապատասխանում իրականությանը, քանի որ, ինչպես նշվեց, պլանավորումն իրականացվել է ՀՀ ԱԳՆ կողմից:

62. Հիմնադրամի Ֆրանսիայում ՀՀ դեսպանության հետ կնքված պայմանագրի մասով.

Պալատը նշել է, որ Հիմնադրամի կողմից չի ներկայացվել դեսպանության կողմից ներկայացված հաշվետվությունները: Սակայն, դա չի համապատասխանում իրականությանը, քանի որ Պալատին ներկայացվել է դեսպանության և Պոլիտիկ էնտերնասիոնալ եռամսյա հանդեսի միջև կնքված պայմանագիրը, որը և իրենից ներկայացնում է ծախսի հիմնավորում **/ներկայացված է Պալատին/:**

63.Լոմա սիսթեմս ՍՊԸ-ի հետ 2015թ. մարտի 04-ին կնքված պայմանգրի մասով.

Պալատը նշել է, որ Լոմա Սիսթեմսը Հիմնադրամին մատուցել է այնպիսի ծառայություններ, որպիսիք արդեն իսկ եղել են մատուցված այլ կազմակերպությունների կողմից՝ օրինակ՝ Հեփի իվենթի կողմից:

Սակայն, դա չի համապատասխանում իրականությանը, քանի որ Լոմա սիսթեմսը մատուցել է զուտ կազմակերպչական բնույթի ծառայություններ, իսկ մյուս ընկերությունները մատուցել են կոնկրետ թիրախային ծառայություններ: Այդ ընկերությունների կողմից մատուցված ծառայությունները կազմակերպել, վերահսկել և համակարգել է Լոմա սիսթեմս ՍՊԸ-ն: Հարկ է ընդգծել, որ Լոմա Սիսթեմսի և Հիմնադրամի միջև առկա են կատարողական ակտեր, իսկ մատուցված ծառայությունների մանրամասն նկարագրությունները տրված են պայմանագրերում **/կից հավելված՝ 28/:**

64. armeniangenocide100.org կայքի մասով.

Պալատը նշել է, որ Հիմնադրամը Ֆլուպեն ՍՊԸ-ի հետ կնքել է 49,306.1 հազար ՀՀ դրամի պայմանագիր, փաստացի կատարողականը կազմել է 36876.4 հազար ՀՀ դրամ և 6362,2 հազար ՀՀ դրամ վերադարձվել է Հիմնադրամին, որից հետո կայքը փակվել է: Սակայն, այս թվերը սխալ են, չեն համապատասխանում իրականությանը, քանի որ իրականում Հիմնադրամը Ֆլուպեն ՍՊԸ-ի հետ կնքել է 43238,6 հազար ՀՀ դրամ արժեքով պայմանագիր, փաստացի կատարողականը կազմել է 42943,8 հազար ՀՀ դրամ և Հիմնադրամը Ֆլյուպեսն ՍՊԸ-ին վճարել է 42943,8 հազար ՀՀ դրամ: Ֆլուպեն ՍՊԸ-ն որևէ գումար չի վերադարձրել Հիմնադրամին, քանի որ վերադարձման ենթակա գումար չի եղել: /Պալատին ներկայացվել է դրամական ելքերի մասին տեղեկատվությունը, **պայմանագիրը և հաշիվ ապրանքագրերը՝ կից Հավելված՝ 29**/:

Բացի այդ, նշված կայքը փոխանցվել է Յեղասպանության թանգարանին՝ հետագա սպասարկման և գործարկման նպատակով:

65. EPS ընկերությունից վարձակալված արգելափակոցների մասով.

Նշված արգելափակոցները Գերմանիայից Երևան և այնուհետև Երևանից Գերմանիա տեղափոխման համար վճարվել է շուրջ 3,357.2 հազար ՀՀ դրամ: Պալատը նշել է, որ մաքսային փաստաթղթերի համաձայն բեռնափոխադրումը իրականացվել է Չեխիայի քաղաքացու միջոցով, սակայն վճարվել է Ապավեն ՍՊԸ-ին: Որպես բացատրություն նշվածին՝ հայտնում ենք, որ Հիմնադրամը տեղափոխման համար պայմանագիր է կնքել միայն Ապավեն ՍՊԸ-ի հետ և նշված Չեխիայի քաղաքացին այս պարագայում հանդես է եկել որպես Ապավեն ՍՊԸ-ի ներկայացուցիչ կամ աշխատակից: Հիմնադրամի հետ պայմանագրային հարաբերության մեջ է եղել Ապավեն ՍՊԸ-ն, ծառայությունն ամբողջությամբ կատարվել է, իսկ թե կատարող Ապավեն ՍՊԸ-ն ում միջոցով և ինչ եղանակով է իրականացրել բեռնափոխադրումը, Հիմնադրամի համար՝ որպես պատվիրատու, էական չի եղել, էական է եղել ծառայության պատշաճ մատուցումը, որը կատարվել է և դրա հիման վրա էլ Հիմնադրամը կատարել է վճարում Ապավեն ՍՊԸ-ին:

66. Արգելափակոցների մեկ մետրի արժեքի մասով.

Պալատը նշել է, որ Վարդգես Ճյուղուրյան ԱՁ-ից Հիմնադրամը մի քանի անգամ ավելի մատչելի գնով է ձեռքբերել արգելափակոցները քան թե EPS ընկերությունից վարձակալել: Սակայն, պետք է նշել, որ այս պնդումը լիովին անհիմն է, քանի որ արգելափակոցները ամբողջովին տարբեր, միմյանցից էապես տարբերվող են եղել և նրանց համեմատելը սխալ է, քանի որ խոսքը վերաբերում է տարբեր տեխնիկական բնութագրեր ունեցող, տարբեր որակական հատկանիշներ ունեցող արգելափակոցներին /պայմանագիրը, հաշիվ ապրանքագիրը՝ ներկայացված են Պալատին/:

67. Գույքի կոնցեսիոն կառավարման պայմանագրի մասով.

Պալատը պնդում է, որ Հիմնադրամը, գտնելով, որ Հայոց ցեղասպանության 100-ամյակի միջոցառումների անցկացման ընթացքում ձեռքբերված ապրանքները անհրաժեշտ չեն իրենց՝ գումարով՝ 53,781,8 հազար ՀՀ դրամ, և մի շարք ապրանքներ ու հաստոցներ, որոնց ձեռքբերման փաստաթղթերը բացակայում են և արժևորված չեն, 26.10.2015 թվականին առանց Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից Հիմնադրամի գույքի տնօրինման կարգի հաստատման որոշման՝ կնքված գույքի կոնցեսիոն կառավարման պայմանագրի համաձայն հանձնել է Լոմա Սիսթեմս ՍՊԸ-ին:

Այս պնդումը չի համապատասխանում իրականությանը, քանի որ 26.10.2015 թ. Հիմնադրամի և Լոմա Սիսթեմս-ի միջև կնված պայմանագրի Ա կետի համաձայն՝ այդ միջոցառումների շրջանակներում Հիմնադրամի ձեռքբերած գույքը Հիմնադրամին իր ամենօրյա

գործունեության համար անհրաժեշտ չեն և Հիմնադրամը ցանկանում է օգտագործել գույքը հանրօգուտ նպատակներով, երրորդ անձանց միջոցով: Պայմանագրի Բ կետի համաձայն՝ այս միտումը հրապարակվել է Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Սերժ Սարգսյանի կողմից՝ 2015 թ. սեպտեմբերի 26-ին կայացած 6-րդ նիստի ընթացքում:

Կոնցեսիոներ Լոմա Սիսթեմսը իրականացնում է գործունեություն և ներգրավված է ծրագրերում, որոնք համահունչ են Հիմնադրամի կանոնադրական նպատակներին և այդ իսկ պատճառով էլ որոշվել է Հիմնադրամին ամենօրյա օգտագործման համար ոչ անհրաժեշտ գույքը հանձնել այդ կազմակերպությանը՝ Կոնցեսիոն կառավարման նպատակով: Կանոնադրության համաձայն՝ գույքի տնօրինումը իրականցնում է Հիմնադրամի գործադիր տնօրենը:

Բացի այդ, նշենք, որ Պալատի կողմից վկայակոչված մի շարք ապրանքներ և հաստոցներ, որոնց ձեռքբերման փաստաթղթերը բացակայում են և արժևորված չեն, ՀՀ են բերվել ՀՀ նախագահի ինքնաթիռով, և դրանց ծագման մասին տեղեկատվությանը Հիմնադրամը չի տիրապետում:

Պալատը պնդել է, որ Հիմնադրամը ձեռք է բերել պահանջվածից ավելի ապրանքներ՝ չունենալով դրանց կարիքը, քանի որ Տնօրինությունը բաղկացած է եղել 15 աշխատակիցներից: Սակայն, այս պնդումն անհիմն է և առարկայազուրկ, քանի որ Հիմնադրամը համակարգչային տեխնիկան ձեռք է բերել ոչ միայն Հիմնադրամի 15 աշխատակիցների համար, այլ նաև ընդդեմ Ցեղասպանության կանխարգելման գլոբալ ֆորումի քարտուղարության աշխատակիցների համար:

Պալատը նշել է, որ 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից որակվել են բարեգործական և ազատվել ԱԱՀ-ից: Հիմնադրամը 29.12.2014 թվականին Էդելնա ՍՊԸ-ից ձեռք է բերել համակարգչային տեխնիկա, սակայն այդ ձեռքբերումը չի դասվել բարեգործական և այդ ձեռքբերման համար ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի հանձնաժողովին չի դիմել:

Նշվածի վերաբերյալ պարզաբանումը հետևյալն է. 100-րդ տարելիցի միջոցառումները ՀՀ կառավարության կողմից բարեգործական որակելու և ԱԱՀ-ից ազատելու որոշումը եղել է 2015 թվականին **/կից ներկայացվում է որոշումը՝ Հավելված 30/:**

Էդելնա ՍՊԸ-ից ձեռքբերումը կատարվել է 2014 թվականին և, հետևաբար, հնարավոր չէր այդ գործարքն ազատել ԱԱՀ-ից:

Հիմնադրամը, կնքելով գույքի կոնցեսիոն կառավարման պայմանագիր Լոմա Սիսթեմս ՍՊԸ-ի հետ՝ նախապես կատարել է ուսումնասիրություն և գտել է, որ նշված ՍՊԸ-ն վստահելի կազմակերպություն է և գործընկերային վստահության մթնոլորտի հիման վրա չի պահանջել հաշվետվություններ, սակայն, դա չի նշանակում, որ Հիմնադրամը գույքի ճակատագիրը թողել է բախտի քմահաճույքին: Գույքի կոնցեսիոն կառավարման պայմանագրի 3.1.2 կետը դիսպոզիտիվ է, վերապահում է իրավունք Հիմնադրամին պահանջելու կոնցեսիոներից

ներկայացնել հաշվետվություն, սակայն 3.1.2 կետում նշված չէ, որ պարտավոր է պահանջել: Հիմնադրամն իրավունք ուներ պահանջելու կամ չպահանջելու: Հաշվի առնելով վստահության բարձր մակարդակը՝ Հիմնադրամը չի պահանջել: Սա չի նշանակում, որ Հիմնադրամի գործադիր վարչությունը իր հիմնական միջոցները օգտագործել է ոչ նպատակային և ոչ խնայողաբար: